


ԱԿԱԴԵՄԻԿՈՍ

ՀՈԿՍԵՓ

ՕՐԲԷԼԻ





Հովսեփ Օրբելի
Գործ՝ Գ. Ս. Վեհյակոս, 1946 թ.

8/092,
3-67

Կ. Ն. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ՝

ԵԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀՈՎՍԵՓ ՍԲԳԱՐԻ
ՕՐԲԵԼԻ

1148

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1971



Հետագա առողի գործունեությունը, մանավանդ հումանիտար գիտությունների բնագավառում, արտացոլում է ամենից առաջ նրա գրավոր ժառանգության մեջ: Եվ գիտության պատմությունը գիտե խոշորագույն գիտնականների, որոնց կյանքի ուղեկիշները համընկնում են հիմնական աշխատությունների հրատարակման տարիներին, իսկ նրանց կենսագրությունը՝ այդ աշխատությունների ցուցակին:

Բայց երբ գիտնականը միաժամանակ է՝ իր հայրենիքի ֆաղափացին է, որի մոտ բարձր զարգացման է հասնում պարտքի բմբռնումը, և՛ կուլտուրայի գործիչ, և՛ գիտական ուսումնասիրությունների ոգեշունչ կազմակերպիչ, երբ նրա կրթառ խառնվածքն ու հմայքը ունակ են մարդկանց մղելու գիտական սխրանքների, իսկ վառ ու պատկերավոր խոսքը գիտության ասպարեզ է ներգրավում նորեկներին, այն ժամանակ նրա կենսագրությունը չի ամփոփվում բիբլիոգրաֆիական ցուցակի շրջանակներում: Գիտությանը և հասարակությանը ծառայելը արտացոլում է գտնում ոչ միայն հրատարակված աշխատությունների, այլև հրապարակական ելույթների, ցուցահանդեսների կազմակերպման, սկսնակ հետազոտողին բարի երբ մաղթելու, գիտության մեջ նոր ուղղությունն արգասավորող սրամիտ կոահումների կամ որևէ պարադոքսի մեջ: Այդպիսի գիտնականի կենսագրությունը բառի լայն իմաստով դառնում է կուլտուրայի պատմության էջերից մեկը:

Հենց այդպիսի գիտնական էր Հովսեփ Օրբելին:

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

Հնտանիքը: Մանկական և պատանեկան տարիներ: Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում: Արևելյան լեզուների ֆակուլտետում: Ն. Յա. Մառ Անիի պեղումներում: Առաջին տպագիր աշխատությունները: Աշխատություններ Անիի հուշարձանների մասին: Ծանապահորդություն դեպի Մոքս: Հայկական էպիգրաֆիայով զբաղվելը: Քրդական ուսումնասիրություններ: Վանի ժայռի պեղումները:

Հովսեփ Աբգարի Օրբելին ծնվել է հին կուլտուրական ավանդություններ ունեցող հայկական ընտանիքում: Նրա պապը՝ Հովսեփ Օրբելին, ավարտել է Լազարյան ճեմարանը, ուսուցչություն է արել Մոսկվայում և Պետերբուրգում, ապա ձեռնադրվել քահանա և շատ շանցած, փոխադրվելով Թիֆլիս, դարձել հայկական եկեղեցիներից մեկի ավագ քահանա, հիմնել մասնավոր դպրոց, միաժամանակ դասավանդել Ներսիսյան դպրոցում: Նրա զրչին են պատկանում աստվածաբանական մի քանի գրվածքներ:

Հովսեփ Օրբելին ուներ երեք տղա և երկու աղջիկ:

Տղաներից Դավիթը ավարտել էր Խարկովի համալսարանը և բժիշկ-հոգեբույժ էր: Իր ժամանակին Անդրկովկասում նա մեծ հեղինակություն ու լայն ճանաչում ուներ: Դ. Հ. Օրբելին թողել է տեղաձարակային վզատակի ուղուցքին և բթամտությանը նվիրված մի շարք աշխատություններ, եղել է հոգեբուժությանը նվիրված գիտական համագումարների մշտական մասնակից:

Երկրորդ որդին՝ Համազասպը, որպես բժիշկ-ստոմատոլոգ հաջողությամբ աշխատում էր Թիֆլիսում:

Երրորդ որդին՝ Աբգարը, ուսանել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և այն ավարտել

8 Ap
3—67



1—2—4
К. Н. ЮЗБАШЯН
АКАДЕМИК ИОСИФ АБГАРОВИЧ ОРБЕЛИ
(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1971
25006

իրավագիտության թեկնածուի աստիճանով: Պահպանվել է պետական փոխառություններին նվիրված նրա ավարտական շարադրությունը:

Ավարտելով համալսարանը, Աբգար Օրբելին վերադառնում է հայրենիք. որպես հաշտարար դատավոր նա պաշտոնավարում է Նախիջևանում—Արաքսի վրա, Գարաշիչակում (այժմ՝ ՀՍՍՀ Մաղկաձոր գյուղը), Քուլթախում: Տեղափոխվելով Թիֆլիս, նա մի քանի տարի աշխատում է որպես դատական պալատի դատախազի օգնական, ապա դառնալով երգըվջալ ատենակալի փոխանորդ, զբաղվում է մասնավոր պրակտիկայով:

Աբգար Օրբելին բացառիկ կրթված մարդ էր, ուշադրություն մեծ հետևում էր կուլտուրական կյանքին, շատ էր կարդում, ուներ մեծ գրադարան: Աբգար Օրբելին մեծ ուշադրություն էր նվիրում երեսանների դաստիարակությանը և, շնայած համեմատաբար համեստ միջոցներին, կարողացավ որդիներին հիանալի կրթություն տալ: Ընտանիքում նրա ազդեցությունը մեծ էր, հեղինակությունն՝ անվիճելի: Թեև որդիների ազատությունը ոչնչով չէր սահմանափակվում, այդուհանդերձ, 1906 թվականին, տասնինամյա Հովսեփ Օրբելին որոշեց պեղումների մեկնել Անի՝ միայն հոր թույլտվությունը ստանալուց հետո: Երկու կամ երեք տարի անց նրա մոտ միտք հղացավ՝ թողնել պատմա-բանասիրական ֆակուլտետը և տեղափոխվել արևելյան լեզուների ֆակուլտետ, բայց, ինչպես հետագայում հիշում էր Հովսեփ Օրբելին, «հինգրուպանոց խոսակցությունը հորս հետ բավական էր, որպեսզի մի կողմ նետելի այդ միտքը»¹: Նույնիսկ ծերունական հասա-

¹ И. А. Орбели, Моя научная работа: 1948 թվականի պրիլի 18-ին, (Լենինգրադի դիտնականների տանը, երիտասարդ դիտական աշխատողների, ասպիրանտների և ուսանողների հետ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու հանդիպման երեկոյում նրա ելույթի սղագրությունը (պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում):

Այս աշխատության մեջ Կ. Ն. Յուզբաշյանը օգտագործել է բազմաթիվ նյութեր, որոնք դառնում են Հ. Ա. Օրբելու անձնական արխիվում: Ներկայումս այդ արխիվը հանձնված է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի արխիվի Լենինգրադի բաժանմունքին (ֆոնդ 909), որտեղ և համապատաս-

կում Հովսեփ Օրբելին հաճախ էր հիշում հորը, որի նկատմամբ սիրո ամենախոր զգացմունքներ էր տածում:

Հովսեփ Աբգարի Օրբելու մայրը՝ Վարվառան, արտասովոր մարդ էր: Սերվելով հայ Արղունյան-Երկայնաբազուկների իշխանական տոհմից, նա, այդուհանդերձ, մանուկ հասակից վարժվել էր ֆիզիկական աշխատանքին: Եվ այդ սովորությունը նա ձգտում էր հաղորդել երեսաններին: Նա արտակարգ հոգատարություն էր հանդես բերում երեսանների նկատմամբ, թեև թույլ չէր տալիս ոչ մի շարաճճիություն: Կինելով չափազանց զգայուն, Վարվառա Օրբելին մեծ ուշադրություն էր նվիրում նաև հարևանների երեսաններին, և նրա այն ժամանակվա շրջապատի մարդկանցից շատերը նրա մասին ամենաբարի հիշատակ են պահպանել:

Այրիանալով, Վարվառա Օրբելին սկսում է ֆրանսերեն լեզվի դասեր տալ: Վրաստանում սովետական իշխանության հաստատումից հետո Վարվառա Օրբելին շատ ժամանակ էր հատկացնում հասարակական աշխատանքին դպրոցում, իսկ երեսնական թվականներին նա ընտրվում է Թբիլիսիի քաղաքային սովետի ղեկավար:

Մի քանի խոսք եղբայրների մասին, որոնք քիչ ազդեցություն չեն ունեցել երիտասարդ Հովսեփ Օրբելու հայացքների ձևավորման վրա: Ընկերությունը եղբայրների հետ կապում էր նրան նաև հասուն հասակում:

Ավագ եղբայրը՝ Ռուբեն Օրբելին (1880—1943), ավարտել էր Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, սակայն հետագայում տարվեց ջրասուղակային գործով ու դրա պատմությունները²: Լենինգրադի ռազմա-ծովային թանգարանի պատվավոր տեղերից մեկում ցուցադրված է հնադարյան մի մակույկ, որը պեղել է Ռուբեն Օրբելին Բուզգետի ափին (1937 թ.): Ռուբեն Օրբելին ստորջրյա հնագիտության հիմնադիրներից մեկն է մեր երկրում: Կյանքի վեր-

խան կարգով կժշակվի, Հեղինակը օգտվել է տակավին չմշակված նյութերից, այդ պատճառով էլ նա սահմանափակվում է միայն ընդհանուր վկայակոչումներով:— Խմբ.:

² Տե՛ս օրինակ, «Профессор Рубен Абгарович Орбели. Исследования и изыскания», М.—Л., 1947 թ.:

չին տարիներին Ռուբեն Օրբելին գիտական աշխատանք էր կատարում հասուկ նշանակության ստորջրյա աշխատանքների արշավախմբում (ЭПРОН): Այժմ, ստորջրյա հնագիտության զարգացմամբ, Ռ. Ա. Օրբելու անունը ավելի ու ավելի հաճախ է հիշատակվում ջրասուղակային աշխատանքներին նվիրված գիտական և գիտա-հանրամատչելի գրականության մեջ:

Մյուս եղբոր՝ Լևոն Աբգարի Օրբելու (1882—1958) անունը լայնորեն հայտնի է ո՛չ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: Նա խոշոր ֆիզիոլոգ էր: Նրա «Ընտիր երկերի» առաջին հատորին կցված կենսագրական ակնարկը³ կերտում է ոչ միայն հիանալի նորարար գիտնականի, այլև ազնվագույն մարդու կերպարը: Օգտվելով առիթից նշենք, որ Լևոն Օրբելու մասնագիտության ընտրության գործում ոչ վերջին դերն է խաղացել նրա հորեղբայրը՝ Դավիթ Հովսեփի Օրբելին, որի հետ Լևոն Օրբելուն ոչ միայն բարեկամական կապերն էին կապում, այլ՝ հետազայում նաև մասնագիտական շահերը:

Ընտանեկան ավանդությունները մեծ դեր խաղացին Հ. Ա. Օրբելու հասարակական աշխարհայացքի և նրա բնավորության այնպիսի գծերի ձևավորման մեջ, ինչպիսիք են դատողությունների շիտակությունը, հասարակական պարտքի բարձր ըմբռնումը և իսկական, անզիջում ինտերնացիոնալիզմը⁴:

* * *

Հովսեփ Աբգարի Օրբելին ծնվել է 1887 թ. մարտի 8 (20)-ին Քուֆախում, որն այն ժամանակ մրգատու ծառերի մեջ թաղված գավառական ոչ մեծ քաղաք էր, գերազանցապես վրացական ազգաբնակչությամբ:

³ Л. А. Орбели, Избранные труды, т. 1, М.—Л., 1961, стр. 13—36.

⁴ Օրբելիների ընտանիքի վերաբերյալ տվյալների մի մասը հեղինակն ստացել է Ռուբեն Օրբելու դուստր Ռուսուդան Օրբելուց:

1888 թ. Օրբելիների ընտանիքը տեղափոխվում է Քիֆլիս: Այն ժամանակները Քիֆլիսը խոշոր քաղաք էր—1897 թ. նրա բնակիչների թիվը հասնում էր 160 հազարի: Իր խայտարղես բնակչությամբ այդ քաղաքը, ուր փողոցներում լսվում էր վրացական, հայկական, ռուսական, քրդական, աղբրեջանական խոսքը, նախկին ռուսական կայսրության կուլտուրական կենտրոններից մեկն էր: Պարբերական այլ հրատարակություններից բացի, ամեն օր այստեղ լույս էր տեսնում 8 անուն թերթ՝ չորսը ռուսերեն, երկուսը վրացերեն, երկուսը հայերեն: Քաղաքում հաշվվում էր ավելի քան հարյուր ուսումնական հաստատություն, այն փառաբանված էր իր թատրոններով, ուր հաճախ հանդես էին գալիս համաշխարհային անուն ունեցող դերասաններ: Քիֆլիսը եղել է նոր վրացական և մասամբ նաև հայ նոր գրականության օրրանը: Քիֆլիսը միաժամանակ մի քաղաք էր, ուր խաչածակում էին արևելյան և արևմտյան կենցաղաձևերը: Այսպիսով, Արևելքի նկատմամբ այն կենդանի հետաքրքրությունն ու անկեղծ սերը, որոնք մինչև կյանքի վերջին օրերը չհեռացան Հովսեփ Օրբելուց, նրա մոտ արմատավորվել էին դեռևս երիտասարդ տարիներին:

Հովսեփ Օրբելու մանկությունն անցել է ամենանպաստավոր պայմաններում: 1896 թ. նա տեղավորվում է երրորդ արական գիմնազիայում: Այնտեղ նա լավ սովորեց հունարենը և լատիներենը: Սակայն գիմնազիան բավարար գիտելիքներ չէր տալիս բնական գիտությունների, քիմիայի, ֆիզիկայի ուղղությամբ, և Աբգար Օրբելին որդուն հնարավորություն տվեց տնային ուսուցիչների օգնությամբ անցնել ռեալական ուսումնարանի դասընթացը: Լինելով աշխատավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչ, Աբգար Օրբելին զրտնում էր, որ որդիները պետք է տիրապետեն նաև որևէ արհեստի և անհրաժեշտության դեպքում կարողանան իրենց կերակրել սեփական ձեռքերով: Հովսեփ Օրբելին անցավ ատաղձագործության՝ կարմիր փայտի արվեստի դասընթացը: Այդ գիտելիքները շատ օգնեցին նրան հետագայում, երբ նա դարձավ էրմիտաժի աշխատակից, քանի որ ցուցահանդեսների կազմակերպման ժամանակ ոչ վերջին դերն էին խա-

դում համապատասխան ցուցափեղկերի, ստենդների և այլնի բնատրվիցումն ու պատրաստումը: Պատանեկան տարիներին Հովսեփի Օրբելին սովորեց նաև քարտաշի, իսկ ավելի ուշ՝ գրաշարի արհեստը:

Տակավին վաղ հասակում Հովսեփի Օրբելին տիրապետեց մի քանի արևելյան լեզուների: Օրբելիների տան բակում կար քարհանք, որի բանվորների հետ փոքրիկ Հովսեփը մշտապես շփվում էր. ըստ որում, ծնողների պահանջով, հայերի հետ խոսակցությունն ընթանում էր հայերեն, վրացիների հետ՝ վրացերեն, աղբրեջանցիների հետ՝ աղբրեջաներեն: Հովսեփի Օրբելին ուսերեն խոսում էր միայն ուսանելի հետ, և այդ պատճառով էլ, տիրապետելով մի քանի լեզուների, նա լիովին պահպանում էր ուսական արտասանության մաքրությունը:

1904 թ. Հովսեփի Օրբելին ավարտեց գիմնազիան: Ատեստատում ասված է, որ «Թիֆլիսի 3-րդ գիմնազիայում սովորելու ամբողջ ընթացքում նրա վարքագիծը ընդհանրապես եղել է գերազանց, դասերին հաճախելու, ինչպես նաև գրավոր աշխատանքների կատարման ճշտապահությունը գերազանց է, աշխատասիրությունը գերազանց է և հետաքրքրասիրությունը գերազանց է...»⁵, այնուհետև զալիս են անընդմեջ հինգեր: Նշվում է, որ Հ. Ա. Օրբելին առանձնահատուկ հաջողությունների է հասել պատմա-գրականագիտական գիտությունների ասպարեզում:

1904 թ. հուլիսի 26-ին տասնյոթամյա Հ. Ա. Օրբելին խնդրագիր ներկայացրեց Պետերբուրգի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետն ընդունվելու մասին, այդ համալսարանի հետ Օրբելի ընտանիքին կապում էին վաղեմի տրադիցիաները. իր ժամանակին այդ համալսարանն ավարտել էր Հովսեփի Օրբելու հայրը, ավարտելուց հետո համալսարանում էր թողնվել նրա եղբայր Ռուբենը:

Հովսեփի Օրբելին անցավ պատմա-բանասիրական ֆակուլտետի լրիվ դասընթացը՝ դասական բանասիրության բա-

ժանմունքի գծով⁶: Համալսարանում դասավանդվող առարկաների հեշտ յուրացումը նրա կողմից մեծ շափով պայմանավորված էր գիմնազիական գերազանց պատրաստակալությունով: Հ. Ա. Օրբելու համալսարանական դասախոսների մեջ կային աչքի ընկնող այնպիսի գիտնականներ, ինչպիսիք էին Ս. Ա. Ժեբելովը (1867—1942), Մ. Ի. Ռոստովցևը (1870—1952), Ֆ. Ֆ. Զելինսկին (1859—1946), հնագետ Բ. Վ. Ֆարմակովսկին (1870—1928), բյուզանդագետ Վ. Ն. Բենեշևիչը (1874—1938):

Հունա-հռոմեական հնությունների հետ միասին ուսանող-կլասիկին ավելի ու ավելի հրապուրում էր Արևելքը, Հայաստանի, Վրաստանի, Իրանի պատմությունն ու կուլտուրան: 1906 թվականին նա մասնակցում է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի պեղումներին, իսկ 1907 թվականին ընդունվում Պետերբուրգի համալսարանի նաև արևելյան լեզուների ֆակուլտետը⁷: Այնուամենայնիվ, արդեն որոշելով իրեն նվիրել արևելագիտությանը, Հ. Ա. Օրբելին չթողեց դասական բանասիրությունը, որը նա գիտում էր որպես մի անհրաժեշտ աստիճան արևելագիտական առարկաների տիրապետման գործում⁸ (մասնավանդ որ դասական բանասիրության մեջ նա փնտրում էր կովկասագիտության հարցերին վերաբերող մի շարք պրոբլեմների լուծումը): Հ. Ա.

⁵ Հ. Ա. Օրբելու դասախոսների և հանձնած քննությունների (այդ թվում ավարտական) մասին տվյալները տես ГИАЛО, ф. 14, оп. 20, № 47, лл. 2, 3, 33, 37, № 51, л. 106, № 54, лл. 1—2, оп. 21, № 55, л. 222:

⁷ Զգալի գրականություն է նվիրված ֆակուլտետի և նրա առանձին ամբիոնների պատմությանը: Այդ բնագավառում վերջին աշխատությունը Ա. Ն. Կոնոնովի «Անիյնգրադի համալսարանի արևելյան ֆակուլտետը» ընդհանրացնող հոդվածն է (УЗ ЛГУ серия востоковедческих наук, 1960, вып. 13:— Թողարկումը լիովին նվիրված է ֆակուլտետի անցյալին ու ներկային):

⁸ Իր ժամանակին այդպես վարվեց նաև 20-րդ դարի խոշորագույն հայագետներից մեկը՝ պրոֆեսոր Նիկոլայ Գևորգի Աղոնցը (1871—1942), որի մոտ հետադառնում ուսանեց Հովսեփի Օրբելին: Աղոնցը փայլուն կերպով ավարտեց արևելյան լեզուների ֆակուլտետը, միաժամանակ անցնելով պատմա-բանասիրական ֆակուլտետի լրիվ դասընթացը:

⁵ ГИАЛО, ф. 14, оп. 3, № 42789, л. 5.

Օրբելու մոտ ընդմիջտ պահպանվեց սերն ու հետաքրքրու-
թյունը դեպի դասական բանասիրությունը:

1909 թ. Հ. Ա. Օրբելին ավարտեց պատմա-բանասիրա-
կան ֆակուլտետը և ձեռնամուխ եղավ թեկնածուական աշ-
խատանքի շարագրմանը: «...Գասական [բաժանմունքի]
գծով այժմ համառորեն մշակում եմ «Կովկասի ազգագրու-
թյունն ըստ դասական գրողների տեղեկությունների»,— գրում
էր նա ծնողներին 1910 թ. դեկտեմբերի 12-ին:— Թեման
շատ հետաքրքիր է, ծավալով ոչ շատ մեծ, մտաավորապես
Հասանի շուրի⁹, բայց շատ խառը և մանրակրկիտ աշխատանք
է: Ես այսօր արդեն վերջացրի նյութերի ընտրությունը, մտա-
ծում եմ երկու շաբաթում ավարտել ամբողջ աշխատության
սևագրությունը: Այն գրում եմ պոռֆ. Փեքելյովի մոտ,
բայց այն նախօրոք պետք է գրախոսվի Մառի կողմից»:
Հենց ն. Յա. Մառի (1864—1934) արխիվում էլ հայտնաբեր-
վել է Հ. Ա. Օրբելու պատանեկան շարագրության ձեռագիր
օրինակներից մեկը¹⁰:

Աշխատանքը բովանդակում է անտիկ գրողներ Հերոդոտի,
Քսենոֆոնի, Սարաբոնի և այլոց գրվածքներից Կովկասին
վերաբերող բազմածքներ և հետաքրքիր, երբեմն միանգա-
մայն ինքնուրույն մեկնաբանություններ: 1924 թ. Հ. Ա. Օր-
բելուն սուսական գիտությունների ակադեմիայի թղթակից-
անդամ ընտրելու կապակցությամբ կազմված տեղեկագրի
նախագծում ն. Յա. Մառը գրել է. «Աշխատելով Կովկասի
ազգագրության հարցերի վրա, ես ինձ համար օգուտ քա-
ղելով թերթում եմ նրա ուսանողական աշխատանքը, որի ձե-
ռագիրն այժմ էլ դրված է սեղանիս»¹¹:

1911 թ. Հովսեփ Օրբելին հաջողությամբ հանձնեց պատ-
մա-բանասիրական ֆակուլտետի բնությունները: Միաժա-

⁹ Խոսքը այն ուսումնասիրության մասին է, որը նվիրված է Նեֆրիտա-
յին նրախակալով դաշույնին և նրա տիրոջը՝ իշխան Հասան Զալալին: Այդ
աշխատանքը՝ Հ. Ա. Օրբելու կողմից որպես թեկնածուական աշխատություն
ներկայացվեց արևելյան լեզուների ֆակուլտետ:

¹⁰ ААН, ф. 800, оп. 6, № 737. Ձեռագրի վերջին էջերը շեն պահ-
պանվել:

¹¹ Տեղեկագրի նախագիծը պահպանվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

մանակ (1907 թվականից) Հ. Ա. Օրբելին պարապում է Պե-
տերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտե-
տում:

Անցյալ հարյուրամյակի վերջերից, հատկապես երբ ֆա-
կուլտետի ղեկան է ընտրվում խոշորագույն արաբագետ և
բյուզանդագետ Վիկտոր Ռոմանովիչ Ռոզենը (1849—1908)¹²,
Պետերբուրգը դառնում է արևելագիտության համաշխարհա-
յին կենտրոններից մեկը:

Արևելագետների պետերբուրգյան դպրոցը, գիտնականնե-
րի անհատականությամբ հանդերձ, ուներ իր ցայտուն ար-
տահայտված բնույթը: Արևելքի ժողովուրդների և նրանց
բազմադարյան կուլտուրայի անցյալի նկատմամբ ֆակուլ-
տետում իշխում էր խորը հարգանքի մթնոլորտը: Մեկընդ-
միջտ ընդունված էր, որ Արևելքը պետք է ուսումնասիրվի
նույնպիսի խիստ գիտական մեթոդներով, ինչպես և Արև-
մուտքը: Մեծ ուշադրություն էր դարձվում ոչ միայն մեռած,
այլև կենդանի լեզուների ուսումնասիրությանը, ազգագրու-
թյան, նյութական կուլտուրայի հուշարձանների ուսումնա-
սիրությանը: Պրոֆեսորական կազմի մեջ մտնում էին հա-
մաշխարհային հռչակ և ճանաչում ունեցող մի շարք գիտնա-
կաններ: Հովսեփ Օրբելուն բախտ է վիճակվել ուսանել այն-
պիսի ականավոր արևելագետների մոտ, ինչպիսիք են իրա-
նագետ Վ. Ա. Ժուկովսկին (1858—1918), Միշին Ասիայի
պատմաբան Վ. Վ. Բարթոլդը (1869—1930), սեմագետ Պ. Կ.
Կոկոլցովը (1861—1942), եգիպտագետ Բ. Ա. Տուրանը
(1863—1920) և ուրիշներ: Դրանք գիտությունը անշահա-
խընդորեն նվիրված, արժանի փոխհերթի պատրաստման
գործում կենսականորեն շահագրգռված և այդ իսկ պատճա-
ռով համալսարանական դասավանդմանը շատ ուժ տվող
մարդիկ էին:

Արևելագիտական բոլոր առարկաներից Հովսեփ Օրբելուն
ամենից ավելի գրավեց հայագիտությունը և այդ բնագավա-
ռում նա գտավ այնպիսի հիանալի բարեկամի, ուսուցչի ու

¹² Վ. Ռ. Ռոզենը ղեկան է եղել 1893 թ. հոկտեմբերի 30-ից մինչև
1902 թ. օգոստոսի 1-ը:

դաստիարակի, ինչպիսին Ն. Յա. Մառն էր: Երբ Հովսեփ Օրբելին եկավ Պետերբուրգ, Ն. Յա. Մառն արդեն Ռուսաստանի խոշորագույն արևելագետներից մեկի համբավ ուներ: Նրա անվան հետ է կապված ռուսական կովկասագիտության մի ամբողջ դարաշրջան: 1888 թ. Ն. Յա. Մառը ավարտում է արևելյան լեզուների ֆակուլտետը, նրան թողնում են համալսարանում, և մամուլում մեկը մյուսի հետևից սկսում են երեվան դալ նրա պատմական ու բանասիրական ուսումնասիրությունները: Նա իրավամբ համարվում է հայ-վրացական բանասիրություն ինքնուրույն գիտական նոր ճյուղի հիմնադիրը, նա մշակել է դրա մեթոդիկան, որը և հենց իր սեփական աշխատություններում տվել է ապշեցուցիչ արդյունքներ: Իր աշխատություններում Ն. Յա. Մառը վճռականորեն պնդում էր Հայաստանի և Վրաստանի պատմական ճակատագրերի ընդհանրության վրա: Գոկտորական դիսերտացիայի պաշտպանության ժամանակ արտասանած ներածական խոսքում նա ասել է. «Յեռոգալական կարգը Հայաստանում վրացականին աչքան հարազատ էր, եթե ոչ նույնը, որ հայկական կյանքն ուսումնասիրողը կարող է համարձակորեն օգտվել վրացական հարուստ փաստական նյութերից՝ վերականգնանայնելու համար այն կցկտուր տարեգրային տվյալները, որոնք կարելի է քաղել հայկական աղբյուրներից»¹³: Նման հարցադրումն այն ժամանակ ուներ ոչ միայն գիտական, այլև հասարակական նշանակություն, քանի որ հարված էր հասցնում ինչպես վրացական, այնպես էլ հայկական հասարակության որոշակի շրջաններում տարածված նացիոնալիստական տրամադրություններին:

Անսահմանորեն նվիրված լինելով գիտությանը, Ն. Յա. Մառը նրա իսկական էնտուզիաստն էր: Նրա աշակերտները սկսեցին համալրել արևելյան լեզուների ֆակուլտետի պրոֆեսորական կազմը, նրա տված գաղափարները գրվում էին կապիտալ ուսումնասիրությունների հիմքում: Բուռն եռանդը, անձնական հմայքը դեպի իրեն էր գրավում և՛ ունկնդիրնե-

րին, և՛ հետևորդներին¹⁴: Ն. Յա. Մառի ընդհանուր ղեկավարությամբ Հ. Ա. Օրբելին անցավ արևելյան լեզուների ֆակուլտետի լրիվ կուրսը հայ-վրացական-պարսկական տարակարգի գծով: Լսեց լեզվաբանության ներածության, հայկական, վրացական, պարսկական և արաբական լեզուների, Հին Արևելքի, Վրաստանի և Հայաստանի պատմության, Հայաստանի և Վրաստանի պատմական աշխարհագրության, հայկական և վրացական գրականության պատմության, պարսկական լեզվի պատմության կուրսերը:

Ցակուլտետում, բացի Ն. Յա. Մառից, մասնագիտական պարապմունքներ էին վարում նաև նրա աշակերտներ Ի. Ս. Ջավախովը (Ջավախաշվիլի, 1876—1940), որը 1906 թ. հաջողությամբ պաշտպանեց Վրաստանի և Հայաստանի պետական կարգին նվիրված մագիստրոսական դիսերտացիան, և Ն. Գ. Ադոնցը, որի «Հայաստանը Հուստինիանոսի էպոխայում» դիսերտացիան նոր դարաշրջան էր հայագիտության մեջ:

Ն. Յա. Մառը համառորեն պայքարում էր հանուն ուսումնական առարկաների շերտավորման, նա պայքարում էր այն բանի դեմ, որպեսզի նույն կուրսում շարադրվեին և՛ լեզուն, և՛ գրականությունը, և՛ պատմությունը: Այն տարիներին, երբ Հ. Ա. Օրբելին հաճախում էր այդ ֆակուլտետը, դասավանդումը արդեն տարվում էր լրիվ ժամանակակից ձևով:

Իննհարյուրական թվականների սկզբներին Հովսեփ Օրբելու վրա մեծ ազդեցություն գործեց հիանալի գիտնական, ակադեմիկոս Յակով Իվանովիչ Սմիռնովը (1869—1918), որը արտասովոր լայն դիապազոնի տեր ուսումնասիրող էր: Յա. Ի. Սմիռնովը անչափ հետաքրքրվում էր հայկական հնություններով, Ն. Յա. Մառի հետ միասին կատարեց Գառնիի տաճարի պեղումները, ուսումնասիրեց այն ժամանակ այնքան խորհրդավոր ֆանտաստիկ ձուկ-վիշապները: 1899 թ.

¹³ Ն. Յա. Մառի, որպես գիտնականի, անցած բարդ և հակասական ուղու բնութագրեր տես Վ. Ի. Աբաև, «Ն. Յա. Մառ (1864—1934)», Մահվան 25-ամյակի առթիվ» հոդվածում («Вопросы языкознания», 1960, № 1):

¹³ В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, М.—Л., 1949, стр. 66.

լինելով Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ, Յա. Ի. Սմիռնովը հրաժարական է տալիս և էրմիտաժում գրավում Միչին դարերի ու Վերածննդի դարաշրջանի բաժնի թանգարանապահի պաշտոնը: Համալսարան դասախոսելու նա վերադարձավ միայն 1913 թվականին: Բայց այդ ամբողջ ժամանակ նա պարապում էր ունկնդիրների հետ, որոնց մեջ էր և Հ. Ա. Օրբելին: Մի ամբողջ տարի Հովսեփ Օրբելին հաճախում էր Յա. Ի. Սմիռնովի՝ Ախթամարի տաճարի ուսումնասիրություններին նվիրված սեմինարիին¹⁵:

Հետագայում Հովսեփ Օրբելին այդ տաճարին նվիրեց (բացի փոքր հոդվածից) մի ընդարձակ ուսումնասիրություն¹⁶, որը գիտնականի կենդանության օրոք չհրատարակվեց: Հ. Ա. Օրբելին ընդմիջապես պահպանեց Յա. Ի. Սմիռնովի նկատմամբ տաժած սերն ու խոր ակնածանքը: Նա հաճախում էր Յա. Ի. Սմիռնովի դասախոսություններին, վերջինս էլ իր հերթին լսում էր Հովսեփ Օրբելու դասընթացը և, ինչպես միշտ, իր խորհուրդներով օգնում էր նրան: Հետագայում իր հրապարակային ելույթներում Հովսեփ Օրբելին հաճախ էր խոսում Յա. Ի. Սմիռնովի մասին և միայն հազվադեպ հոդվածում շնորհակալություն չի հայտնում օգնության համար¹⁷:

Սակայն պարապմունքները լսարանում միակ աղբյուրը

¹⁵ Այդ սեմինարի աշխատանքի մասին հիշատակված է համալսարանի գործունեության վերաբերյալ պաշտոնական հաշվետվության մեջ. «Շարաթական երկու ժամ պրիվատ-դոցենտ Յա. Ի. Սմիռնովի ղեկավարությամբ անց էին կացվում զործնական պարապմունքներ՝ մեծ մասամբ պրիվատ-դոցենտ Հ. Ա. Օրբելու Ախթամարի տաճարի բարձրաքանդակների լուսանկարների հիման վրա, ընդ որում քննարկվում էին նաև Անդրկովկասի ու Ռուսաստանի եկեղեցիների մի քանի այլ բարձրաքանդակներ» (Տե՛ս «Отчет о состоянии и деятельности Императорского Петербургского Университета за 1915 год». Составил Д. С. Рождественский, Пр., 1916, стр. 177.

¹⁶ Խոսքը «Ախթամար» աշխատության մասին է:

¹⁷ И. Орбели, О чем думалось в дни и ночи блокады Ленинграда.— «Дружба», կազմեց և ակնարկի ներածականի հեղինակն էր Աշոտ Արզումանյանը, кн. 2, Ереван, 1960, стр. 29—30. Տե՛ս նաև՝ И. Жебелев, Яков Иванович Смирнов.— «Сборник статей по археологии и византиноведению, издаваемый семинарией имени Н. П. Кодакова», Прага, 1928.

չէին, ուր ապագա կովկասագետն ստանում էր մասնագիտական գիտելիքներ: Նույնքան շատ բան նրան տալիս էր նաև նրա մասնակցությունը Անիի հնագիտական պեղումներին, որոնք կատարվում էին Ն. Յա. Մառի ղեկավարությամբ:

Ն. Յա. Մառի բազմակողմանի գործունեության մեջ բացառիկ տեղ են գրավում նրա գլխավորությամբ կատարված հնագիտական պեղումները Հայաստանի հին մայրաքաղաքում:

Մինչ այդ Անիի պատմությունը հայտնի էր միայն այն տեղեկությունների շրջանակներում, որոնք հաղորդում էին պատմողական աղբյուրները և վիմագիր արձանագրությունները: Արդեն 5-րդ դարի հուշարձաններում, պատմական Հայաստանի հյուսիսային մասում, Ախուրյան գետի վրա գտնվող Անի քաղաքը հիշատակվում է որպես ամրոց: 9-րդ դարում Բագրատունիները այդ ամրոցը իր շրջակայքով ձեռք են բերում Կամսաբեկանների ֆեոդալական տոհմից: 9-րդ դարի երկրորդ կեսին Բագրատունիներին հաջողվում է թոթափել արաբական լուծը և հիմնել անկախ թագավորություն: Աշոտ 3-ի օրոք (953—977) Անին դառնում է Բագրատունիների պետության մայրաքաղաքը: Քաղաքը զարդարվում է ճարտարապետական հիասքանչ կառույցներով, ընդարձակվում է նրա տերիտորիան: 1045 թ. Բյուզանդիան զավթում է Անիի թագավորությունը, իսկ 1064 թ. Անին կործանում են սուլթան Ալի-Ասլանի թուրքական հորդաները: 1072 թ. Անիում հաստատվում են քուրդ Շեղաղյանների գինաստիայի կառավարիչները, իսկ 12-րդ դարի վերջերին քաղաքը միացվում է վրացական թագավորությանը: 1239 թ. Անին գրավում են մոնղոլները: Ըստ պատմական ավանդության, Անին ամայացավ 1319 թ. երկրաշարժի հետևանքով:

19-րդ դարում ճանապարհորդները քանիցս այցելել են Անի, սակայն նրանց դիտարկումները չէին կարող էական ազդեցություն ունենալ ավանդական հայացքների վրա, որոնց համաձայն Բագրատունիների անկումից հետո 11-րդ դարի վերջում, քաղաքն անկում ապրեց: 1892 և 1893 թվականներին Ն. Յա. Մառը կազմակերպեց երկու փոքր արշավախումբ դեպի Անի: Շատ հաջող սկսված պեղումները հարկ եղավ դա-

դարեցնել, քանի որ նյութական մշակույթի հայտնաբերված հուշարձանները բաշխվում էին տարբեր թանգարանների և այդպես կարող էին անհետանալ հետազոտողի տեսադաշտից: Բայց 1904 թ. ն. Յա. Մառը վերսկսեց պեղումները, և այդ ժամանակից սկսած ամեն ամառ դեպի Անի էր մեկնում հնագիտական արշավախումբ: Ընդհանուր առմամբ մինչև 1917 թ. ն. Յա. Մառին հաջողվեց անցկացնել տասնվեց հնագիտական արշավ:

Պեղումների արդյունքները վիթխարի էին: ն. Յա. Մառը կարողացավ շատ մանրամասնորեն վերականգնել միջնադարյան քաղաքի տեսքը: Հնագիտական նյութերը ցույց տվեցին, որ Անին մահացել է ոչ թե 11-րդ դարում, այլ մի քանի հարյուրամյակ հետո միայն, և որ քաղաքը եղել է ինքնատիպ ու շատ բարձր մշակույթի օրրան:

ն. Յա. Մառը և նրա աշխատակիցները ձգտում էին ոչ թե սենսացիոն հայտնագործումների, այլ իրական պատմական պատկերի վերաստեղծմանը՝ իր բոլոր հակասություններով հանդերձ:

Արդեն ընթացիկ հարյուրամյակի արշավույսին ն. Յա. Մառը հայտարարեց. «Հասարակության մեջ և գիտնականների շրջանում գոյություն ունի հետաքրքրություն գլխավորապես, եթե ոչ բացարձակապես, դեպի տոնական ու շքեղաշուք Անին... Բայց չի կարելի մոռանալ, որ որքան էլ փոքր էր Անին, այնուամենայնիվ, այնտեղ ապրել են և հասարակ մահկանացուներ, բանվորներ, արհեստավորներ, մանր առևտրականներ, ընդհանրապես աշխատավոր մարդիկ: Նրանց կենցաղի, որքան էլ այն համեստ ու անհրապույր լինի, նրանց անշուք բնակարանների ու տնտեսության, մի խոսքով առօրյա և ամենօրյա Անիի ուսումնասիրությունը մեզ համար ներկայացնում է ո՛չ պակաս հասարակական-պատմական հետաքրքրություն»¹⁸:

Պեղումների վերսկսումից մի քանի տարի անց ստեղծվեց Անիի հնագիտական ինստիտուտը: Այդպես էլ շտառնալով

գիտությունների ակադեմիայի ձևական հաստատումը, այդ ինստիտուտը, որն առաջին աշխարհիկ գիտահետազոտական հիմնարկությունն էր Հայաստանի տերիտորիայում, տարեցտարի սկսեց ընդլայնել իր գործունեությունը: Հետագայում նա հիմք ծառայեց Քրիլիսիում Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի ստեղծմանը (1918 թ.), որից որոշ իմաստով սկիզբ են առնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայումս գործող մի շարք գիտական հիմնարկություններ:

Մասնակիցների համար Անիի պեղումները հնագիտական հիանալի դաս էին: Այդ արշավներից Հովսեփ Օրբելին ստացավ և՛ նյութի պեղումների, և՛ մեթոդիկայի խորը իմացություն, իսկ ամենազլխավորն այն է, որ Անիի հուշարձանների գիտումները նրա մեջ ծնեցին մի շարք կարևոր ու բեղմնավոր գաղափարներ: Այդ գաղափարները շուտով բնական Առաջավոր Ասիայի մշակույթի և արվեստի մասին գրած նրա հիանալի աշխատությունների հիմքում: «Հ. Ա. Օրբելին ընդհանրապես իր գիտական գործունեության և գիտական աշխարհայացքի դարգացման մեջ մեծ շափով կախված էր ուսումնասիրվող իրական առարկաների հետ անմիջական շփումից»¹⁹,— հետագայում նշում էին ակադեմիկոսներ ն. Յա. Մառը, Ս. Ֆ. Օլդենբուրգը (1863—1934) և Ի. Յու. Կրաչկովսկին (1833—1951):

Անիում, հիշում էր Հ. Ա. Օրբելին, «շարունակվում էր և՛ լեզուների, և՛ պատմության, և՛ բանասիրության, և՛ արվեստի պատմության ուսումնասիրությունը՝ պեղված հնագույն հուշարձանների հիման վրա: Այդ բոլորը աշակերտներին էր անցնում հենց իր՝ Մառի միջոցով... Աշակերտների հետ նա սիրալիր էր, ինչպես երեխաների հետ, ժպտալով մեզ անվանում էր «տղաներ», բայց սխալի դեպքում մեզնից պահանջում էր վրդովված, ինչպես մեծերից, ինչպես իրեն հավասարից»²⁰:

18 Н. Я. Марр, Раскопки в Ани летом 1904 г.,— «Известия Археологической комиссии», вып. 18, 1906, стр. 82—83, տե՛ս նաև В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, стр. 121.

19 Н. Марр, С. Ольденбург, И. Крачковский, Записка об учебных трудах И. А. Орбели,—ИРАН, серия VI, т. 18, 1924, стр. 574.

20 И. А. Орбели, Моя научная работа.





Անիի պեղումներում. մզկիթի մտ: Աջից ձախ՝ Ն. Յա. Մառ,
Հ. Ա. Օրբելի, Յուսի Մառ, ճարտարագետ Ս. Ն. Պոլտորայկի,
լուսանկարիչ Ն. Ն. Տիխոնով: 1907 թ.

Հովսեփ Օրբելին առաջին անգամ Անի եկավ 1906 թ.: Արշավը հաջող էր ընթանում՝ ավարտվեց կլոր տաճարի մաքրումը, որը կառուցել էր Գագիկ թագավորը (990—1020), ձևով կրկնելով էջմիածնի մոտ գտնվող հանրահայտ Զվարթնոց եկեղեցին (7-րդ դ.): Գտնվեց Գագիկ թագավորի արձանը՝ չալմալով, որին իր հաշվետվության մեջ Ն. Յա. Մառը նվիրեց մի հատուկ ուսումնասիրություն: Գագիկի տաճարում հայտնաբերվեց 11-րդ դարի պղնձյա մի հսկայական ջահ (լամպադոֆոր), բայց այնքան ծամուտված ու ալյանդակված, որ սկզբում դրա կառուցվածքը նույնիսկ ընդհանուր գծերով անհասկանալի էր: Զահի վերականգնման գործը Ն. Յա. Մառը հանձնարարեց Հ. Օրբելուն, վերջինիս հարկ եղավ մեկնել Ալեքսանդրապոլ (այժմ՝ Լենինական), ուր նա մեկ շաբաթ սովորեց փականագործի մոտ, ասյա հավաքելով կտորները

և, ելնելով հայտնաբերման ժամանակ դրանց ունեցած դիրքից, վերականգնեց ջահը իր նախնական ձևով:

Այդ ժամանակվանից Հովսեփ Օրբելին համարյա ամեն ամառ անց էր կացնում Անիում, ամենագործնական մասնակցությունն ունենալով պեղումներին: Ն. Յա. Մառը ըստ արժանավայել էր գնահատում նրա ունակություններն ու եռանդը և 1907 թ. նույնիսկ մտադիր էր նրան իր հետ տանելու Քուրբիա, ուր նա մտածում էր պեղումներ սկսել: Պահպանվել է ժողովրդական լուսավորության մինիստրության թույլտվությունը Հ. Ա. Օրբելուն «որպես Ն. Յա. Մառի մերձավորագույն աշխատակցի»²¹ 1907 թ. մայիսի 20-ից մինչև սեպտեմբերի 1-ը Ասիական Քուրբիայի սահմաններում հնագիտական հետազոտություններ կատարելու համար գործուղելու մասին: Այդ արշավը տեղի չունեցավ, բայց Հովսեփ Օրբելին մասնակցեց Ն. Յա. Մառի կողմից դեպի Օլթիի շրջանը (այժմ՝ Քուրբիայում) կաղմակերպված մեկ ուրիշ ճանապարհորդության:

Անիում այլ պարտականությունների հետ միասին Հ. Ա. Օրբելին ղեկավարում էր նաև հնությունների թանգարանը, որը պեղումների տեղում դեռևս 1904 թ., մասնավոր մարդկանց հավաքած միջոցներով, ստեղծել էր Ն. Յա. Մառը: Սկզբում թանգարանի համար հարմարեցված էր Մանուչե մզկիթը, որը երկհարկանի շենք էր՝ հսկայական խոյակներ ունեցող մեծ սյուներով, տարբեր գույնի քարերից մոզայիկ շարվածքով լցված քառակուսի-կեստնների բաժանված առաստաղով: Այդ շենքը Անիի լավագույն ճարտարապետական հուշարձաններից մեկն էր, անվանումը կապված է Մանուչե էմիրի հետ, որն այն դարձրել էր մզկիթ: էմիրի ժամանակ կառուցվել էր նաև մինարեն: 1906 թ. արշավի (որին առաջին անգամ մասնակցում էր Հ. Ա. Օրբելին) հաշվետվության մեջ Ն. Յա. Մառը գրում էր. «Վերջապես, շատ էին Անիի թանգարանի մաքրման, կարգի բերման, հնությունների նրկարագրման ու տեղադրման աշխատանքները: Սակայն այստեղ չարվեց այն ամենը, ինչ անհրաժեշտ էր, իսկ այն էլ,

²¹ ГИАЛГО, ф. 14, оп. 3, № 42789, л. 29.

ինչ արված է, ձեռք է բերվել շնորհիվ նրա, որ այս տարի ես ունեի հիանալի աշխատակիցներ՝ նկարիչ Ա. Ն. Պոլտորացիին և ուսանող Հ. Ա. Օրբելին, որոնք առանց ձեռքերը ծախելու աշխատում էին թանգարանում ոչ միայն ցերեկները, երբեմն նաև գիշերները»²²;

1908 թ. սեպտեմբերին ավարտվեց թանգարանի նոր շենքի կառուցումը: Անիի հնությունների թանգարանն ստանում էր բոլոր այն առարկաները, որոնք հայտնաբերվել էին քաղաքում սկսած 1905 թ. (մասամբ 1904 թ.): Այդտեղ էլ կենտրոնացվում էին ճարտարապետական դետալներ ու վիմագիր արձանագրություններ, այդ թվում նաև 1892—1893 թթ. (մասամբ և 1904 թ.) հավաքվածները: 1892—1893 թթ. (մասամբ և 1904 թ.) պեղումներից մնացած այլ առարկաները բաժին ընկան Հրմիրաժին և Մոսկվայի պատմական թանգարանին: Մանուշեի մզկիթում (առաջին բաժանմունք) պահվում էին մանր դետալները և Գաղիկ թագավորի արձանը, նոր թանգարանում (երկրորդ բաժանմունք) տեղավորված էին արձանագրությունները, ճարտարապետական դետալները, խաչքարերը:

Անիի թանգարան հաճախողների թիվը շատ մեծ էր: Ամռանը այնտեղ լինում էր մոտ երկու հազար մարդ: Ավերակ քաղաքի և պեղումների ժամանակ հայտնաբերված առարկաների հետ ծանոթանալու համար շատերը գալիս էին Ռուսաստանի ներքին նահանգներից: Անի էին գալիս շատ օտարերկրացիներ²³, Հովսեփ Օրբելուն հարկ էր լինում հաճախողների տալ ընդարձակ բացատրություններ, որոնք հաճախ վերածվում էին իսկական դասախոսությունների:

1909 և 1910 թթ., երբ Ն. Յա. Մառը Գառնիում պեղումներ էր կատարում, Անիում բոլոր աշխատանքները ղեկավարում էր Հ. Ա. Օրբելին: 1909 թ. ամռան երկրորդ կեսին նա ձեռնարկեց մի ինքնուրույն ճանապարհորդություն դեպի

պատմական Հայաստանի մարզերից մեկը՝ Խաչեն (Լեռնային Ղարաբաղում): Ն. Յա. Մառի մշակած ծրագրի համաձայն, Հովսեփ Օրբելին պետք է «համառոտակի նկարագրեր հնագույն Խաչենի իշխանություն (այժմյան Ելիզավետպոլի նահանգը) քրիստոնեական հուշարձանները և նրա սահմաններում հավաքել ու ստուգել հայտնի վիմագիր նյութերը: Իմ ընտրությունը, շարունակում է Մառը, «ընկալ ուսանող Հովսեփ Օրբելու վրա նրա համար, որ, մի կողմից, նա երեք ամառ ինձ հետ պրակտիկա էր ձեռք բերում Անիի հնագիտական աշխատանքներում և իմ ղեկավարությամբ հաջողությամբ զբաղվում էր հայկական հին արձանագրությունների և նոր հայտնաբերվածների ընթերցմամբ, իսկ մյուս կողմից՝ նա այժմ կարող է համարվել Խաչենի իշխանության հիշված բոլոր արձանագրությունների լավագույն գիտակը. այդ իշխանության պատմությունը նա հիանալիորեն ուսումնասիրել էր՝ Խաչենի տիրակալ Հասան Զալալի դաշույնի նեֆրիտյան երախակալի երևան գալու կասկածություններով»²⁴:

Ամառվա մեծ մասը անցկացնելով Անիի պեղումներում, Հ. Ա. Օրբելին ուղևորվեց Խաչեն: «Այստեղ եղածս ժամանակ, — գրում է նա հաշվետվության մեջ, — ինձ հաջողվեց շրջագայել Զիրվանշիրի գավառի միայն մասամբ «նախալեռնային» (իրականում շատ լեռնոտ) մասը: Բոլոր հուշարձանները, որոնք այցելեցի, մեծ մասամբ վերաբերում էին 13-րդ դարին, մասամբ 12-րդ և 14-րդ (ապա թվարկվում են վանքեր, որոնք հաջողվել էր տեսնել: — Կ. Յու.) ... Հիշյալ բոլոր կետերում իմ կողմից պատճենահանված է 220 արձանագրություն, ընդ որում, նրանց մի մասը մինչև օրս անհայտ է եղել»²⁵:

Խաչեն կատարած ուղևորությունը Հովսեփ Օրբելուն հնարավորություն տվեց անելու մի շարք արժեքավոր հետազոտություններ, հավաքել կարևոր վիմագիր նյութ, և միևնույն

²² Н. Марр, О раскопках и работах в Ани летом 1906 г. (предварительный отчет).—«Тексты и разыскания по армяно-грузинской филологии», кн. X, СПб, 1907, стр. 55.

²³ Н. Марр, Об учреждении Анийского археологического института—ИАН, 1910, стр. 444.

²⁴ ГИАЛО, ф. 14, оп. 3, № 15792, л. 9 (автографы письма Н. Я. Марра от 17 января 1909 г., адресованного факультету восточных языков).

²⁵ ГИАЛО, ф. 14, оп. 3, № 15792, л. 153. Հ. Օրբելու ինքնագիրը Ն. Մառի եղբայրությամբ՝ «Համարում եմ գոհացուցիչ»:

ժամանակ 1911—1912 թթ. Քուրբաճայաստան կատարվե-
ցիք բարդ, ինքնուրույն ուղևորությունից առաջ այն հանդի-
սացալ մինչ այդ ձեռք բերած ունակությունների օգտակար
ստուգում:

Ուսուցմամբ և դաշտային աշխատանքներով հագեցված
այդ տարիներին մամուլում երևում են Հովսեփ Օրբելու առա-
ջին աշխատությունները: «Simitose в Итальянской надписи
ΣΕΜΙΑΛΙΣ simila similago»²⁶ խորագիր կրող նրա ամե-
նավաղ աշխատանքը լույս է տեսել 1908 թ. մինչհեղափո-
խական շրջանի ամենապատկանելի հրատարակություններից
մեկի՝ «Փողովրդական լուսավորության մինիստրության ամ-
սագրում», որի էջերում իրենց հոդվածներն էին տպագրում
խոշորագույն գիտնականները: Հոդվածը նվիրված է մ. թ. ա.
391 թ. հունական արձանագրության մեջ եղած վիճելի տեր-
մինի քննարկմանը: Հեղինակը ենթադրում է, որ այդ ար-
ձանագրությունում խոսքը σιμιδος 'αροθρα-ի, այսինքն՝
հացահատիկային բույսերով ցանված դաշտի մա-
սին է, և ձգտում է ցույց տալ, որ հունարեն σιμιδος (որտեղից
և σιμιδαίος՝ ածականը) ծագել է վրացական simindi-ից իր
հնագույն ձևերով: Ներկայիս վրացականում simindi-ն նշա-
նակում է եգիպտացորեն, իսկ հնագույն ժամանակներում այդ
բառը կարող էր նշանակել և՛ ցորեն, և՛ հացահատիկային այլ
բույսեր:

Հովսեփ Օրբելու առաջարկած ստուգաբանությունը, ժա-
մանակակից տեսանկյունով, չի կարող անվիճելի ճանաչվել:
Սակայն հոդվածում ակնառու է երիտասարդ ուսանողի պրո-
ֆեսիոնալ վարպետությունը, որ համարձակորեն օգտվում էր
շատ լեզուների՝ հին հունարենի, հին վրացերենի, հին հա-
յերենի, ասորերենի, արաբերենի, սանսկրիտի տվյալներից:
Հետազոտությունը նվիրելով մասնավոր հարցի, հեղինակը
միևնույն արմատի տարբեր արտացոլումները լուսաբանող
հսկայական նյութ էր հավաքել: Իր առաջին տպագիր աշխա-
տանքի վերաբերյալ ինքը՝ Հ. Ա. Օրբելին, հետագայում շար-
դարացվող խստություններ է արտահայտվել: «Երբ 19 տարե-
կան էի, ես հաջող զեկուցում կարդացի, որը տպագրվեց ժո-

ղովրդական լուսավորության մինիստրության ամսագրում:
Ինձ գովեցին, ես տարվեցի դրանով և հոգովածի «պակասնե-
րը լրացրի», նրան ավելացնելով օրինակներ այնպիսի լեզու-
ներից, որոնք ես այն ժամանակ կամ վատ գիտեի (արաբե-
րեն) կամ բոլորովին չգիտեի (սանսկրիտ), բայց ես ցանկա-
նում էի ցույց տալ իմ ամբողջ էրուզիցիան: Արդյունքը եղավ
այն, որ ես այնպիսի ճիպոտահարության ենթարկվեցի, որ
երբեք չեմ մոռանա: Այդ օրվանից ես հաստատապես յու-
րացրեցի, որ լեզվաբանական հետազոտության մեջ որպես
օրինակներ իրավունք ունես բառեր բերել միայն այն տեքստ-
տերից, որոնք դու կարդացել ես, այլ ոչ թե դրանք կորզել
ես բառարանից»²⁷:

Այդ նույն ամսագրում Հովսեփ Օրբելին հրատարակել էր
նաև իր երկրորդ հոդվածը, որտեղ տեղական լեզուների տրվե-
լալների հիման վրա դասական բանասիրությունը շաղկապ-
վում էր կովկասյան ցեղանունների հետ²⁸: Անտիկ հեղինակ-
ների աշխատություններից վերցված տեղեկությունների հի-
ման վրա, Հովսեփ Օրբելին ցույց էր տալիս, որ Դիոսկուրիասի
փլատակները հարկավոր է փնտրել Կողոբ գետից Պիցոն-
դայի ուղղությամբ 23—25 վերստի վրա: Այստեղ հոտում է
մի գետակ, որի անուններից մեկը հնչում է Իսկուրիա. նա
ծով է թափվում Իսգաուր, Իսկուրգե, Իսկուրիա անունը կրող
հրվանդանի մոտ: Հ. Ա. Օրբելին հերքում է այն կարծիքը,
որ հունական Դիոսկուրիասը հանդես է եկել տեղական Իս-
կուրիայից: Նրա կարծիքով ավելի ճիշտ է հակառակ ենթա-
դրությունը: Բայց «Դիոսկուրիաս» անվանումը կապված է լե-
զենդար արգոնավորդներ-դիոսկուրներ Կաստորի ու Պոլիդեկի
հետ, և պատահական չէ, որ հույները այդ վայրին տվել են
նման մի անուն: Վերլուծելով Մուխոմի բաղաբի ներկա ա-
նունը, Հովսեփ Օրբելին հանգում է այն եզրակացության, որ
նա ծագել է «Լեխում» — «երկվորյակների երկիր» բառից:
Իսկ «Լեխում» բառը ծագում է «θgum», «θgum» — «երկ-

27 Н. А. Орбели, Моя научная работа.

28 Н. Орбели, Город близнецов ΔΙΟΣΚΟΥΡΙΑΣ и племя возниц-
ΗΝΙΟΧΟΙ.—ЖМНП, 1911, новая серия, ч. 33, май, стр. 195—215.

²⁶ S' u ЖМНП, 1908, новая серия, ч. 18, декабрь, стр. 521—531.

վորյակներ», «ջուխտ» բառից: Այդ հանգամանքն էլ հույներին դրդել է քաղաքը կոչել Դիոսկուրիաս, քանի որ նրանց (հույների) պատկերացմամբ, արգոնավորդների ուղին անցնում է Կոլքիսով և նրանք չէին կասկածում, որ տեղական անունը հիշատակություն է պահպանել այն մասին, որ այստեղ եղել են դիոսկուրներ: Այդպես էլ Սե ծովի արևելյան ցեղերից մեկի անունը ΗΝΙΟΧΟΙ—կառապաններ—պետք է շտկել և դարձնել ΗΝΟΧΟΙ, քանի որ նա սվանական ցեղերից մեկի անունն է:

Մասնանշված հողվածները իրենց թեմատիկայով հարում են դասական բաժանմունքի գծով՝ Հովսեփ Օրբելու «Կովկասի ազգագրությունը ըստ հին հունական և լատինական գրողների տեղեկությունների» ավարտական շարադրությանը: Այդ հողվածներում ուսումնասիրվող առարկային մոտենալու ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը զուգակցվում են դասական բանասիրության բնագավառում լայն իմացություն հետ:

Հայկական մակագրությամբ մուգ-կանաչավուն նեֆրիտից պատրաստած երախակալ... Ինչպիսի՞ խնդիր պետք է դնի իր առջև նրա հետ ծանոթացող հետազոտողը: Ծիշտ նկարագրել, նման հուշարձանների շարքում գտնել նրա տեղը, պահպանված հայկական կցագրերում եղած մակագրությունների հիման վրա որոշել նրա տեղերին: Հենց այդպիսի աշխատանք կատարեց Հ. Ա. Օրբելին, դիմելով նախկին Կովկասյան թանգարանում պահված այդ նրբագեղ առարկային²⁹: Նրա հողվածը դրված է այնպիսի պրոֆեսիոնալ հրմտությամբ, որով կարող է հպարտանալ նույնիսկ հասուն գիտնականը: Ավելին, նրա մեջ զգացվում է ոչ թե հրապուրանք, այլ իսկական սեր դեպի հին մշակույթի հուշարձանները, այն լուրջ և կրքոտ սերը, որը Հովսեփ Օրբելու մեջ պահպանվեց մինչև իր կյանքի վերջը:

Հրապարակված հողվածը լրիվ ինքնուրույն արժեք էր ներկայացնում, սակայն, պատրաստելով այն, հեղինակը իր

խնդիրը ավարտված չէր համարում: «Գիտությունների ակադեմիայի տեղեկագրի» հաջորդ համարում հանդես եկավ շարունակությունը. «hАсан Джалал, князь Хаченский»³⁰: Հեղինակը մանրազնին աշխատանք էր կատարել, հին պատմագիրների աշխատություններից, ձեռագրերի հիշատակաբաններից, վիմագրերից և արձանագրություններից հավաքել էր այն բոլոր տեղեկությունները, որոնք վերաբերում են դաշույնի տիրույթը, Խաչենի տեր Հասան Ջալալին (մեռ. 1261 թ.): Մանգու խանի օրոք հինգ տարի Հասան Ջալալը գտնվում էր Ոսկե Հորդայում և այն ժամանակ էլ որպես նրավեր ստացել էր նեֆրիտյան երախակալով դաշույնը: Այդ հողվածը առանձին ֆեոդալական տիրակալի կենսագրությունն է, այլ մոնղոլական տիրապետության առաջին տասնամյակներին Խաչենի շրջանի քաղաքական կյանքի ու կենցաղի մի պատկեր է:

Ինչպես վերը նշվեց, այդ աշխատության ձեռագրի հետ ծանոթանալը Ն. Յա. Մառին հիմք տվեց Հ. Ա. Օրբելուն գործուղել Խաչեն, և հենց այդ ուսումնասիրությունն էլ ներկայացվեց որպես ավարտական շարադրություն արևելյան լեզուների ֆակուլտետում³¹:

Սկսեցին երևան գալ նաև Անիին և նրա հնություններին նվիրված աշխատություններ: 1910 թ., Ն. Յա. Մառի հիմնադրած «Անիի մատենաշարում», լույս տեսավ Հ. Ա. Օրբելու կազմած Անի քաղաքի ուղեցույցը³²: Երեք ամառ անընդմեջ

³⁰ Н. Орбели, hАсан Джалал, князь Хаченский.— ИАН, 1909, серия VI, т. 3, № 6, стр. 405—436.

³¹ Р. Ն. Առաքելյանի կողմից կազմված Հ. Ա. Օրբելու կենսագրության մեջ («Материалы к библиографии ученых СССР, Иосиф Абгарович Орбели», ներածական հողվածը Р. Ն. Առաքելյանի, կազմողներ՝ Ն. Մ. Վլասյան, Ա. Ս. Մանասարյան, Մ. Ա. Բարթիկյան, Երևան, 1957, էջ. 11), սպրդել է անհշտություն՝ երկու հողվածներն էլ գիտությունների ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքի նիստին են ներկայացվել 1909 թ. հունվարի 28-ին, հետևաբար, զրվել են ոչ թե Խաչեն մեկնելուց հետո, ինչպես պնդում է Р. Ն. Առաքելյանը, այլ մինչ այդ:

³² Н. Орбели, Краткий путеводитель по городищу Ани (с планом). СПб, 1910 (Анииская серия, № 4).

²⁹ Н. А. Орбели, Нефритовая книжальная рукоять с армянской надписью — ИАН, 1909, серия VI, т. 3, № 5, стр. 377—389.

անցկացնելով Անիում, Հովսեփ Օրբելին հանգամանորեն ուսումնասիրեց ավերակ քաղաքը և նրա հուշարձանները: Նրան բազմաթիվ անգամ հարկ էր լինում բացատրություններ տալ անթիվ այցելուների, այնպես, որ նա լիովին տիրապետում էր պեղված և պեղման ենթակա կառույցների ցուցադրման մեթոդիկային, հայտնաբերում առավել հարմար ուղերթեր և այլն: Նրա կազմած ուղեցույցը ընթերցողին մատչելի ձևով հաղորդում էր բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հայկական մայրաքաղաքի անցյալի հուշարձանների մասին: Քայց նախամտածված լինելով որպես ուղեցույց իրազեկ ընթերցողի համար, գիրքը պարունակում էր նաև Անիի հնությունների գիտական նկարագրությունը: Նրա հեղինակը համարձակորեն արտահայտում է իր սեփական կարծիքը, ընթերցողին ծանոթացնում իր անձնական հետազոտությունների հետ: Դա, եթե կարելի է այդպես արտահայտվել, Անիի մասին գիտական ուղեցույց էր: Աշխատանքին կցված է քարտեզագիր Ֆ. Կ. Մոսկիչի կազմած ավերակ քաղաքի ընդհանուր հատակագիծը: Օգտվելով այդ հատակագծից, հեշտությամբ կարելի է որոշել ուղեցույցում նկարագրված հուշարձանների գտնվելու տեղը:

Գիտական առավել մեծ նշանակություն է ներկայացնում Հ. Ա. Օրբելու կազմած Անիի թանգարանի կատալոգը³³, նրա ներածականում Հովսեփ Օրբելին համառոտակի շարադրում է 1892 թվականից մինչև 1909 թվականը կատարված պեղումների պատմությունը, բերում է անհրաժեշտ բիբլիոգրաֆիան: Կատալոգում նկարագրված են թանգարանի առաջին բաժանմունքի առարկաները՝ գրականության վկայակոչմամբ: Այստեղ լիովին գրականորեն է ցուցանմունքների գերազանց իմանալը, նրանց նկարագրության համար ճիշտ բառերը գտնելու հմտությունը և, որ գլխավորն է, նրանց ինքնուրույն իմաստավորումը: Այսպես, վարպետորեն է նկարագրված Գազիկ թագավորի արձանը, պեղված 1906 թ. (էջ 1—5), և

արձանի ձեռքում գտնվող կլոր տաճարի մոդելը (էջ 5—6): Մասնկան տապանը և նրանում գտնված 5—6 տարեկան աղջնակ-իշխանուհու հանդերձին նվիրված էջերը (էջ 33—39) իրենցից ներկայացնում են մի փոքր ուրվագիծ՝ նվիրված 13-րդ դ. սկզբների Անիի ունևոր դասակարգի զգեստներին: Հեղինակը շատ մանրամասնորեն է նկարագրում իր կողմից վերականգնված պղնձյա ջահը (էջ 39—43): Վերջապես, շատ հետաքրքիր է այսպես կոչված սնդիկե ամանների նկարագրությունը (էջ 73—74): Նման ամանների (դրանք մեծ քանակությամբ հայտնաբերվել են Փոքր Ասիայում և Միջին Ասիայում) նշանակությունը երկար ժամանակ մնում էր հանելուկային, մինչև որ մի ամբողջական օրինակում գտանվեցի հետքեր. հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ այդպիսի ամաններում պահել կամ տեղափոխել են անգիկ: Այդ ամանները «պատրաստված են շատ պինդ գորշ կավից. մեծ մասամբ դրանք ձվաձև են ու վերևի մասում ունեն փոքր գնդիկ, որը ծառայում է որպես բերան. սովորաբար անցքը լինում է արտակարգ փոքր տրամաշափի. ուշադրով է պատերի և հատկապես հատակի հաստությունը: Այդ ամանները սովորաբար լավ զարդաքանդակված են, իսկ մի քանի օրինակների վրա կան զանազան նշաններ և տառեր»:

Մյուս՝ «Անիի ավերակները»³⁴, աշխատության մեջ Հ. Ա. Օրբելին այսպես է նկարագրում այդ առարկաները. «Սովորական ամանեղենից պետք է տարբերել հատուկ, սովորաբար ձվաձև ամանները (11—14-րդ դդ.)՝ շատ նեղ բերանով և հաստ պատերով, ծածկված տարատեսակ, մանր ու ցուլտուն զարդանկարներով: Ամենահավանականն այն է, որ դրանք արդուզարդի սրվակներ են: Նրանք հանդիպում են Առաջավոր Ասիայի գրեթե բոլոր երկրներում, ինչպես նաև Քուրբեստանում: 1910 թ. պեղումները տվեցին նման ամանների շեսնված մեծ քանակ, ընդամենը 14 ամբողջական և 250 բեկոր: Այժմ այդ ամանների Անիի հավաքածուն (24 ամբողջական և 600 ֆրագմենտներ) ամենահարուստներից:

³³ И. Орбели, Каталог Анийского музея древностей, Выпуск I. Описание предметов первого отделения (с 26 рисунками в тексте и 1 таблицей), СПб, 1910 (Анийская серия, № 3).

³⁴ И. Орбели, Развалины Ани. История. Современное состояние. Раскопки, СПб, 1911, стр. 50.

մեկն է և հիանալի նյութ է տալիս հետազոտելու այդ ինքնատիպ առարկաների նշանակությունը, ինչպես նաև արտադրության տեղն ու եղանակը: Անվիճելի է, որ դրանք պատրաստված են Անիում, շնայած հիմք չկա ընդունելու, որ այդ ամաններն ունեն բացառապես անիական ծագում»:

Այդ գտնված իրերը Հ. Ա. Օրբելու համար խթան հանդիսացան, որպեսզի նա հատուկ հետազոտություն կատարի սնդիկային ամանների և նրանց պատրաստման տեխնիկայի ուղղությամբ, որը, զժբախտաբար, մնաց ձեռագիր վիճակում³⁵:

Հովսեփ Օրբելու կազմած ուղեցույցն ու կատալոգը իր ժամանակին արժեքավոր ներդրում էին Անիի հնությունների վերաբերյալ դիտական գրականության մեջ. նրանց նշանակությունը առանձնապես աճեց հետագա տարիներին: 1917 թ. հետո պեղումներն Անիում չվերականգնվեցին: Անիում գտնված իրերը տխուր ճակատագիր ունեցան—1918 թ. Անիի թանգարանի էվակուացիայի ժամանակ դրանց մի մասը, հավանաբար անվերադարձորեն, կործանվեց: Շատ տարիներ անց Հ. Ա. Օրբելին այդ մասին դառնություններ ու դայրույթով գրեց. «Կովկասյան ռազմաճակատի թիկունքում թափառող ավազակախմբերի կողմից Անիի թանգարանի և Անիի գիտական բազայի ավերումը, Անիի հավաքածուների և արխիվային նյութերի էվակուացման անշնորհ իրականացումը, վագոնները բախտի քմահաճույքին թողնելու պատասխանատու անձի անօրինակ թեթևամտությունը, այն վագոնների, որոնց մեջ (Պետրոգրադից:— Կ. Յու.) Կովկաս, անժամանակ ստեղծված Կովկասյան ինստիտուտ էին ուղարկվում արխիվային նյութեր, ֆոտոնկարներ, գծագրեր և այլ փաստաթղթեր Պետերբուրգից (1917 թ. հոկտեմբերի վերջին), հանգեց-

³⁵ *Sb'u nač' P. M. Džanpoladjan, Sferokoničeskie sosudy iz Dvina i Ani, «Советская археология», 1958, № 1.*

Հեղինակը այն կարծիքին է հանգում, որ կավից, ապակուց և առանձին զեպերում մետաղից պատրաստած գնդակոնաձև ամանները օգտագործվել են տարբեր յուզերի, զեղերի, անուշահոտ նյութերի և այլ արժեքավոր հեղուկների պահպանման ու տեղափոխման համար (էջ 213):

րեց նրան, որ Մառի ու նրա դպրոցի կողմից կուտակված և ստեղծված գիտական հարստության զգալի մասը ոչնչացավ: Անվնաս մնացին միայն առանձին կտորներ և այն թերթիկները, որոնցից տարիներ շարունակ օգտվում էր Մառը, կարգալով միշտ նոր ձևով խորացվող իր հրապարակային դասախոսությունները. անվնաս Երևան է հասցվել նաև Անիի հնագիտական հավաքածուների շատ շնչին մասը, որը բառիս բուն իմաստով Անիից դուրս է բերվել հրացանների կրակոցների տակ³⁶: Այդ պատճառով էլ Ն. Յա. Մառի հաշվետվությունների ու նրա հայտնի «Անի»³⁷ մենագրության հետ միասին Հ. Ա. Օրբելու միշտ նկարագրությունները ձեռք են բերում յուրահատուկ արժեք, ինչ-որ շափով լրացնում այն բացը, որն առաջացել էր նյութական կուլտուրայի խիստ արժեքավոր հուշարձանների կորստի հետևանքով:

Ավարտելով ուղեցույցի և կատալոգի կազմումը, Հ. Ա. Օրբելին կարողացավ ձեռնամուխ լինել «Անիի ավերակները»³⁸ հանրամատչելի ակնարկը գրելու գործին: «Իր գոյության առավել երկարատև ժամանակաշրջանի ընթացքում,— գրում է Հ. Ա. Օրբելին,— Անին եղել է ոչ թե մայրաքաղաք, այլ միայն առևտրական, արդյունաբերական և կուլտուրական խոշոր քաղաք, ոչ թե թագավորների (որոնք այդ ժամանակ ներքին Հայաստանում արդեն չկային) աթոռանիստը, այլ միայն իշխողների նստավայրը, ընդ որում մեծ մասամբ օտարերկրացի իշխողների»³⁹:

³⁶ *И. А. Орбели, Блестящая страница в истории археологии. ПИДО, 1934, № 9—10, стр. 197.*

³⁷ *Н. Я. Марр, Ани, книжная история города и раскопки на месте городища, М.—Л., 1934. ներածականում Ն. Յա. Մառը նշում է, որ իր գրքի հրատարակմանը «մասնագետներից ներգրավվել է այդ գործին առավել մտտիկ կանգնած, այդ աշխատության համար առավել հեղինակավոր պրոֆ. Հ. Ա. Օրբելին...» (էջ XI—XII):*

³⁸ *Գրքի վաճառքից ստացված ամբողջ եկամուտը տվեց հօգուտ Անիի հնությունների թանգարանի: Նույն 1911 թ. էջմիածնի «Արարատ» ամսագրում երևաց գրքի հայերեն թարգմանությունը, որը լույս տեսավ նաև առանձին հրատարակությամբ:*

³⁹ *И. Орбели, Развалины Ани, История. Современное состояние. Раскопки, стр. 3—4.*

Անիի պատմությունը Հ. Ա. Օրբելին շարադրում է Ն. Յա. Մառի կոնցեպցիայով, որն առաջացել էր հնագիտական գր-տածոների հետազոտության ընթացքում: «Անին օտարերկ-րացիների ձեռքն անցնելուց հետո,— գրում է Հ. Ա. Օրբելին,— նրա ներքին կյանքը շատ քիչ փոխվեց: Հարկավոր է մի կողմ թողնել հնացած ու սխալ այն կարծիքը, թե իբր Անին ծաղկում է ապրել միայն Բաղրատունիների օրոք, որ քաղաքի հետագա կյանքը եղել է նրա սոսկ մահացումը... Չնայած օտարերկրյա տիրապետությանը, ամենևին չկորավ քաղաքի բուն տեղական տեսքը, քաղաքը առատորեն յուրաց-նում էր հարևան ժողովուրդների կուլտուրական ստեղծագոր-ծության հարուստ արդյունքները»⁴⁰, «Ընդհանրապես, քաղա-քական կախվածության շրջանում, 11-րդ դարի կեսերից մինչև 14-րդ դարը, Անին չի դադարում ծաղկել ու զարգանալ որպես հայկական քաղաք: Երբեմն բուն կախվածությունը, որն Անիին երբեք չէր դրել հոգեկան ու տնտեսական ստրկաց-ման վիճակում, անվանականից դառնում է երևակայա-կան»⁴¹:

Անիի քաղաքական պատմությունից անմիջապես հետո Հովսեփ Օրբելին տալիս է ավերակ քաղաքի և նրանից դուրս եկած ճարտարապետական հուշարձանների նկարագրությու-նը, Անիի հնությունների թանգարանի ցուցանմուշների նկա-րագրությունը և ակնարկն ավարտվում է Ն. Յա. Մառի խոս-քերով. «Կովկասի հպարտությունն այն պճնանքն ու զանձերն են, որոնցով բնությունը օժտել է նրան: Գրանցից լավա-գույնների հետ համահավասար Կովկասը կարող է հպարտա-նալ նաև երկնքի կողմից տրված կուլտուրական մի պարզե-վով՝ Անիի ավերակներով, իր հնագիտական պսակի այդ խո-շորագույն մարգարտով»⁴²:

Չնայած նրան, որ գիրքը հրատարակվել է ավելի քան

քառասուն տարի առաջ, այն չի կորցրել իր նշանակությունը, այնպես որ հիմա էլ Անիի և նրա հնությունների ուսումնա-սիրման համար կարող է ծառայել որպես հիանալի ներա-ծական:

Խաչակերպ պղնձե դանգի ուսումնասիրության ժամանակ Հ. Ա. Օրբելու հաջողությունը կանխորոշեց Անիի նյութերի գերազանց գիտենալը⁴³:

Սլորոզակ (նախկին Վյատկայի նահանգ) քաղաքի զան-գերի գործարանի տիրուհին 1908 թ. Հնագիտական հանձնա-ժողովին ուղարկեց Փոթիից ստացված զանգի ֆոտոնկարը⁴⁴: Հ. Ա. Օրբելին ձեռնամուխ եղավ դրա ուսումնասիրությանը, հիմնական ուշադրությունը դարձնելով խաչի վրա: «Այդտեղ ուսումնասիրողի տրամադրության տակ կա շատ հարուստ համեմատական նյութ՝ խաչերի, ավելի ճիշտ ամբողջ Հա-յաստանով մեկ ցրված, անհաշիվ խաչքարերի քանակը: Բո-լոր այդ խաչերը ունեն նույն բնույթը, որը և հնարավորու-թյուն է տալիս վստահությամբ ճանաչելու նրանց հայկական ծագումը»⁴⁵: Հովսեփ Օրբելին խնամքով հետևում էր հայ-կական խաչերի ձևերի էվոլյուցիային և հանգեց այն եզրա-կացության, որ «զանգը ավելի սերտորեն կապված է Անիի և նրա մարզերի հուշարձանների հետ, եթե միայն դա չի բա-ցատրվում այդ քաղաքի (առայժմ միակը Հայաստանում, որը սիստեմատիկ ուսումնասիրության է ենթարկվում) հնու-թյունների մասին մեր համեմատաբար լավատեղյակու-թյամբ... Եթե զանգը իրոք ձուլվել է Անիի կուլտուրական ազդեցության ոլորտում, որն ավելի քան հավանական է, ապա նրա պատրաստման ժամանակը առանց կասկածի կա-րելի է վերագրել 12—13-րդ դդ.»⁴⁶:

⁴³ И. Орбели, Колокол с анийскими орнаментальными мотивами XII—XIII века,—ЗВО, 1910, т. XX, стр. 023—039.

⁴⁴ Ներկայումս զանգը պահվում է պետական էրմիտաժում:

⁴⁵ И. Орбели, Колокол с анийскими орнаментальными мотивами XII—XIII века, стр. 024—025.

⁴⁶ Նույն տեղը, էջ 038:

⁴⁰ И. Орбели, Развалины Ани. История. Современное состояние. Раскопки, стр. 4—5.

⁴¹ Նույն տեղը, էջ 25:

⁴² Н. Я. Марр, Об учреждении Анийского Археологического Ин-ститута, стр. 438.

Այդ նույն տարիներին Հ. Ա. Օրբելին ստացավ Ն. Յա. Մառի և Ս. Ա. Ժեբելյովի շոյիշ առաջարկությունը՝ Բրոկհաուզի և Ֆերոնի «Նոր հանրագիտական բառարանի» համար հայկական արվեստի մասին գրել հոդված⁴⁷։ Այդ հրատարակությանը ներգրավվեցին խոշորագույն գիտնականներ, նույն հատորում հայկական լեզվի, գրականության, պատմության վերաբերյալ հոդվածները գրեց Ն. Գ. Ադոնցը։

Հոդվածը գրելիս Հ. Ա. Օրբելին բացի մասնագիտական գրականությունից օգտվում է հուշարձանների իր անմիջական իմացությունից և առաջարկում ճարտարապետության, քանդակագործության, զարդաքանդակի, որմնանկարչության և Իանրանկարչության զարգացման կուռ սխեմա (վերջին բաժինը, ճիշտ է, ստացվել էր շատ սեղմ, քանի որ այդ տարիներին հայկական նկարչության գիտական ուսումնասիրությունը նոր էր սկսվում)։

Շատ հետաքրքիր են Հ. Ա. Օրբելու կողմից այդ հոդվածում արտահայտված տեսական դրույթները. «Քրիստոնեական Հայաստանի արվեստը սովորաբար դիտվում է նրանց ազգակից Վրաստանի արվեստի հետ կապված. հայկական և վրացական արվեստների շափաղանց սերտ մոտիկությունը մասամբ պետք է բացատրվի մի քանի հուշարձանների զրտնրված տեղի հետ ծանոթ շինելով և դրանից բխող վրացական հուշարձանների վերագրումով Հայաստանին և հակառակը»⁴⁸։ Այնուհետև, համառորեն պնդելով հայկական արվեստի ինքնատիպությունը, Հ. Ա. Օրբելին որոշակիորեն համաձայն չէ վերջինիս մեջ տեսնելու բյուզանդական արվեստի ճյուղավորումը։ Գեռ ավելին, «...նշվում են փաստեր, — գրում է նա, — որոնք ցույց են տալիս, որ բուն հայկական արվեստը հանդիսացել է այն հոսանքների աղբյուրներից մեկը, որոնք յու-

րացվել են բյուզանդականի կողմից և ամուր ձուլվել նրա մեջ»⁴⁹։ Ընդամին, հասկանալի է, գիտնականը բոլորովին չի բացառում այն ազդեցությունները, որ հայկական արվեստի վրա ունեցել են հարևան ժողովուրդների կուլտուրաները։ Նա վառ ղուզահեռ է անցկացնում հայկական ճարտարապետության և գրականության զարգացման միջև։ Երկու դեպքում էլ նկատելի է սիրիական կուլտուրայի ազդեցությունը, որը հետագայում դավանական իրադրությունների հետևանքով դուրս մղվեց հունականի կողմից։

Հետագա տարիներին «Նոր հանրագիտական բառարան»-ում գետեղվեցին Հ. Ա. Օրբելու ևս երկու հոդվածները՝ «Վրացական արվեստը» (հ. 15) և «Մուսուլմանական արվեստը» (հ. 27)։ Խոսելով վրացական արվեստի մասին, Հովսեփ Օրբելին ընդգծում էր, որ այն զարգանալով «մեծ տարածության վրա՝ և՛ տեղանքի պայմանների, և՛ ազգագրական պատճառների հետևանքով, թեև ամբողջությամբ միավորված էր ընդհանուր սկզբունքներով, բայց հանդես էր գալիս բավական բազմազան ձևերով, ըստ հին ձևերի մասնատվելով հատուկ խմբերի։ Վրաստանի քրիստոնեական արվեստը սերտորեն կապված է հայկականի հետ, բայց, դիտելով դրանք մեկ ընդհանուր կապի մեջ, պետք է խուսափել դրանք խառնելուց։ Հուշարձանների հատուկ խումբ են կազմում հայ և վրացի խառը բնակչության շրջանում ստեղծվածները, որոնք իրենց մեջ միակցում են և՛ հայկական, և՛ վրացական գեղարվեստական ստեղծագործությունը հատուկ տարրեր։ Այստեղ հատկապես ուժեղ է զգացվում դավանական հոսանքների ազդեցությունը»⁵⁰։

Մուսուլմանական արվեստի մասին հոդվածը զգալի շափով գրված է գոյություն ունեցող գրականության և հրատարակված նյութերի հիման վրա, սակայն նրանում ևս դրսևորվել է հուշարձանների նկատմամբ Հովսեփ Օրբելու ինքնուրույն մոտեցումը։ Շատ կարևոր են, օրինակ, նրա՝

⁴⁷ «Новый энциклопедический словарь». Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, СПб., т. 3, стлб. 664—674.

⁴⁸ Նույն տեղը, սյուն. 664։

⁴⁹ Նույն տեղը, սյուն. 665։

⁵⁰ Նույն տեղը, հ. 15, սյուն. 126։

հետագայում վարգացրած դրույթներն այն մասին, որ սելջուկյան աշտարակավոր դամբարանները ծագել են հայկական և վրացական տաճարների գմբեթներից: Անցած տասնամյակների ընթացքում, գիտությունն իհարկե հարստացել է բազմաթիվ նոր տվյալներով, որը և անխուսափելի է դարձնում մի քանի հին պատկերացումների վերանայումը: Ինքը՝ Հ. Ա. Օրբելին, մասնավորապես, հետագայում մեծ ավանդ ներդրեց այսպես կոչված «մուսուլմանական արվեստին» սկզբունքորեն նոր իմաստավորում տալու գործում: Այնուամենայնիվ, այդ հոգիվածները, որոնք գրվել են կես դար առաջ, տակավին չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

* * *

1911 թ. Հ. Ա. Օրբելին ավարտեց համալսարանի երկու ֆակուլտետ: Այդ ժամանակ նա ուներ արդեն 9 հրատարակված աշխատություն: Լրիվ նախապատրաստված լինելով ինքնուրույն հետազոտական աշխատանքի, երիտասարդ գիտնականը 1911 թ. ամռանը մի ճանապարհորդություն ձեռնարկեց, որն ամբողջ կյանքում տպավորվեց նրա հիշողության մեջ և ազդեց նրա գիտական հայացքների վրա: Խոսքը վերաբերում է Արևմտահայաստան՝ Մարքսի լեռնային շրջանն սլոկորված գիտարշավին⁵¹:

Հ. Ա. Օրբելին արևելյան ֆակուլտետի վերջին կուրսում էր, երբ 1910 թ. սեպտեմբերի 22-ին գիտությունների ակադեմիայի պատմա-բանասիրական բաժանմունքի նիստում Ն. Յա. Մառը առաջարկեց Վանի շրջան ուղարկել մի մասնագետի, որը կկարողանար զբաղվել այնտեղի հնություններով

51 Տե՛ս *И. А. Орбели*, Предварительный отчет о командировке в Азиатскую Турцию в 1911—1912 гг.,—ИАН, 1912, серия VI, № 15, стр. 917—926. Իմ կողմից օգտագործված է նաև Հ. Ա. Օրբելու «Мокские армянские тексты с переводом» աշխատության ընդարձակ ներածությունը, որն այժմ պահվում է նրա արխիվում:

և ձեռնամուխ լինել բարբառագիտական նյութերի հավաքմանը: Ն. Յա. Մառի կարծիքով, այդպիսին կարող էր լինել Հ. Ա. Օրբելին: Բնութագրելով նրան, Ն. Յա. Մառը ասում էր, որ «նա կարող է կատարել նախատեսված աշխատանքի մի մասը, բարբառագիտականը, պատմա-բանասիրականը ըստ սուրբ գրքի տեքստերի, հնագիտականը՝ ըստ քրիստոնեական հնությունների, և հաշվետվություն տալ մնացած մասերի նյութերի վերաբերյալ: Հ. Ա. Օրբելին լսել է պատմա-բանասիրական ֆակուլտետի դասական բաժնի լրիվ կուրսը և ընթացիկ տարում ավարտում է արևելյան լեզուների ֆակուլտետը. սկսած 1906 թ. բոլոր ամառներն անընդմեջ նա մասնակցել է իմ հնագիտական աշխատանքներին Անիում. 1909 թ., արևելյան ֆակուլտետի կողմից ուսանողական գործուղում ստանալով, նա ինքնուրույն ճանապարհորդություն կատարեց Խաչենի հին հայկական իշխանության տերիտորիայում, որտեղից նա բերել է մի ամբողջ շարք հայկական նոր արձանագրություններ և հետաքրքիր գիտողություններով մանրամասն հաշվետվություն տեղական ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ... Ներկայումս Օրբելին հատուկ ուսումնասիրություն է պատրաստում սնդիկի ամանների մասին՝ ըստ բազմաթիվ բեկորների և ամբողջական նմուշների, որոնք մնացել են Անիի պեղումներից և միաժամանակ ունկնդրում է հայ բարբառագիտության լրացուցիչ դասընթացը»⁵²:

Ն. Յա. Մառի առաջարկությունն ընդունվեց, և Հ. Ա. Օրբելին ձեռնամուխ եղավ Մուշի և Մարքսի բարբառների ուսումնասիրությանը⁵³:

52 «Извлечения из протоколов заседаний Академии. Историко-филологическое отделение. Заседание 22 сентября 1910 г.»—ИАН, 1910, стр. 1411—1412.

53 «Իհարկե, ստիպված եմ շատ պարպել և պատրաստվել այդ ուղեվորությանը, որովհետև ինչպես իր պայմաններով, այնպես էլ ըստ իր էության դա շատ պատասխանատու աշխատանք է,— գրում էր Հ. Ա. Օրբելին ծնողներին:— Հիմա գլխավորապես պատրաստվում եմ լեզվի գծով: Դա, իսկապես, ամենազոյալի է, բայց և ուղեորության հիմնական նպատակն է» (1910 թ. գեկտեմբերի 12-ի նամակը, պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում):

1911 թ. հուլիսի 1-ին Հովսեփի Օրբելիին Բաթումից մեկնեց Կոստանդնուպոլիս և Տրապիզոնի, Բայբուրթի ու էրզրումի վրայով ուղևորվեց Վան: Ճանապարհին նա կարողացավ լուսանկարել և նկարագրել ճարտարապետական հուշարձաններն ու արձանագրությունները: Օգոստոսի 14-ին նա հասավ Վան և այստեղ վերջնականապես որոշեց կենտրոնանալ Մոքսի հայկական բնակչության բարբառի ուսումնասիրության վրա: Այդ շրջանը ընկած է Վանա լճի հարավային մասում և բոլոր կողմերից շրջապատված է լեռներով: Հովսեփի Օրբելիին ձեռով ուղևորվեց Մոքս և այնտեղ մնաց հինգ շաբաթ: Այս հնագարյան նահանգի կառավարչությունը կենտրոնացված էր հինգ թաղերից, փաստորեն հինգ համարյա միաձուլված գյուղերից բաղկացած Մոքս «քաղաքում»: Այստեղ, բարձրության վրա տեղավորված էր Մոքսի մուղիրի (կառավարիչի), միաժամանակ նաև բուրգ բեգերի ավագ՝ Մուրթուլա բեգի տունը:

Մոքսի մշտական նստակյաց բնակչությունը կազմում էին հայերը (672 տուն), քրդերը (մահմեդական սունիներ՝ 640 տուն) և գնչու-բոշաներ՝ (4—5 տուն): Այստեղ ապրում էին նաև թուրքական պաշտոնյաների երեք-չորս ընտանիք, որոնք ծառայության էին ուղարկված Մոքս:

Հ. Ա. Օրբելիին ձեռնամուխ եղավ Մոքսի հայերի բարբառին վերաբերող նյութերի հավաքմանը, կազմեց բարբառագիտական հատուկ բառարան: «Բառարան մտան առօրյա կենցաղի բոլոր այն բառերն ու արտահայտությունները, որոնք վերաբերում էին դաշտային աշխատանքներին, արհեստներին, անասունների ու բույսերի անուններին, մի խոսքով այն ամենին, ինչը կարելի էր տեսնել շուրջը... Ինձ արժեքավոր ծառայություն մատուցեցին երեխաները, որոնք իմ աշխատանքը իրենց համար դիտում էին որպես զվարճալիք և ամեն րոպե վազում էին հարցնելու, ես գրե՞լ եմ արդյոք այս կամ այն բառը, թե՞ ոչ»⁵⁴: Այդ ցուցակում տեղ էին գտել նաև մեծ դժվարությամբ ձեռք բերած բառեր լրուտնե-

թի (Թաղիքագործների և բուրգ զոռղների) գաղտնի լեզվից, որոնք ապրում էին Մոքսի մի քանի շրջաններում և ամեն աշուն գնում էին աշխատելու: Հովսեփի Օրբելուն հաջողվեց կազմել ավելի քան հարյուր անունների հոլովման հատուկ աղյուսակներ և ավելի քան քառասուն բայերի խոնարհման ցանկեր: Նա միաժամանակ գրառեց նաև առարկաների, հեթեթեների, զվարճալի պատմությունների տեքստեր, որոնց մեջ Մոքսի «քաղաքացիները» հումորով (եբբեմն բավականին թունոտ) էին արտահայտվում գյուղացիների բարբերի մասին: Նա գրառեց նաև բալլա խներ, երգեր, առածներ և ասացվածքներ:

Ձեռն անցկացնելով Վանում, 1912 թ. գարնանը, հենց որ ճանապարհը բացվեց, Հ. Ա. Օրբելին նորից ուղևորվեց Մոքս: Երկրորդ ուղևորության ընթացքում նա ավարտեց իր աշխատանքը հայկական տեքստերի վրա և շարունակեց գնուկս Վանում սկսած Մոքսի քրդերի լեզվի և նրանց ավանգուսթյունների ուսումնասիրությունը: Կազմվեց քրդերեն բառարան (Մոքսի հայկական բարբառի բառարանը ծառայեց որպես բառացանկ), միաժամանակ ստուգվեցին նաև հին բառարանները:

Հովսեփի Օրբելու հետազոտությունները ծառայեցին որպես նյութ Մոքսի տեքստերի՝ Մոքսի ազգագրական ակնարկի հրատարակման առթիվ գրված շատ հետաքրքիր ներածական հոդվածի համար: Երկրամասի բնակչության շատ սովորություններ, կենցաղը հնագույն ժազում ունեին: Այսպես, և՛ Մոքս «քաղաքում», և՛ Ձևաստան գյուղում Հ. Ա. Օրբելին կարողացավ դիտել հսկայական սալերից պատրաստած շինություններ, որոնց ներսում միշտ առկա էին կարծր քարից հսկայական անիվներ, զրանց շրջագծի եզրերը գլորվելուց ստացել էին սեղանաձև հատվածքի տեսք: Դրանք ձիթհաններ էին, որոնք միևնույն ժամանակ կարող էին ծառայել որպես դինգ: Այդպիսի անիվներ հայտնի էին Անիում, Մրենում, իսկ ավելի ուշ, 1936 թ., Հովսեփի Օրբելիին զրանցից հայտնաբերեց Համբերդ ամրոցի պեղումների ժամանակ, բայց միայն Մոքսում նա դրանք տեսավ աշխատելիս:

Մուրթուլա բեգի տանը գիտնականը ուշադրություն դարձ-

⁵⁴ Н. А. Орбели, Предварительный отчет..., стр. 918.

րեց պատուհանի ներքնատախտակի վրա սարի նման դիզված քառակուսի հարթ բարձերին, որոնք փափուկ ներքնակներ էին: Երեկոյան տան տիրոջն էին այցելում շատ հյուրեր՝ քրդեր ու հայեր, և Ն. Ա. Օրբելին տեսնում էր, թե ինչպես են այդ բարձերը զրվում հատակին և պատվավոր հյուրերը նրստում դրանց վրա: Առավել մեծանունը կարող էր ստանալ երկրորդ բարձը: Այդ բարձերը զրվում էին մեհմանդարի («հյուրընկալի») կողմից, ընդ որում մի դեպքում տան տերն էր նշան տալիս, մյուս դեպքում մեհմանդարն էր բերում բարձերը, շսպասելով նշանի: Իսկ այն բարձերը, որոնք նախատեսված էին ամենահարգալի հյուրերի համար, տան տերը մատով շոշափում էր: Հյուրերը հատակին էին նստում ըստ ավագության ու անվանիության, և դա շատ էր հիշեցնում այն սովորությունը, որը գոյություն ուներ ինչպես պարսկական, այնպես էլ հայկական թագավորների արքունիքներում՝ բարձը, միաժամանակ, խորհրդանշում էր ֆեոդալի գրաված տեղը հիերարխիայում⁵⁵:

Մոքսի ուղևորությունը մեծ ազդեցություն ունեցավ Ն. Ա. Օրբելու աշխարհայացքի վրա: 1895—1896 թթ. հայկական շարժերը արձագանք գտան ամբողջ աշխարհում: Մասնավորապես Ռուսաստանում հայ ժողովրդի ազետավոր ճակատագրի մասին մանրամասնությամբ հաղորդվում էր և՛ հատուկ աշխատություններում, և պարբերական մամուլում: Հայտնի է, որ ձգտելով ապահովել իր շովինիստական քաղաքականության հաջողությունը, սուլթանական կառավարությունը կաշառում էր քուրդ ֆեոդալների վերնախավին, քրդերին զորքրում աշխատավոր հայ գյուղացիության դեմ: Այս բոլորի մասին Ն. Ա. Օրբելին, իհարկե, գիտեր ո՛չ միայն գրական աղբյուրներից: Եվ ահա նա ընկնում է լեռնային մի մարզ, ուր խաղաղ հարևանություն են անում հայերն ու քրդերը, ուր

«Երտորեն միահյուսվում են նրանց կենցաղները, միահյուսվում է բանահյուսությունը: Երիտասարդ գիտնականի վրա մեծ տպավորություն թողեց Մուրթուլա Բեգը: «Ապրում եմ մուղիբի (տեղամասային պրիստավի), քրդական բնյի՝ հայկական կոտորածի»⁵⁶ ժամանակ հայերի փոքրաթիվ պաշտպաններից մեկի և մեծ ուսասների տանը,— Մոքսից նա գրում էր ծնողներին 1911 թ. սեպտեմբերի սկզբին:— Ես հազվադեպ եմ տեսել այդպիսի համակրելի ու գեղեցիկ ծերունի: Իսկ զլխավորը, նա զարմանալիորեն բարեկիրթ է, թեև վաղից այն կողմ, ոչ մի տեղ չի մեկնել: Ինձ հետ հիանալի է վերաբերվում»⁵⁷:

Մոքսի քրդերի, նրանց հոգեկան հատկությունների մասին Հովսեփ Օրբելին ամենաբարի հիշատակ էր պահում: Այստեղ, Մոքսում, ինչպես հետագայում շատ անգամ ասում էր գիտնականը, նա հասկացավ, որ հայերի ոխերիմ թշնամին ոչ թե քուրդ ժողովուրդն է, այլ նրան պրովոկացիայի ենթարկող թուրքական ագամինիստացիան, և որ այնպիսի մեկուսացված շրջաններում, ինչպիսին Մոքսն է, քրդերը և հայերը ապրում են բարի համաձայնության պայմաններում: Շատ տարիներ անց, ավարտելով «Մոքսի հայկական տեքստերը» աշխատության ներածականը, Ն. Ա. Օրբելին ցավով գրում էր, որ 1915 թ. եղեռնից փրկվեցին միայն մի քանի հայ ընտանիքներ, հայերի ճակատագրից լիուսափեց նաև քուրդ բնակչությունը, որի մի մասը բնաջնջվեց, մի մասը փախուստի դիմեց և Մոքսը անմարդաբնակ դարձավ: «Իսկ 1911—1912 թթ., երբ ես եղա Մոքսում, այնտեղ շատ մարդ էր ապրում, կյանքը աշխատանքային էր, իրավագուրիկ, ծանր, բայց և փոքր ուրախություններից ոչ բոլորովին զուրկ: Եվ դրա համար էլ առանձնապես ցավալի է գիտակցել, որ այն քիչը, որը ես կարողացա գրառել Մոքսում՝ և տեքստերի այդ փոքր ժողովածուն, և՛ հայկական, և՛ քրդական բառարանները հան-

⁵⁵ Այդպիսի բարձեր պատկերված են նաև էրմիտաժի սասանյան սկուտերի վրա. Խոսրով Անուշիրվան արքան դահին է նստում, ձեռքի տակ ունենալով դրպակե ծածկոցով բարձերի մի ամբողջ կույտ (տե՛ս օրինակ՝ Н. А. Орбели и К. В. Тревер, Сасанидский металл, М.—Л., 1935, табл. 13 и 16):

⁵⁶ Ինչպես գրում է Ն. Ա. Օրբելին «Մոքսի հայկական տեքստերը» աշխատության ներածականում, 1895 թ. կոտորածի ժամանակ Ողիմ գյուղը շրջապատված էր գազազած ֆանատիկոսների հսկայական բազմությամբ և միայն Մուրթուլա բեգի անձնազո՛ւ միջամտությունը փրկեց ողիմցիներին: ⁵⁷ Նամակի բնագիրը պահվում է Ն. Ա. Օրբելու արխիվում:

դիսանում են հազիվ թե ոչ վերջին վկայությունը հայերի և քրդերի, երկու ժողովուրդների մի քանի հազար զավակների լեզվի, կացութաձևի, սովորությունների, աշխատանքի և ուրախության մասին»: Թերևս, այստեղ տեղին է մեկ անգամ ևս հիշել, որ իսկական ինտերնացիոնալիզմը Հ. Ա. Օրբելու օրգանական հատկանիշն էր, որին նա հավատարիմ մնաց մինչև իր կյանքի վերջին օրերը:

Վանում Հովսեփ Օրբելին հետաքրքրվեց նաև ուրարտական հնություններով: Չունենալով հատուկ թույլտվություն, նա պետք է սահմանափակվեր ոչ մեծ պեղումներով Վան քաղաքի մոտակայքում գտնվող Թոփրախ-Կալա բլուրի վրա, որտեղ դրանից ոչ շատ առաջ աշխատել էր գերմանական հնագետ Բելկի արշավախումբը: Պեղումները հաջող էին: Հովսեփ Օրբելուն բախտ վիճակվեց բլրի լանջին գտնել մարմարե ֆրիզի բեկորներ ցուլերի և ծառերի պատկերներով՝ երկրաշտփական զարդաքանդակներով շրջանակի մեջ⁵⁸: Բացի դրանից, Հովսեփ Օրբելին տեղական բնակիչներից և հնավաճառներից («անթիքաչի») ձևոք բերեց շատ առարկաներ՝ գրիֆոնի պատկերով փոքրիկ կնիք, սեպաձև արձանագրությանը կարասի բեկորներ, թռչուն պատկերող քարե արձանիկի բեկորներ: Ասպածաշեն (Աստվածաշեն) գյուղում նրան հաջողվեց ձևոք բերել ուրարտական նետերի բրոնզե և երկաթե սլաքներ, ուլունքներ, զրահի մաս և այլն: Հետագայում բոլոր այդ իրերը հանձնվեցին էրմիտաժին⁵⁹:

58 *Տե՛ս* Б. В. Фармаковский, Арханчешский период в России,— «Материалы по археологии России», 1914, № 34.

59 Ուրարտական հուշարձանների պեղումների, ուսումնասիրության և հավաքման մասին տես Ի. Ա. Օրբելի, «Предварительный отчет...», стр. 922—923.— Մանրամասն տե՛ս Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի նիստում Հ. Ա. Օրբելու կարգացած զեկուցումը, որի տեքստը պահպանվել է. հմմտ, 1912 թ. ղեկտեմբերի 20-ի արձանագրությունը ЗВО. т. XXI, вып. IV, 1913, стр. LXXVIII—LXXX: Հ. Ա. Օրբելու հայտնաբերած ազգագիտական արձանագրությունները մասամբ հրատարակվել են Ն. Յա. Մառի կողմից (տե՛ս Н. Я. Марр. Материалы по халдской эпиграфике из командировки И. А. Орбели в Турецкую Армению,—ЗВО, т. XXIV, 1917 г.

Վերադառնալով Վանից, Հովսեփ Օրբելին իր ուղևորության մասին Պետերբուրգում մի քանի հանգամանալի զեկուցում կարգաց զիտությունների ակադեմիայի պատմա-բանասիրական համալսարանում՝ 1912 թ. հոկտեմբերի 3-ին⁶⁰, և Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի նիստում՝ 1912 թ. հոկտեմբերի 20-ին⁶¹. այդ զեկուցումները մեծ հետաքրքրություն բնորոշվեցին գիտական հասարակայնության կողմից:

Հովսեփ Օրբելին այժմ կարող էր ձեռնամուխ լինել մագիստրոսական քննություններին. 1911 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1914 թ. սեպտեմբերի 1-ը Հ. Ա. Օրբելուն պահել էին համալսարանում աշխատելու⁶²: 1914 թ. հունվարի 24-ին Հովսեփ Օրբելին քննություններ հանձնեց հայկական բանասիրության մագիստրոսի կոչման համար (Հայաստանի պատմության և Վրաստանի պատմության գծով)⁶³ և սկսեց պատրաստվել արևելյան լեզուների ֆակուլտետում դասավանդելու համար: 1914 թ. ապրիլի 25-ին կայացավ Հ. Ա. Օրբելու՝ «Մեյլուկյան գմբեթային դամբարանների և տապանաքարերի կախվածությունը համապատասխան հայկական հուշարձաններից»⁶⁴ փորձնական դասախոսությունը, և 1914 թ. հունիսի

60 Հրատարակված է որպես վերը մեջբերված «Предварительный отчет о командировке в Азиатскую Турцию в 1911—1912 гг. Այդ նույն զեկուցման մասին Հ. Ա. Օրբելին հիշատակում է ակադ. Ա. Ա. Շահմատովին ուղարկած մի փոքրիկ նամակում: ААН, ф. 134, оп. 3, № 1091. л. 3.

61 *Տե՛ս* 1912 թ. ղեկտեմբերի 20-ի արձանագրությունը. ЭВО, т. XXI вып. IV. Վանի վիլայեթ Հ. Ա. Օրբելու արշավախմբի մասին տես նույնպես «Отчет о деятельности... общества русских ориенталистов за 1911 год». СПб, 1912, стр. 43, 44.

62 *Տե՛ս* «Список профессоров и приват-доцентов факультета восточных языков Императорского бывшего Петербургского, ныне Петроградского Университета с 1819 г.», (Пг), стр. 16.

63 «Дела факультета восточных языков 1909—1914 гг.», л. 45. Այդ թղթապանակը առայժմ պահվում է Լենինգրադի պետական համալսարանի Մ. Գորկու անվան գիտական գրադարանում:

64 Նույն տեղը, թ. 54:

1-ից նա մտավ պրիվատ-դոցենտների (հաստիքային) կազմի մեջ՝ հայ-վրացական բանասիրության ամբիոնի գծով: Հոկտեմբերի 6-ին նա կարգաց իր նախօրոք հայտարարած՝ «Շիրակի շրջանի հայկական վիմագիր արձանագրությունները» դասընթացի ներածական դասախոսությունը⁶⁵:

Պահպանված հայկական վիմագիր արձանագրությունների քանակը առայժմ հաշվված չէ: Վանքերի և եկեղեցիների շենքերի դրսի (հազվադեպ նաև ներսի) պատերին գտնվում են երբեմն մինչև մի քանի տասնյակ, դարերի ընթացքում փորագրված արձանագրություններ: Արձանագրություններ հանդիպում են նաև խաչքարերի, գերեզմանների, հուշարձանների, շենքերի փայտամածների և այլոց վրա: Գիտության համար դրանց նշանակությունը շատ մեծ է: Արձանագրություններում նշվում են գնումներ ու նվիրատվություններ, տուրքեր ու հարկեր, պատմվում են վանքերի, եկեղեցական շենքերի հիմնադրման մասին, հիշատակվում են պատմական իրադարձություններ և այլն: Շատ բան կարելի է իմանալ դիմելով այդ «վիմական տարեգրին»: Արձանագրությունները, իր ներածական դասախոսության մեջ ընդգծում է Հովսեփ Օրբելին, կարևորագույն աղբյուր են «երկրի ներքին կյանքի, հասարակարգի, կառավարման, վերջապես, անձնական կյանքի»⁶⁶ ուսումնասիրության համար:

Որպես պատմական աղբյուր, արձանագրությունները գրավել են դեռ միջնադարյան գրողների ուշադրությունը, այնպիսիների, ինչպես Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դ.) կամ Կիրակոս Գանձակեցին (13-րդ դ.)⁶⁷: 19-րդ դարում վիմագիր արձանագրությունների հավաքման ու հրատարակման գործով զբաղվեցին մի շարք գիտնականներ՝ Մ. Բժիշկյանը, Մ. Բրոսսեն, Վ. Լանգուան, Ի. Շահաթունյանցը, Ա. Զա-

⁶⁵ Նույն տեղը, թթ. 63 և 64: Շիրակը Հայաստանի հյուսիս-արևմտյան մասի շրջաններից մեկն է՝ Անի կենտրոնով:

⁶⁶ Դասախոսության տեքստը պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

⁶⁷ P. Джанполадян, «История Армении» Киракоса Гандзакского и надписи Нор-Гетика, в кн.: «Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели», М.—Л., 1960.

բաղանցը, Ղ. Ալիշանը, Ե. Կալայանը և շատ ուրիշներ: Նրանց հրատարակումները շատ սիալներ էին պարունակում. հետազոտողների ձեռքերով արված լրացումները հրամցվում էին որպես իսկական տեքստեր, հաճախ անտեսվում էին արձանագրությունների հնագիտական առանձնահատկությունները, այնուամենայնիվ, այդ գիտնականների շանքերով արձանագրությունները մտան գիտական կենցաղի մեջ: Արձանագրագիտությունից հեռու լմնաց նաև Ն. Յա. Մառը: 1892 և 1893 թթ. Անիում կատարած պեղումների հետ միասին նա քննենսիվորեն հավաքում էր արձանագրությունները և ստուգում դրանց հին ընթերցումները⁶⁸: Այդ աշխատությունները հայկական արձանագրությունների լրիվ ժողովածուի ստեղծման սկիզբը պետք է հանդիսանային: Սակայն Մառը դադարեցրեց այդ աշխատանքները, իսկ երկու տասնամյակ հետո այդ աշխատանքը վերահանձնարարվեց Հ. Ա. Օրբելուն⁶⁹:

Արձանագրագետին հետամտող ղեկավարությունները, որոնց տվյալ դեպքում հանդիպեց Հ. Ա. Օրբելին, շատ յուրօրինակ են: Քարը, որի վրա փորագրված է արձանագրությունը, կարող է տեղադրված լինել եկեղեցական շենքի անմատչելի անկյունում և այն ժամանակ դա կարելի է կարգալ կամ հեռագիտակի և կամ քարին հենած հատուկ աստիճանների օգնությամբ: Հաճախ հանդիպում են արձանագրություններ, որոնց տառերը կամ տողերը եղծված են և արձանագրագետը վերականգնում է տեքստը՝ թափանցելով անհասկանալի անհարթությունների մեջ: Արձանագրությունները լի են փակագրերով, երբ մեկ տառի վրա շարվում են երկու կամ երեք այլ տառերի մասնիկներ. նման արձանագրության վերծանման համար պահանջվում է հատուկ հմտություն: Արձանագրություն կարդալը դեռ քիչ է, հարկավոր է այն մեկնաբա-

⁶⁸ H. Mapp, Имя «Бут» или «Буд» в армянской надписи VII века по Р. X.,—ЗВО, т. VII, 1893; Новые материалы по армянской эпиграфике,—ЗВО, т. VIII, 1894.

⁶⁹ H. Mapp, С. Ольденбург, И. Крачковский, Записка об ученых трудах И. А. Орбели, стр. 575; В. А. Миханкова, Николай Яковлевич Мapp, стр. 52.

նել, իսկ դա պահանջում է բազմակողմանի գիտելիքներ և՛ պատմության, և՛ բանասիրության բնագավառում: Փորագրիչները իրենց գրագիտությամբ առանձնապես աչքի չէին ընկնում, նրանք չէին ձգտում խուսափել լեզվի ժողովրդական ձևերից, ընդ որում այս կամ այն անհասկանալի բառը երբեմբ կարելի է հանդիպել միայն տվյալ արձանագրության մեջ: Ոչ բոլոր արձանագրությունները ունեն տարեթիվ, և այդ դեպքում հարկ է լինում որոշել նրա ժամանակը՝ ելնելով արձանագրության հնագրական առանձնահատկություններից ու արձանագրության բովանդակությունից: Վերջապես, հաճախ հարկ է լինում որոշել՝ թե վավերական է, արդյոք, այդ արձանագրությունը, թե՞ հետագա կեղծիք է (չխոսելով արդեն այն դեպքերի մասին, երբ վնասված արձանագրությունը այս կամ այն փոփոխություններով վերականգնվել է ավելի ուշ):

Զեռնամուխ լինելով արձանագրությունների հրատարակմանը, Հ. Ա. Օրբելին շատ շուտ համոզվեց, որ այդ բնագավառին վերաբերող հին աշխատությունները բոլորովին չեն համապատասխանում ժամանակակից գիտության շեշտակի աճած պահանջներին: Հարկ եղավ, օգտագործելով հունական և լատինական արձանագրագիտության նվաճումները, մշակել իր մեթոդիկան: Բայց դա քիչ էր: Հարկավոր էր արձանագրությունները վերարտադրել տպագրական եղանակով: Այդ նպատակի համար Հ. Ա. Օրբելու պատվերով և նրա անխոնջ հսկողության ներքո ձուլվեցին այն բոլոր փակագրերը, որոնք կարող էին հանդիպել հայկական վիճագիր արձանագրություններում⁷⁰: Արձանագրությունների հրատարակման ժամանակ դա ապահովեց շարվածքի հարազատությունը բուն գրությանը: Հաղթահարելով տեխնիկական

⁷⁰ Լենինգրադի բրկագայի տարիներին Հ. Ա. Օրբելու էսքիզներով ստեղծված հայկական արձանագրագիտական գրատեսակը անփութության հետևանքով վերաձուլվել էր: Բարեբախտաբար, Հովսեփ Օրբելու արխիվում պահպանվել են բազմաթիվ նյութեր (ընդհուպ տառերկղի դասավորությունը), որոնց օգնությամբ առանց զժվարության, կարելի է վերականգնել այդ գրատեսակը՝ իր բոլոր բազմատեսակությամբ:

կարգի դժվարությունները, Հովսեփ Օրբելին կարող էր աշխատություն տալ հետազոտողի իր մտքին:

«Քրիստոնեական Արևելք»-ում⁷¹ տպագրված հոդվածներով գիտական շրջանառության մեջ մտան նոր արձանագրություններ և ճշտվեցին նախկինում հայտնի արձանագրությունների ընթացվածքները: Արձանագրությունների հիանալի հրատարակումներից և թարգմանություններից բացի, այդ աշխատությունները պարունակում են նաև պատմա-բանասիրական և արձանագրագիտական բնույթի խոր ուսումնասիրություններ՝ նվիրված հրատարակվող հուշարձաններին: Հ. Ա. Օրբելին հետաքրքրվում էր հնագույն արձանագրություններով (սկսած 7-րդ դարից), և այժմ ոչ մի պատմաբան, որն զբաղվում է այդ դարաշրջանով, չի կարող անտեսել անուններին, ժամանակագրությանը և տերմիններին վերաբերող նրա կարևոր գիտումներն ու խոր եզրակացությունները: Վերլուծելով արձանագրությունները, Հովսեփ Օրբելին, մասնավորապես, համոզիչ կերպով կարողացավ ցույց տալ, որ վավերական թվացող մի քանի հուշարձաններ իրականում հանդիսանում են վնասված կամ կորած բուն արձանագրության հետագա վերարտադրություններ:

Հ. Ա. Օրբելու այդ աշխատությունները, ինքնուրույն արժեք ներկայացնելով հանդերձ, միաժամանակ պետք է հիմք ծառայեն հայկական արձանագրությունների դիվանի համար: Այն մասին, թե Հովսեփ Օրբելին ինչպես էր պատկերացնում այդ հրատարակությունը, կարելի է դատել նրա

⁷¹ И. А. Орбели: Багаванская надпись 639 г. и другие армянские ктиторские надписи VII в.,—ХВ, т. II, вып. 1, 1913, стр. 105—142; Шесть армянских надписей VII—X вв.,—ХВ т. III, вып. 1, 1914, стр. 72—91; Указатель слов и имен к 13 армянским надписям VII века,—там же, стр. 95—100; Две строительские надписи князей Камсараканов,—ХВ, т. VI, вып. 3, 1914, стр. 297—306; Багаванский храм и его надписи,—ХВ, т. V, вып. 2, 1915, стр. 129—143; Армянские надписи на камне,—там же, стр. 147—154; [И. А. Орбели]. Надпись Санаинского моста,—ХВ, т. IV, вып. 2, 1915, стр. 191—192; Надписи Беркадзорского моста,—там же, стр. 192—194.

կողմից նախապատրաստած «Հայկական էպիգրաֆիկայի հուշարձանների»⁷² առաջին պրակով:

Պրակը ընդգրկում է ներկայիս կենդանականից հյուսիսարևմուտք մի քանի կիրումետր հեռու ընկած Մարմաշեն վանքի արձանագրությունները: Աշխատությունն սկսվում է ինչպես վանքի ճարտարապետական կոմպլեքսի, որն իր պատերի վրա պահպանում է արձանագրություններ, այնպես էլ առանձին քարերի համառոտ նկարագրումով: Այնուհետև, համապատասխան հուշարձանի գտնված տեղը ցույց տվող խորագրի տակ, կցագիր գրատեսակի օգնությամբ արձանագրությունը վերարտադրվում է (ցույց են տրվում բաց տեղերը, եթե այդպիսի կան): Այս գալիս է պատրաստված բնագիրը՝ կցագրերը բացվում են, իսկ որտեղ հնարավոր է՝ նշվում է բառանշատումը, վերականգնվում են բաց տեղերը, առանձին գեպերում լրացվում են փորագրչի կողմից բաց թողած տառերը կամ նշվում տառերի կրկնությունը: Եթե արձանագրությունը հրատարակվում է ոչ առաջին անգամ, ապա հրատարակությանը կցվում է բիրտոգրաֆիա: Հրատարակությունը ընդգրկում է անձնական անունների, աշխարհագրական և էթնիկական անվանումների ցանկ, արձանագրությունների լուսանկարչական վերարտադրություններով: աղյուսակներ, որոնք լրիվ պատկերացում են տալիս տառերի գրածևի մասին:

Ղեկավարվելով սեփական մեթոդիկայով, Հովսեփ Օրբելին հետազայում պատրաստեց Շիրակի հայկական արձանագրությունների ժողովածուն, բայց հրատարակությունը մինչև վերջ չհասցվեց. 1924 թ. կենդանագրում հեղեղը ոչնչացրեց նախապատրաստած և տպագրված աղյուսակների մի մասը: Այժմ այդ աշխատանքը կազմում է Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից հրատարակվող «Իրվան հայ վիճագրության» առաջին պրակը: Ինչպես ասված է երկրորդ

պրակի ներածականում, հրատարակությունը հիմնված է Հ. Ա. Օրբելու մեթոդիկայի վրա⁷³:

Մեր դարի տասնական թվականներին լույս է տեսնում Հ. Ա. Օրբելու աշխատությունների ամբողջ մի շարք: Գեո 1909 թ. օգոստոսին, ճանապարհորդելով Խաչենի շրջանով, նա հնարավորություն ունեցավ ծանոթանալու 12-րդ և 13-րդ դդ. 13 խաչքարերի հետ, որոնց վրա պահպանվել էին կենցաղային տեսարանների բարձրաքանդակներ: Այդ նյութը գրվեց «Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի տեղեկագրում» հրատարակված հոդվածի հիմքում⁷⁴: «Համարյա բոլոր այդ բարձրաքանդակները, — գրում է Հ. Ա. Օրբելին, — պատկերում են զինված հեծյալների, միայնակ կամ այլ ֆիգուրաների հետ կապակցված: Հեծյալների մեծամասնությունը, բացառությամբ մեկի, զինվորներ են և նրանց պատկերումը առավել հետաքրքիր է նրա համար, որ ուղղակի կյանքից վերցրած, վաղ մոնղոլական դարաշրջանի հայ զինվորների, համարյա միակ վերարտադրությունն են... Այդ բարձրաքանդակների աշխատանքը ծայրաստիճան կոպիտ է, և զեղարվեստական տեսակետից դրանք ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում, դրանք կարևոր են իրենց բովանդակությամբ»⁷⁵:

Կենցաղին վերաբերող առարկաների նկարագրությունից ու վերլուծումից բացի, Հ. Ա. Օրբելին հոդվածում հրապարակեց նաև այդ քարերի վրայի իր կարգացած արձանագրությունները:

1913 թ. Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի նիստում Հ. Ա. Օրբելին զեկուցում կարգաց հայկական ծագումով երկու արծաթյա շերեփների մասին⁷⁶: Այդ զեկուցումը հրատարակվեց «Քրիստոնեական արև-

73 Տե՛ս Գիվան հայ վիճագրության, պրակ II. Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ. կազմեց Ս. Գ. Բարխուդարյան. Երևան, 1960, էջ 7

74 *И. Орбели*, Бытовые рельефы на хаченских крестных камнях XII—XIII вв.,—ЗВО, т. XXII, вып. III—IV, 1915, стр. 327—335.

75 *Նույն տեղը*, էջ 327.

76 ЗВО, т. XXII, вып. I—II, 1914, стр. XI—XIX.

72 «Памятники армянской эпиграфии, I. Надписи Мармашена». Собрал и приготовил к печати Иосиф Орбели. С тремя автотипическими таблицами. Издание Анийского музея древностей, Пг., 1914.

վելք»-ում⁷⁷: Շերեփներից մեկին զարդարում էին հայկական արձանագրությունները: Բռնակի վրա զետեղված է տարեթիվը՝ 998 (հայկական թվականության, այն է՝ 1449 թ.): Արձանագրությունից պարզվում է, որ շերեփը պատկանել է քահանա Հովհանին: Արձանագրությունում հանդիպող բարբառային ձևերը Հովսեփ Օրբելուն համոզեցին, որ այդ առարկան ստեղծվել է լեհական հայերի շրջանում. հայտնի է, որ հայերը նշանակալից դեր են խաղացել լեհական ոսկերչական արվեստի զարգացման գործում: Հ. Օրբելին 1520 թվականի մեկ փաստաթղթի հիման վրա հակված էր Պետրոս վարդապետ վարպետի անունը նույնացնել լվովցի վարպետ Պյոտրի, կամ հանրահռչակ հայ ոսկերիչ Պյոտր Չեչոտովիչի անվան հետ: «Բայց եթե անգամ ձեռնպահ մնալ այդ, չեմ ժխտում, համարձակ նույնացումից, դժվար է հրաժարվել շերեփը լվովցի ոսկերիչներին վերադրելուց»⁷⁸:

Այս շերեփին նման է և էրմիտաժի հավաքածուում եղած շերեփը: Նրա վրա կա հունարեն արձանագրություն՝ 1586 թ. թվագրով: «Այս շերեփը իրենից ներկայացնում է քահանա Հովհանի շերեփի երկվորյակը և լիովին նման է նրան՝ ինչպես ձևով ու շափերով, այնպես էլ զարդարանքով»:

Այսպիսով, Հովսեփ Օրբելու հողվածք գիտական շրջանառության մեջ էր դնում արծաթե երկու գեղեցիկ առարկաներ, որոնք պատրաստված էին միջնադարյան կվովի բազմամարդ հայկական գաղութին պատկանող վարպետների ձեռքերով⁷⁹:

Ինչպես ասվեց, Հ. Ա. Օրբելին շղաղարեցրեց զեռևս 1911—1912 թթ. Վանում սկսած քրդական ուսումնասիրությունները: Այն տարիներին քրդագիտության գտնադրումը



Կաջ գլուղի խաչաքարի մաս: Հայաստան, 1913 թ.

⁷⁷ Н. А. Орбели, Два серебряных ковша XVI века с армянской и греческой надписями.—ХВ, т. V, вып. I, 1916, стр. 1—3.

(ХВ, т. V, вып. II, стр. 144—146).

Շերեփների հունական արձանագրությունների մասին Ա. Կ. Մարկովի և Պ. Վ. Երնչտեղտի նոթերի հրատարակումը Հ. Ա. Օրբելու կողմից

⁷⁸ Н. А. Орбели, Два серебряных ковша..., стр. 9.

⁷⁹ Հետագայում, էրմիտաժի Արևելյան բաժնի վարիչ եղած ժամանակ Հ. Ա. Օրբելուն հաջողից այդ երկու շերեփներին միացնել նրանց ազգակից երրորդ շերեփը՝ հայերեն արձանագրությամբ: Այդ շերեփի հրապարակումը տակավին չի իրականացվել:

Ռուսաստանում խթանվում էր ոչ միայն դիտական պահանջ-
մունքներով, այլև Արևելքում Ռուսական կայսրության քա-
ղաքական շահերով: Որոշ շափով դրանով է պայմանավոր-
ված Պետերբուրգի ուսումնական օկրուգի կառավարչի
1914 թ. հունիսի 4-ի նամակը. «Արտաքին գործերի մինիստ-
րի կողմից ժողովրդական լուսավորության մինիստրությանը
հաղորդած նկատառումների համաձայն ցանկալի է Ի. Ս. Պ.
համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում մրտ-
ցրենել բրդական լեզվի և բրդական ազգագրության դասավան-
դումը: Համապատասխան մասնագետ պատրաստելու նպա-
տակով ժողովրդական լուսավորության մինիստրությանը հը-
նարավոր է համարում մագիստրոս Օրբելուն համալսարա-
նում թողնելու ժամկետը երկարացնել մինչև 1915 թ. հուն-
վարի 1-ը, և որպես համալսարանում թողնվածի ու կայսրու-
թյան ներսում գործուղվածի նրան բնթացիկ տարվա համար
նշանակել ուճիկ 1500 ռ. չափով»⁸⁰:

Ամենայն հավանականությամբ, հատկապես Հ. Ա. Օրբելու
համար էր Ն. Յա. Մառի կողմից հետազայում կազմված
«Քրդական ազգագրության պարամունքների ծրագիրը»:
Ռուսական քրդագիտության պատմության համար այս փաս-
տաթուղթը անկասկած հետաքրքրություն է ներկայացնում:

«1. Կարգալ՝ դեպի Քուրդիստան և բրդական բնակչություն
ունեցող երկրները ուղևորություն կատարած եվրոպական
ճանապարհորդներին և տեղեկություններ քաղել բրդերի մա-
սին:

II. Գրականությունից քաղված (հին և արևելյան գրող-
ներից, ճանապարհորդներից և հետազոտողներից) կամ անձ-
նական զննումների տվյալներով աշխատանք տանել պար-
զելու բոշվոր և նստակյաց բրդական ցեղերի տիպերը, կա-
տարել նրանց. 1) արտաքինին և տիպական գծերին, 2) հա-
սարակական կենցաղին, սովորույթներին, զբաղմունքներին,
արհեստներին, 3) կրոնական կենցաղին (եզգի և մահմեդա-
կան), 4) կահավորանքին, բնակարաններին, հագուստին,

գործիքներին, 5) բանավոր գրականությանը և երգերին,
6) այս կամ այն արտացեղային ազգագրական միջավայրից
կախված տիպերի տատանումներին վերաբերող տվյալների
գրասակարգումը:

III. Այն ժամանակ, երբ կհաջողվի ուղևորություն ձեռ-
նարկել բրդերի մոտ, դիտել որոշակի բրդական ցեղի կյանքի
այն երևույթներն ու փաստերը, որոնց պակասը գրականու-
թյան մեջ կբացահայտվի սույն ծրագրի II կետի վերլուծման
ժամանակ:

14.9.17 Պետրոգրադ, հաստիք. պրոֆ. Ն. Մառ»⁸¹:

1914 թվականի ընթացքում Հ. Ա. Օրբելին մեծ եռանդով
կարգի էր բերում և հրատարակության պատրաստում բրդե-
րենին վերաբերող Տաճկահայաստանում հավաքած նյութերը:
Գիտությունների ակադեմիայի հանձնարարությամբ նա զբաղ-
վեց մինչ այդ հայտնի Ա. Ժաբայի բրդերեն-ֆրանսերեն բա-
ռարանին հակառակ ֆրանսերեն-բրդերեն բառարանի կազմ-
մամբ և ձեռնամուխ եղավ դրա հրատարակմանը: Արևելյան
ֆակուլտետին⁸² տված հաշվետվությունից երևում է, որ
1914 թ. վերջերին 9 տպագրական մամուլից երկուսն արդեն
չարված էին:

1914 թ. ամռանը բրդերի մոտ ուղևորություն կատարելու
հնարավորություն ստեղծվեց, և Հ. Ա. Օրբելին հապճեպ ձեռ-
նամուխ եղավ Մոքսի բարբառի հիման վրա ուս-քրդերեն
բառարանի կազմելուն, «Իր առջև նպատակ դնելով հնարա-
վորության սահմաններում լրիվ նախապատրաստել անհրա-
ժեշտ այն ամենը, ինչ հարկավոր էր բրդերենի վերաբերյալ
բառարանական և քերականական նյութերի հետագա գրա-
ռումը դյուրացնելու, բարելավելու և արագացնելու համար»⁸³:
Աշնանը Հովսեփ Օրբելին հրատարակված նյութերի հիման
վրա զբաղվեց բրդերեն լեզվի բոլոր հայտնի բարբառների ու
խոսվածքների բառարանի կազմման նախապատրաստական

81 ГИАЛО, ф. 14, оп. 3, № 15829, л. 64. Ն. Յա. Մառի ինքնագիրը:

82 Նույն տեղը, թ. 178, Հ. Ա. Օրբելու ինքնագիրը:

83 Ներկայումս բառարանը պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

⁸⁰ ГИАЛО, ф. 14, оп. 3, № 15829, л. 6.

աշխատանքով, միաժամանակ ձգտելով ստեղծել միասնական տառադարձություն:

Նույն հաշվետվության մեջ կարելի է կարդալ. «Հաշվետու տարվա զարմանք, օգտվելով քրդական հայտնի քաղաքական գործիչ Բողրխան Եզդանշերի (Աբդուռեզակի) Պետրոգրադում գանվելուց, նրա հետ կարդացի և օգտվեցի նրա (լեզվի վերաբերյալ) բացատրություններից, որոնք վերաբերում են «Մամե ու Զինե» սիրավեպի հեղինակ, ջեզիրցի փառաբանված քուրդ բանաստեղծ Ահմեդ Խանի սուֆիական բանաստեղծություններին»⁸⁴: «Մամե ու Զինե» պոեմայով Հ. Ա. Օրբելին հետաքրքրվում էր մի քանի տարի շարունակ և իր ելույթներում ու հոդվածներում բազմիցս անդրադարձել է քրդական դասական գրականության այդ խոշորագույն հուշարձանին:

Հ. Ա. Օրբելու հետաքրքրությունների շրջանակը շարունակ ընդլայնվում էր, նրա տաղանդը զարգանում էր շատ ուղղություններով: 1916 թվականը նրան մեծ հաջողություն բերեց նաև մեկ այլ ասպարեզում՝ ուրարտագիտության մեջ:

Այն ժամանակներում դա նոր գիտություն էր, որը շատ զանգաղ էր անջատվում ասորագիտությունից: Արձանագրություններ շատ էր հավաքված, ուրարտական լեզվի ուսումնասիրության վրա կատարած աշխատանքը շոշափելի արդյունքների էր հանգեցրել, սակայն Վանի թագավորության հնագիտության ուսումնասիրությունը տակավին սաղմնային վիճակում էր: Սիստեմատիկ պեղումներ կատարվում էին միայն Վան քաղաքի մոտ գտնվող Թոփրակ-Վալա հնազույն ամրոցում⁸⁵: Վանի հնությունների նկատմամբ հետաքրքրությունը աճում էր տարեցտարի: Ն. Յա. Մառն իրեն հատուկ տաքարյունությամբ պաշտպանում էր ուրարտացիներից դեպի հայերն ու վրացիները ձգվող պատմական և կուլտուրական կապերի մասին գրույթը: Ինչպես ասվեց, 1911 թ. Հ. Ա. Օրբելին Վանի մոտ ոչ մեծ պեղումներ կատարեց և,

իր այդ ուղևորության մասին զեկուցելով Ռուսական հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքի նիստում, ասաց, որ «զգալի արդյունքներ կարելի է սպասել հետագա պեղումներից»: Արևելյան բաժանմունքը շատ անգամ հարց բարձրացրեց դեպի Վան հնագիտական արշավախումբ կազմակերպելու վերաբերյալ⁸⁶, սակայն այդ ձեռնարկումը հաջողվեց իրականացնել միայն 1916 թ.: Ն. Յա. Մառն և Հ. Ա. Օրբելին ուղևորվեցին Վան, որն այն ժամանակ գրավված էր ռուսական զորքերի կողմից: Ն. Յա. Մառն պեղումներ էր կատարում Թոփրակ-Վալե բլրի (հունիսի 11-ից մինչև հուլիսի 16-ը), իսկ Հովսեփ Օրբելին՝ Վանի ժայռի վրա (հունիսի 22-ից մինչև հուլիսի 16-ը): Թուրքական զորքերի հարձակումը և ռուսական զորքերի նահանջը գիտնականներին ստիպեցին արագացնել իրենց մեկնումը:

Հովսեփ Օրբելին Վանի ժայռի նկարագրության հետ կարող էր ծանոթանալ դեռևս ուսանողական տարիներին, երբ կարդում էր հայ նշանավոր պատմաբան Մովսես Խորենացու համապատասխան էջերը:

Պատմելով այն մասին, թե ինչպես ասորական թագուհի Շամիրամը (Սեմիրամիդա) ուղևորվեց դեպի Վանա լիճը, պատմահայրը գրում է. «Շատ տեղերով անցնելով՝ գալիս հասնում է աղի ծովակի եզերքը արևելյան կողմից. տեսնում է ծովի ափին մի երկայնաձև բլուր, որ երկայնությամբ ձգվում էր դեպի արևմուտք՝ հյուսիսային կողմում մի փոքր թեքությամբ, իսկ հարավային կողմից ուղղահայաց դեպի երկինք բարձրացած մի կանգուն ու անթեք քարածալո կար: Սրանից դեպի հարավ հեռուն տարածվում էր մի դաշտանրման երկայնաձև հովիտ, որ լեռան արևելյան կողմից ընդարձակ ու զեղեցիկ կիրճով իջնում էր ծովի ափը և առատ էր խմելու ջրով, որն առավելություններ կազմած իջնում էր ծով իսկ վերջիններս էլ լեռների ստորոտների մոտ

⁸⁴ ГИАЛО, ф. 14, оп. 3, № 15829, л. 178. Հ. Ա. Օրբելու ինքնագիրը:
⁸⁵ Б. Е. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, стр. 18.

⁸⁶ Այս արշավախմբի պատրաստման պատմությունը հանդամանորեն շարադրված է Ն. Յա. Մառի կողմից: Н. Марр и И. Орбели, Археологическая экспедиция 1916 года в Ван, Пг., 1922, стр. 1—3.

միավորվում, ծավալվում ու գեղեցիկ գետեր էին կազմում: Հովտաձև ձորակի մեջ ոչ սակավ շեներ կային՝ ջրերի աջ ու ձախ կողմերում գետեղված»⁸⁷: Այստեղ, հյուսիսային լանջի վրա, Վանի միջնաբերդի պատերի մոտ, երևում էին քարա-
ժայռի մեջ փորված երկու խորը որմախորշեր, որոնք կիսով շափ լցված էին հողով: Արևմտյան որմախորշի արևելյան պատի վրա կար ուրարտական Սարգուր II թագավորի սեպածե արձանագրությունը, որը հայտնի էր դեռևս Ֆ. Շուլցին⁸⁸: Արձանագրության վերջին տողի տակ ինչ-որ տառեր էին երևում: Դա Հ. Ա. Օրբելուն ստիպեց ձեռնարկել ոչ մեծ հետախուզություն, որը և շարունակվեց, չնայած նույն օրը պարզվեց, որ հանելուկային տառերը պատկանում են հայկական արձանագրությանը և, ինչպես հաջողվեց հետազայում հաստատել, դրանք նույնպես հիշատակված են Ֆ. Շուլցի կողմից:

Ենթադրվում էր, որ որմախորշերը ունեն աննշան բարձրություն, և Հովսեփ Օրբելին ցանկացավ պարզել արևմտյան որմախորշի ձևն ու նշանակությունը: Հունիսի 22-ին սկսեցին այն փորել: Աշխատանքը ծանր էր, ընդամին ոլինչ չհայտնաբերվեց: Ե՛վ բանվորները և՛ ինքը՝ արշավախմբի ղեկավարը, արդեն սկսել էին հուսահատվել, երբ հունիսի 28-ին, երեկոյան ժամը 4-ին, 2 մետր խորության վրա երևաց ուղղանկյուն կտրվածք ունեցող, երկու կողմերից մշակված մի մեծ քար: Երբ հեռացրին կավը, պարզվեց, որ բոլոր շորս հղկված կողերի վրա կային սեպագիր արձանագրություններ: Դա մի բնորոշ ուրարտական կտր վերնամասով, որը տվյալ դեպքում պոկված էր, զուգահեռանիստի ձևով կոթող էր: «Դժվար չէ պատկերացնել, — հաշվետվությունում գրում է Հ. Ա. Օրբելին, — թե ինչպիսի անհամբերությամբ էին շարունակվում մեծ զգուշություն պահանջող և անձնակազմի

զինվորների կողմից հիանալի կատարվող աշխատանքները՝ կոթողը մաքրելու և փորել-հանելու համար. շատ հուզմունք և ուրախություն էր պատճառում այն, որ արձանագրությունն անսահման էր թվում՝ այն շարունակ խորանում էր վերնամասի, այսինքն՝ կոթողի հարավային կողմի մաքրմանը զուգընթաց»⁸⁹: Շատ շանցած որմախորշի հետնապատի վրա հայտնաբերվեց և մաքրվեց ևս մեկ արձանագրություն:

Պեղումները շարունակվում էին: Երևաց խորանարդաձև պատվանդանը՝ իր բնով, ուր մտնում էր կոթողի բուխակը: Բուխակը ջարդված էր և այդ պատճառով կոթողը թեթևությամբ էր կանգնած: Երբ դադարեցվեցին պեղումները, կոթողը գրվեց իր տեղը. նախապես այն երեք անգամ պտտեցին իր առանցքի շուրջը, որպեսզի լուսանկարեն արձանագրությունները: Փորեցին նաև արևելյան որմախորշը: Այստեղ, 949 թ. մակագիրը կրող տապանախաչի տակ, հայտնաբերվեց կմախք: Մակագրությունը (ինչպես նաև տապանախաչը), որ կապված է թաղման հետ, ասում է՝ «Հիշեցեք Գուրգենին ի Քրիստոս»: Հ. Ա. Օրբելին ենթադրում էր, որ հայտնաբերված կմախքը պատկանում է Վասպուրականի թագավոր Գազիկի փոքր եղբայր Դերենիկի որդի Գուրգեն Արծրունուն: Իսկ արևելյան որմախորշի հատակի զույնը ցույց էր տալիս, որ այստեղ էլ երբեք եղել է կոթուղ:

Հ. Ա. Օրբելու հայտնաբերած արձանագրությունները բովանդակում էին մ. թ. ա. 8-րդ դարի կեսերին իշխած Սարգուր II թագավորի տարեգրության նշանակալից հատվածներ: Դա Ուրարտուի բարձրագույն ժողկրթական ժամանակներն էին, և Սարգուրի տարեգրությունները կարևորագույն տեղեկություններ էին պարունակում այդ տարիների իրադարձությունների մասին⁹⁰: Ուտի բնական է, որ այդ արձանագրությունների հայտնաբերումը Հ. Ա. Օրբելուն մեծ և արժանի փառք բերեց: Բայց նա ինքը գտնում էր, որ աշխատանքի փոքր մասն է արված՝ ոչ միայն ընդհանրապես ուրարտա-

87 Մսվսես Խառնեացի, Հայոց պատմություն, Հայպետհրատ, 1961, էջ 113: Թարգմանությունը ակադ. Ստ. Մախասյանի:

88 Ֆ. Շուլցը ուրարտական հուշարձանների առաջին հետազոտողն էր նոր ժամանակներում: Զոհվել է 1829 թ.: Նրա հավաքած նյութերը հրատարակվեցին Ֆրանսիայում միայն 1840 թ.:

89 Н. Март и И. Орбели, Археологическая экспедиция 1916 года в Ван, стр. 15.

90 Ст'ю Б. Б. Пиотровский, Ванское царство, стр. 75—81.

կան հնուժյուժներին, այլև Վանի ժայռի ուսումնասիրության բնագավառում: «Որմախորշերի պեղումներով,— գրում է նա հաշվետվության մեջ,— այս տարի հանված է սոսկ մի շնչին բուռ հող այն հսկայական նյութերից, որոնց ձեռք չի տրված, և որոնք մեծ քանակությամբ, բոլորովին բաց վիճակում գտնվում են հողի մակերևույթի վրա»⁹¹:

Այդ իդձերը անպատշաճ շնացին: Նախապատերազմյան, հատկապես հետպատերազմյան տարիներին հայտնի սովետական հնագետ Բ. Բ. Պիոտրովսկին, նրա աշխատակիցներն ու աշակերտները հիանալի հաջողություններ հասան Ուրարտուի պատմության և կուլտուրայի ուսումնասիրման բնագավառում: Կարմիր Բլուրի (Երևանի մոտ) ուրարտական ամրոցի պեղումները գրավում էին Հ. Ա. Օրբելու մշտական ուղարկությունը: Աշխատանքների հենց սկզբին նա մի ամբողջ օր անցկացրեց պեղումների տեղում⁹², մի քանի տարի շարունակ նա լինում էր Կարմիր բլուրում: Բ. Բ. Պիոտրովսկին խորհուրդների համար բազմիցս դիմում էր նրան, և Հովսեփ Օրբելու գիտելիքները, զուգակցված նրա ապշեցուցիչ նրբազգացողության հետ, օգնում էին լուծելու շատ հանելուկներ, որոնք կանգնում էին հնագետների առջև: Շատ թե քիչ նշանակություն ունեցող բոլոր հայտնաբերված իրերի մասին արշավախմբի մասնակիցները անմիջապես հաղորդում էին Հ. Ա. Օրբելուն, որն անհամբերությամբ սպասում էր Երևանից նկող լուրերին:

Այս փաստերը, ինչպես և շատ ուրիշներ, ցույց են տալիս, որ սովետական ուրարտագիտության զարգացման մեջ Հ. Ա. Օրբելու դերը ամենեկին չի սահմանափակվում Վանի արշավախմբի ժամանակ 1911—1912 և 1916 թթ. նրա հայտնաբերած (թեև շատ կարևոր) իրերով:

⁹¹ Н. Мэпп и Н. Орбели, Археологическая экспедиция 1916 года в Ван, стр. 24.

⁹² Б. Пиотровский, Я полюбил Армению,— в кн.: «Дружба», кн. 2, Ереван, стр. 68.

Նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայի հիմնադրումը: Ակադեմիական տպարանում: Արևելյան լեզուների կադրայան ձևմարանի վերակառուցումը: Էրմիտաժում: Աշխատություններ սասանյան արվեստի վերաբերյալ: Առաջին ցուցահանդեսները: Արևելքի բաժնի ստեղծումը: 1928 և 1929 թթ. արշավախմբերը: Իրանական արվեստին և հնագիտությանը նվիրված լոնդոնի կոնգրեսը: Արևելքի բաժնի մշտական ցուցահանդեսը: Պետական էրմիտաժի ղեկավարի պաշտոնում: Ֆիրդուսու հազարամյակը: Իրանի արվեստին նվիրված կոնգրեսը: Լենինգրադում և Մոսկվայում: Արշավախումբ դեպի Համբուրգ: Եոթն Թուրքիայի հոբելյանը: «Մասունցի Գավիթ» էրմիտաժի ուսական բաժինը:

Նկավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Պետրոգրադի, ինչպես նաև ողջ Ռուսաստանի գիտական աշխարհի առջև կանգնեց մի հրատապ հարց՝ ինչպե՞ս վերաբերվել կատարված պատմական իրադարձությանը: Ոմանք (գրանք քիչ էին) հավատարիմ մնացին իրենց կաստայական հայացքներին և հայտնվեցին հեղափոխության թշնամիների ճամբարում: Ոմանք էլ շփոթվեցին, որին քիչ շափով չէր նպաստում աշխատանքի սովորական ձևերից ու պայմաններից հարկադրաբար հրաժարվելը, գիտական կապերի խզումը և այլն: Բայց քիչ չէին նաև այնպիսիները, որոնք, գիմանալով անխուսափելի բեկմանը, որոշեցին իրենց վերաբերմունքը դեպի նոր կարգը և շարունակեցին ծառայել հայրենական գիտությանը: Պետրոգրադյան գիտնականների (խոսքը հոմանիտար գիտությունների գործիչների մասին է) այդ խմբի զուրի կանգնեց Ն. Յա. Մառը: Հոկտեմբերյան հեղափոխության հենց առաջին օրերից մինչև իր կյանքի վերջին օրը Ն. Յա. Մառը անշեղորեն կանգնած էր սովետական գիտնականների առաջին շարքերում, իր անձնական, գիտական և հասարակական հեղինակության ուժով ոգևորելով համեմատաբար թույլերին, մտածել ստիպելով տարակուսողներին, ցույց տալով նրանց այն ուղին, որի վրա

նրանք անխուսափելիորեն պետք է ոտք դնեն, գրում է Մա-
ռի մասին նրա կենսագիր Վ. Ա. Միխանկովան¹։

Հեղափոխությունը նաև Հ. Ա. Օրբելու՝ Օրբելի-դեմոկրա-
տի և Օրբելի-հայրենասերի համար բաղաբացիական հատ-
կությունների քննություն հանդիսացավ, և այդ քննությունը
նա բռնեց։

Հեղափոխությունը գործելու լայն ասպարեզ տվեց Հով-
սեփ Օրբելու կազմակերպչական տաղանդին։ Նա, ճիշտ է,
առաջ էլ ղեկավարել էր շատ բարդ գիտական հիմնարկու-
թյան աշխատանքը (1914 թ. աշնանը նա ընտրվեց Ռուսա-
կան հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի
բարտուղար)², սակայն հեղափոխությանը հաջորդած տարի-
ներին նրա գործունեության մասշտաբները անհամեմատ
աճեցին։ Չղադարեցնելով հետազոտական աշխատանքները,
նա իրեն հատուկ եռանդով նվիրվում է մի ամբողջ շարք հիմ-
նարկությունների (որոնց գործունեության բնույթը պետք էր
արմատապես փոխել) վերակառուցման ղեկավարին խնդրին։
Դա առաջին հերթին վերաբերում էր նյութական կուլտուրայի
պատմության ակադեմիային։

Մինչև հեղափոխությունը հնագիտական հետազոտություն-
ների պաշտոնական կենտրոնը Ռուսաստանում համարվում
էր արքունի մինիստրությանն առընթեր կայսերական հնա-
գիտական հանձնաժողովը, որը հիմնադրվել էր 1859 թ.։ Նրա
խնդիրների մեջ մտնում էր «գլխավորապես արդի Ռուսաս-
տանի գրաված տերիտորիայում երբևիցե բնակվող ժողո-
վուրդների կյանքին և հայրենական պատմությանը վերաբե-
րող» պեղումների կատարումը և հնությունների ուսումնասի-
րությունը։ 1889 թ. մարտի 11-ի հրամանագրի համաձայն,
միայն հանձնաժողովը կարող էր թույլատրել հնագիտական
պեղումները և լուծել երկրում մոնումենտալ հուշարձանների
վերականգնման հետ կապված հարցերը։ Ամենից առաջ

նկատի ունենալով էրմիտաժի շահերը, հանձնաժողովը խրա-
խուսում էր այն հետազոտությունները, որոնք հանգեցնում
էին պերճանքի իրերի հայտնաբերմանը, գլխավոր ուշադրու-
թյունը դարձնում էր դասական և սկյութա-սարմատական
իրերին։ Հանձնաժողովը գլխավորում էին ուսական բարձր
արիստոկրատիայի ներկայացուցիչները. նրա վերջին նախա-
գահը կոմս Ա. Ա. Բոբրինսկին էր։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կայսերական
հնագիտական հանձնաժողովը վերակազմվեց Ռուսական պե-
տական հնագիտական հանձնաժողովի (1918 թ. նոյեմբեր),
որի առաջին ընտրովի նախագահը դարձավ Ն. Յա. Մառը։

Առաջին իսկ օրերից Ն. Յա. Մառը գլխավորում էր հին
ավանդությունների դեմ մղվող պայքարը, ձգտելով այն բա-
նին, որ նոր հանձնաժողովը ոչ թե սահմանափակվի առան-
ձին առարկաների ուսումնասիրությամբ, այլ դրանք օգտա-
գործի որպես լիարժեք պատմական աղբյուրներ։ Շատ տարի-
ներ անց, ելույթ ունենալով ՍՍՀՄ ԳԱ նյութական կուլտու-
րայի պատմության ինստիտուտի հորելյանական պլենումում,
Հ. Ա. Օրբելին ասաց. «Ընդունված է մտածել, որ նոր նշա-
նակված ղեկավարը իրեն վստահված հիմնարկությունը պետք
է մտնի նրա համար, որպեսզի այն ամրապնդի, բարձրացնի,
ուսումնասիրի և այն դարձնի առավել օգտակար։ Նիկոլայ
Յակովլևիչը իր խնդիրը այլ կերպ էր հասկանում։ Նա հաս-
կանում էր, որ ամենից առաջ պարտավոր է կատարել իրեն
հանձնարարված աշխատանքի ամենադժվար մասը, իսկ ամե-
նադժվարը Նիկոլայ Յակովլևիչը համարում էր խորտակելը՝
նորը ստեղծելու նպատակով»³։

Այդ բաները լրիվ շափով կարելի է վերագրել նաև իրեն
Հ. Ա. Օրբելուն, որը 1918 թ. ընտրվեց վերակառուցված հնա-
գիտական հանձնաժողովի խորհրդի անդամ։ Բայց, չնայած
վերակառուցմանը, հնագիտական հանձնաժողովը քիչ էր բա-
վարարում փոփոխված պահանջներին։ Եվ ահա Հ. Ա. Օրբե-
լին, Ն. Յա. Մառի, Ս. Յ. Օլգենբուրգի, Վ. Վ. Բարտոլդի,
Ս. Ա. Ժեբելյովի հետ միասին, ամբողջովին նվիրվում է

3 Ելույթի սղագրությունը պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում։

¹ В. А. Миханкова, Николай Яковлевич Марр, М.—Л., 1949, стр. 263.

² 1911 թվականից նա Արևելյան բաժանմունքի թղթակից-անդամ էր, 1914 թվականից՝ իսկական անդամ։

հանրապետությունում հնագիտական ուսումնասիրությունների իսկական կենտրոնի նախագծի մշակմանը: Աշխատանքներին աշխուժորեն մասնակցում էր պատմաբան Մ. Ն. Պոկրովսկին:

Ենթադրվում էր, որ նոր հիմնարկությունը կկոչվի նյութական կուլտուրայի ակադեմիա, սակայն Վ. Ի. Լենինը ավելացրեց նաև «պատմություն» բառը և 1919 թ. ապրիլի 18-ին ստորագրեց «Դեկրետ նյութական կուլտուրայի պատմության ուստական ակադեմիայի մասին»:

Հիշատակելով Վ. Ի. Լենինի ուղղումը, Ն. Յա. Մառը հետագայում գրում էր, որ հավանաբար այն արված էր «արդեն մեթոդի հետ սերտ կապված»՝ դատողությունների հիման վրա: Իսկապես, նյութական կուլտուրայի հուշարձանների նկատմամբ պատմական մոտեցումը շատ բնորոշ է ակադեմիայի ողջ գործունեության համար, այն ընդունվեց որպես մեթոդական կարևորագույն դրույթներից մեկը⁴: Այդ առաջադեմ դրույթը, որը կոչված էր վերջ դնելու հուշարձանների հին, հաճախ շատ ձևական ուսումնասիրմանը, կենսագործելու բնագավառում քիչ չէ նաև Հ. Ա. Օրբելու ծառայությունը: Տեղին է նշել, որ ինչպես երևույթների, այնպես էլ նյութական կուլտուրայի հուշարձանների նկատմամբ պատմական մոտեցումը բնորոշ է նրա բոլոր աշխատություններին, անկախ այն թեմայից, որին դրանք նվիրված են:

Նյութական կուլտուրայի պատմության ուստական (հետագայում՝ պետական) ակադեմիան կարևորագույն դեր խաղաց հայրենական գիտության զարգացման գործում: Ակադեմիան միավորում էր երկրի խոշորագույն գիտնականներին՝ պատմաբաններին, հնագետներին, արվեստի պատմաբաններին:

Մանոթանալով նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի տպագիր և արխիվային փաստա-

թղթերի հետ, ուսումնասիրողը մշտապես հանդիպում է գիտնականների ծանոթ անունների, որոնք իրենց խոսքն են ասել սովետական գիտության մեջ: Ակադեմիայի հրատարակությունները՝ «Известия Академии», «Записки Академии», «Сообщения Академии», «Труды нумизматической комиссии», «Известия Института археологической технологии», «Материалы по методологии археологической технологии», պարունակում են կարևորագույն աշխատանքներ և արտացոլում են մեր գիտության առաջընթաց զարգացումը այն տարիներին: ՍՍՀՄ-ում պատմական գիտության ապագա պատմաբանը ինչպես մեթոդական, այնպես էլ մեթոդոլոգիական տեսակետից պետք է ցույց տա, թե որքան արժեքներ են ծնվել հասարակական գիտությունների այն ժամանակվա խոշորագույն կենտրոնի պատերի ներսում:

Վ. Ի. Լենինի ստորագրած դեկրետի համաձայն ակադեմիան հիմնադրվում էր «Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության սահմաններում գտնվող ինչպես մոնումենտալ, այնպես էլ կենցաղային հուշարձանների, արվեստի ու հնությունների և ընդհանրապես նյութական կուլտուրայի բոլոր արժեքների հնագիտական և զեղարվեստա-պատմական ուսումնասիրության համար»: 1919 թ. օգոստոսի 5—7 համառուսաստանյան հատուկ կոնֆերանսը ընտրեց ակադեմիայի նախագահին՝ Ն. Յա. Մառին, և նրա անդամներին: Այդ ժամանակ էլ ընտրվեց նաև Հ. Ա. Օրբելին, որի վրա զրվեցին գիտական քարտուղարի պարտականությունները: Հովսեփ Օրբելու անմիջական մասնակցությամբ մշակվեց նյութական կուլտուրայի պատմության ուստաստանյան ակադեմիայի կանոնադրությունը, որը գիտական խորհրդի կողմից հաստատվեց 1919 թ. հոկտեմբերի 21-ին (գործեց մինչև 1926 թ. հունվարի 12-ը, երբ ընդունվեց նոր կանոնադրություն):

Ակադեմիան բաղկացած էր երեք բաժանմունքից՝ էթնոլոգիական, հնագիտական ու պատմա-զեղարվեստական, և հատուկ հնագիտական տեխնոլոգիայի ինստիտուտից, որի գլուխ կանգնած էին ակադ. Ա. Ս. Ֆերսմանը և Մ. Վ. Ֆարմակովսկին: Բաժանմունքներն իրենց հերթին բաժանվում էին

⁴ Н. Я. Марр, Государственная Академия истории материальной культуры, «Научный работник», 1927, № 2, отд. оттиск, стр. 1.

⁵ Ср.: Б. Фармаковский, Российская Академия истории материальной культуры в 1919—1922 гг., Пг., (1922), стр. 2.

տարակարգերի: Հովսեփ Օրբելին գլխավորում էր Հայաստանի և Վրաստանի հնագիտության (երկրորդ բաժանմունքի գծով) և Հայաստանի ու Վրաստանի արվեստի (երրորդ բաժանմունքի գծով) բաժինը:

Հ. Ա. Օրբելին այստեղ ևս մնաց Մառ-պատմաբանի և Մառ-բանասերի մերձավորագույն աշխատակիցներից մեկը: Միակ բանը, որում նրանց մոտ տարածայնություն էր նկատվում, դա «լեզվի վերաբերյալ նոր ուսմունքի» հիմնական դրույթներն էին, որոնք Հովսեփ Օրբելին հրաժարվում էր ճանաչել: Այս կապակցությամբ նշանավոր է հետևյալ փաստը: 1921 թ. սեպտեմբերին Հ. Ա. Օրբելին ընտրվում է գիտությունների ակադեմիայի հարեթական ինստիտուտի անդամ, բայց արդեն հաջորդ տարվա մարտին ազատում է հաստիքային պաշտոնը, իսկ հետո բոլորովին դադարում մասնակցելուց ինստիտուտի աշխատանքներին, որտեղ իշխում էր օրինականացված «նոր ուսմունքը»:

1931 թ. Հ. Ա. Օրբելին հեռանում է նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայից, այդ նույն ժամանակ էլ նա թողնում է նաև համալսարանը (ուր վարում էր Արևելքի նյութական կուլտուրայի պատմության ամբիոնը), տալով մի ընդարձակ դիմում լեզուների և բանասիրական առարկաների կրճատման անթույլատրելիության մասին: Այդ ժամանակ էլ տեղի է ունենում դեռևս քսանական թվականներին սկիզբ առած խզումը Մառի հետ, որը շատ ծանր ապրեց Հովսեփ Օրբելին: Սակայն լեզվաբանության բնագավառում եղած տարածայնությունները չէին կարող տատանել Մառի ամբողջ ժառանգության մեծության մասին Հ. Ա. Օրբելու ունեցած հայացքները: Եվ ն. Յա. Մառի «Անի» գրքի մասին գրախոսականում⁶, և նրա մասին գրած հատուկ հոդվածում⁷ Հովսեփ Օրբելին իր ուսուցչի նկատմամբ շարունակում է վերաբերվել որպես ուսանողան և խոշորագույն արևելագետներից

⁶ И. А. Орбели, Блестящая страница в истории археологии,— ПИДО, 1934, № 9—10, стр. 195—197.

⁷ И. А. Орбели, Н. Я. Марр как археолог,—ПИДО, 1935, № 3—4, стр. 50—61.

մեկի: Այն տարիներին, երբ գրվում էին այս հոդվածները, ն. Յա. Մառի նկատմամբ այդպիսի վերաբերմունքը հատուկ էր գիտնականների մեծամասնությանը, այդ թվում նաև նրբանց, ովքեր չէին բաժանում «լեզվի վերաբերյալ նոր ուսմունքի» հիմնական դրույթները: Ուսուցչի նկատմամբ ունեցած այդ հավատարմությունը Հ. Ա. Օրբելին պահպանեց նույնիսկ այն ժամանակ, երբ լեզվաբանության հարցերի վերաբերյալ հայտնի բանավեճից հետո ն. Յա. Մառի անունը ատելի էր, նրա աշխատությունները հախուռն կերպով վատաբանվում էին և ամեն տեղ սկսվել էին նրա իսկական կամ թվացող հետևորդների «մշակումը»: 1950 թ. հոկտեմբերի 14-ին ելույթ ունենալով լեզվաբանության վերաբերյալ հոդվածների հանդես գալուն նվիրված Պետական էրմիտաժի գիտական խորհրդի նիստում՝ Հովսեփ Օրբելին, ի միջի այլոց, ասաց. «Այն ամենի խոր օգտագործումը, ինչ լավ բան Մառը գրել է բանասիրական առանձին հարցերի և լեզուների ընտանիքների մասին, կօգնի հերքելու այն, ինչ մեր գիտակցության մեջ մտցրել է Մառի սխալ «նոր ուսմունքը». իսկ հանել Մառի նկարները, Մառին հայտարարել «մերկաբա», այդ նրանց համար, ովքեր ճշում էին Մառի անմեղության մասին, բոլորից հեշտ է... Ես ինքս ինձ համարել եմ, համարում եմ և կհամարեմ Մառի աշակերտը, բայց առանց չակերտների: Քանի դեռ կենդանի էր ն. Յա. Մառը և մատչելի էր ինձ նրա հետ շփվել, ես կատարում էի աշակերտի պարտքը, որն ինձ սովորեցրել էր ինքը ն. Յա. Մառը՝ ուղղել ուսուցչի սխալները: Այդ ես անում էի, քանի դեռ մեր միջև չկանգնեց անհաղթահարելի պատր: Ամենաժանր կորուստը— ուսուցչի կորուստն է: Ես այն դպացել եմ, բայց, բարեբախտաբար, ժամանակավորապես, որովհետև իր կյանքի վերջին 3—4 ամիսներին Մառը վերադարձավ իր նախկին վերաբերմունքին դեպի լեզվաբանական գիտությունը»: Այնուհետև խոսելով պատմության և լեզվաբանության մեջ գոհակացված դրույթների դեմ մղած իր պայքարի մասին, Հ. Օրբելին ընդգծում է, որ էրմիտաժում Մառի պաշտամունք չի եղել, այլ «եղել է խոր հարգանք դեպի նրա ծառայությունները: Մառի նկատմամբ այդ հարգանքը չէր ընդունում ոչ

քննադատական ձևեր, նրա վրա, ինչպես ավետարանի, աղոթ-
թելու ցանկության ձևեր. բայց շատ հարցերում անհասկա-
նալիություն կար: Անձամբ ես Մառից ընդունել եմ այն, ինչ
ես ինքս ստուգել եմ. այդ ինձ սովորեցրել էր Մառը⁸: Այդ
մասին Հ. Ա. Օրբելին ասաց նաև 1955 թ. մարտին համալ-
սարանում տեղի ունեցած զրույցի ժամանակ, որը նվիրված
էր հայրենական արևելագիտության պատմության առանձին
հարցերի⁹:

Հետհեղափոխական տարիներին բացառիկ մեծ էին Հ. Ա.
Օրբելու ծառայությունները խմբագրական-հրատարակչական
ասպարեզում: Խմբագրի պարտականությունները նրան վա-
ղուց էին ծանոթ: Գառնալով ռուսական հնագիտական ըն-
կերության արևելյան բաժանմունքի գիտական քարտուղար,
նա XXII հատորից սկսած (3—4 թողարկում) խմբագրեց նրա
աշխարհահռչակ «Տեղեկագիրը»: Գա շատ պատասխանա-
տու աշխատանք էր. հարկ էր լինում գործ ունենալ արևելյան
տասնյակ լեզուների գրաշարվածքի հետ: Հ. Ա. Օրբելին նաև
«Քրիստոնեական Արևելքի» մի քանի հատորների խմբագիրն
էր: Իսկ 1920 թ. մայիսին Հովսեփ Օրբելին ընտրվում է նյու-
թական կուլտուրայի պատմության ռուսական ակադեմիայի
հրատարակչության վարիչ և նրա հրատարակչությունների
խմբագիր: Այստեղ նրա մասնագիտական գիտելիքները
ուղղակի անգնահատելի էին: Վերևում ասվեց, որ, ձեռնա-
մուխ լինելով հայկական արձանագրությունների հրատարակ-
մանը, Հ. Ա. Օրբելին սկսեց հետաքրքրություններ հրատարակ-
մանը, 1917 թ. հունվարին նա սկսեց
սովորել գրաշարի գործը, աշխատելով օրական ութական, իսկ
մեկ տարի անց՝ վեցական ժամ¹⁰: Նա լրիվ չափով տիրա-
պետեց նոր մասնագիտությանը և որպես ցուցադրական աշ-
խատանք ներկայացրեց իր կողմից շարված սեփական¹¹

⁸ Մեջբերումը արվում է ըստ Նիստի սղագրության, որն ստորագրել է
քարտուղար Ի. Մ. Գյակոնովը: Ելույթի տեքստը ուղղել է ինքը՝ Հ. Ա. Օր-
բելին (Հ. Ա. Օրբելու արխիվ):

⁹ Տե՛ս Հավելվածը, էջ 195—197:

¹⁰ Ի. Ա. Օրբելու, Моя научная работа.

«7-րդ դ. հայ մաթեմատիկոս Անանիա Շիրակացու խըն-
դիրները և լուծումները» աշխատությունը: Այդ փոքրիկ զբո-
քույկը շարված է իսկական ճաշակով ու շքեղությամբ:

Հ. Ա. Օրբելին աշխատում էր ակադեմիական տպարա-
նում, դա մի օրինակելի հաստատություն էր, որ հիմնադրվել
էր 1728 թ. և ամբողջ աշխարհում փառաբանված էր իր տպա-
տառերի՝ հատկապես արևելյանների հարստությամբ. վեր-
ջիններիս բաղմազանության մեջ համոզվելու համար կարելի
է թերթել այդ նույն «Արևելյան բաժանմունքի տեղեկագրի»
ցանկացած հատորը: Ակադեմիական տպարանում, ռուսա-
կան գիտնականներից բացի, իրենց աշխատություններն էին
տպագրում նաև արտասահմանյան արևելագետները: Հ. Ա.
Օրբելու հրատարակչական գործունեությունը համընկնում է
քայքայման տարիներին, երբ հրատարակչության իրազործու-
մը, հատկապես գիտական, երբեմն դեմ էր առնում անհաղ-
թահարելի դժվարությունների: Այդ ժամանակի բնորոշ փաս-
տաթուղթ կարող է հանդիսանալ, օրինակ, 1918 թ. լույս ըն-
ծալված «Կրտսությունների ակադեմիայի տեղեկագիր» № 13-ի
կապույտ ներդրույկը. «Ռուսական գիտությունների ակադե-
միայի տվյալ № 13 «Տեղեկագիրը» ժամանակին լույս չըն-
ծալվեց թուղթ չլինելու, ինչպես նաև այն պատճառով, որ
մոտորների համար էլեկտրաէներգիայի ու զազի բացակա-
լության հետևանքով կանգնեցին տպագրական մեքենաները:
Խմբագիրը, մշտական քարտուղար, ակադեմիկոս Ս. Օլգեն-
բուրգ: 23(10) հոկտեմբերի, 1918 թ.»։ Նույնիսկ այդ պայ-
մաններում, երբ ոչ միայն թղթի ու էլեկտրաէներգիայի, այլև
որակյալ բանվորական ուժի սուր կարիք էր զգացվում, Հ. Ա.
Օրբելին հավաքեց գիտական աշխատողների մի փոքր խումբ,
սովորեցրեց շարվածքի գործը և զբաղվել իսկ ապահովեց
«Նյութական կուլտուրայի պատմության ռուսական ակադե-
միայի տեղեկագրի» առաջին հատորի լույս ընծայումը¹²:

¹¹ Ի հատորի տվյալներից ելնելով: Текст этой книги напечатан в
Российской Государственной Академической типографии. Набирали
под руководством метранпажа М. Г. Стрельмана и при его участии
А. В. Кораблев... а также ассистенты Академии К. В. Тревер (1—8,

Այդ տարիներին Հ. Ա. Օրբելին ոչ միայն խմբագրում է «ՆԿՊՌԱ տեղեկագիրը» (ՀՀ. I—III), «ՆԿՊՌԱ տեղեկագիրը» (ՀՀ. I—II), «Դրամագիտական հանձնաժողովի աշխատությունները» (ՀՀ. I—IV), այլև գործնական մասնակցություն է ունենում տպարանի գործերում՝ ձարում է մեքենաներ, պարենամթերքի նորմա բանվորների համար և այլն, ձգտում է վերադարձնել որակյալ աշխատողներին, արգելք հանդիսանալ ակադեմիական տպարանի դիմազրկմանը: Նրան հաջողվեց հասնել տպարանը գիտությունների ակադեմիայի և նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայի տնօրինությանը հանձնելուն, դա օգնեց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել միայն նրա պրոֆիլին համապատասխանող մասնագիտական պատվերների կատարման վրա: 1921 թ. Հովսեփ Օրբելին երկու ակադեմիաների կողմից ընտրվում է տպարանի գիրեկտոր և մինչև 1922 թ. նա առանց վարձատրության կատարում է այդ պաշտոնի հետ կապված բոլոր պարտականությունները:

Գիտական հիմնարկության գործունեությունը, համենայնդեպս, հումանիտար գիտությունների բնագավառում, անիմաստ է առանց գիտական արտադրանքի՝ գիտահետազոտական բջջի կենդանի շնչի, ժամանակին լույս ընծայմանը:

Այսպիսով, Հ. Ա. Օրբելին այն մարդկանցից մեկն էր, որոնք հեղափոխության տարիներին նպաստում էին (թեև կողմնակալությամբ չափերով) գիտության այնպիսի կարևոր օջախների կենսագործունեությանը, ինչպես գիտությունների ակադեմիան էր և նյութական կուլտուրայի պատմության ակադեմիան: Այն մասին, թե ինչպես էր զնահատվում Հովսեփ Օրբելու ծառայությունները տպագրական ասպարեզում, վկայում է գիտությունների ակադեմիայի մշտական քարտուղար

Ս. Յ. Օլղենբուրգի 1922 թ. մարտի 6-ին Հ. Ա. Օրբելուն ուղարկած նամակը.

«Մեծարգո Իոսիֆ Աբգարովիչ!

Ռուսական գիտությունների ակադեմիայի կոնֆերանսը փետրվարի 4-ի իր նիստում լսեց ակադեմիական տպարանի գիրեկտորի պաշտոնից Ջեր հրաժարականը: Կոնֆերանսը միաձայն որոշեց իր խորին շնորհակալությունը հայտնել Ջեղայն ամենի համար, ինչ արված է ակադեմիական տպարանի համար: Կոնֆերանսը քաջ գիտե, որ եթե Ռուսաստանում իր բացառիկ սարքավորումներով այդ միակ տպարանը չկործանվեց հեղափոխության ժամանակ, ապա դրանով ռուսական գիտականները, և առաջին հերթին ակադեմիան, պարտական են Ջեղ: Ջեր բացառիկ եռանդն ու անձնագործությունը փրկեցին գիտական աշխատանքի այդ կարևորագույն գործիքը: Որպես գիտական և տպագրական գործի գիտակ, Դուք բոլորից լավ կարողացաք ակադեմիական տպարանում աշխատանքը այնպես տանել, որ նա շարունակում էր գիտական գրքեր այն ժամանակ, երբ մյուս տպարանները չէին կարող այդ անել:

Թույլ տվեք նաև ինձ, որպես մշտական քարտուղարի և տպարանում Ջեր աշխատակցի, ավելացնել նաև իմ անձնական շնորհակալությունը այն անխոնջ ու բարեկամական պատրաստակամության համար, որով օգնության էիք զալիս մըշտական քարտուղարին՝ ակադեմիական հրատարակության գործում, հաճախակի խորհուրդների և ցուցումների համար, որոնք տալիս էիք ակադեմիայի աշխատությունները տպագրելու վերաբերյալ:

Ջեղ խոր և անկեղծ հարգող

Սերգեյ Օլղենբուրգ¹²:

Ակադեմիական տպարանի ճակատագիրը Հ. Ա. Օրբելուն շարունակում էր հուզել նաև հետագա տարիներին. նա հա-

103—117, 217—222), Б. Г. Крыжановский (9—16, 95—102, 238—240) и Ф. Ф. Гесс (73—76, 379), научный сотрудник Академии Г. И. Боровка (169—172, 380), управляющий делами Академии В. А. Миханкова (164—168) и член Академии И. А. Орбели (118—120)...» («Известия РАИМК», т. 1, 1921, стр. 404).

¹² Ս. Յ. Օլղենբուրգի ստորագրած նամակը պահպանվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

մառորեն ձգտում էր նրան, որպեսզի տպարանը պահպանի իր մասնագիտական դեմքը և արժեքավոր տառատեսակները:

Հովսեփի Օրբելին, շնայած իր շատ զբաղվածությունը, շրջադարեցրեց նաև դասախոսական գործունեությունը: Նա շարունակում էր պարապմունքները արևելյան լեզուների ֆակուլտետում: 1917 թ. սեպտեմբերին նա ընտրվեց հայ-վրացական բանասիրության ամբիոնի դոցենտ, 1918 թ. հունիսին՝ հնագիտության ինստիտուտի¹³ ասիստենտ արևելյան միջնադարի հնագիտության ամբիոնում (ամբիոնի վարիչն էր Յա. Ի. Սմիռնովը): 1919 թ. մայիսին Հ. Ա. Օրբելին մտավ ինստիտուտի դասատուական կազմի մեջ և այդ պաշտոնում մնաց մինչև համալսարանի հետ ինստիտուտի ձուլվելը (1922 թ.): 1919 թ. հուլիսին նա ընտրվեց արվեստների պատմության ինստիտուտի պրոֆեսոր¹⁴ և այդ պաշտոնում մնաց մեկ տարի: 1919 թ. օգոստոսին Հովսեփի Օրբելուն ընտրում են Պետերբուրգի համալսարանի արևելյան արվեստի ամբիոնի պրոֆեսոր:

Այդ նույն ժամանակ Հ. Ա. Օրբելին գործուն մասնակցություն է ունենում Մոսկվայի կազարյան ճեմարանի վերակառուցման աշխատանքներին: Իրանից Ռուսաստան զաղթած հայ վաճառական կազար կազարևի (ինչպես նրան անվանում էին Ռուսաստանում) որդիները 1815 թ. Մոսկվայում իրենց հայրենակիցների համար հիմնադրեցին ուսումնական մի ոչ մեծ հաստատություն: 1828 թ. լիցեյական տիպի այդ ուսումնարանը վերակազմվում է «կազարևների Արևելյան լեզուների հայկական ինստիտուտի», ուր մի քանի տարի շարունակ հայրենից բացի ուսումնասիրում են պարսկերեն,

թուրքերեն և արաբերեն լեզուները: Ինստիտուտը պատրաստում էր արևելյան լեզուների թարգմաններ և դասատուներ ու մեծ չափով նպաստում էր ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ Անդրկովկասի հայերի լուսավորությանը: Կազարյան ճեմարանը հսկայական դեր խաղաց նոր հայկական լեզվի և գրականության ձևավորման գործում, նպաստեց ուսական կուլտուրայի հետ հայերի շփմանը: Նրա դասախոսների մեջ կային այնպիսի նշանավոր անձինք, ինչպես լիբերալ-բուրժուական ուղղության հասարակական գործիչ, խոշոր հայագետ Ստ. Նազարյանցը: Ճեմարանում դասախոսել է նաև հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Ճեմարանի գիտական կյանքում հսկայական դեր խաղաց Մկրտիչ էմինը, որը թողել է հին հայկական գրականության հուշարձաններից արված մի շարք հիանալի թարգմանություններ. նրա հաջորդն ու աշակերտը՝ Գ. Ա. Խալաթյանցը հին և միջնադարյան Հայաստանի պատմությանն ու գրականությանը վերաբերող կարևոր աշխատությունների հեղինակ էր:

Ճեմարանի, որպես Մոսկվայի արևելագիտության խոշորագույն կենտրոնի, գիտական նշանակությունը անշեղջուր են աճում է և 1871 թ. նախապատրաստական ու դիմնագրական յոթ հասարանների հետ միասին հիմնադրվում են մասնագիտական երեք դասարաններ, որոնց ավարտողներն ստանում էին գերազանց արևելագիտական կրթություն: Կազարյան ճեմարանը իր գործունեության ծաղկումն է ապրում 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, երբ դիրեկտորի պաշտոնն զբաղեցնում է Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, հայտնի արևելագետ Վ. Յ. Միլլերը: «Էմինյան ժողովածուններում» և կազարյան ճեմարանի կողմից 1899 թվականից հրատարակվող «Արևելագիտական աշխատություններում» հրապարակվում են Մոսկվայի արևելագետների արժեքավոր գործերը: Ճեմարանի շրջանավարտներ Բ. Վ. Միլլերը, Ա. Ա. Սեմյոնովը, Վ. Յ. Միլլերիսին, Ա. Ն. Կրիմսկին, Վ. Ա. Գորդլևսկին և ուրիշներ դառնում են խոշորագույն գիտնականներ: Որպես ուսումնական հաստատության, գիտական և լուսավորչական կենտրոնի, կազարյան ճեմարանի ժողովրդակա-

¹³ Պետերբուրգյան հնագիտական ինստիտուտը կազմակերպվել է 1878 թ., այնտեղ ընդունվում էին նրանք, ովքեր բարձրագույն կրթություն ունեին: Ինստիտուտը պատրաստում էր հնագետներ և հնագրագետներ:

¹⁴ Ինստիտուտը հիմնադրվել էր 1912 թ., զբաղվում էր գիտահետազոտական գործունեությամբ և պատրաստում էր մասնագետներ կերպարվեստի, թատրոնի, գրականության, երաժշտության պատմության գծով: Փակվեց 1930 թ.: Տե՛ս «Научные учреждения Ленинграда», Л., 1926, стр. 90—94.

նությունը դուրս էր գալիս հայկական հասարակութիւնի սահմաններից: Հարկավոր է ընդգծել մեկ բնորոշ հանգամանք-ստեղծվելով հայկական ազնվականութիւնի և բուրժուազիայի այն մասի ներկայացուցիչների կողմից, որն իր բախտը կապել էր ուսական ցարիզմի հետ, կազարյան ճեմարանը, այնուամենայնիվ, հեղափոխական շարժումներից հետո չէր կանգնած: Ճեմարանում, ինչպես ասվեց, դասավանդում էր Միքայել Նայբանդյանը, ճեմարանցիները մասնակցեցին 1905—1907 թթ. հեղափոխական պայքարին, կազարյան ճեմարանից դուրս եկան մի շարք բոլշևիկյան գործիչներ: Այսպիսով, հեղափոխութիւնից հետո առաջին տարիներին ճեմարանի վերակառուցման համար բուն ճեմարանում առկա էին ոչ միայն գիտական, այլ որոշ իմաստով նաև հասարակական նախադրյալներ¹⁵:

Զգտելով այն բանին, որ Պետրոգրադի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը դուրս գա «աննորմալ, փալլուն մենակութիւնի երբեմն ծայրահեղ ծանր պայմաններից», իսկ Մոսկվան դառնա արևելագիտութիւնի արժանի կենտրոն, ն. Յա. Մառը մշակեց վերակառուցման մի ծրագիր, ըստ որի կազարյան ճեմարանի արևելյան լեզուների մասնագիտական դասարանները դառնում էին իսկական բարձրագույն դպրոց՝ հայկական, սիրիական, արաբական, վրացական, իրանական, թուրքական լեզուների, հավասարապես նաև համապատասխան երկրների ու ժողովուրդների կուլտուրայի և պատմութիւնի ուսումնասիրման քառամյա դասընթացով: Միաժամանակ մտահղացում կար Մոսկվայում հիմնադրել Հին Արևելքի տեսական արևելագիտութիւնի բարձրագույն դպրոց, Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում սեմագիտութիւնի, եգիպտագիտութիւնի և հնդկական բանասիրութիւնի ամբիոններ ստեղծելու ձանապարհով¹⁶: Մառի կարծիքով կազարյան ճեմա-

րանում դասավանդման գործում հարկ կար ներգրավելու այնպիսի գիտնականների, ինչպես ն. Գ. Աղոնցը (որը դեռ 1917 թ. մայիսին ընտրվել էր ճեմարանի պատվավոր խնամատար), Ա. Պ. Ալլավդինը, Վ. Ա. Գորդլևսկին, Կ. Ի. Կոստանյանցը, Ի. Յու. Կրաչկովսկին, Ա. Ն. Կրիմսկին, Լ. Զ. Մսերյանցը, Ա. Ն. Սամոյլովիչը, Ն. Պ. Սիլևը, Ա. է. Շմիդտը: Այդ նույն ցուցակում հիշատակվում է նաև Հ. Ա. Օրբելին («հայագետ, մասնագետ հայկական էպիգրաֆիկայի, Անի քաղաքի հնութիւնների և Կովկասի բրիտանական ու մահաճեղական հուշարձանների գծով. առաջավորասիական Արեւելքի պատմութիւնի և արևելյան արվեստների ու Կովկասի հնութիւնների պատմութիւնի ամբիոնի գծով»¹⁷):

1919 թ. մարտի 4-ին Լենինի ստորագրած դեկրետով կազարյան ճեմարանի փոխարեն ստեղծվում է Հայկական ինստիտուտ, այն շուտով վերակառուցվում է Առաջավոր Ասիայի ինստիտուտի, և 1920 թ. կոչվում Արևելյան կենդանի լեզուների կենտրոնական ինստիտուտ, իսկ 1921 թ. սկսեց կոչվել Մոսկվայի արևելագիտութիւնի ինստիտուտ:

Մնալով Պետրոգրադի համալսարանի դոցենտ, Հ. Ա. Օրբելին, լուսավորութիւնի ժողովում Ա. Վ. Լունաչարսկու կարգադրութեամբ, ընդգրկվեց կազարյան ճեմարանի դասախոսական աշխատանքներում և ընտրվեց նրա ղեկավարութիւնի կազմում: Նա գործուն մասնակցութիւն ունեցավ ինստիտուտի վերակառուցմանը. ինստիտուտը թողեց միայն 1921 թ., ծայրահեղ ծանրաբեռնված լինելու հետևանքով:

Հեղափոխութիւնի առաջին տարիներին նախկին կազարյան ճեմարանը գիտական արևելագիտութիւնի իսկական կենտրոն դարձնելու համար ձեռնարկված փորձը մեծ հաջողութիւն չունեցավ: Այնուամենայնիվ, դրա նշանակութիւնը մեծ է: Համոզված կերպով կարելի է ասել, որ կազարյան ճեմարանի վերակառուցման ուղղութեամբ ձեռնարկված միջո-

¹⁵ կազարյան ճեմարանի մասին նոր աշխատութիւններից տես՝ Ա. Պ. Բազիլյու, Лазаревский институт восточных языков (Исторический очерк), М., 1959.

¹⁶ Н. Я. Марр, К вопросу о реорганизации Лазаревского Института Восточных языков,—ИРАН, 1918, стр. 1489.

¹⁷ Н. Я. Марр, Записка о преобразовании Специальных классов Лазаревского Института Восточных языков в Этнологогическо-историко-филологический факультет Лазаревского Переднеазиатского Института, Пр., 1918, стр. 15—16.

ցառումները որոշակի շափով հող նախապատրաստեցին Մոսկվայում արևելագիտության հետազա զարգացման համար, որին մասնակից էր նաև Հ. Ա. Օրբելին:

Իրագարծություններով հագեցված այդ տարիներին Հ. Ա. Օրբելին շարունակում է հրատարակել իր աշխատությունները: Ինչպես ասվեց, 1918 թ. նա ինքը շարեց Անանիա Շիրակացու խնդիրների իր թարգմանությունը¹⁸: Անանիա Շիրակացին 7-րդ դ. հայ խոշոր մաթեմատիկոս էր և տիեզերագետ: Նրա «Խնդիրները և լուծումները» ոչ միայն միջնադարյան Հայաստանի մաթեմատիկական գրականության արտակարգ հետաքրքիր հուշարձան են, այլև կարևոր տեղեկություններ են բովանդակում այդ ժամանակաշրջանի աղբյուրներում սակավ լուսաբանված սոցիալ-տնտեսական ու կուլտուրական կյանքի վերաբերյալ: Վարպետորեն կատարելով թարգմանություն գրաբառից, Հ. Ա. Օրբելին նպաստեց այդ հուշարձանը գիտական լայն շրջանառության մեջ մտցնելուն:

Այլ աշխատությունների¹⁹ հետ միասին Հ. Ա. Օրբելին հրատարակում է մի կարևոր հոդված՝ նվիրված նշանավոր Ախթամար տաճարին²⁰: Այդ տաճարը գտնվում է Վանա լճի նույն անունը կրող կղզյակի վրա: Դեռևս 1912 թ. Հովսեփ Օրբելին հնարավորություն ունեցավ հանգամանորեն ծանոթանալու և նկարագրելու այն: Տաճարի պատերը համատարած զարդարված էին բարձրաքանդակներով, որոնք վաղուց գրավում էին արվեստի պատմաբանների ուշադրությունը: Տաճարի ճարտարապետության մասին ավելի քիչ էին հետաքրքրվում:

Նյնելով այն մոզելի ձևից, որն իր ձեռքում պահում է շենքի արևմտյան թևի արևմտյան պատի վրա քանդակված Գաղիկ Արծրունի թագավորը, և արձանագրությունների տրվ-

յալներին, Հ. Ա. Օրբելին ապացուցում է, որ տաճարը սկզբում ունեցել է ոչ թե բուրգային կամ կոնաձև ծածկոց, այլ՝ կիսաուղրտային: Զևափոխումը կատարվել է 14-րդ դ. առաջին կեսին, հավանական է՝ 1325 թ.: Այդ ձևափոխման մեջ Հովսեփ Օրբելին տեսնում է եկեղեցական-բաղարական երկու հոսանքների՝ քաղբեղոնական (կողմնորոշում դեպի բյուզանդական եկեղեցին) և հակաքաղբեղոնական (կողմնորոշում դեպի ազգային եկեղեցին) պայքարի արտացոլումը: Հոդվածը հայկական ճարտարապետության այդ հույակապ հուշարձանին նվիրված խոշոր հետազոտության մի մասն էր միայն²¹:

1920 թ. մարտին Հ. Ա. Օրբելին ավարտեց հիշրայի տարեթվերը եվրոպական տարեթվերի վերածելու աղյուսակների կազմումը: Այդ աշխատանքը տպագրվեց քսան տարի հետո, արևելագետների համար դառնալով սեղանի տեղեկատու²²:

Նույն 1920 թ. տեղի ունեցավ մի դեպք, որը երեք տասնամյակ առաջ որոշեց Հ. Ա. Օրբելու ճակատագիրը. նա ընտրվեց աշխարհի ամենախոշոր թանգարաններից մեկի՝ Էրմիտաժի թանգարանապահի պաշտոնում: Այդ ժամանակ Հովսեփ Օրբելին հիմնավորապես ուսումնասիրել էր թանգարանային գործը: Մենք հիշում ենք, որ նա մի քանի տարի շարունակ հաշտությունը գլխավորում էր Անիի հնությունների թանգարանը: Հ. Ա. Օրբելին Վ. Վ. Բարտոլդի հետ միա-

¹⁸ Այժմ հրատարակված է՝ *И. А. Орбели, Избранные труды*, т. 1, М.—Л., 1968 г.

¹⁹ *И. А. Орбели, Синхронистические таблицы для перевода исторических дат по хиджре на европейское летоисчисление*, Л., 1940:— Հ. Ա. Օրբելին հետազոտում լրացրեց այդ աղյուսակները, գրանք հասցնելով մինչև 1981 թ.: Լինելով ծանր հիվանդ և հնարավորություն չունենալով մերտին ստուգել հաշվարկները, նա, երկյուղելով սխալներից, չէր համարձակվում աշխատանքը հանձնելու տպագրության և դա արեց միայն գիշերով ընկերների և աշխատակիցների պնդմանը: Նրա երկյուղները, դժբախտաբար, արդարացան. նոր հրատարակության (1961 թ.) տպաքանակի մի մասում տեղ էին գտել առանձին սխալներ, որոնք ուղղել է Վ. Վ. Տիրուլակին (տե՛ս «Народы Азии и Африки», 1962, № 3, стр. 245—247):

¹⁸ «Вопросы и решения варданета Ананиа Ширакца, армянского математика VII века», издал и перевел И. А. Орбели, Пг., 1918.

¹⁹ *И. А. Орбели, О двух терминах в надписях Ани.*—«Известия РАИМК», т. 1, 1921, стр. 111—117; Описание Версаля в армянской записи 1683 г.— там же, стр. 391—399.

²⁰ *И. А. Орбели, К вопросу о первоначальной форме купола Ахтамарского храма.*—ЗВО, т. XXV, вып. 1—4, 1921, стр. 293—300.

սին 1918 թ. ղեկավարում էր արևելյան լեզուների ֆակուլտետի թանգարանը²³։ Նույն տարվա փետրվարին նա հրավիրվեց վարելու Պետրոգրադի թանգարանների գործերի կոլեգիայի գիտական քարտուղարի պաշտոնը. ծանրաբեռնվելով նոր պարտականություններով, նա 1920 թ. ամռանը թողեց այդ աշխատանքը։ Հ. Ա. Օրբելին միշտ և ամեն տեղ աշխատում էր ոգևորությամբ, բայց միայն էրմիտաժին նվիրվեց իր ամբողջ էությունը։ Դժվար չէ մի քանի խոսքով բնութագրել նրա «պաշտոնեական կարյերան» էրմիտաժում։ 1920 թ. հոկտեմբերին նա ընտրվում է էրմիտաժի թանգարանապահ և շատ շանցած դիտարկում մասնագիտական արեվելքի բաժինը։ 1924 թ. ամռանից մինչև 1925 թ. աշունը Հ. Ա. Օրբելին կատարում է էրմիտաժի դիրեկտորի օգնականի պարտականությունները։ 1926 թ. մայիսին նա դառնում է, հենց իր նախաձեռնությամբ ստեղծված, Արևելքի բաժնի վարիչ։ 1933 թ. Հովսեփ Օրբելուն նշանակում են գիտական մասնագետ-կոնսուլտանտի պաշտոնում։ 1934 թ. հունիսին նա դառնում է էրմիտաժի դիրեկտորի տեղակալ, իսկ մեկ ամիս անց՝ դիրեկտոր։

Երբ որպես աշխատակից Հ. Ա. Օրբելին առաջին անգամ անցավ էրմիտաժի շեմքից, թանգարանը գրեթե դատարկ էր։ Գեոևս 1914 թ. Արքունի մինիստրությունը, որի տնօրինության տակ էր գտնվում էրմիտաժը, Մոսկվա էվակուացրեց հարավ-ուսական և սիբիրյան հնությունների հավաքածուները, գրեթե բոլոր թանկարժեք իրերը, արևելյան արձաթեղենը և դրամական հավաքածուի մի մասը։ Նախապատրաստվում էր նաև մյուս հավաքածուների էվակուացիան։ 1917 թ. սեպտեմբերին երկու գնացքով Մոսկվա ուղարկվեցին նկարները, քանդակները, ձեռնապակին և այլն։ Երրորդ գնացքի ուղարկումը կասեցվեց հեղափոխական իրադարձություններով։ Ութհարյուր տասնմեկ արկղ և ուղեսնդով տեղավորեցին Մոսկվայի Կրեմլում։

Չնայած հիմնական հավաքածուների բացակայությանը, էրմիտաժում մշակվում էր թանգարանի նոր կառուցվածքը,

աշխատակիցները ղեկավարում էին հեղափոխությունից հետո ազգայնացված արվեստի բազմաթիվ հուշարձանների հաշվառմամբ ու նկարագրմամբ։ Բայց, հասկանալի է, էրմիտաժը ամբողջական կյանքով կարող էր ապրել միայն իր արժեքների վերադարձից հետո։ 1918 թ. հունիսից սկսած էրմիտաժի Խորհուրդը համառոտն սկսեց պահանջել իր հավաքածուների վերադարձը, որոնց, այլ վտանգներից բացի, սպառնում էր ցրումը տարբեր թանգարաններով մեկ։ Եվ ահա, վերջապես, 1920 թ. հունիսի 23-ին ժողովրդական կոմիսարների սովետը Ֆինլանդիայի հետ հաշտության պայմանագիր կնքելուց հետո հատուկ որոշում ընդունեց էրմիտաժի հավաքածուները ետ վերադարձնելու մասին։ Նույն բերին անմիջականորեն ձեռնամուխ եղան տեղափոխումը կազմակերպելու գործին։ Մոսկվա գործուղվեցին մի շարք աշխատակիցներ, այդ թվում նաև Հ. Ա. Օրբելին։ 1920 թ. նոյեմբերի 18—19-ին անընդհատ թանգարանին են մոտենում անգին բեռներով բարձված ավտոմեքենաներ։ Տեղափոխումը իրականացվեց բացառիկ հմտությամբ, առանց կորստի և վնասվածքի։ Արգեն նոյեմբերի 28-ին, ժամը 12-ին, տեղի ունեցավ Ռեմբրանտի դահլիճի բացումը²⁴։ Ակտիվ մասնակցություն ցույց տալով վերակազմակերպման գործին, կարող էր արդյոք Հովսեփ Օրբելին մտածել, որ քսան տարի անց, ումբակոմիսյան ղրղղյունի տակ, ստիպված կլինի ղեկի Արևելք՝ Սվերդլովսկ ուղարկել այդ նույն հուշարձանները, իսկ 1945 թ. նորից խորը ապրել դրանք վերադարձնելու ուրախությունը։

Տասնյակ տարիների ընթացքում էրմիտաժի համաշխարհային փառքը գլխավորապես կապված էր արևմտակարողական ղեղանկարչության հավաքածուների հետ։ Արևելյան արվեստի բազմաթիվ հուշարձանները (ընդհանուր թվով մինչև տասը հազար առարկա) ցրված էին տարբեր բաժանմունքներում և միշտ չէ, որ դրանք բնկնում էին հետազոտողի

²³ «Государственный Эрмитаж. 16 сентября 1917. 28 ноября 1920. [1920 թ. նոյեմբերի 20-ին տպագրված վերակազմակերպման մասին հուշագիրը]», Эрмитаж за десять лет. 1917—1927. Краткий отчет», Л., 1928, стр. 7—13, 19—24.

²³ «Наука в России», Пг., 1920, стр. 21.

տեսադաշտի մեջ: Գրանք ուսումնասիրող Յա. Ի. Սմիռնովը, որը 1909 թ. հրատարակեց հայտնի «Արևելյան արծաթ» առլասը, բառ էության մնացել էր միայնակ: Յուցադրվում էր հուշարձանների փոքր մասը: Այսպես, միայն մեկ դահլիճ էր հատկացված հին եգիպտոսին և Միջագետքին, փոքր սենյակներ էին առանձնացվել հինարևելյան, կոպտական, վաղբրիստոնեական առարկաներին: Արևելյան իրերի մի մասը մտցված էր «Ռուսական մինչմոնղոլական հնությունները» և «Ռուսական սլավոնների հարեանների հնությունները» ցուցադրումների մեջ: Արևելյան զենքը, արևմտակարգականի հետ միասին, առանձնահատուկ ձևով էր ցուցադրվում²⁵:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դրությունը կտրականապես փոխվեց: Սովետական իշխանության ազգային քաղաքականությանը համապատասխան Արևելքի ժողովուրդների արվեստի և կուլտուրայի հուշարձանների ուսումնասիրությունն ու ցուցադրումը ձեռք բերեցին արդիական նշանակություն: Միայն այդ պայմաններում կարող էր հարց ծագել էրմիտաժում առանձին Արևելյան բաժանմունք ստեղծելու մասին, որն իրականացվեց ակադեմիկոսներ Ն. Յա. Մառի, Վ. Վ. Բարտուլդի և Ս. Յ. Օլդենբուրգի գործուն մասնակցությամբ: Արևելյան արվեստի բաժանմունքի ստեղծումը (կիրառական արվեստի բաժնի կազմում) մտածված էր զենեւ նախքան Մոսկվայից հավաքածուների վերադարձնելը²⁶: Հետագայում այն կոչվում էր մահմեդական Արևելքի բաժանմունք: 1920 թ. նոյեմբերի 1-ից այստեղ, որպես թանգարանապահ, աշխատանքի անցավ Հ. Ա. Օրբելին:

Իր գործունեությունը էրմիտաժում Հովսեփ Օրբելին սկսեց թանգարանի բոլոր բաժիններով մեկ ցրված հուշարձանների հավաքումից և ցուցահանդեսի նախապատրաստումից: Սկզբում նա հանդիպեց այն աշխատակիցների թշնամական վե-

քաբերմունքին, որոնք շին ցանկանում իրենց կապերը խզել նախկին արքունական թանգարանի հնացած ավանդույթունների հետ: Արևելյան հուշարձանների, որոնք հաճախ ունեին ոչ այնքան զեղարվեստական, որքան պատմա-կուլտուրական նշանակություն, ցուցահանդեսների համար էրմիտաժի դահլիճների տրամադրումը նրանց համարյա սրբապղծություն էր թվում: Նոր զաղափարները հավանություն գտան միայն անտիկ արվեստի հայտնի հետազոտող Օ. Յ. Վալդհաուերի և խոշորագույն դրամագետ Ա. Ա. Իլլինի մոտ²⁷: Այդուհանդերձ, հենվելով բաժանմունքի աշխատակիցների մի փոքրաթիվ խմբի վրա, որոնք համամիտ էին իրենց ղեկավարի զաղափարներին²⁸, Հ. Ա. Օրբելին կենսազործում էր իր ծրագրերը:

Արդեն առաջին ցուցահանդեսը (1922 թ.), որ նվիրված էր սասանյան արվեստին, արժանի փառք բերեց բաժանմունքին: Էրմիտաժում սասանյան արվեստը ներկայացված էր փայլուն կերպով, որովհետև բազմաթիվ առարկաներ գտել էին Ռուսաստանում, մասնավորապես նախկին Պերմի և Վլատկայի նահանգներում: «Այստեղ՝ կուլտուրական աշխարհի այս խուլ ծայրամասերն էին բերվում արծաթե սկուտեղներ և այլ ամաններ՝ փոխանակելու համար մորթիների

27 А. Ю. Якубовский, К двадцатилетию Отдела Востока Государственного Эрмитажа, — «Труды Отдела Востока», т. III, Л., 1940, стр. 9.

28 Նրանց մեջ էր նաև Փամիլիա Վասիլևնա Տրևերը, որը, ոչ առանց Հ. Ա. Օրբելու ազդեցության, դիմեց Մերձավոր և Միջին Արևելքի կուլտուրայի ուսումնասիրությանը, 1920 թվականից սկսվեց այս երկու գիտնականների ամենօրյա ստեղծագործական համագործակցությունը, որը շարունակվեց քառասուն տարի: Մինչև Հ. Ա. Օրբելու կյանքի վերջին օրերը Ք. Վ. Տրևերը մնաց որպես հավատարիմ ընկեր և օգնական նրա բոլոր գիտական ձեռնարկումներում: Փասնական թվականներից սկսած Ք. Վ. Տրևերը առաջին էր, որ ծանոթանում էր Հովսեփ Օրբելու տակավին չհրատարակված ձեռագրերին, և հեղինակը շափաղանց թանկ էր զնահատում նրա կարծիքը: Ք. Վ. Տրևերը իր շատ ուսումնասիրություններում զարգացնում է Հ. Ա. Օրբելու հուշած մտքերն ու զաղափարները: Երկու խոշոր աշխատություններ պատրաստվել են երկուսի հեղինակությամբ (այդ մասին տես ներքևում):

25 А. В. Банк, Восточные собрания Эрмитажа (Общая характеристика, основные линии исследования), Л., 1960, стр. 9.— Գրքույն բովանդակում է էրմիտաժի ոչ միայն արևելյան կոլեկցիաների պատմությունը, այլև բնութագրում է Արևելքի բաժնի գործունեությունը անցյալում և զլխավորապես ներկայումս:

26 «Эрмитаж за десять лет...», стр. 10.

հետ, որը գլխավոր հարստութունն էր կիսավայրենի գազանորսների, որոնք հարյուրամյակների ընթացքում իրենց սրբավայրերում պահպանել էին հեռավոր Իրանի ապրանքները», — հետագայում գրում էր Հ. Ա. Օրբելին: Յուցահանդեսին նախորդեց թանգարանի տարբեր բաժիններում ապակենտրոնացված առարկաների հավաքման մեծ աշխատանքը: Յուցադրված էին նաև հեղափոխությունից հետո էրմիտաժում ստացված ցուցանմուշները: Էրմիտաժի ցուցանմուշների հետ միասին ցուցահանդեսում ներկայացված էին նաև առարկաներ ուրիշ հավաքածուներից՝ սկուտեղենների, ափսեների, գավաթների, սափորների, թասեր, կանթեղներ, ջրլիցներ, կաթսաներ, փորագրված քարեր, ոսկե, արծաթե և բրոնզե դրամներ²⁹: Արևելքի բաժնի պատմության մեջ, հետագայում գրում է Ա. Յու. Յակուբովսկին, այդ ցուցահանդեսը միշտ կմնա որպես «ցուցադրման գիտական մշակման առաջին հաջողված փորձը, որպես ցուցադրվելիք հուշարձանների հետ կապված որոշակի գիտական պրոբլեմի կոմպլեքսային լուծում»³⁰:

Յուցահանդեսը Իրանի և սահմանակից երկրների արվեստի ուսումնասիրման ճանապարհին կարևոր փուլ հանդիսացավ ամենից առաջ այն պատճառով, որ դրված էր «սասանյան» արվեստի բովանդակության և ժամանակագրական սահմանների կարևորագույն պրոբլեմը: Բազմաթիվ հուշարձանների ուսումնասիրությունը Հ. Ա. Օրբելուն համոզեց այն բանում, որ «սասանյան» սկուտեղենների, գավաթների, ջրլիցների և այլն ստեղծման գործում մասնակցել են ո՛չ միայն Իրանի, այլև հարևան երկրների ժողովուրդները: Այնուհետև, «սասանյան» զծերը նկատվում են 16—17-րդ և նույնիսկ 19-րդ դդ. հուշարձաններում: «Եվ ոչ միայն կերպարվեստի ու արհեստների մեջ, այլև հողեր կյանքի ամենաբազմազան կողմերի մեջ՝ գրականության, հատկապես ժողովրդական, հա-

վատալիքների ու սովորությունների և կենցաղի տարբեր գծերի մեջ երկար ժամանակ, ինչպես Իրանում և Միջին Ասիայում, այնպես էլ Կովկասում և մահմեդականացված Փոքր Ասիայում, արտահայտվել է Պարսկաստանի սասանյան կուլտուրան և նրա կյանքի ողջ կացութաձևը»³¹: Այսպիսով, «սասանյան արվեստը» — պայմանական տերմին է, որի բովանդակությունը զգալիորեն լայն է «Սասանյանների արքունական արվեստը» հասկացողությունից. Սասանյանները, ինչպես հայտնի է, իշխել են 226 թ. մինչև 651 թ.:

Այդ ցուցահանդեսը, անշուշտ օգնեց Հ. Ա. Օրբելուն գրելու «Սասանյան արվեստը»³² հոյակապ ակնարկը, որը հիմա էլ մնում է ուսանելի լեզվով գրված ամենալավ ներածությունը՝ վաղմիջնադարյան Իրանի հուշարձանների ուսումնասիրման համար: Վերլուծելով ճարտարապետությունը, մոնումենտալ բարձրաբանդակները, մետաղյա զեղարվեստական առարկաները, զործվածքները, փորագրված քարերը, դրամները, Հ. Ա. Օրբելին բացահայտում է և՛ նրանց կապը սասանյան արքունիքի կենցաղաձևերի հետ, և՛ տեխնիկական ու զեղարվեստական ձևերի ընդհանրությունը, և՛ արևմտյան արվեստի վրա ունեցած ազդեցությունը, և՛ խորամուխ հետազոտողի աչքին ընկնող շատ այլ գծեր: Այս աշխատության մեջ Հովսեփ Օրբելու արտահայտած շատ գաղափարներ հետագայում զարգացվեցին մի ամբողջ շարք մասնագիտական աշխատություններում:

1923 թ. էրմիտաժին միացված Շտիզլիցի թանգարանի մեծ դահլիճում Հ. Ա. Օրբելին կազմակերպեց մահմեդական հախճաասլերի ցուցահանդես: Ներկայացված էին էրմիտաժի, Շտիզլիցի թանգարանի հուշարձանները, առարկաներ՝ արվեստի խրախուսման ընկերության թանգարանից և նյութական կուլտուրայի պատմության ակադեմիայից (որոնք հե-

²⁹ Տե՛ս Носиф Орбели, Временная выставка сасанидских древностей, Пг., 1922.

³⁰ А. Ю. Якубовский, К двадцатилетию Отдела Востока, стр. 9.

³¹ Н. Орбели, Временная выставка сасанидских древностей, стр. 6.

³² Н. Орбели, Сасанидское искусство, — «Восток», кн. 4, 1924, стр. 139—156.

տագայում տրվեցին էրմիտաժին)³³։ Յուցահանդեսի կապակցությամբ Հովսեփ Օրբելին հրատարակեց «Մահմեդական հախճասալերը» ակնարկը³⁴։ Նրա մեջ առաջին անգամ հարց դրվեց «մահմեդական արվեստ» տերմինի մասին։ «Մահմեդական» տերմինը՝ ոչ միայն կուլտուրական, այլև՝ դավանական՝ չի ծածկի ստեղծագործական բոլոր այն տարրերը, որոնք իրենցն են ներդրել այդ «մահմեդական կուլտուրայի» մեջ, — գրում էր Հ. Ա. Օրբելին։

Իսկապես, հետազոտման առարկա հանդիսացած հախճասալերը ստեղծվել են կուլտուր-պատմական բարդ միջավայրում։ Մահմեդական հախճասալերի հայրենիքը ճանաչվում է միջազեռ-պարսկաստանյան շրջանը, բայց յուրաքանչյուր երկիր, որտեղ զարգանում էր հախճասալերի արտադրությունը, զրա մեջ մտցնում էր իր գծերը, դրանցով լրացնելով, հարստացնելով և զուևազարգելով երբեմն հօգուտ, և երբեմն էլ ի վնաս սկզբնաղբյուրներից ժառանգած հիմնական ձևերի»³⁵։ Հ. Ա. Օրբելին կիրառական արվեստի տարբեր տեսակներին՝ մետաղյա իրերի, կավե ամանեղենի, գործվածքների և այլն, տեխնիկայի հիանալի գիտակ էր, սակայն հախճասալերի պատրաստման եղանակին նա նվիրեց առավել հետաքրքիր էջեր, ցույց տալով, թե ինչպես հախճասալերի վրա արտացոլվում են այն ձևերը, որոնք հատուկ են գործվածքի արտադրությանը, փայտի փորագրությանը և այլն։ Նրա դաստիարակությունները հիմնված են զուգահեռ նյութի գերազանց իմացության վրա և կարևոր են արևելյան գեղարվեստական արհեստի ամենաբազմազան հուշարձանների ուսումնասիրման ժամանակ։

Բազմաթիվ ազգակցական գծեր, որոնք հատուկ էին

«քրիստոնեական» և «մահմեդական» արվեստներին, ցուցադրեց 1925 թ. բացված երրորդ մեծ ցուցահանդեսը։ Յուցահանդեսը տեղավորված էր էրմիտաժի Կախովի այգու երկու կողմերում գտնվող Պետրովսկի ու Ռոմանովսկի սրահներում և Ապոլոնյան դահլիճում։ Այնտեղ ներկայացված էին միջնադարյան Իրանի, Կովկասի, Միջին Ասիայի և այլ երկրների հուշարձանները։ Էքսպոզիցիան սարքվել էր Առաջավոր և Միջին Ասիայի գեղարվեստական արհեստի իրերի արտադրության լոկ տեխնիկական մոմենտները բացահայտելու համար։ Իր մասնագիտական գիտելիքների շնորհիվ Հ. Ա. Օրբելին կարողացավ մեծ համոզականություն տալ ցուցահանդեսին։ Յուցահանդեսի աշխատանքներին գործուն մասնակցություն ունեցավ պրոֆ. է. Կ. Կվերֆելդտը, որը կերամիկայի և գործվածքների փայլուն գիտակ էր³⁶։

Յուցահանդեսի համառոտ գրացուցակի նախաբանում Հովսեփ Օրբելին գրում է. «Հասկանալի է, որ ցուցահանդեսի՝ Մուսուլմանական Արևելքի սրահ անվանումը միանգամայն պայմանական է։ Թեև, իրօք, սրահներում գտնվող իրերի գերակշռող մեծամասնությունն ստեղծվել է այն միջավայրում, ուր դավանում էին իսլամը, այնուամենայնիվ չի կարելի մոռանալ, որ ոչ միայն առանձին իրեր ստեղծվել և նախատեսվել են ոչ մուսուլմանական միջավայրի համար, այլ որ ընդհանրապես դավանական հատկանիշի համաձայն ոչ պաշտամունքային նշանակություն ունեցող հուշարձանների շրջանակում նյութի նման բնորոշումը պայմանական չլինել չի կարող»³⁷։ Այնուհետև. «Որքան ավելի է խորանում մահմեդական հուշարձանների ուսումնասիրությունը, այնքան ավելի պարզ է դառնում, թե որքան դժվար է մուսուլմանական արվեստի համար արհեստի իրերի արտադրության լոկ տեխնիկական մոմենտները բացահայտելու համար։ Իր մասնագիտական գիտելիքների շնորհիվ Հ. Ա. Օրբելին կարողացավ մեծ համոզականություն տալ ցուցահանդեսին։ Յուցահանդեսի աշխատանքներին գործուն մասնակցություն ունեցավ պրոֆ. է. Կ. Կվերֆելդտը, որը կերամիկայի և գործվածքների փայլուն գիտակ էր³⁶։

³³ А. Ю. Якубовский, К двадцатилетию Отдела Востока, стр. 11—12; [Б. Б. Пиотровский] Академик Иосиф Абгарович Орбели (Биографический очерк). — в кн.: «Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели», М.—Л., 1960, стр. 8. Վերը մեջ բերված «էրմիտաժը տաս տարում...» գրքում այդ ցուցահանդեսի մասին չի խոսվում։

³⁴ И. А. Орбели, Мусульманские изразцы, Пг., 1923.

³⁵ Նույն տեղը, էջ 6։

³⁶ А. Ю. Якубовский, К двадцатилетию Отдела Востока, стр. 13.

«1924 թ. նոյեմբերի 9-ին Շտիդլիցի թանգարանի դահլիճներում բացվեց Հեռավոր Արևելքի և Մուսուլմանական աշխարհի ցուցահանդեսը, որտեղ առաջին անգամ ի մի հավաքվեցին մինև այդ տարբեր պահեստարաններում ցրված նյութերը»։ Այդ ցուցահանդեսը որոշակի իմաստով նախապատրաստական քալը հանդիսացավ 1925 թ. ցուցահանդեսի համար («Эрмитаж за десять лет...», стр. 28—29)։

³⁷ И. А. Орбели, Мусульманский Восток, Л., 1925, стр. 3.

սուլմանական և ոչ մուսուլմանական միջավայրի ու կենցաղի միջև սահման անցկացնել այն երկրներում, ուր կողք-կողքի գոյակցել են երկու մարտնչող զավանանքներ իսլամը և քրիստոնեությունը, և որտեղ ըստ էության միևնույն ձևերով են զարգացել պոեզիան ու կերպարվեստը (առավել ևս կիրառականը), որոնք աճել են ամուր հիմքերի վրա և ամրապնդվել այդ զավանանքների ծագումից շատ առաջ»³⁸:

Յուցահանդեսը կարևոր փուլ էր արևելյան արվեստի ուսումնասիրման ճանապարհին: Նա ցուցադրեց բաժանմունքի (որին արդեն 1921 թ. տրվել էր «Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի բաժանմունք» անունը) գործունեության մեջ տեղի ունեցած հսկայական տեղաշարժերը: Առկա էին նախադրյալներ ինքնուրույն Արևելքի բաժնի ստեղծման համար, որը կոչված էր ի մի բերելու էրմիտաժում եղած արևելյան մշակույթի բոլոր հուշարձանները: Հանդես գալով նման նախագծով, Հ. Ա. Օրբելին հասավ դրա իրագործմանը և 1926 թ. մայիսին գլխավորեց նոր ստեղծված Արևելքի բաժնի աշխատանքները:

Բաժնի կազմում կար երեք բաժանմունք՝ Կովկասի, Իրանի և Միջին Ասիայի մինչ մահմեդական հուշարձանների, մահմեդական Արևելքի երկրների, Հեռավոր Արևելքի, որի հավաքածուները պահվում էին Շտիգլիցի թանգարանում և ցուցադրվել էին 1924 թ.: «Արևելքի սեկտորը, — 1934 թ. գրում էր, էրմիտաժի դիրեկտոր Բ. Վ. Լեզրանը, — գիտական իմաստով ամենաառաջավոր բաժինն էր հին էրմիտաժի... նրանք, ովքեր իրենց վրա էին վերցրել Արևելքի սեկտորի ստեղծման խնդիրը, անհամեմատ մեծ շափով էին էրմիտաժում դարձել գիտական մտքի ուղեցույցներ, այդ տարիներին նրանք ավելի որոշակի էին պատկերացնում նոր հասարակական կարգի պահանջների համաձայն թանգարանի վերակառուցման համար գիտական աշխատանքի նշանակությունը, քան մյուս բաժինները և նույնիսկ էրմիտաժի ղեկավարու-

Մյունը ամբողջությամբ վերցրած»³⁹: Առաջավոր գիտական հայացքները հանդես էին դալիս կուլտուրայի հուշարձանները նրանց ծնող միջավայրում ուսումնասիրելու, դրանց կուլտուրական շրջապատը ճիշտ հասկանալու համար բոլոր հնաբավոր աղբյուրները օգտագործելու և լեզվական տվյալներն ու գրականության վկայությունները շարժամարհելու մշտական ձգտումով:

Այդ տարիներին Հ. Ա. Օրբելին շարունակում է նաև մանկավարժական գործունեությունը: Այսպես, 1925 թ. աշնանից մինչև 1929 թ. գարունը նա ղեկավարում է համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնը, իսկ 1929 թ. աշնանից՝ նոր կազմակերպված Արևելքի նյութական կուլտուրայի պատմության ամբիոնը: Քսանական թվականների կեսերին նրան լսողների թվում էին Ա. Հաջյանը, Ա. Վ. Բանկը, Վ. Ա. Բոգոսլովսկին, Լ. Տ. Գյուլպլյանը, Ն. Վ. Դյակոնովան, Ն. Է. Լիպշիցը, Ա. Լ. Յակոբսոնը: Ավելի ուշ նա դասավանդում է նաև քրդերեն, նրա մոտ սովորում են Ղ. Ք. Քուրդուրը, Ի. Ի. Յուկերմանը և ուրիշներ: Բայց նրա հիմնական գործունեությունն ընթանում է էրմիտաժում:

Արևելքի բաժինն արդեն ուներ թանգարանային իրերի շատ հարուստ հավաքածուներ, բայց Հ. Ա. Օրբելին շարունակում էր համառորեն հավաքել հուշարձաններ, դրանք կենտրոնացնելով Արևելքի բաժնում: Հարկավոր էր հասնել այն բանին, որ այդ բաժնին հանձնվեին եգիպտական կուլտուրայի զինանշանները, զլանները և Միջագետքի, Սիրիայի ու Փոքր Ասիայի կնիքները (խեթական կուլտուրայի շրջանում), արևելյան դենքերը, պարսկական մանրանկարները և այլն: Դրա համար պահանջվում էր ավելի լայն հարցադրում, և 1929 թ. հունվարի 29-ին Հովսեփ Օրբելին էրմիտաժի խորհրդին մի ընդարձակ ղեկուցազիր ներկայացրեց թանգարանի ոչ գի-

³⁹ Б. В. Легран, Социалистическая реконструкция Эрмитажа, Л., 1934, стр. 39.

տական կառուցվածքի վերաբերյալ⁴⁰։ Հ. Ա. Օրբելին պընդում էր, որ էրմիտաժի բաժանմունքները կառուցվեն ըստ պահպանվող հուշարձանների կուլտուրական այս կամ այն շրջանին պատկանելիության հատկանիշի։ «Ինչպես որ չի կարելի ամբոխը միաժամանակ բաժանել մորուքավորների, հաստերի և խարտյաշների, մի բան, որ, թերևս, բոլորի համար էլ պետք է պարզ լինի, ճիշտ այդպես էլ անհնար է թանգարանային հավաքածուների միաժամանակյա բաժանումը Եգիպտոսի, Միջագետքի, Հունաստանի, Հռոմի հուշարձանների, փորագրված քարերի, Միջին դարերի հուշարձանների, զենքերի, Կովկասի և Իրանի, Բյուզանդիայի հուշարձանների և այլն։ Այսպիսի դասակարգումը գիտական չէ, դա նաև անիրագործելի է, պարզապես անհնար։ Դրա համար էլ, քանի դեռ թանգարանում գոյություն ունեն այս կամ այն կուլտուրական շրջանի հուշարձանների միավորման ըսկզբունքով կառուցված բաժանմունքներ, այդ թանգարանում հենց այդ կուլտուրական աշխարհների հուշարձանների խմբեր պարունակող, բայց ըստ իրենց նշանակության կամ նյութի (փորագրված քարեր) առարկաների այս կամ այն կատեգորիայի միավորման հատկանշով կառուցված բաժանմունքներ գոյություն ունենալ չեն կարող»⁴¹։

Հովսեփ Օրբելու ամենամեծ առարկման պատճառը քափորադրության բաժնի և զենքերի բաժնի գոյությունն էր, որոնց մեջ, նրա կարծիքով, պահվում էին «բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների» հուշարձանները։ Միևնույն ժամանակ նա թույլատրելի էր համարում դրամագիտության ընդհանուր բաժնի գոյությունը, քանի որ «վերջինս խստորեն ենթաբաժանվում է բաժանմունքների, որոնք կազմված էին

այդ նույն կուլտուրական շրջանների հատկանիշով, և դրամագիտության բաժանմունքներից յուրաքանչյուրը, աշխատանք տանելով՝ բաժնի շենքում, բոլոր բաժանմունքների համար միավորվելով ընդհանուր դրամագիտական շահերով, կարող է մյուս կողմից դիտվել որպես կուլտուրական աշխարհի հատկանիշներով կառուցված համապատասխան բաժանմունքի դրամային ենթաբաժնին»⁴²։ Այդ դեպքում այս կամ այն կուլտուրական աշխարհին պատկանող դրամաները գտնվում են ոչ թե դրամագետների՝ բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների դրամաների գիտականների, այլ «համապատասխան աշխարհի պատմության և կուլտուրայի խոր մշակման հիման վրա իրենց խնդիրներին լայնորեն մոտեցող մասնագետների», տնօրինության ներքո։ Դրա հետ միասին Հ. Ա. Օրբելին ընդունում էր, որ օտարերկրյա ծագում ունեցող առարկաները, որոնք հայտնաբերվել են հնագիտական միացյալ կոմպլեքսում, պետք է դրա մեջ էլ մնան, դրա մեջ էլ համապատասխանաբար պետք է պահվեն։

Նման հարցադրումը մի շարք դեպքերում նեղ մասնագիտական բնույթի առարկումներ էր առաջացնում։ Այսպես, քարափորագրության բաժնի այն ժամանակվա վարիչ Մ. Ի. Մաքսիմովան, իր բնագավառում ճանաչված հեղինակություն, և զենքերի բաժանմունքի վարիչ է. Ի. Լինդրոդը հանդես եկան նման մասնատման դեմ, վկայակոչելով այն, որ փորագրված քարերն ու զենքերը պահանջում են մասնագիտական ուսումնասիրություն, որը պայմանավորված է հուշարձանի առանձնահատկությամբ և հետո արդեն նրա պատկանելիությամբ այս կամ այն ժողովրդին, կուլտուրական աշխարհին։ Մ. Ի. Մաքսիմովայի զեկույցը յուրահատուկ հետաքրքրություն ունի և բովանդակալից է։ Հեղինակը ուշադրություն է դարձնում այն կողմերի վրա, որոնք իրար հետ հարադատեցնում են փորագրված քարերը, անկախ դրանց պատկանելիությանը այս կամ այն ժողովրդին։ «Քարափորագրությունը պահպանողական արվեստ է. ոչ միայն նյութը, այլև դրա տեխ-

⁴⁰ Հեղինակի կողմից ստորագրված զեկույցի մեքենագիր օրինակներից մեկը պահպանվել է էրմիտաժի խորհրդի նախկին անդամ, թանգարանի գործերին ակտիվ մասնակցություն ունեցած ակադեմիկոս Մ. Ֆ. Օլդենրուդի արխիվում (AAH, ֆ. 208, օր. 2, № 97, յ. 9—22)։ Այստեղ են նաև այն բաժանմունքների վարիչների ու պահուցիների կարծիքները, որոնք արձագանքել էին Հ. Ա. Օրբելու զեկույցին։

⁴¹ Նույն տեղը, թ. 9

⁴² Նույն տեղը, թ. 12։

Տիրիկան հազարամյակների ընթացքում մնացել են անփոփոխ, իսկ ձեռքը դանդաղ էվոլյուցիայի ենթարկվելով, հաճախ առանց ձևափոխման, մեկ ժողովրդից անցել են մյուսին: Դրա համար էլ բազմաթիվ փորագրված քարեր, որոնք վերաբերվում են տարբեր դարաշրջանների և կուլտուրաների, ունեն միեւնույն արտաքին տեսքը»⁴³: Բայց Հովսեփ Օրբելին, հավանական է, սպասում էր նման առարկույթների և իր դեկուլցում գրում է. «Ըստ նյութի հատկանիշի կամ առարկայի նշանակութիւն» բոլոր ժամանակների և բոլոր ժողովուրդների «հուշարձանների խմբերի կազմավորումը կարող է և պետք է ցուցադրական բնույթ կրի հատուկ, էվոլյուցիոն բաժնում, որը կարտացոլի կուլտուրայի ընդհանուր էվոլյուցիան, նման նպատակի համար այդքան մեծ թվով հուշարձանների օգտագործումը ոչ միայն անօգուտ է, այլև վնասակար, ինչպես օրինակ 20000 փորագրված քարերը, որոնք ընդունակ են ավելի շատ բան տալու մշակույթի պատմարանին, արվեստի պատմաբանին, ընդհանրապես մասնագետ գիտնականին և սովորողներին կամ նույնիսկ պատահական տեսաբանին, այն կուլտուրական միջավայրի պայմաններում, որոնցում առաջ են եկել այդ հուշարձանները»⁴⁴:

Հ. Ա. Օրբելուն պաշտպանեցին ամենահեղինակավոր գիտնականները, այնպիսիք, ինչպես անտիկ աշխարհի բաժանմունքի վարիչ Ս. Ֆ. Վալդհուսերը և Վ. Վ. Ստրուվեն, որը այդ տարիներին դասական Արևելքի բաժանմունքի թանգարանապահն էր: Վ. Վ. Ստրուվեն, մասնավորապես, գրում է. «Այժմ, Արևելքի հետ ոչինչ ընդհանուր չունեցող, այլ բաժանմունքներում տեղադրված առարկաները արևելյան բաժանմունքներին հանձնելու վերաբերյալ Հ. Ա. Օրբելու հուշագրի կապակցությամբ հայտարարում եմ, որ ամբողջությամբ միանում եմ Հ. Ա. Օրբելու պատճառաբանություններին, բանի որ ես նույնպես հանդիսանում եմ թանգարանային կառուցվածքի մեջ հուշարձանները պատմա-կուլտուրական

43 նույն տեղը, թ. 28:

44 նույն տեղը, թթ. 10—11:


ակզբունքով բաժանելու գործը ամենախստապահանջորեն կենսագործելու համոզված կողմնակից»⁴⁵:

Հ. Ա. Օրբելու և նրան պաշտպանող աշխատակիցների ջանքերն ու համառությունը հաջողություն բերեցին: Սկսեցին տարբեր առարկաներ ստացվել ո՛չ միայն էրմիտաժի բաժանմունքներից, այլև ուրիշ թանգարաններից: Բ. Վ. Լեդրանի մեջբերած գրքում ասվում է, որ մինչև 1921 թվականը էրմիտաժի արևելյան հավաքածուի մեջ կար տասը հազար առարկա: Մոտ յոթ հազար, երբեմն առաջնակարգ գիտական նշանակություն ունեցող, արևելյան իրեր դեռ ցրված էին էրմիտաժի մյուս բաժիններում, որոնք կամ չէին ճանաչված կամ «մեծ կուլտուրաների»՝ եվրոպական և անտիկ, ցուցադրման ժամանակ օգտագործվել էին որպես օժանդակ նյութ: Արդեն 1933 թ. նոյեմբերին Արևելքի բաժնում հաշվվում էր ութսունչորս հազար առարկա: Այդ ժամանակ դրա հավաքածուի մեջ մտնում էին այնպիսի առաջնակարգ նյութեր, ինչպես էլամի գունազեղ ամանները և Սուդի սեպագիր արձանագրություններով աղյուսները (նախկին հնագիտական ինստիտուտի հավաքածու). Թոփրակ-Կալայի պեղումներից Վանի թագավորության հուշարձանները. սասանյան և բյուզանդական արծաթը (առարկաներ Սվերդլովսկի և Կոնզուրսկի թանգարաններից ու նախկին Ստրոգանովի հավաքածուն). ՆԿՊՊԱ-ի կողմից հանձնված սասանյան բրոնզը (Բորինսկու նախկին հավաքածուն). իրանական, այդ թվում սասանյան, փորագրված քարերը (ինչպես Կաստալսկու կողմից հավաքած, այնպես էլ Հայաստանի լուսժողկոմատից ստացված). գործիքների և Ղարա-Մազարի (Տաշիկստան) 8-րդ դ. հանքերի արտագրության մնացորդների հավաքածուն, որ ստացվել էր Երկրաբանական կոմիտեից. աղվանական բրոնզյա կաթսաները՝ բարձրաբանդակ զարդերով և 12—13-րդ դդ. մյուս բրոնզը ՆԿՊՊԱ-ից (Բորբինսկու նախկին հավաքածուն), աղվանական 12—13-րդ դդ. բարձրաբանդակներ և այլ ճարտարապետական բեկորներ Դաղստանից (Կուրաչի առվ):

45 նույն տեղը, թ. 44:

Ոսկե Հորդայի հուշարձանների հարուստ հավաքածուն (Ա. Վ. Տերեշչենկոյի հայտնաբերածները, իր ժամանակին դրանց մի մասը միայն ստացվեց էրմիտաժում, մնացած մասը պահվում էր գիտությունների ակադեմիայում), սամարղանդյան հախճաասալերը (գիտությունների ակադեմիայից և Ռուսական թանգարանից), Խոտանի հավաքածուն, գլխավորապես տերակոտներ, Արևելյան Թուրքեստանից (ՆԿՊԱ-ից, որպես էրմիտաժի հավաքածուի լրացում), որմնակարների ու քանդակների հավաքածու Տուրֆանից և Արևելյան Թուրքեստանի այլ օազիսներից (ակադ. Ս. Ֆ. Օլդենբուրգի և այլոց արշավախմբերի հավաքածը), հանձնվել են գիտությունների ակադեմիայի կողմից։ Մոնղոլիայի Խարա-խոտո քարանձավների հնությունները (Պ. Կ. Կոլլովի հավաքածուն) և բուդդայական ժողովածուն (Ռուսական թանգարանից), նախկինում գիտությունների ակադեմիայի Ասիական թանգարանում և Լենինգրադի համալսարանում պահված բոլոր արևելյան դրամները։ Մասնավոր անձերից ձեռք բերվեցին սասանյան արծաթի ու բրոնզի և 12—13-րդ դդ. ազվանական բրոնզե առարկաներ, Դաղստանի աույներում հավաքվեց պարսկական, թուրքական և կովկասյան կերամիկայի հարուստ ժողովածու⁴⁶։ Դեռևս 1925 թ. այստեղ ստացվեցին Շտիգլիցի թանգարանի արևելյան հավաքածուները, իսկ 1931 թ. Արևելքի բաժնին միացվեց հին Արևելքի բաժանմունքը, որը, ինչպես ասվեց, շատ տարիներ ղեկավարում էր Վ. Վ. Սարուվեն։

Վերը հիշատակված Աղվանքի մի քանի հուշարձաններ հավաքվել են Հ. Ա. Օրբելու անմիջական մասնակցությամբ։ Զբաղված լինելով էրմիտաժի գործերով, նա ստիպված էր մի քանի տարի հրաժարվել հնագիտական հետախուզումներից։ Բայց 1928 թ. Հովսեփ Օրբելին մեկնեց Դաղստան՝ պատմական Աղվանքի հյուսիսային ծայրամասը։ Տեղական գիտնականների ու մեծ խմբի գլուխ անցած Հովսեփ Օրբելին,



Դերբենաի բերդապարսպի մուտ։ 1928 թ.:

⁴⁶ Б. В. Лезран. Социалистическая реконструкция Эрмитажа, стр. 37—38. Ավելի մանրամասն տես՝ А. В. Банк, Восточные собрания Эрмитажа.

դիմելով 12—13-րդ դդ. աղվանական բարե բարձրաբանդակ-
ների ուսումնասիրությանը, հայտնաբերեց, որ դրանց պատ-
րաստման ժամանակ օգտագործված տեխնիկական ձևերը
զարմանալիորեն նման են այն ձևերին, որոնց օգնությամբ
բանդակվել են փայտյա կամ թերթաբարյա մոզելները, որ-
պիսիք կիրառվել են հենց աղվանական բրոնզե կաթսաների
կաղապարման ժամանակ: Դիտելով Կուրաչ գյուղի ձուլող-
ների աշխատանքը, Հ. Ա. Օրբելին հաստատեց, որ հին աղ-
վանների սերունդները իրենց պատրաստած իրերի մեջ պահ-
պանել են Ռուսթավելու ժամանակների հուշարձանների շատ
զծեր: Հաշվառման վերջվեց ավելի քան հարյուր բարձրա-
բանդակ. դրանցից մի քանիսը տեղափոխվեց էրմիտաժ:

Հենց այդ ժամանակ էլ, 1928 թվականին, Հ. Ա. Օրբելին
ուսումնասիրեց Դերբենգի ամրոցը: Նրա պատերին հայտ-
նաբերվեց մինչ այդ ժամանակներն անհայտ մի քանի պար-
թևական շինարարական արձանագրություններ, որոնք հե-
տագայում հրատարակվեցին Գ. Ս. Նիբերգի և Ե. Ա. Պալսո-
մովի կողմից⁴⁷:

Դադստանի տերիտորիայում գտնվող հուշարձանների հետ
ժանոթությունը և բնակչության հետ նույնիսկ հասարակ
շփումը, Հովսեփ Օրբելու մոտ բեղմնավոր գաղափարներ
առաջացրին աղվանական երբեմնի բարձր կուլտուրայի ճա-
կատագրի մասին: Այդ գաղափարները իրենց արտացոլումը
գտան Հ. Ա. Օրբելու «Աղվանական բարձրաբանդակները և
12—13-րդ դդ. բրոնզյա կաթսաները» հիմնալի ակնարկում⁴⁸:

1929 թ. Հովսեփ Օրբելին նոր արշավախումբ կազմակեր-
պեց, այս անգամ դեպի Դադստան և Հայաստան: Նրա
գլխավորած խմբի մեջ մտնում էին Կ. Վ. Տրևերը, Ա. Ա. Հաջ-
յանը, Լենինգրադի համալսարանի պրակտիկանտներ Ս. Զոլ-
յանը և Ա. Լ. Յակոբսոնը: Արշավախումբը պետք է ծանո-
թանար պատմական հուշարձանների վիճակին, ուսումնասի-

րեր թանգարանային հավաքածուները, որոնք հավաքվել էին
հետհեղափոխական տարիներին, ինչպես նաև վերականգնե-
կապերը ՆԿՊՍ-ի կովկասագետների և Կովկասի հետազո-
տական հիմնարկների միջև:

Ուղևորությունը բացառիկ բեղուն էր: Հ. Ա. Օրբելու խում-
բը հուլիսի 22-ից մինչև սեպտեմբերի 3-ը ծանոթացավ էջ-
միածնում, ինչպես նաև Երևանում՝ Հայաստանի պետական
թանգարանում, պահվող մեծ քանակությամբ առարկաների
հետ, մասնակցեց ցուցահանդեսի նախապատրաստմանը,
բրոնզի դարի վերջին պատկանող քանդակազարդ փայտյա
սալի վերականգնմանը: Հովսեփ Օրբելին և նրա աշխատա-
կիցները հատուկ ուշադրությամբ գիտեցին Անիի հնություն-
ների ժողովածուն, այդ հնությունները մասամբ պահպանվել
էին միայն այն պատճառով, որ ժամանակին բերվել էին
Երևան: Ուղևորություններ կազմակերպվեցին Սևանա լիճ,
Արթիկ, զննվեցին Արամուսի, Քասախի, Փարպիի, Բյուրա-
կանի, Աշտարակի, Պտղնիի, Զվարթնոցի, Դառնիի, Էլարի,
Ավանի, Բաշքենդի և այլ վայրերի ճարտարապետական հու-
շարձանները: Բացի այդ, Հովսեփ Օրբելին եղավ նաև Համ-
բերգում՝ Պահլավունի իշխանների հոյակապ ամրոցում, և
այդ ժամանակ էլ ծրագրեց ապագա արշավախմբի պլանը⁴⁹:

Ուղևորվելով Հայաստան, Հ. Ա. Օրբելին և Կ. Վ. Տրևերը
մեկ շաբաթ անցկացրին Դադստանում, ուր ծանոթացան
Մախաչկալայի և Դերբենդի թանգարանների հավաքածուե-
րին, գիտեցին շիրմաթմբերը: Վերադառնալով Երևանից,
Հ. Ա. Օրբելին նորից եղավ Դադստանում և Դադստանի լու-
սավորության ժողովում Թախո-Գոդիի հանձնարարությամբ
սեպտեմբերի 14-ին Դերբենդի քաղաքային սովետում հանդես
եկավ զեկուցումով՝ Դերբենդի պատերի և միջնաբերդի պատ-
մական ու հնագիտական նշանակության ու դրանց անվնա-
սությունն ապահովելու անհրաժեշտության մասին: Այդ զե-
կուցման հետևանքով քաղաքային սովետը որոշում ընդունեց՝
պատերի ու միջնաբերդի երկարությամբ, արտաքին պատե-

⁴⁷ St' u K. B. Trever, Очерки по истории и культуре Кавказской
Албании, М.—Л., 1959, стр. 346—353.

⁴⁸ Հրատարակված է «Памятники эпохи Руставели» ժողովածուում,
Լ., 1938.

⁴⁹ Արշավախումբը հաջողից կազմակերպել միայն 1936 թ.:

քից ու դուրս ցցված աշտարակներից հաշված 20 մետր լայնությամբ, անձեռնմխելի հնագիտական գոտի սահմանելու մասին⁵⁰:

Վերադառնալով կենինգրադ, Հ. Ա. Օրբելին իր ուշադրությունը կենտրոնացրեց էրմիտաժի սասանյան հուշարձանների վրա, որոնք պետք է ցուցադրվեին 1931 թ. միջազգային ցուցահանդեսում:

1926 թ. հոկտեմբերին և նոյեմբերին Պենսիլվանիայում (ԱՄՆ) մի շարք երկրների մասնակցությամբ կազմակերպվեց իրանական արվեստի հուշարձանների ցուցահանդես և միևնույն ժամանակ հրավիրվեց իրանական արվեստին ու հնագիտությանը նվիրված 1-ին միջազգային կոնգրեսը: Այդ ժամանակ էլ որոշում ընդունվեց երկրորդ ցուցահանդեսի կազմակերպման և կոլեկտիվ ձևով «Պարսկական արվեստի տեսություն» («A Survey of Persian Art»-ի ստեղծման մասին: Երկրորդ ցուցահանդեսը ծրագրեցին բաց անել Լոնդոնում. այնտեղ էլ «A Survey of Persian Art»-ի կապակցությամբ հրավիրեց իրանական արվեստին և հնագիտությանը նվիրված 2-րդ միջազգային կոնգրեսը: Լոնդոնի ցուցահանդեսին պետք է մասնակցեի նաև Սովետական Միությունը: Հ. Ա. Օրբելին մտավ կոնգրեսի կազմակերպական կոմիտեի կազմի մեջ, միաժամանակ, նրա ղեկավարությամբ էրմիտաժն սկսեց հուշարձանների ընարության մեծ աշխատանքը: 1930 թ. վերջերին Հովսեփ Օրբելին մեկնեց Լոնդոն, իր հետ վերցնելով սասանյան տորևտիկայի մի շարք լավագույն նմուշներ: Հովսեփ Օրբելու հետ միասին, կոնգրեսում Սովետական Միությունը ներկայացնում էր Ֆ. Վ. Կիպարիսովը:

Կոնգրեսը բացվեց 1931 թ. հունվարի 5-ին, գեղարվեստի սկադեմիայի՝ Բերլինգտոնյան պալատի դահլիճներում և շաբուռնակվեց մինչև հունվարի 10-ը: Կոնգրեսի աշխատանքներն

ընդ մասնակցում էին խոշորագույն գիտնականներ, այնպիսիներ, ինչպես Մ. Ի. Ռոստովցևը, Ֆ. Ջառեն, Գ. Տալբոտ Ռայսը, Ա. Պոուպը, Ի. Սարժիզովսկին, Վ. Ֆ. Մինորսկին և ուրիշներ⁵¹: Չնայած դրան, հետագայում ասում էր Հ. Ա. Օրբելին, զեկուցումները մեծ մասամբ կրում էին առանձին, շատ հետաքրքիր հուշարձանների զուտ ձևական համադրման բնույթ՝ դրանց ստեղծման միայն ժամանակն ու տեղը որոշող համառոտ բացատրությամբ: Սակայն, նշում էր նա, բոլոր զեկուցումներում կարմիր թելի նման անցնում էր ուրիշ երկրների ու ժողովուրդների արվեստի վրա պարսկական արվեստի ազդեցության մոտիվը:

Հունվարի 7-ին տեղի ունեցավ ցուցահանդեսի բացումը: Հետագայում Հ. Օրբելին ասում էր, որ երբ այդ հանդիսավոր պահից վեց օր առաջ նա ծանոթացավ նախապատրաստական աշխատանքների վիճակին, նրա մոտ այն տպավորությունը ստեղծվեց, որ աշխատանքները երբեք չեն ավարտվի նշանակված ժամկետին: Բայց աշխատանքն ընթանում էր համերաշխ և ցուցահանդեսը բացվեց սահմանված ժամկետին: Գործը թեթևացրեց էտիկետաժի բացակայությունը—բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հաղորդվում էին տպագիր կատալոգում: Ցուցահանդես էին ներկայացվել քսանյոթ երկրներից երեք հազար առարկա:

Սովետական Միությունը ցուցահանդես էր ներկայացրել հուշարձաններ Պետական էրմիտաժից, Արևելյան կուլտուրաների թանգարանից, Պատմության թանգարանից, Ասիական թանգարանից: Սկզբում, ճիշտ է, Լոնդոն ուղարկվեց ցուցամուշնների միայն մի մասը (30 առարկա). էրմիտաժը, օրինակ, չէր համարձակվում արժաթ ուղարկել, վախենալով, որ տեղափոխման ժամանակ կվնասվեն: Բայց արդեն հունվարի 25-ին, ի պատասխան Հ. Ա. Օրբելու վճռական հեռագրի, էրմիտաժը լրացուցիչ նոր առարկաներ ուղարկեց, որոնց արժեքը, ինչպես հաղորդում էր «Թայմս» թերթը, հաս-

⁵⁰ Այդ արշավամբի վերաբերյալ տեղեկությունները բաղված են Կ. Վ. Տրևերի կազմած «Отчет о работах экспедиции под руководством И. А. Орбели в Армении и Дагестане летом 1929 г.»-ից, որի օրինակներից մեկը պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

⁵¹ Տե՛ս «Proceedings and List of Members of the Second International Congress on Burlington House», London, 1931.

նում էր մինչև 50 հազար ֆունտ ստերլինգի: Սովետական Միության ցուցանմուշների բանակը կրկնապատկվեց: Դրանք «սասանյան շրջանի» գերազանցապես ոսկե, արծաթե և բրոնզե իրեր էին: Սովետական թանգարաններից և հատկապես էրմիտաժից բերված ցուցանմուշները համընդհանուր ուշադրություն գրավեցին և զգալիորեն հարստացրին ցուցահանդեսը: Տպավորությունն այնքան ուժեղ էր, որ պատգամավորների մեծամասնությունը խնդրում էր 3-րդ Միջազգային կոնգրեսը, և համապատասխանաբար նաև ցուցահանդեսը, կազմակերպվեն Սովետական Միությունում, որին և սովետական կառավարությունը պատասխանեց համաձայնությամբ⁵²:

1931 թ. բացվեց Հ. Ա. Օրբելու և նրա աշխատակիցների կողմից պատրաստած Արևելքի բաժնի մշտական ցուցահանդեսը: Ցուցադրման խնդիրները շարադրված էին Հ. Ա. Օրբելու և Ա. Յու. Յակուբովսկու կազմած հատուկ զեկուլյցի մեջ⁵³: Արևելքի բաժնի ցուցահանդեսը, ասված է այդ զեկուլյցում, պետք է ցույց տա Արևելքի ժողովուրդների նյութական կուլտուրայի հուշարձանները, իսկ լրացուցիչ ցուցադրումները (սխեմաների, քարտեզների, պլանների, գրական շարադրանքներից հանված քաղվածքների օգնությամբ) լուսարանեն «պատմական մատերիալիզմի տեսանկյունով բացահայտված պատմական պրոցեսի օրինաչափությունը»: Ինչպես մշտական ցուցահանդեսում, այնպես էլ լրացուցիչ ցուցադրումներում այցելուն կարող էր հստակ պատկերացում ստանալ այն մասին, թե «ինչպիսին են տվյալ հասարակության արտադրության միջոցներն ու աշխատուժը, ինչպիսին է նրա դասակարգային կառուցվածքը, ինչպիսին է հարաբերությունը գյուղատնտեսության և քաղաքային կյանքի միջև, ինչպիսին է քաղաքական կարգը, ինչպիսին են տարբեր դասակարգերի զաղափարախոսությունները, ինչպիսին են դասակարգային հակասությունները, ինչպիսին են առանձին

շրջանների և երկրների առևտրական ու կուլտուրական կապերը: Այն իրերը, որ քննարկվում են ոչ առանձին, այլ արտադրական հարաբերությունների սիստեմում, լրացուցիչ ցուցադրումների հետ միասին կտան հասարակության լրիվ պատկերը նրա զարգացման այս կամ այն աստիճանում»: Ցուցադրումը շատ ծավալուն էր ստացվել. ներկայացվել էին Հյուսիսային Աֆրիկայի և Միջերկրական ծովի, Առաջավոր Ասիայի, Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Իրանի, Միջին Ասիայի, Հնդկաստանի և Հեռավոր Արևելքի երկրները:

Ցուցահանդեսը բացվեց հասարակության և նրա կուլտուրայի զարգացման նկատմամբ վուլգար-սոցիոլոգիական հայացքների լայն տարածման շրջանում: Այն ժամանակ էրմիտաժում առաջարկում էին նույնիսկ հրաժարվել արվեստի հուշարձանները արևելյանի ու արևմտյանի բաժանելուց և ցուցադրել անկախ նրանց առաջացման վայրից, միայն թե դրանք համապատասխանեն հասարակության զարգացման այս կամ այն որոշակի աստիճանին: Քննադատելով «աբստրակտ-սոցիոլոգիական» նման գրվածքը, զեկուլյցի հեղինակները դրան հակադրեցին «կոնկրետ-սոցիոլոգիականը», որի ղեպքում նյութական կուլտուրայի բոլոր հուշարձանները մնում են այն դրուկային մեջ, որի մեջ և նրանք կատարել են իրենց սոցիալական դերը: Հակառակ ղեպքում, ասված է զեկուլյցում, հարկ կլինի արհամարհել ֆեոդալական ֆորմացիայի ամբողջ յուրահատկությունը Արևելքում⁵⁴:

52 Փ. В. Кипарисов, СССР на Международной выставке персидского искусства в Лондоне.—«Советский музей», 1931, № 3, стр. 31.
53 Ձեկուլյցի օրինակը պահվում է Հ. Ա. Օրբելու արխիվում:

Ոչ բոլոր հուշարձանները տեղաբաշխվեցին ըստ երկրների. դրանցից շատերի ծագումը որոշել չհաջողվեց, դրա համար էլ վճռվեց դրանք ցուցադրել, խմբավորելով ըստ տիպային հատկանիշների և դրանով հայտնաբերել հարևան ժողովուրդների կուլտուրային հատուկ ընդհանուր գծերը: Սակայն ցուցադրության նախապատրաստման շրջանում դրանց համատեղ ուսումնասիրության ժամանակ հաջողվեց շատ առարկաներ թվագրել և միաժամանակ որոշել դրանց ծագումը:

Այդ ցուցահանդեսի կապակցությամբ էլ հանդես եկավ Հ. Ա. Օրբելու «Պատմական գիտության մի քանի տրադիցիաների դասակարգային արմատների մասին»⁵⁵ հայտնի հոդվածը: Զարգացնելով մասնագիտական և քրիստոնեական ժողովուրդների կուլտուրայում բազմաթիվ ընդհանուր գծերի առկայության գաղափարը, Հովսեփ Օրբելին գրում է. «Մահմեդական Արևելք» և «Քրիստոնեական Արևելք» տերմինների գոյակցությունը, որը մինչև այսօր էլ մեր ակադեմիական կենցաղից վերացված չէ, որոշել է նաև գիտական կառուցվածքների համապատասխան դարգացումը ու հանդեցրել այն բանին, որ վրացիները, հայերը, սիրիացիները, կուպտերը և հաբեշները որպես մեկ ամբողջություն հակադրվում են մեկ ուրիշ ամբողջության՝ պարսիկներին, թուրքերին, քրդերին և արաբներին, ընդամենն ոչ թե դավանական առումով, այլ պատմա-կուլտուրական՝ լրիվ մոռացության տալով այն, որ հայերի շփումը հաբեշների հետ անկասկած, տեղի է ունեցել, բայց միայն եկեղեցական ժողովներում և, զուցե, առանձին դեպքերում մեկ-երկու վանքերի կենցաղում, իսկ ամբողջ մնացած հայության կյանքն ու պատմական ճակատագիրը իր հիմնական տերիտորիայում անբաժան է ընթացել պարսիկների, թուրքերի և քրդերի կյանքից, միավորվելով նրա հետ այն բոլոր հարցերում, որոնք չեն վերաբերել կրոնական հավատալիքներին ու ծեսերին, բայց եթե դուրս

գանք տաճարների պատերից և նայենք ժողովրդական հավատքների իսկական դեմքին, ապա կապված է նրա կյանքի հետ նույնիսկ կրոնական առումով»⁵⁶: Եվ երբ կբանդվեն պատմական ավանդույթներով բարձրացած պետական, ազգային, եկեղեցական միջնորմները, որոնք կուլտուրաները դիտում են որպես մի առանձնակի ամբողջություն, հանդես կգան «միջհարկային ծածկույթները, որոնք ավելի ամուր են, քան Կոնստանդնույան պալատի կամարածե ծածկերը, հայկական տաճարների կամարածե ծածկերն ու կամարները, և որոնք ըստ դասային և դասակարգային հատկանիշների են բաժանում և՛ Կովկասը, և՛ Իրանը, և՛ Միջին Ասիայի այն մասը, որի այդ շրջանի կյանքի մասին մենք ինչ-որ բան գիտենք»⁵⁷: Այս միտքը իր հետագա զարգացումը գտավ Հ. Ա. Օրբելու «Սելջուկյան արվեստի պրոբլեմը» գեկուցման մեջ:

Խոսելով այդ և նման աշխատությունների մասին, չի կարելի աչքաթող անել, որ, ավելի ու ավելի հեռու գնալով լայն ընդհանրացումների ուղիով, Հովսեփ Օրբելին երբեք չէր փորձում իր դրույթները հրամցնել որպես զոգմաներ: Իրենց էությունով բանավեճային այդ աշխատություններում Հ. Ա. Օրբելին որոշ դրույթներ գիտակցաբար սրում էր: Եվ, հրոշակելով Առաջավոր Ասիայի արվեստի մեջ եկեղեցական սահմանների վերացման մասին իր թեզը, մասնագիտական և քրիստոնեական ժողովուրդների արվեստում ժխտելով թվացող հակադրությունը, Հովսեփ Օրբելին չէր էլ մտածում հրաժարվել, օրինակ, իր այն դրույթից, որ իր ուղիով զարգացող վրացական արվեստը, վրացական ճարտարապետությունը ինքնուրույն է: Գիտության մեջ անսահման հեռու լինելով զոգմատիզմից, նա հույսով էր, որ ընթերցողը նրա դրույթները չէր ընդունի որպես ֆորմուլա՝ մեխանիկորեն, անմիտ կիրառման համար, այլ որպես կենդանի, ստեղծագործական թեզ, որը ձևակերպում է կուլտուրայի մեջ այս կամ այն պրոցեսի տենդենցը: Իր սկզբունքներին հավատարիմ մնալով, Հովսեփ Օրբելին իր աշխատություններում ազատ էր

⁵⁵ Н. А. Орбели, О классовых корнях некоторых традиций исторической науки.— «Сообщения РАИМК», 1931, № 1, стр. 13—14 (հոդվածի բովանդակությանը լրիվ չափով չհամապատասխանող վերնագիրը տրված էր ամսագրի խմբագրության կողմից):

⁵⁶ Նույն տեղը, էջ 13:

⁵⁷ Նույն տեղը, էջ 16:

պատմության և կուլտուրայի առանձին երևույթների իմաստավորման մեջ որևէ գոեհեղափոխություն: Դա հատկապես ընդգծված նկատվում է հայկական էպոսին և Ռուսթավելու դարաշրջանի հուշարձաններին նվիրված նրա աշխատություններում:

1931 թ. մշտական ցուցահանդեսը, ինչպես և նախորդ ցուցադրումները, կոչված էր այցելուներին ծանոթացնելու ո՛չ միայն արևելյան արվեստի, այլև, բառի ամենայն իմաստով, Արևելքի մշակույթի հետ (նման հակադրության ամբողջ պայմանականությամբ հանդերձ): Ցուցահանդեսը կառուցված էր խոշոր կոմպլեքսներով, որոնք արտացոլում էին և՛ արտադրական հարաբերությունների բնույթը, և՛ գաղափարախոսությունը, և՛ դարաշրջանի գեղագիտական հայացքները, և՛ ժողովուրդների ազգագրական կերպարը: Այսպիսի կառուցվածքում հուշարձանների զուտ գեղարվեստական արժանիքները դադարում էին ցուցադրման գերակշռող մասը լինելուց: Նման մոտեցումը արդարացի առարկությունների առիթ էր տալիս, և Բ. Վ. Լեգրանը հետագայում գրեց, որ գալով «իր բազայի բոլորովին ճիշտ ընդլայնմանը, (Արևելքի) սեկտորը, սակայն, հետագա աշխատանքում ընկավ շահագնացության մեջ և աստիճանաբար հանգեց եթե ոչ արևելյան հասարակության կուլտուրայի պրոբլեմների մշակման ժամանակ արվեստի հարցերի արձամարձմանը, ապա համենայն դեպս դադարեց դրանց վրա ուշադրություն դարձնել, որին, թվում է, պարտադրում էր նյութի բուն կազմը, որի մեջ արվեստի հուշարձանները աչքի ընկնող դեր են խաղում»⁵⁸:

Մշտական ցուցահանդեսը գոյություն ունեցավ մինչև 1935 թ., հետագայում դրա հիմքերի վրա բացվեց մի ցուցադրություն, որը հարմարեցված էր իրանական արվեստի և հնագիտության 3-րդ միջազգային կոնգրեսին:

Անսահման սիրով էրմիտաժը, Հ. Ա. Օրբելին իր գոր-

ծանեությունը երբեք չէր սահմանափակում Արևելքի բաժնի սահմաններում և գործուն մասնակցություն էր ունենում ամբողջ թանգարանի կյանքին, հատկապես 1934 թ. հետո, երբ նշանակվեց դրա գիրեկուտ:

Նոր նշանակումը ընդլայնեց Հ. Ա. Օրբելու հնարավորությունները՝ կյանքում կիրառելու իր սկզբունքները, բայց առավել աճեցին նրա պարտականություններն ու հոգսերը. էրմիտաժն այդ ժամանակ դարձել էր հետազոտական գործունեության լայն գիսպայտն ունեցող խոշոր գիտական հիմնարկություն: Թանգարանի բոլոր գիտական բջիջների աշխատանքի մեջ թափանցելու և դրանց գործունեությունը ղեկավարելու համար նրանք էին հանրագիտական գիտելիքներ: Հ. Ա. Օրբելին լիովին արհապետում էր դրանց: Նա հսկայական նշանակություն էր տալիս պահպանման աշխատանքին: Նրա ղեկավարությամբ անցկացվեց աշխատատար գույքագրում և ցանկակազմում, որի ընթացքում հայտնաբերվեցին շատ հուշարձաններ, որոնք արժանի էին ցուցադրության և մտնելու գիտական լայն շրջանառության մեջ: Գիտական պահպանման հարցերի հետ միասին, Հ. Ա. Օրբելին մտահոգված էր նաև հուշարձանների պահպանությամբ: Այդ ուղղությամբ ձեռնարկվեցին գործուն միջոցառումներ, որոնց շնորհիվ էրմիտաժի գանձերը պահվում էին լրիվ անվտանգություն մեջ:

Կազմակերպական և տնտեսական հոգսերը շատ ժամանակ էին խլում: Այդուհանդերձ, Հովսեփ Օրբելին դրանք զուգակցում էր հասարակական մեծ աշխատանքի հետ. մի քանի անգամ նրան ընտրել են Լենինգրադի քաղաքային սովետի ղեկավար և Երևանի քաղաքային սովետի ղեկավար ղեկավարում և Երևանի քաղաքային սովետի ղեկավարում: Նա ակտիվորեն մասնակցում էր գիտական աշխատողներին սեկցիայի բյուրոյի աշխատանքներին: Հովսեփ Օրբելու աշխատանքային օրն սկսվում էր արշալույսին և ավարտվում ուշ գիշերին: Նա խորամուխ էր լինում թանգարանի տեխնիկական հագեցվածության բոլոր մանրուքների մեջ, զբաղվում լուսավորության, ջեռուցման հարցերով, սանիտարական վիճակով և այլն: էրմիտաժն այդ տարիներին շինքի կարիք էր զգում, և Հ. Ա. Օրբելին տարեցուտարի հասավ այն

⁵⁸ Б. В. Легран, Социалистическая реконструкция Эрмитажа, стр. 46.

բանին, որ շենքից դուրս հանվեցին այնպիսի հիմնարկներ, ինչպես հեծելազորային դպրոցը, որն զբաղեցնում էր ախոռն ու Փոքր էրմիտաժի տակ տեղավորված ձիարշավարանը, կամ նոր էրմիտաժի տակ (Չմեռային Կանավայի և Խալտուրինի փողոցի երկարությամբ) տեղավորված գինու պահեստները: Հովսեփ Օրբելու հաստատակամության շնորհիվ աստիճանաբար էրմիտաժին միացվեցին Չմեռային պալատի սրահները, որի շնորհիվ ցուցադրման տարածությունը զգալի չափով մեծացավ: 1945 թ. էրմիտաժին տրվեց նաև նախկին Հեղափոխության թանգարանի շենքը—այդպիսով Չմեռային պալատի ամբողջ շենքը անցավ էրմիտաժին:

Հ. Ա. Օրբելին հաճախ և հաճույքով ելույթ էր ունենում էրմիտաժի լեկտորիումում, անց էր կացնում էքսկուրսիաներ, ղեկավարում էր դպրոցական խմբակները, դասախոսություններով հանդես էր գալիս գործարաններում ու կոլտնտեսություններում, գտնում էր նոր հնարավորություններ՝ այցելուների և աշխատակիցների միջև անմիջական կապ ստեղծելու համար:

Երեսուներկան թվականները Օրբելու գործունեության առավել մեծ թափի ժամանակաշրջանն է: Նա հանդես է գալիս որպես կազմակերպիչ մի շարք գիտա-կուլտուրական միջոցառումների, որոնք նրա ղեկավարությամբ վեր էին ածվում իսկական համաժողովրդական տոնախմբությունների:

1934 թ. ՍՍՀՄ-ում, Իրանում և մի շարք այլ երկրներում նշեցին պարսկական մեծ պոետ Աբուլ-Կասիմ Ֆիրդուսու հազարամյա հոբելյանը: Սովետական Միությունում հոբելյանի նախապատրաստական աշխատանքները սկսվել էին դեռևս 1933 թ., և Հովսեփ Օրբելին զբաղվում ամենազործնական մասնակցությունը ունեցավ: Եռուսով նա հաստատվում է Ֆիրդուսու հոբելյանի տոնակատարությունը նախապատրաստող կենտրոնի բաժանմունքի հանձնաժողովի նախագահ: Այդ բաժանմունքը Ֆիրդուսու հոբելյանի անցկացման ուղղությամբ ղեկավարում էր այնպիսի գիտական հիմնարկների ձեռնարկած համատեղ միջոցառումները, ինչպես ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը և Պետական էրմիտաժը: Հոբելյանի նախապատրաստմանը մասնակցում էին շատ

խոշոր գիտնականներ՝ Ա. Ն. Սամոյլովիչը, Ա. Ա. Ռոմասկե-վիչը, Ա. Յու. Յակուբովսկին, Ե. Է. Բերթելսոնը, Ա. Ա. Ռոզենբերգը: Մայիսի 29-ին և 30-ին էրմիտաժի թատրոնում անցկացվեց արևելագիտության ինստիտուտի և էրմիտաժի համատեղ սեսիան⁵⁹:

Անսխալում արտասանած իր ճառում Հ. Ա. Օրբելին ասաց. «Շահնամ»-ն, «Արքաների գիրքը» իր չափով Իլիականը ութ անգամ գերազանցող դյուցազներգություն է, որն Իրանի պատմությունը ընդգրկում է առասպելական ժամանակներից մինչև Մասանյան տերություն կործանումը: Ավարտված ձևով, չափերի ամբողջ պահպանությամբ հանդերձ, այն հարյուր հազարից ավելի տող ընթերցելու ամբողջ ընթացքում չի հոգնեցնում, և այժմ, ստեղծումից համարյա հազար տարի հետո, այդ հերոսական պոեմը, նրա ստեղծողի կերպարի գծերով ամբողջությամբ թափանցված, շարունակում է ապրել պարսկական ժողովրդի միջավայրում և իր վրա գրավել ամբողջ աշխարհի հետաքրքրությունն ու ուշադրությունը... Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների մեծ Միության մեջ միավորված ժողովուրդներից շատերի համար

59 Անսխալի ծրագիրը.

29 մայիսի, ժամը 20-ին

1. Նախագահի ներածական խոսքը
2. Հ. Ա. Օրբելի — ներածական զեկուցում
3. Գ. Վ. Շիտով — Միջնադարյան Իրանի մի քանի գծերը
4. Ա. Յու. Յակուբովսկի — Մահմուդ Ղազնևի
5. Ե. Է. Բերթելս, Ֆիրդուսին և նրա ստեղծագործությունը:

30 մայիսի, ժամը 12-ին

1. Ա. Ա. Ռոմասկեյ — «Կարնամակը» որպես Ֆիրդուսու «Շահնամ» պոեմի աղբյուրներից մեկը
2. Կ. Վ. Տրևեր — Մասանյան Իրանը և «Շահնամ»-ն
3. Լ. Տ. Գյուզալյան և Մ. Մ. Դյակոնով — Մանրանկարները «Շահնամ»-ի կենտրոնական ձևազերծում
4. Ցուցահանդեսի գիտում:

30 մայիսի, ժամը 20-ին

1. Հ. Ա. Օրբելի — Շախմատի ծագման մասին
2. Ժերմեն — Հատվածների ընթերցում «Շահնամ»-ից
3. Մ. Լ. Լոզինսկի — Բարգամանությունների ընթերցում «Շահնամ»-ից
4. Համերգ:

«Շահնամե»-ն կուլտուրական ժառանգություն է, որին տիրանալը պարտավորեցնում է նրանց հեռավոր անցյալը, որը հաղարամյակների ընթացքում անխզելիորեն կապված է եղել պարսկական ժողովրդի անցյալի հետ, որի զավակն էր Ֆիրդուսին: Մի՞թե մինչև այսօր քրդերի, օսերի, հայերի, վրացիների, տաջիկների շրջանում չեն հնչում հին ժամանակներից պահպանված հանգներգությունները՝ ձուլված Ֆիրդուսու հստակ, հնչեղ, մելոդիկ բանաստեղծություններին: Չէ՞ որ, ստեղծելով իր վիպերգությունը, Ֆիրդուսին այդ գանձարանի մեջ մտցրել է պատմական ավանդությունների ողջ հարստությունը և իրանական միջավայրի հնամենի գրույցները, այն միջավայրի, որում նա ապրել ու մեծացել է: Իսկ այդ միջավայրը անհամեմատ ավելի լայն էր, քան նրա հարազատ հորասանի և նույնիսկ ամբողջ Իրանի սահմանները...»⁶⁰:

Վառ կերպով նկարագրելով «Շահնամե»-ի հիմնական գծերը, Հ. Ա. Օրբելին ցույց տվեց, թե ինչու Ֆիրդուսու պոեմը «պետք է դառնար և դարձավ ազգային դուցադներգություն»:

Հորելյանական նիստերի առթիվ էրմիտաժի թատրոնի գրոսասրահում բացվեց Ֆիրդուսուն նվիրված ցուցահանդեսը: Այստեղ ցուցադրված էին սասանյան հավաքածուի հիանալի հուշարձանները՝ հետագայում մեծ բանաստեղծի կողմից երգված առանձին տեսարանների և հերոսների պատկերավորմամբ, իսկ դրանց կողքին՝ Մ. Մ. Գյակոնովի թարգմանությամբ համապատասխան քաղվածքներ «Շահնամե»-ից: Այդ տիպի էտիկետաժը թանգարանային պրակտիկայում կիրառվում էր առաջին անգամ: Ցուցահանդեսում ներկայացված էին «Շահնամե»-ի ձեռագրերը սկսած 1333 թ. մինչև 19-րդ դ.: Այդ ձեռագրերի մանրանկարներում եղած կենցաղային գործածության առարկաները ներդաշնակվում էին ցուցադրված իսկական ոսկերչական իրերի՝ արծնապակիով, սուտակներով, զմրուխտներով, աղամաններով և մարգա-

րիտներով զարդարված գավաթների, ապարանջանների, դանակների, դաշույնների և այլոց հետ: Ցուցահանդեսը, բնականաբար, պատրաստել էր Արևելքի բաժինը⁶¹:

Հորելյանի կապակցությամբ լույս տեսան վերը հիշատակած «Ֆիրդուսի» ժողովածուն, կենինգրադի հավաքածուներում եղած «Շահնամե»-ի ձեռագրերի նկարագրությունը⁶² և «Բահրամ Գուր և Աղադե» փոքրիկ գրքուկը⁶³ Ֆիրդուսու սիրված հերոսներից մեկի մասին զետեղված Հ. Ա. Օրբելու ակնարկով:

1934 թ. սեպտեմբերին հորելյանական տոնակատարություններ սկսվեցին Մոսկվայում: 1934 թ. սեպտեմբերի 20-ին Մեծ թատրոնում տեղի ունեցավ մեծ բանաստեղծի հիշատակին նվիրված հանդիսավոր նիստ: Համամիութենական կազմկոմիտեի նախագահ Ա. Ս. Ենուկիձեի ներածական ճառից հետո խոսքը տրվում է Հ. Ա. Օրբելուն: Վերլուծելով դուցադներգությունը, նա ցույց տվեց, թե նրա կերպարները ինչպես են ներդաշնակում ներկա ժամանակի, մեր օրերի հերոսիկայի հետ: «Մեզ թանկ է և հասկանալի ֆեոդալիզմի երգիչը, իր ժամանակի ասպետության երգիչը, — ասում էր Հովսեփ Օրբելին: — Հորացիոսը անմահ անուն է գերազանցապես այն մարդկանց շրջանում, ով սովորել է բարձրագույն դարոցում: Իսկ Ֆիրդուսին անմահ է նրա համար, որ նրան հիշում են ու գիտեն և՛ Իրանում, և՛ Իրանի սահմաններից շատ հեռու, և՛ մեր Միության հանրապետություններում: Միլիոնավոր մարդիկ, այդ թվում նաև այնպիսի մարդիկ, որոնք երբեք չեն ուսանել, Ֆիրդուսուն գիտեն մանկությունից, գիտեն բանավոր պատմություններից, գիտեն այն հատվածներից, որոնք մինչև այսօր էլ երգվում են, երգվում պար-

⁶¹ К. В. Тревер, Чествование Фердоуси в городе Ленина, — «Строим», 1934, октябрь (специальный выпуск), стр. 14.

⁶² Л. Т. Гюзалья и М. М. Дьяконов, Рукописи «Шах-наме» в Ленинградских собраниях, Л., 1934.

⁶³ «Бахрам Гур и Азадэ из Шахнаме Фердовси», Л., Государственный Эрмитаж, 1934.

⁶⁰ Հ. Ա. Օրբելու ճառը հրատարակված է «Фердовси, 934—1934» ժողովածուում, Լ. 1934, стр. 1—2.

սիկների, բրդերի, տաշիկների, օսերի, հայերի, վրացիների և ուրիշ շատ ժողովուրդների մեջ...»⁶⁴:

Այդ նույն օրը «Իզվեստիայում» տպագրվեց Հ. Ա. Օրբելու հոդվածը՝ նվիրված պարսից հանճարեղ բանաստեղծին: Արևելյան կուլտուրաների պետական թանգարանում բացվեց պարսկական արվեստի մեծ ցուցահանդես: Բացի Լենինգրադից և Մոսկվայից, Ֆիրդուսու հոբելյանը հանդիսավորությամբ նշվեց նաև Բաքվում, Քրիլիսիում, Երևանում, Տաշքենդում և Սովետական Միության այլ քաղաքներում:

Հոկտեմբերին հոբելյանական տոնակատարություններ սկսվեցին Իրանում: Տոնակատարություններին մասնակցելու համար Սովետական Միությունից պատվիրակություն մեկնեց հետևյալ կազմով՝ Ե. Է. Բերթելս, Լ. Վ. Բոլտոնիկով, Յու. Ն. Մառ, Հ. Ա. Օրբելի, Ա. Ա. Ռոմասկևիչ և Ա. Ա. Ֆրեյման: Հոկտեմբերի 4-ին Քեհրանում բացվեց Ֆիրդուսու հիշատակին նվիրված կոնգրեսը: Այդ կոնգրեսին մասնակցում էին քսան երկրների ներկայացուցիչներ: Սովետական գիտնականները կարդացին վեց զեկուցում, ընդ որում երեքը (Ե. Է. Բերթելսը, Յու. Ն. Մառը և Ա. Ա. Ռոմասկևիչը) ելույթ ունեցան պարսկերեն լեզվով, մի բան, որը Իրանի հասարակայնության վրա խոր տպավորություն գործեց: Հ. Ա. Օրբելին ֆրանսերեն լեզվով զեկուցեց «Մասանյան արծաթը և «Շահնամե»-ն»⁶⁵: Սովետական գիտնականների զեկուցումները համընդհանուր ուշադրություն գրավեցին, իսկ զեկուցումների առաջատար գաղափարը, այն, որ Ֆիրդուսու ստեղծագործության ուժն ու ինքնատիպությունը պայմանավորված է ժողովրդական ստեղծագործության հետ նրա օրգանական կապով, լայն արձագանք գտավ համաշխարհային հասարակայնության մոտ:

Կոնգրեսի նիստերը հերթափոխվում էին տեսարժան վայրերի զննությամբ: Կոնգրեսի մասնակիցները հրավիրվե-

⁶⁴ Մեջբերվում է ըստ զեկուցման մեքենագրական տեքստի (Հ. Ա. Օրբելու արխիվ):

⁶⁵ Զեկուցումը հրատարակվեց տասը տարի հետո «The Millennium of Firdawsī, the great national poet of Iran» հրատարակության մեջ, Tehran, 1944, pp 64—71:

ցին Մեշխեդ, որտեղից ուղևորվեցին պոետի հայրենիքը՝ Թուս քաղաքը, ուր տեղի ունեցավ Ֆիրդուսու դամբարանի հանդիսավոր բացումը:

Մասնակցելով կազմակերպվող էքսկուրսիաներին, սովետական պատվիրակները կարողացան նկատել, որ մեծ պոետի հայրենիքում նրա հիշատակը նշվում էր միայն ինտելիգենցիայի շրջանում, այն ժամանակ, երբ ՍՍՀՄ-ում հոբելյանը արձագանք գտավ լայն մասսաների մոտ⁶⁶: Նույնիսկ Իրանի Թեգա Փեհլևի շահը Թուսում բաց անելով Ֆիրդուսու արձանը, նշեց, որ տոնակատարությունները ՍՍՀՄ-ում ավելի լավ են անցնւ, քան Իրանում⁶⁷: Սովետական պատվիրակությունը Իրանի հասարակայնության ուշադրության կենտրոնում էր: Հսկայական տպավորություն թողեց Սովետական Միության նվերը՝ էրմիտաժի սասանյան սկուտեղների 15 զալվանապլաստիկական պատճեններ և «Շահնամե»-ի 1333 թ. ձեռագրի (իր հնությունը երկրորդն աշխարհում, իսկ պահպանմամբ՝ առաջինը) ֆոտոպատճենը:

Լենինգրադում և Մոսկվայում տոնակատարություններն ավարտվելուց հետո Հ. Ա. Օրբելին իրեն հատուկ եռանդով նվիրվում է իրանական արվեստի և հնագիտության Յ-րդ միջազգային կոնգրեսի կազմակերպմանը, որը նույնպես պետք է տեղի ունենար Լենինգրադում և Մոսկվայում: Կոնգրեսի կազմկոմիտեի նախագահ նշանակվեց լուսավորության ժողկոմ Ա. Ս. Բուբնովը, նրա տեղակալ՝ Հ. Ա. Օրբելին:

Այդ տարիներին Հովսեփ Օրբելին արդեն օգտվում էր բացառիկ հեղինակությամբ ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 1935 թ. հունիսի 1-ին նա ընտրվեց ՍՍՀ Միության գիտությունների ակադեմիայի իսկական անդամ⁶⁸:

⁶⁶ E. Э. Бертельс, Советская делегация на празднествах Фирдоуси.— «Вечерняя Красная газета», 15/XI 1934.

⁶⁷ А. Болотников, Юбилей Фирдоуси в Персии.— «Литературная газета», 4/XI 1934.

⁶⁸ Հ. Ա. Օրբելին ակադեմիայի թղթակից-անդամ ընտրվել է 1924 թվականին՝ Ն. Յա. Մառի, Ս. Ֆ. Օլգենբուրգի և Ի. Յու. Կրաչկովսկու ներկայացմամբ:

Կոնգրեսը գումարվեց 1935 թ. սեպտեմբերին: Սեպտեմբերի 11—16-ին նիստերը տեղի էին ունենում էրմիտաժում, եզրափակվել էրկու նիստերը կայացան Մոսկվայում: Կոնգրեսի աշխատանքներին մասնակցում էին 188 պատգամավոր և 153 անդամ-մրցորդներ տասնյոթ երկրից՝ Ավստրիայից, Անգլիայից, Աֆղանստանից, Գերմանիայից, Հոլանդիայից, Դանիայից, Իրանից, Իսպանիայից, Պաղեստինից, Լեհաստանից, Սիրիայից, ՍՍՀՄ-ից, ԱՄՆ-ից, Թուրքիայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Չեխոսլովակիայից և Շվեդիայից: Կոնգրեսի կապակցությամբ էրմիտաժում բացվեց մեծ ցուցահանդես՝ նվիրված Իրանի և նրան սահմանակից երկրների արվեստին: Զուցահանդեսը տեղավորված էր 84 սրահում: Էրմիտաժի հուշարձանների հետ միասին ցուցադրված էին նաև առարկաներ Սովետական Միության այլ թանգարաններից (ՌՍՖՍՀ-ից, Ազրբեջանից, Հայաստանից, Վրաստանից, Ղազախստանից, Թուրքմենիայից և Ուկրաինայից), ցուցադրական արժեքավոր իրեր էին ներկայացրել իրանական թանգարանները և մահմեդական սրբավայրերը, ևուրը, իրանական արվեստի և հնագիտության ամերիկյան ինստիտուտը, ինչպես նաև արտասահմանյան կոլեկցիոներները⁶⁹:

Եթե 1931 թ. կոնգրեսի ցուցահանդեսը հնարավորության սահմաններում ձգտում էր լրիվ ներկայացնել բուն պարսկական արվեստի գլուխգործոցները, ապա էրմիտաժի ցուցահանդեսը «հնարավորություն էր տալիս իրանական կուլտուրայի հուշարձանները դիտել անմիջականորեն, համադրելով զեղարվեստական գործերի հետ, որոնք, չնայած ստեղծվել են Իրանից դուրս, բայց կապված էին նրա մշակույթի հետ, քանի որ մի դեպքում դրանք հանդիսանում են իրանական արվեստի արձագանքը, մյուս դեպքում՝ Իրանի արվեստի որոշակի հոսանքների աղբյուրը»⁷⁰:

⁶⁹ «III Международный конгресс по иранскому искусству и археологии. Доклады». Редактор академик А. И. Орбели. Л., 1935, стр. V.

⁷⁰ Նույն տեղը:

Լենինգրադում հավաքվել էր համաշխարհային իրանագիտության ծաղիկը, կոնգրեսն անցավ գիտական բարձր մակարդակով: Սեպտեմբերի 18-ին փակելով կոնգրեսը, Հ. Ա. Օրբելին բավականությամբ նշեց, որ այս կոնգրեսում զգալիորեն շատ էին ընդհանրացնող, լայն պրոբլեմներին նվիրված զեկուցումները, քան նախորդներում: Ավելի լայն դարձավ թեմատիկան—ցուցահանդեսում ներկայացված էին Իրանի ժամանակակից արվեստի հուշարձանները, որին և նվիրված էր զեկուցումներից մեկը, այն դեպքում, երբ կոնգրեսում 18-րդ դարը այն սահմանն էր, որից դուրս գալիս իբր թե անմտություն էր: «Շուշափվեցին ամենաբազմազան պրոբլեմներ՝ արվեստի պրոբլեմները բառի նեղ իմաստով, պատմական պրոբլեմները բառի նեղ իմաստով, հնագիտական պրոբլեմներ, իսկ ամենազլխավորն այն էր, որ արդեն հնչեցին զեկուցումներ, որոնց մեջ պատմության, հնագիտության և արվեստի պատմության միջև սահմանապատում չկար: Այդ պրոբլեմները իրարից չբաժանելու անհրաժեշտության գիտակցումը սկսում է թափանցել արտասահմանյան գիտնականների միջավայրը, և դա, անկասկած, նրանց շրջանում ապահովում է այն գիտական ուղղության հետագա զարգացման հնարավորությունը, որի համար մենք պայքարում ենք և կպայքարենք մինչև վերջ: Այդ ուղին կհանգեցնի իսկական գիտական եզրակացությունների, որովհետև այն բխում է միակ իսկական գիտական մեթոդից՝ գիալեկտիկական մատերիալիզմի մեթոդից, որի վրա կառուցվում է մեր սովետական գիտությունը»⁷¹:

Կոնգրեսի սովետական պատվիրակները հանդես եկան տասնվեց զեկուցումներով (դրանցից մեկը հրատարակվեց պարսկերեն): Հ. Ա. Օրբելու զեկուցումը նվիրված էր սելջուկյան արվեստի պրոբլեմին և աչքի էր ընկնում հարցադրման համարձակությամբ ու սրությամբ⁷²: Հովսեփ Օրբե-

⁷¹ Նույն տեղը, էջ VIII:

⁷² Տե՛ս զեկուցման համառոտ շարադրանքը («III Международный конгресс...», стр. 150—154, ֆրանսերեն ամփոփում, էջ 154—155):

ին ուշադրութիւն էր հրավիրում այն անվիճելի փաստի վրա, որ «սելջուկյան մշակույթի ստեղծմանը մասնակցել են Միջին Ասիայի զգալի մասի, Փոքր Ասիայի, Անդրկովկասի և Իրանի ժողովուրդները: Սելջուկյան նվաճումները համընկան քաղաքների զարգացման հետ, իսկ որոշակի չափով նաև արագացրին այդ զարգացումը: Քաղաքային կյանքի ծաղկման այդ ֆոնի վրա (բայց ոչ երբեք «վերածննդի», ինչպես սիրում են երբեմն ասել) թոշնում են բնակչության տարրեր տարրերի միջև եղած ազգային և դավանական հակասութիւնները: Դրա վառ օրինակները բացահայտվեցին Մաոի պեղումների ժամանակ Անիում, ուր բնակչության տարրեր խմբերի միջև բաժանման պարզ գիծը, ինչպես պարզվեց, անցնում էր ոչ թե, մի կողմից, հայերի ու վրացիների և, մյուս կողմից, պարսիկների ու թուրքմենների միջև, այլ, մի կողմից, հայկական, վրացական, պարսկական ու թուրքմենական ազնվականության ու սրան մոտեցող հարուստ-վաճառականների ու վաշխատուների և, մյուս կողմից, արհեստավորների ու աղքատների միջև»⁷³:

Սելջուկյան արվեստում, հաստատում է Հ. Ա. Օրբելին, շատ տարիներ մոտիկ անցյալի քոչվորների կողմից փոխառնված են տեղական մշակույթների և տեղական գեղարվեստական ավանդույթներին գանձարանից: Այդ եզրակացութիւնն է հանգեցնում և՛ ճարտարապետութեան, և՛ մետաղյա իրերի, և՛ տապանաքարերի, և՛ շատ այլ տեսակի հուշարձանների ուսումնասիրութիւնը: Հովսեփ Օրբելին, մասնավորապես, ասաց. «Արդեն քսաներկու տարի առաջ մենք առիթ ունեցանք ապացուցելու, որ սելջուկյան արվեստի համար տիպական բրդածե կամ կոնածե ծածկերով բազմանիստ ու գլանակերպ դամբարանները (որոնց տիպարը սիրով պահպանված է ավելի ուշ դարերի մահմեդական ճարտարապետութեան մեջ), իրենց հիմքում և առավելապես վաղ օրինակներում, ներկայացնում են ոչ թե հայկական, վրացական կենդեցական ճարտարապետութեան ձևերից կախված կառույցներ, այլ՝ հայկական և վրացական տաճարների տանի-

քից թմբուկածե գմբեթի հատվածքի ուղղակի փոխադրումը գետնի վրա: Ըստ որում, թմբուկը կտրված է իր սուբստրուկցիայի հետ միասին, մի սուբստրուկցիա, որը պայմանավորված է թմբուկի տակ գտնվող կամարներով: Դրա համար էլ գետնի վրա այդ սուբստրուկցիան ոչնչով չի արգարացվում և ըստ էության անհեթեթութիւնն է: Մենք, հասկանալի է, նկատի ունենք ոչ թե եկեղեցու ֆիզիկական ավերումը՝ նրա թմբուկի և գմբեթի քարերից սելջուկյան նոր դամբարաններ կառուցելու նպատակով, այլ երկինք խոյացող շորս սյուների և կամարների վրա կառուցված թմբուկը բարձունքից կուրորեն գետնին փոխադրելը: Ուսումնասիրելով Խլաթի, Էրզրումի, Ոստանի դամբարանները, մենք տեսնում ենք տանիքային ճարտարապետական նոր տիպի ծնունդը՝ կտրված դարերի բնթացքում հասակ առած քրիստոնեական հայկական և վրացական տաճարներից»⁷⁴: Իսկ ընդհանրապես, հաստատում է Հ. Ա. Օրբելին, ազգա-դինաստիկական «սելջուկյան արվեստ» տերմինը իր իրական բովանդակութեան համեմատ չափազանց նեղ է պատկերացվում:

Կոնգրեսը միջազգային լայն արձագանք գտավ: ՍՍՀՄ-ում այն ընկալվեց որպես կուլտուրական խոշոր իրադարձութիւն. նրա աշխատանքը հանգամանորեն լուսարանվեց մամուլում:

Նշելով Հ. Ա. Օրբելու դերը կոնգրեսի նախապատրաստման գործում, Իրանի ժողովրդական լուսավորութեան մինիստրութիւնը նրան պարգևատրեց շքանշանով: Միաժամանակ Հ. Ա. Օրբելին ընտրվեց Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր:

74 Նույն տեղը, էջ 152:— Խոսելով այն մասին, որ ինքը զեռ քսաներկու տարի առաջ առիթ է ունեցել ապացուցելու այդ դրույթը, Հովսեփ Օրբելին, հավանաբար, նկատի ունի իր «Սելջուկյան դամբարանների և տապանաքարերի կախվածութիւնը համապատասխան հայկական հուշարձաններից» դասախոսութիւնը, որը 1914 թ. օգոստոսին նա կարդացել է արեւելյան լեզուների ֆակուլտետում: Հմմտ. նաև «Բրոկհաուզի ու Եֆրոնի հանրագիտական նոր բառարանում» տպագրված նրա «Մահմեդական արվեստը» հոդվածը. հ. 27, սյունակ 507:

73 Նույն տեղը:

Կոնգրեսին հարմարեցվեցին մի շարք արևելագիտական հրատարակություններ⁷⁵, որոնց մեջ հատկապես պետք է նշել սասանյան տարեթիվային վերաբերյալ Հ. Ա. Օրբելու և Կ. Վ. Տրեբերի աշխատությունը⁷⁶: Դրա հրատարակումը գիտական շրջանառության մեջ մտցրեց էրմիտաժի սասանյան հավաքածուի ուխտունհինգ առարկա, ընդ որում դրանցից շատերը հայտնաբերվել էին երեսնական թվականներին: Ներածականում ընդհանրացվել էին այն եզրակացությունները, որոնց հանգել էին Հ. Ա. Օրբելին և Կ. Վ. Տրեբերը սասանյան արվեստի հուշարձանների երկարամյա ուսումնասիրության շնորհիվ:

Այդ բնույթի է նաև Հ. Ա. Օրբելու հոդվածը, որը հրատարակվեց 1938 թ., վերը հիշատակված «A Survey of Persian Art» միջազգային հրատարակության մեջ⁷⁷:

Այդ աշխատություններով ավարտվեց Հ. Ա. Օրբելու հետազոտական գործունեության որոշակի շրջանը: Իրանական «սասանյան» արվեստին նվիրված աշխատություններում մանրակրկիտ վերլուծություններն ամեն քայլում զուգակցվում են լայն ընդհանրացումների հետ. իսկ սասանյան արվեստի վերաբերյալ դրույթները ստեղծագործաբար օգտագործելու դեպքում կարող են կիրառվել արվեստի պատմության նաև այլ բնագավառների ուսումնասիրման ժամանակ: Դրանց տեսական նշանակությունը շատ մեծ է, իսկ հարցադրումները առավել ևս համոզիչ են նրանով, որ Հ. Ա. Օրբելու առաջ քաշած ցանկացած դրույթը հիմնված է կոնկրետ նյութի վրա:

1936 թ. Հ. Ա. Օրբելին մի մեծ արշավախումբ է գլխավո-

րում դեպի Համբերգ ամրոցը, որը նա հետազոտել էր դեռևս 1929 թ. և հենց այդ ժամանակ էլ հայտնաբերել Անիի ջրմուղի խողովակներին նման մետաղյա խողովակներ: Արշավախումբը կազմակերպել էին Պետական էրմիտաժը և ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալը: Դրան մասնակցում էին տասնհինգ գիտաշխատողներ՝ Ա. Հաջյանը, Ա. Յա. Բորիսովը, Ա. Վրույրը, Գ. Գյուլամիրյանը, Ս. Տ. Երեմյանը, Տ. Ա. Իզմայլովան, Կ. Գ. Ղաֆազարյանը, Բ. Բ. Պիտտրովսկին, Ն. Մ. Տոկարսկին, Կ. Վ. Տրեբերը, Ա. Լ. Յակոբսոնը և ուրիշներ: Աշխատանքներն ընթանում էին 1936 թ. հունիսի սկզբներից մինչև օգոստոսի կեսերը: Պեղումներին օրական մասնակցում էին քառասունից-հիսուն բանվոր: Մաքրվեցին Պահլավունի հզորազույն իշխանական տոհմի պալատի առանձին մասերը՝ բազնիքը, մատուռը, դեպի կիրճը տանող ստորերկրյա գետնուղին, 10—11-րդ դդ. անցկացված ջրմուղը: Բազնիքում հայտնաբերվեց ծաղրածուի թաղումը: Ճարտարապետական կառույցների պեղումները և գտնված առարկաները պարզ պատկերացում էին տալիս Շոթա Ռուսթավելու դարաշրջանի (12—13-րդ դդ.) ֆեոդալական ամրոցի տնտեսական ու կուլտուրական կյանքի մասին: Հ. Ա. Օրբելին այդ պեղումներին նվիրեց իր հրատարակյալ «Բազնիքը և 12-դարի խնդկատակը» ակնարկը, որը հրատարակվեց «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձանները» ժողովածուում:

Այդ նույն տարում լույս տեսավ Կ. Վ. Տրեբերի հետ Հ. Ա. Օրբելու գրած գիրքը շախմատի մասին⁷⁸:

Շախմատը հայտնագործվել է Հնդկաստանում, որտեղից տարածվել է Չինաստան, Տիբեթ, Մալայան կղզիներ: Հընդհաստանից արևմուտք ընկած երկրները շախմատի հետ ծանոթացել են Իրանի միջոցով: «Իրանը այդ խաղի վրա իր կնիքն է դրել այն ձևերում, որոնք գիտեին ու տարբերում էին հենց Իրանի ժողովուրդները և Արևելքի ժողովուրդներն ընդհանրապես, ինչպես արաբները, հայերը, վրացիները, բյուզանդացիները, թուրքերը: Իրանի և, թերևս, Կովկասի մի-

⁷⁵ Դրանք բոլորն էլ լույս տեսան «Academia» հրատարակությամբ՝ նշագրված ոտանքեն, պարսկերեն և ֆրանսերեն. «1935, III Международному конгрессу по иранскому искусству и археологии. Ленинград».

⁷⁶ H. A. Orbeli и K. B. Trever, Сасанидский металл. Художественные предметы из золота, серебра и бронзы, М.—Л., 1935.

⁷⁷ Iosef Orbeli, Sāsānian and early islamic metalwork, — «A Survey of Persian Art. From prehistoric times to the present», London and New York, 1938, pp. 716—770.

⁷⁸ H. Orbeli и K. Trever, Шахмат—книга о шахматах. Л., 1936.

չոցով այն իմացան ուսանելը, իսկ արարների միջոցով ընդունեցին նաև եվրոպացիները՝ միջերկրյա ծովյան կղզիներից, Պիրենեյներից, Ապենիններից և Ֆրանսիայից մինչև Գերմանիա ու Բրիտանիա և, մյուս կողմից, մինչև Լեհաստան»⁷⁹։ Սկզբնական շրջանում շախմատը տարածվեց ֆեոդալական միջավայրում, ընդ որում վառ կերպով արտացոլելով այս կամ այն ժողովրդի ազգամահեոդալական կենցաղի, զինվորական կազմակերպության և սպառազինության գծերը։ Այսպես, հնդկական զորքում փղերի մասնակցությունը ծնեց նաև շախմատային համապատասխան ֆիգուրա։ Սասանյան շրջանում Իրանը գաղափար շուներ կառքերի մասին, դրա համար էլ հնդկական կառքերը (որոնք համապատասխանում էին ժամանակակից նավակին) իմաստավորվում էին որպես զարմանահարաշ Ռուխ թուռն։ Իսկ թուրքական զինվորական շրջանում շախմատային տախտակի վրա կերպարանավորվում էր ուղտը՝ և նորից գոյություն ունեցող զինվորական կենցաղին համապատասխան։ «Շատրանգ» զբքում, ուր հիշատակվում են շախմատի մասին եղած միջնադարյան երկերը, պատմվում է հին ֆիգուրների մասին և առաջ են բաշվում բաղամաթիվ պատմա-կուլտուրական պրորլեմներ. դա շարադրանքի գիտականությունը իսկական զեղարվեստականության հետ զուգակցելու հիանալի օրինակ է։

1937 թվականին Սովետական Միության ժողովուրդները լայնորեն նշեցին Ա. Ս. Պուշկինի մահվան հարյուրամյակը. 1937 թ. փետրվարի 15-ին Հ. Ա. Օրբելին գիտությունների ակադեմիայի հոբելյանական նիստում հանդես եկավ «Պուշկինը և վրացական գրականությունը» մեծ զեկուցումով⁸⁰։ Մեկ շաբաթ հետո՝ փետրվարի 22-ին, էրմիտաժի տասնինը սրահներում Հ. Ա. Օրբելու զեկավարությամբ բացվեց բանաստեղծին նվիրված ցուցահանդես։ Յուցադրական նյու-

թերի իր հարստությամբ այն զիջում էր միայն Համամիութենական պուշկինյան ցուցահանդեսին։

1937 թ. Հ. Ա. Օրբելին, մնալով էրմիտաժի գիրեկտոր, զլխավորում է նաև ՍՍՀՄ ԳԱ նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտը։ Բազմատեսակ պարտականություններով շատ ծանրաբեռնված լինելու պատճառով նա մեկ տարի հետո արդեն թողնում է այդ պաշտոնը։ Նույն տարին Հ. Ա. Օրբելին մեծ մասնակցություն է ունենում Շոթա Ռուսթավելու յոթհարյուրհինամյա հոբելյանի կազմակերպման ու անցկացման աշխատանքներին։ Հոբելյանի հետ կապված անցկացման աշխատանքները նախապատրաստվում էին նախօտոնակատարությունները նախապատրաստվում էին նախօտոնակատարությունները զլխավորում էր Ա. Սվաբոբը։ Հոբելյանական հանձնաժողովը զլխավորում էր Ա. Սվաբոբը։ Հոբելյանական հանձնաժողովը զարձավ Հ. Ա. Օրբելին։ Լենինգրադում նրա տեղակալը դարձավ Հ. Ա. Օրբելին։ Շուտով Ա. Սվաբոբն անհիմն կերպով հանվեց, որի պատճառով հոբելյանի հետ կապված մի շարք հրատարակումներ ձախողվեցին։ Հ. Ա. Օրբելու, որը ձգտում էր այդ տոնակատարություններին առանձնահատուկ փայլ տալ, պարտականությունները զգալիորեն բարգացան, առալիլ էս, որ շուտով ձերբակալվեցին նրա մերձավոր աշխատակիցներից մի քանիսը։ Այդուհանդերձ, նույնիսկ այդ զժվարին պայմաններում, նա ձգտում էր որքան հնարավոր է լավ կազմակերպել իր սրտին այդքան մոտ հոբելյանի անցկացումը⁸¹։

1938 թ. հունվարի 16-ին Մոսկվայում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հանդիսավոր նիստում Հ. Ա. Օրբելին հանդես եկավ «Ռուսթավելու դարաշրջանը» զեկուցումով։ Հանդես եկավ «Ռուսթավելու դարաշրջանը» զեկուցումով։ Այդ նույն նիստում պրոֆեսոր Կ. Դ. Դոնդուան զեկուցում կարդաց «Շոթա Ռուսթավելին և վրացական գրականությունը» թեմայով։ Փետրվարին այդ զեկուցումները կրկնվեցին Լենինգրադում, իսկ էրմիտաժում բացվեց Ռուսթավելու դարաշրջանին նվիրված մեծ ցուցահանդես։

Ռուսթավելու հոբելյանի կապակցությամբ Հ. Ա. Օրբելին թերթում հրատարակեց «Վարդենավորին» նվիրված մի շարք

⁷⁹ Նույն տեղը, էջ 15։

⁸⁰ Հրատարակված է «Сто лет со дня смерти А. С. Пушкина. Труды Пушкинской сессии Академии наук СССР. 1837—1937» ժողովածուում։ Մ.—Լ., 1938, սր. 203—218.

⁸¹ Այդ հոբելյանին Հ. Ա. Օրբելու մասնակցության մասին եղած մի քանի տեղեկությունների համար հեղինակը պարտական է Ի. Վ. Մեդերեիին։

փայլուն հողվածներ: Նրա խմբագրությունը լույս տեսավ Պ. Պետրենկոյի կողմից իրականացված և Կ. Չիլինաձեի կողմից շարունակված պոեմի ռուսական թարգմանությունը⁸²: Այդ նույն ժամանակ Հովսեփ Օրբելին մի փոքրիկ ներածական գրեց պարսկական Վիս և Ռամինի մասին պոեմի վրացական տարբերակի ռուսական թարգմանության համար, որը նույնպես լույս ընծայվեց նրա խմբագրությամբ⁸³: Բայց բանաստեղծի հիշատակին արժանին հատուցեց «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձանները» ժողովածուն, որը լույս ընծայեց Պետական էրմիտաժը⁸⁴: Լ. Ա. Օրբելին տառացիորեն սնուցեց այն, իր համոզվածությամբ վարակելով հեղինակներին, որոնք կարողացան շատ կարճ ժամանակամիջոցում գրել հողվածներ: Այդ ժողովածուում իրեն՝ Հովսեփ Օրբելուն են պատկանում, բացի ընդհանուր խորագրությունից, հիանալի ներածականը և յոթ հողվածներ: Հազիվ թե հարկ կա դրանք բոլորը վերլուծելու առանձին-առանձին, բավական է ասել, որ դրանցում (ինչպես ժողովածուի մյուս տասնյոթ հողվածներում) բացահայտվում է այն դարաշրջանը, որում ապրել և ստեղծագործել է պոետը. այդ դարաշրջանում դրսևորված է բառի ամենալայն իմաստով ոչ միայն Վրաստանը, այլև հարևան երկրները և առաջին հերթին Հայաստանը, որը 12—13-րդ դդ. սերտորեն կապված էր Ռուսթավելու հայրենիքի հետ: «Ռուսթավելին մեծ է որպես իր դարաշրջանի զարմանալիորեն մաքուր, ճիշտ հղկված հայելի, և ոչ միայն Վրաստանի առավել ծաղկման դարաշրջանի, այլև մեր ամբողջ Արևելքի, որն այդ ժամանակ մեծ շահով առաջ էր անցել Եվրոպայից: Նա անապատում վեր խոչացած միայնակ կերպարանք չէ: Նա Վրաստանի, Կով-

կասի և այլ երկրների մշակույթի վարզացման երկար ճանապարհի հետևանքն է ու արդյունքը, երկրներ, որոնք անբակտեիորեն կապված էին Վրաստանի և Կովկասի հետ, իրենց մշակույթի բնագավառում շատ բանով էին պարտական Վրաստանին ու Կովկասին և քաղաքական իրավիճակի ուժով Վրաստանն ու Կովկասը իրենցով ծածկեցին Եվրոպական ու ռուսական մինչհեղափոխական կարճատես հետադուտողներից... Իշխանական միջավայրից դուրս եկած Ռուսթավելու պոեմը, Անի քաղաքը իր բազմազան բնակչությամբ և ժողովրդական խավերից եկող կծու ու թարմ հումորով չի առակները այն զեղատեսիլ հայելու մասերն են, որի ճառագայթների խաչաձևման մեջ մեր առջև իր իսկական տեսքով կանգնում է Ռուսթավելու դարաշրջանի Կովկասը»⁸⁵:

Լ. Ա. Օրբելու համար միանգամայն ակնհայտ էր Շոթա Ռուսթավելու պատկանելը 12—13-րդ դարերին: Դրա համար էլ Մոսկվայում (1960 թ. օգոստոս) տեղի ունեցած արեվելագետների 25-րդ միջազգային կոնգրեսի կովկասագիտության սեկցիայի նիստում անգլիացի վրացագետ Գ. Մ. Լանգի զեկուցման առթիվ բացված մտքերի փոխանակության ժամանակ նա խիստ վճռականությամբ դուրս եկավ զեկուցողի դեմ, երբ վերջինս փորձում էր վերանայել վրացական միջնադարյան գրականության մեծագույն ստեղծագործության թվարկությունը՝ այն տեղափոխելով 15—16-րդ դարերը:

Լ. Ա. Օրբելին երկար տարիներ կապված էր Անդրկովկասի, հատկապես Հայաստանի գիտական հիմնարկությունների հետ, աշխուժորեն հետաքրքրվում էր հետազոտական աշխատանքի ընթացքով և արդյունքներով: Հայաստանում (ինչպես նաև Վրաստանում) աշխատում էին նրա դեռևս Անիի պեղումների ժամանակվա ընկերներից շատերը: 1938 թ. Հովսեփ Օրբելին ընտրվում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի նախագահության նախագահ: Այդ պաշտոնում Հովսեփ Օրբելին գլխավորեց հայկական ժողովրդական «Սասունցի Դավիթ» հերոսական դյուցազնագույթյան հաղարամյա հոբելյանի կատարման աշխատանքները:

⁸² Шота Руставели, «Витязь в тигровой шкуре». Перевод с древнегрузинского Пантелеймона Петренко при участии и под редакцией Константина Чичинадзе, М.—Л., 1938.

⁸³ «Висрамнани, грузинский роман XII века и персидская поэма XI века Вис и Рамин». В изложении и переводах Б. Т. Руденко и М. М. Дьяконова, М.—Л., 1938.

⁸⁴ «Памятники эпохи Руставели», Л., 1938.

րը: Նախապատրաստութիւնն ընթանում էր և՛ Երևանում, և՛ Լենինգրադում՝ էրմիտաժում:

Արարական տիրապետութեան դեմ հայ ժողովրդի պայքարի հերոսիկան արտացոլող այդ հիանալի դրուցազնեղութիւնը մեզ է հասել մի քանի տասնյակ պատումներով: Առաջին գրառումը 1873 թ. կատարել է հայտնի հայ բանահավաք Գարեգին Սրվանձտյանը: Երեք տարվա որոնումներից հետո նրան հաջողվեց գտնել գրուցասաց՝ Մշո դաշտից գյուղացի Կրպոյին, և 1874 թ. հրատարակել դրուցազնեղութեան կարևորագույն պատումներից մեկը՝ Մշո բարբառով: Հետագայում տարբեր բարբառներով զրառվեց ևս մի քանի տասնյակ պատում, բայց այդ տեքստերը գիտական առօրյայի սահմաններից դուրս չեկան: 1902 թ. Հովհաննես Թումանյանը հրատարակեց «Սասունցի Դավիթ» իր հիանալի շափածո փոխադրութիւնը: Սակայն իսկական դրուցազնեղութիւնը շարունակում էր ապրել միայն ժողովրդական հոծ մասսաների բուն խորքում: Դրուցազնեղութեանը իր երբեմնի համաժողովրդական բնույթը կարող էր վերագործնել միայն ընթերցողների ամենայն շրջանների համար մատչելի համահավաք տեքստի հրատարակումը: Այդպիսի նըպատակ էր դրված հրեւլանական օրերին նախապատրաստվելու ժամանակ:

Այդ խնդրի իրականացման համար կար պատշաճ գիտական հոդ: 1936 թ. հայտնի հայագետ Մանուկ Աբեղյանը (որը դեռևս 1886 թ. դրառել էր պատումներից մեկը և այն ժամանակվանից չէր դադարում հետաքրքրվել դրուցազնեղութեամբ) և պրոֆ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը «Սասնա ծռեր» վերնագրով (դրուցազնեղութեան անվանումներից մեկը) իրականացրին քանհինգ պատումների հրատարակումը մեկ հատորով: Այդ պատումներից մի քանիսը առաջին անգամ էին հրատարակվում: Տարբեր պատումների գիտական հրատարակման աշխատանքները շարունակվում էին, բայց 1937 թ. Կ. Ա. Մելիք-Օհանջանյանը անհիմն կերպով հանվեց, և ընդհանուր տեքստի կազմմանը ձեռնամուխ եղան Մանուկ Աբեղյանը, նրա աշակերտ Արամ Ղանալանյանը և Գևորգ Արովը: Համահավաք տեքստի նախապատրաստ-

ման աշխատանքներին անմիջական մասնակցութիւն ունեցավ նաև Հ. Ա. Օրբելին:

Խնդիրը դուրին չէր. պատումները տարբերվում էին իրենց կազմով, ընդամին դրանք մեզ հասել էին բազմաթիվ, երբեմն էլ միայն մասնազետներին հասկանալի, բարբառներով: Այնուամենայնիվ, այդ դժվարութիւնները հաջողվեց հաղթահարել: Քննադատորեն ընթերցվեցին հարյուր հազարավոր տողեր, մինչև կանգ առան համահավաք տեքստի ընդունելի տարբերակի վրա, որը կազմված էր շոքս ճյուղերից՝ «Սասնասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»: Այդ տեքստը օբյեկտիվորեն արտացոլում էր դրուցազնեղութեան հիմնական գաղափարները, նրա կազմը և իր մեջ ընդգրկում էր առավել կարևոր դեպքերը: Այդ պատճառով էլ, պատահական չէ, որ համահավաք տեքստը ընդունվեց որպես գիտական և կուլտուրական խոշոր նվաճում: Տեքստը հրատարակվեց հրեւլանական 1939 թվականին Հ. Ա. Օրբելու խմբագրութեամբ և առաջաբանով⁸⁶: Այդ նույն ժամանակ էլ լույս տեսավ նաև ռուսերեն թարգմանութիւնը (տողացի), որը կատարել էին Վ. Վ. Գեոքաճիւնը, Ա. Ս. Կոչետկովը, Կ. Ա. Կիպսկերովը և Ս. Վ. Շերվյոնսկին: Այդ թարգմանութիւնը լույս տեսավ երկու հրատարակութեամբ և նույնպես Հ. Ա. Օրբելու խմբագրութեամբ ու առաջաբանով: Առանձնապես արժեքավոր է ՄՍՀՄ ԳԱ հրատարակութիւնը⁸⁷: Հովսեփ Օրբելու ընդարձակ ներածական հոդվածը դրուցազնեղութեանը նվիրված մեծ ուսումնասիրութիւն է բովանդակում: Այդ հրատարակութեան արժեքավորմանը նպաստել է նաև Երվանդ Քոչարի հիանալի նկարագրումը: Հ. Ա. Օրբելու ներածական հոդվածը լրացումներով լույս տեսավ 1956 թ. առանձին հրատարակութեամբ, ռուսերեն և հայերեն լեզուներով⁸⁸:

Համահավաք տեքստի վրա կատարված աշխատանքների ընթացքում Հ. Ա. Օրբելին հանդես էր գալիս դրուցազնեղութե-

⁸⁶ «Սասունցի Դավիթ» Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1939:

⁸⁷ «Давид Сасунский. Армянский народный эпос», М.—Л., 1939:

⁸⁸ Н. А. Орбели, Армянский героический эпос, Ереван, 1956:

(նույնը հայերեն):

թյանը նվիրված հողվածներով (մամուլում) և ղեկուցումներով: Չնայած այն բանին, ենթադրում էր Հովսեփի Օրբելին, որ գյուցազներգության մեջ առաջին հերթին իր արտացոլումն է գտել արարական նվաճողների դեմ մղած հայ ժողովրդի հերոսական պայքարը, իսկ շատ դեպքեր կապված են 9-րդ դարի իրադարձությունների և իրավիճակի հետ, գյուցազներգության առանձին մոմենտներ մեղանից հեռանում են ոչ թե մեկ, այլ մի քանի հազարամյակներ: Գյուցազներգությունը շատ բարդ զարգացում է ապրել: «Գյուցազներգության հիմնական գծի զարգացումը բնության այն ուժերի՝ իսկական մարդու վերամարմնավորելու ընթացքն է, որոնք մարդկային մտածողության կազմավորման արշալույսին գաղանային կամ ոչ մարդկային ձևեր էին ընդունում: Հերոսների յուրաքանչյուր հաջորդ սերունդը է՛լ ավելի մոտ է երկրին, է՛լ ավելի մոտ է երկրային մարդու կերպարանքին»⁸⁹: «Գյուցազներգության հերոսները իրենց ծագումով, իրենց գերմարդկային ուժով, իրենց հատկություններով և բնության ու նրա ուժերի հետ իրենց գործերով, այն ուժերի, որոնք նախնադարյան մարդը իր վրա զգացել է առավել մեծ սրովյամբ, քան այն մարդը, որը սովորել էր իրեն ենթարկել այդ ուժերի գոնե մի մասը՝ խորապես մարդկային են: Դրանք կենդանի մարդիկ են, օգտված հերոսականությամբ ու բարձր հատկություններով, բայց որոնք իրենց մեջ կրում են մարդկային թուլություններն ու նրանց զգացմունքները: Եվ միայն նրանց սխրանքները չէ, որ իրենց վառ արտացոլումն են գտել նրանց երկրային կյանքի մասին եղած ասույթներում»⁹⁰: «Այդ գյուցազներգությունը ժողովրդական է ո՛չ միայն նրա համար, որ այն ապրում է ժողովրդական զանգվածների մեջ ու պատմվում նրանց կողմից, ո՛չ միայն նրա համար, որ նա մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը, ապրում է ժողովրդական բանավոր խոսքում, ո՛չ միայն նրա համար, որ պատումների լեզուն ժողովրդական լեզու է,

⁸⁹ «Давид Саеунский. Армянский народный эпос», М.—Л., 1939, стр. XXV.

⁹⁰ Նույն տեղը, էջ XXV:

իր կառուցվածքով ու բառապաշարով հեռու հայկական հին կամ նոր գրական խոսքից: Գյուցազներգությունը ամենից առաջ ժողովրդական է նրա համար, որ նրա հերոսների ամբողջ աշխարհայացքը անխղելիորեն կապված է ժողովրդի հետ, և ո՛չ թե նրանց հետ, ովքեր հազարամյակներ իրենց ձեռքում են պահել հայ ժողովրդի բախտը»⁹¹:

Նման հարցադրումը առավել ևս ժամանակին էր, քանի որ այդ նույն տարիներին Մանուկ Աբեղյանը ապացուցում էր գյուցազներգության ֆեոդալական ծագումը և իբր թե այն միայն հետագայում է ընդունվել ժողովրդի կողմից: Իսկ Հովսեփի Օրբելին գյուցազներգության ժողովրդային բնույթը վճռականորեն հակադրում էր այն գաղափարախոսությունը, որն իր արտացոլումն էր գտել գրավոր, մեծ մասամբ ֆեոդալական, գրականության մեջ:

Հովսեփի Օրբելու աշխատությունները, Մանուկ Աբեղյանի գործերի հետ միասին, պատկանում են հայկական գյուցազներգությանը նվիրված լավագույն աշխատությունների թվին: Նրա խոր ըմբռնումներին, անշուշտ, նպաստեցին այն ուսակությունները, որոնք Հովսեփի Օրբելին ձեռք էր բերել Մոսկուում գտնվելու ժամանակ. այնտեղ նա անմիջականորեն շփվեց պատմոպեների եզբայրակիցների հետ, որոնց դեմքերին, կարծես թե, դրոշմված էր ժողովրդի անցած բազմազարյան ուղին...

Գյուցազներգության վրա աշխատելու ընթացքում Հ. Ա. Օրբելին ղեկավարում էր հոբելյանական սեսիայի նախապատրաստման, իսկ հետո նաև այն երևանում անցկացնելու աշխատանքները: Հ. Ա. Օրբելու և էրմիտաժի Արևելքի բաժնի մի խումբ աշխատակիցների մասնակցությամբ Հայաստանի Պետական պատմական թանգարանում բացվեց ցուցահանդես: Թացի այդ, լինելով սովետական դրոշմների միության հոբելյանական կոմիտեի անդամ, Հովսեփի Օրբելին մասնակցեց գյուցազներգության հազարամյակին նվիրված Միության 7-րդ պլենումի անցկացմանը և այնտեղ հանդես եկավ իր ղեկուցումներից մեկով:

⁹¹ Նույն տեղը, էջ XXXIX:

Հորեկյանը տոնվեց մեծ շքեղությամբ, իսկ շուտով Մոսկվայում սկսվեց հայկական արվեստի ու գրականության տասնօրյակը, որը մեծ իրազարժություն էր երկրի կուլտուրական կյանքում:

Հետագա մեկուկես տարում Հ. Ա. Օրբելին կլանված էր նիդամու և Ալիշեր Նավոյի հորեկյանների նախապատրաստման աշխատանքներով: 1941 թ. մարտին նա ընտրվում է ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի իսկական անդամ և ակտիվորեն մասնակցում նրա աշխատանքներին: Էրմիտաժում, արժույթի գործերի հետ մեկտեղ, նա մեծ ուշադրություն և եռանդ է նվիրում ռուսական կուլտուրայի նոր բաժնի ստեղծմանը:

Հոկտեմբերյան հեղափոխությանը հաջորդած տարիների ընթացքում էրմիտաժը դարձավ համաշխարհային արվեստի ու կուլտուրայի թանգարան, իսկ ռուսական կուլտուրայի հուշարձանների ցուցադրման բացակայությունը չէր կարող շտապացնել այցելուների տարակուսանքը. Պետական ռուսական թանգարանի գոյության պատճառարանությունը չէր սրբաբացնում այն: Էրմիտաժի աշխատակիցները հանդեցին այն հետևությունը, որ անհրաժեշտ է համապատասխան բաժին ստեղծել, որը և իրականացվեց Հ. Ա. Օրբելու աշակցությամբ: 1941 թ. մայիսի 26-ին էրմիտաժում բացվեց ռուսական կուլտուրայի բաժինը, «որի խնդիրն էր՝ հավաքել, ուսումնասիրել և ցուցադրել Կիևյան Ռուսիայի կազմակերպումից մինչև կապիտալիզմի դարաշրջանի Ռուսաստանի պատմության ու նրա կուլտուրայի հուշարձանները»⁹²: Բայց, ռուսական բաժին ստեղծելու գաղափարը հայտնելով, Հ. Ա. Օրբելին, հավանաբար, ղեկավարվում էր նաև այլ նկատառումներով: Էրմիտաժը, նրա հավաքածուները, նրա պատմությունը՝ այդ բոլորն իր ամբողջությամբ իրենից ներկայացնում է ռուսական կուլտուրայի զարգացման վառ դրվագներից մեկը, այն ժողովրդի ազգային հպարտությունը, որը կարողացավ հավաքել ու միավորել արևմտանվորական

նկարիչների, անտիկ բանդակագործների, արևելյան ոսկերիչների, գորգագործների, կավագործների ստեղծագործությունները: Պատմականորեն էրմիտաժի միասնությունը կազմող շենքերը թանգարանի հավաքածուներից անբաժանելի են և պատկանում են ռուսական ճարտարապետության աչքի ընկնող գործերի թվին: Շատ շենքեր (օրինակ, 1812 թ. Ռազմական պատկերասրահը) իրենցից ներկայացնում են ռուս ժողովրդի պատմության հիանալի իրազարժությունների գեղարվեստական հուշարձաններ⁹³: Ռուսական բաժնի ցուցահանդեսները կոչված էին ցուցադրելու այն հարուստ համընդհանուր կուլտուրական ֆոնը, որի հիման վրա ստեղծվել էր էրմիտաժը:



Հ. Ա. Օրբելին դպրոցական խմբակի ղեկավար էրմիտաժում: 1940 թ.:

⁹² М. Крутиков, Отдел истории русской культуры.— СГЭ, вып. IV, 1947.

⁹³ Տե՛ս, օրինակ, Иосиф Орбели, Георгиевский зал Зимнего дворца, Л., 1948.

Այստեղ տեղին է նշել, որ Հ. Ա. Օրբելին, լինելով արեւմելագետ, սիրում էր և խորը ըմբռնում ուսուսկան կուլտուրան, հիանալի ծանոթ էր նրա գրականությանը: Նրա բանավոր ելույթները վարակում էին ո՛չ միայն կրակոտ խառնրվածքով, այլև ապշեցնում իրենց շարագրանքի նրբությամբ, շատ հարուստ բառապաշարով, խոսքի գեղեցկությամբ: Նա պակաս կատարելության չհասավ նաև գրավոր խոսքի մեջ: Լեզվի պատկերավորությամբ նա կարող էր մրցել այնպիսի ուժաբանների հետ, ինչպես Ե. Վ. Տարլեն էր կամ Ա. Կ. Զիվելեզովը: Նրա այդ հատկությունները մշտապես գրսևորվել են գրաբարից կատարած թարգմանություններում:

Հովսեփ Օրբելին խոր և ինքնամոռաց սիրում էր Լենինգրադը: 1949 թ., երբ Ա. Ս. Պուշկինի հարյուրհիսունամյակի հոբելյանի առթիվ էրմիտաժը նախապատրաստում էր բանաստեղծին նվիրված մի շարք հրատարակություններ, Հ. Ա. Օրբելին գրեց «Նևայի պողոտան 1834 թվականին» փոքրիկ գրքուկը, որի մեջ վարպետորեն տվեց միաժամանակ ստեղծված երեք հուշարձանների՝ Վ. Ս. Սագովինիկովի պանորամայի, Ն. Վ. Գոգոլի «Նևայի պողոտայի» և Ա. Պ. Բատուցկու «Սանկտ-Պետերբուրգյան պանորամայի», վերլուծությունը⁹⁴: Իր համար, թվում է, հեռու բնագավառում Հովսեփ Օրբելին հանդես բերեց պետերբուրգյան աքորայի հատկանշական զօժերի հիանալի խմացություն և շափի ու տակտի այն զգացողությունը, որն անհրաժեշտ է պուշկինյան ժամանակները նկարագրելու համար: 1949 թ. (ինչպես և 1937 թ.) Հ. Ա. Օրբելին պուշկինյան հոբելյանական հանձնաժողովի անդամ էր, և նրա «Նևայի պողոտան 1834 թ.» փոքրիկ գրքուկը ցույց է տալիս, որ նա հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էր ամենևին էլ ոչ ի պաշտոնե:

⁹⁴ «Невский проспект в 1834 г. К юбилейной пушкинской выставке в Эрмитаже», Л., 1949.—Այդ նույն ժամանակ Հ. Ա. Օրբելու խմբագրությամբ լույս տեսավ Վ. Գլինկայի «Пушкин и военная галерея Зимнего дворца» (Л., 1949) գիրքը:

էրմիտաժի էվակուացիան: Նիզամու և Նավոյի հոբելյանները Լենինգրադում: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Նորից Լենինգրադում: Էրմիտաժի վերականգնումը: Առականի թարգմանությունները: Զեկույց արեւելագիտության ասպարեզում բանասիրական աշխատանքների վիճակի ու խնդիրների մասին: Արեւելյան ֆակուլտետի դեկավարի պաշտոնում: ՍՍՀՄ ԳԱ արեւելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ:

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հ. Ա. Օրբելին երիտասարդ չէր, նա ապրում էր իր վեցերորդ տասնամյակը: Պատերազմի սարսափների մասին նա գրեբրից չէ, որ գիտեր: Դժվար չէ կոահել, թե իր տպավորվող բնավորությամբ նա ինչպես ընկալեց ֆաշիստական Գերմանիայի հարձակման լուրը: Նա բաշ գիտակցում էր այն հսկայական պատասխանատվությունը էրմիտաժի համար, որն ընկած էր իր ուսերին: Հասարակական պարտքի բարձր գիտակցությունն էլ պատերազմի հենց առաջին ժամերից որոշեց նրա գործունեությունը, երբ հարց առաջացավ էրմիտաժի անհասպաղ էվակուացման մասին: Հովսեփ Օրբելին միշտ էլ գիտեր, որ պատերազմի դեպքում էրմիտաժի արժեքների փրկության համար սերն ու նվիրվածությունը միայն, որքան էլ դրանք անկեղծ ու անձնազոհ լինեն, բավարար լինել չեն կարող: Եվ երբ որոշում ընդունվեց թանգարանային հուշարձանները երկրի խորքը էվակուացնելու մասին, պարզվեց, որ դրա պլանները մշակված են մինչև ամենափոքր մանրամասնությունները, կազմված են ցուցակները՝ ցուցանմուշների բաժանմամբ ըստ իրենց գիտական նշանակության և էվակուացման հերթականության, իսկ փաթեթավորման համար էրմիտաժի պահեստներում կային բոլոր անհրաժեշտ նյութերը¹:

Այդ պլանի համաձայն էլ ձեռնամուխ եղան էրմիտաժի գանձերի էվակուացմանը, և հունիսի 30-ին, այն է՝ պատերազմն սկսվելուց ութ օր հետո, առաջին էշելոնը, որը տա-

¹ А. Якубовский, Академик Иосиф Абгарович Орбели. (К 60-летию со дня рождения),—ВДИ, № 4 (22), 1947, стр. 124.

նում էր հինգ հարյուր հազար թանգարանային ցուցանմուշ, շարժվեց դեպի արևելք: Բոլոր այդ օրերին Հովսեփ Օրբելին օր ու գիշեր ղեկավարում էր փաթեթավորման աշխատանքները: Այդ աշխատանքին մասնակցում էին համաշխարհային անուն ունեցող գիտնականներ, որոնց փորձը և թանգարանային գործի յուրահատկության իմանալը անփոխարինելի էին նույնիսկ այդ ողբերգական պայմաններում: Փաթեթավորված արկղները վագոններն էին փոխադրում ռազմա-ինժեներական ուսումնարանի ուկնդիրները, սուզորդները ջոկատը և զինվորական այլ միավորումներ²: Հուլիսի կեսերին արևելք ուղարկվեց նաև երկրորդ էշելոնը: Սվերդլովսկում կազմավորվեց էրմիտաժի ֆիլիալ, ուր թանգարանի աշխատակիցները Վ. Ֆ. Լեինսոն-Լեսսինգի ղեկավարությամբ իրականացնում էին էրմիտաժի հավաքածուների արժեքավոր հուշարձանների պահպանումը:

Լենինգրադի շատ գիտնականների նման, Հովսեփ Օրբելին մնաց քաղաքում: Նրա ղեկավարությամբ կարգավորվեց չուղարկված ցուցանմուշների պահպանման գործը. բացի դրանցից, պահպանելու և էվակուացնելու համար էրմիտաժ էին բերվել Կեպլերի ու Լոմոնոսովի ձեռագրերը, Ա. Ս. Պուշկինի գրադարանը, Պուլկովոյի աստղադիտարանի աստղագետների նկարների հավաքածուն, Կրոնի պատմության թանգարանի ժողովածուների մի մասը, նյութեր Ճարտարապետների միությունից, իրեր արվարձանային թանգարաններից, մասնավոր հավաքածուներ և այլն: Այդ արժեքների մի մասը ուղարկվեց, մյուս մասը մնաց պաշարված Լենինգրադում³:

Չմեռային պալատի ընդարձակ նկուղներում շինեցին ուժեղացված պատարաններ, ուր գնդակոծությունների և ուժեղակո-

ծությունների ժամանակ պատասպարվում էր մինչև երկու հազար մարդ: Թանգարանի աշխատակիցները իրենց ընտանիքներով տեղավորվեցին այնտեղ: Շատ գիտնականների, որոնք պաշարված քաղաքում հաղիվ թե կարողանային տանել կյանքի նեղությունները, Հ. Ա. Օրբելին օգնեց էվակուացվել Լենինգրադից: Փորձության այդ դժվարին տարիներին Հովսեփ Օրբելին շատերին օգնության հասավ. դրա մասին են վկայում նրան հասցեագրված մի շարք շնորհակալական նամակներ:

Բոլոր նրանք, ովքեր կարողացան հաղթահարել բուկադան, միահամուռ հաստատում են, որ ամենածանրը եղել է 1941 թ. նոյեմբերի կեսերից մինչև 1942 թ. հունվարի վերջն ընկած ժամանակը⁴: Չմեռը ծանր էր, սառնամանիքները հասնում էին մինչև երեսուն աստիճանի: Էլեկտրաէներգիայի մատակարարումը խիստ սահմանափակված էր, կենտրոնական ջեռուցումը չէր աշխատում, ջրմուղը սառել էր, կոյուղին շարքից դուրս էր եկել: Գեկտեմբերի 10-ին տրամվայները դադարեցին երթևեկել:

Այդուհանդերձ քաղաքը շարունակում էր ապրել ու պայքարել: Ինչպես ցույց են տալիս Ա. Վ. Կուլցովի հավաքած նյութերը, չղաղարեց նաև գիտական հիմնարկների գործունեությունը:

Իսկապես մեծ այդ սխրագործությանը մասնակցեց նաև Լենինգրադում մնացած էրմիտաժի աշխատողների կուլեկտիվը: Աշնանը և ձմռանը էրմիտաժում նշվեցին երկու հոբելյաններ՝ ադրբեջանական պոետ Նիզամու ութհարյուրամյակը և ուզբեկական գրականության հիմնադիր Ալիշեր Նավոյի հինգհարյուրամյակը:

Հոկտեմբերի 17-ին, պատմում է Բ. Բ. Պիտրովսկին, էրմիտաժում կայացավ Նիզամուն նվիրված նիստ, որի մասնակիցներից շատերը և երկու ղեկուցող եկել էին ուղղակի ռազմաձևակառից: էրմիտաժի ուժեղացված պատարանները այն-

² В. Васильев, На трудовом посту в Ленинграде.—СГЭ, вып. V, 1948, стр. 6.—«Сообщения» այդ ամբողջ պրակը նվիրված է էրմիտաժին պատերազմի տարիներին:

³ [Б. Б. Пиотровский,] Академик Иосиф Абгарович Орбели. (Биографический очерк).—в кн.: «Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели», М.—Л., 1960, стр. 10.—Գիտությունների ակադեմիայի հավաքածուների էվակուացնելու համար Հ. Ա. Օրբելին 1944 թ. պարզատրվեց Լենինի շքանշանով:

⁴ А. В. Кольцов, Ученые Ленинграда в годы блокады (1941—1943 гг.) М.—Л., 1962, стр. 58.

պես էին նախապատրաստված, որ անհրաժեշտութեան դեպքում նիստը կարելի էր շարունակել այնտեղ:

Հանդիսավոր նիստը բաց արեց Հ. Ա. Օրբելին, որից հետո հանդես եկավ բանաստեղծ Ն. Ս. Տիխոնովը: Այնուհետև իրենց զեկուցումները կարդացին Ա. Ն. Բոլզիրևը («Նիզամին և նրա ժամանակը»), Գ. Վ. Պոլիցինը («Նիզամին և համաշխարհային գրականությունը») և Մ. Մ. Գյակոնովը («Նիզամին Արևելքի նկարչության մեջ»): Բանաստեղծ Վ.ս. Արժ-դեսովենսկին կարդաց Նիզամուց կատարած իր թարգմանությունները:

Գեկտեմբերի 10-ին կայացավ Ալիշեր Նավոյիին նվիրված նիստը: Հ. Ա. Օրբելու ներածական խոսքից հետո, «Նավոյին և նրա ժամանակը» զեկուցումով հանդես եկավ Ա. Ն. Բոլզիրևը, իսկ էրմիտաժի աշխատակից Ն. Ֆ. Լեբեզևը կարդաց Նավոյի քնարերգական բանաստեղծությունների իր թարգմանությունները, որոնք նա կատարել էր ուբապատարանների կառուցման և հրեջ պոստում հերթապահությունների միջև ընկած ժամերին: Օղային տազնապը մի քանի անգամ ընդհատեց նիստը: Գեկտեմբերի 12-ին, երկրորդ նիստում, Բ. Բ. Պիոտրովսկին կարդաց իր «Հինարևելյան առասպելների մոտիվը Ալիշեր Նավոյի ստեղծագործություններում» զեկուցումը, իսկ Ն. Ֆ. Լեբեզևը՝ հատվածներ «Յոթ մոլորակ» պոեմի թարգմանություններից: Նկարիչ Ն. Մոլբը, հատկապես այդ օրերի առթիվ, օգտագործելով Նավոյի պոեմների սյուժեները, Վարդանկարեց ճենապակյա մի զավաթ և տուփ, որոնք ցուցադրվեցին նիստերի զահլիճում: Եվ զարդանկարը և թրծվածքը կատարվել էին էրմիտաժում, ամենադժվարին պայմաններում⁵:

«Հաջորդ օրը, — հետագայում հիշում էր Հովսեփ Օրբելին, — մեզ մոտ եկավ իմ ուսուցիչը՝ ակադեմիկոս Ս. Ա. Ժեբելյովը, իմ ուսուցիչներից միակը, որն այն ժամանակ դեռ կենդանի էր և, շնայած իր ուժասպառությանն ու հյուծվա-

ծությունը, եկավ, որպեսզի շնորհակալություն հայտնի էրմիտաժին, ինչպես ասաց նա, գիտություն այդ տոնը կազմակերպելու համար: Նրա բառերում, նրա բոլոր մտքերում, որոնց նա այն ժամանակ հաղորդակից դարձրեց ինձ, ես մեկ անգամ ևս զգացի, թե որքան մեծ է մարդկային հոգու ուժը, այն մարդու հոգու, որն իր ամբողջ կյանքի ընթացքում անշեղորեն ու սրբություն կատարել է իր պարտքը՝ դիտնականի, ուսուցչի և քաղաքացու պարտքը:

Այն ժամանակ մենք նրա հետ խոսեցինք վերջին անգամ. քսան օր հետո նա վախճանվեց: Մենք շատ խոսեցինք նրա հանգուցյալ բարեկամի և իմ ուսուցչի, այլ պայմաններում, բայց նույնպես կյանքի վերջին օրերը իր բոլոր ուժերը ուսուցչի և համալսարանի պրոֆեսորի բարձր պարտքի կատարմանը նվիրած ակադեմիկոս Յա. Ի. Սմիռնովի մասին»⁶:

Հ. Ա. Օրբելին ամեն կերպ պահում էր իր աշխատակիցների առույգությունն ու աշխատունակությունը, նա տոկունորեն տանում էր բրկադային կյանքի դժվարությունները: Մնալով պաշարված քաղաքում, Հովսեփ Օրբելին տասնյակ անգամ հանդես եկավ Լենինգրադյան ռազմաճակատի դինվորների և իր համաքաղաքացիների առջև: Նրան լսում էին «Հեկտեմբերյան հեղափոխություն» գծանավի, «Ավրորա» հածանավի ծովայինները, տրալերների և կատերների անձնակազմերը: Իր «Բարեկամություն դիտնականի հետ» ակնարկում գրող Ն. Միխայլովսկին պատմում է 1941/42 թ. ծանր ձմռանը տեղի ունեցած հետևյալ դեպքի մասին:

«Ձմեռային պալատի դիմաց, սառույցի մեջ սառել էր «Պոլյարնայա զվեզդա» նավը, որը մի ժամանակ եղել էր թագավորական զբոսանավ: Մի անգամ զբոսանավ եկավ սուզանավերի բրիգադի հրամանատար, Սովետական Միության հերոս Ա. Վ. Տրիպուսկին: Ուղղվելով դեպի նավի վրա կահավորված վերանորոգման արհեստանոցը, բրիգադի հրամանատարը դիմեց այնտեղ աշխատող էլեկտրիկներին.

— Ձեզ հանձնարարություն կա:

5 Б. Б. Пиотровский, Юбилей Низами и Навои, — СГЭ, вып. V, 1948, стр. 50; [Б. Б. Пиотровский.] Академик Иосиф Абгарович Орбели, стр. 10—11.

6 И. Орбели, О чем думалось в дни и ночи блокады Ленинграда, стр. 29.

Կարմիր ծովայինները վեր կացան և ուշադրությունները լարեցին:

— Էրմիտաժը գիտե՞ք:

— Իհարկե, մեր դիմացն է:

— Ամառը մենք այնտեղ նկարներ և Ալեքսանդր նեակու տապանն ենք փաթեթել:

— Ընդոտ է,— ասաց Տրիպուսկին,— ուրեմն դուք պետք է ճանաչեք նաև Էրմիտաժի դիրեկտորին, ակադեմիկոս Օրբելուն:

— Ընանաչում ենք, գիտնական մարդ է,— հարգալից արձագանքեցին կարմիր ծովայինները:

Տրիպուսկին շարունակեց.

— Հիմա նա գիտական աշխատություն է գրում, իսկ նրա աշխատասենյակում դժոխային մթնոլորտ է: Քայլում է «ժուռ-ժիռ» լապտերիկով... Չեռքի ափը հարվել է... Մենք պատահաբար իմացանք այդ մասին և խոստացանք օգնել: Հարկավոր է հենց այսօր լինել նրա մոտ և նավից էլեկտրականություն անցկացնել ուղիղ նրա առանձնասենյակը:

— Դա մենք մի ակնթարթում կանենք, ընկեր բրիգադի հրամանատար,— ասաց էլեկտրիկների ավագը և հիշեց, թե պատերազմը սկսվելուց մի քանի օր հետո ինչպես էվակուացվեց Էրմիտաժը, դուրս ուղարկվեց մեկ միլիոնից ավելի ցուցամուշ: Նկարների, քանդակների, հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված տարբեր իրերի փաթեթավորմամբ զբաղվում էին հարյուրավոր մարդիկ: Եվ դրանց մեջ էին Ձրունդեի անվան ռազմա-ծովային ուսումնարանի կուրսանտները՝ ահա այս ավազի ղեկավարությունը:

Օրբելու հետ հանդիպումը մնացել էր ավազի հիշողության մեջ, և, գուցե, դրա համար նա այդպիսի ջերմություն էր ընդունեց Տրիպուսկու հանձնարարությունը: Այդ նույն օրը սուզորդ ծովայինները նևայի գետափով էլեկտրալար անցկացրին գիտնականի ցուրտ աշխատասենյակը: Վերագառնալով ավագը պատմեց.

— Մենք ղնացինք, իսկ այնտեղ այնպիսի մթնոլորտ է, որ աչքդ մատ խոթեիր շէր տեսնի: Էլեկտրալարը միացրինք սեղանի լուսամփոփին և լույս տվեցինք: Ակադեմիկոսը

ուրախացավ, նույնիսկ ծափ տվեց: Հետո նստեցինք, ծխեցինք: Նա գանգատվում է հիվանդ ոտքերից. նայեցինք սեղանի տակ, իսկ այնտեղ անգործության մատնված էլեկտրական վառարանն էր: Դե, մենք էլ, մի ակնթարթում էլեկտրականությունը միացրինք վառարանին և պարուրալարն սկսեց շիկանալ: Ակադեմիկոսը չգիտեր, թե ինչպես շնորհակալություն հայտնի: Հիշեց, որ էվակուացիայի ժամանակ ծովայիններն են փաթեթավորել վան-Դեյկի նկարները, իսկ մենք ասում ենք. «Դե, հենց մենք ենք աշխատել»: Նա ավելի ուրախացավ: «Դե,— ասում է,— նավատորմին ես պարտք մնացի, պատերազմից հետո կհատուցեմ...»:

Բալթիական ծովայինների մոտ նա յուրային մարդ էր համարվում: Նա նրանց բարեկամն էր⁷:

1942 թ. ապրիլին Հ. Ա. Օրբելին գործուղվեց Երևան. նա պետք է տեղում անցներ իր պարտականությունների կատարմանը որպես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի (ԱրմՓԱՆ) նախագահության նախագահ: Նրա առողջությունը շատ էր վատացել, Երևանում ստիպված եղավ աչքի ծանր վիրահատման ենթարկվել: Հազիվ առողջացած, Հ. Ա. Օրբելին ամբողջությամբ թաղվեց գործերի մեջ:

Հայկական ֆիլիալը կազմակերպվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության 1935 թ. մայիսի 25-ի որոշմամբ: Ֆիլիալի առջև դրվեց «հայ ժողովրդի մշակույթի ուսումնասիրման ու զարգացման, սոցիալիստական շինարարության հետագա զարգացման նպատակով Հայկական ՍՍՀ բնական հարստությունների և արտադրողական ուժերի ուսումնասիրության համար հանրապետության գիտական ուժերը միավորելու» խնդիրը⁸: Իր գոյության առաջին տարիներին ֆիլիալը շատ համեստ դեր էր խաղում, սակայն արդեն 1937—1938 թթ. դրությունն սկսեց փոխվել: Ինչպես արդեն ասվեց, 1938 թ. ֆիլիալի գլուխ կանգնեց Հ. Ա. Օր-

⁷ Н. Михайловский, На Балтике. Из дневника военного корреспондента, — в кн.: «Девятьсот дней», Л., 1956, стр. 117—118.

⁸ ՉՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1, 1943, գ. 4, թ. 29:

բելին: նա վճռականորեն ձգտում էր այն բանին, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը դառնա Հայաստանի իսկական գիտական կենտրոնը: Այդ ուղղութիւնով նրա գործունեությունը առավել արդյունավետ դարձավ Երևան գալուց հետո:

Ն. Ա. Օրբելու ղեկավարությամբ հաջողվեց լուծել կազմակերպչական մի շարք հարցեր, ընդլայնվեց ասպիրանտուրան, ընդ որում շատ երիտասարդ մասնագետներ իրենց ասպիրանտական պատրաստությունն ստանում էին Մոսկվայում և Լենինգրադում: Ֆիլիալի աշխատանքներին ներգրավվեցին Երևան էվակուացված գիտնականները:

Ելնելով ռազմական ժամանակի պահանջներին, ֆիլիալի ինստիտուտներն ու սեկտորները իրենց պլանների մեջ մտցրեցին երկրի պաշտպանության հետ կապված պրոբլեմներ: Հումանիտար ինստիտուտների հետազոտական գործունեության մեջ հստակորեն ընդգծվում էր հայրենասիրական թեման: Ն. Ա. Օրբելու կողմից գլխավորվող պատմության ինստիտուտում սկիզբ դրվեց «Հայաստանի գավակների սխրագործությունները» գիտահանրամատչելի շարքին: Ռուսերեն և հայերեն լեզուներով լույս տեսավ մոտ տասնվեց գրքույկ, այդ հրատարակությունները մեծ ժողովրդականություն էին վայելում ռազմաճակատում: Ռազմական իրադրության ժամանակ շատ աշխատանք էր պահանջվում, որպեսզի ապահովվեր այդ փոքր գրքույկների ժամանակին հրատարակումը: 1942 թ. Ն. Ա. Օրբելին կազմակերպեց մինչև այժմ էլ գոյություն ունեցող Հայրենական պատերազմի կարիներ, որի աշխատակիցները թարմ հետքերով ձեռնամուխ եղան զինվորական ստորաբաժանումների պարբերական հրատարակություններ, ճակատային նամակներ, ինքնակենսագրություններ, օրագրեր և այլ նյութեր հավաքելու գործին:

Ֆիլիալի գործունեության ընդլայնման հետ միասին ավելի ու ավելի էր հասունանում հանրապետական գիտությունների ակադեմիա ստեղծելու գաղափարը: 1943 թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի Ժողովրդական կոմիսարների սովետը հատուկ որոշում ընդունեց ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի հիման վրա Երևանում Հայկական ՍՍՀ գիտությունների ակա-

դեմիա կազմակերպելու մասին⁹: Նոյեմբերի 25-ին հաստատվեց ակադեմիկոսների առաջին կազմը՝ 23 մարդ. նոյեմբերի 29-ին կայացավ երիտասարդ ակադեմիայի իսկական անդամների առաջին ընդհանուր ժողովը: Այդ ժողովում Ն. Ա. Օրբելին ընտրվեց պրեզիդենտ:

Գիտությունների ակադեմիայի հիմնադրմամբ սկիզբ դրվեց Հայաստանի համար նոր մի շարք գիտությունների հետագա զարգացմանը¹⁰: Դրանց հետ միասին աշխատանքները մեծ չափով ընդլայնվեցին և այն բնագավառներում, որոնք վաղեմի ավանդություններ ունեին՝ պատմության, բանասիրության, լեզվաբանության: Զուր չէ, որ ակադեմիայի կանոնադրության մեջ (որի վերջնական խմբագրումը պատկանում է Ն. Ա. Օրբելուն) ասվում է, որ, գիտության բոլոր բնագավառներում իր գործունեությունը կենտրոնացնելով առաջատար պրոբլեմների մշակման վրա, ակադեմիան այլ խնդիրների թվում «հատուկ ուշադրություն է դարձնում հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի ուսումնասիրությանը, նպատակ ունենալով օգնել նրա հետագա զարգացմանը»¹¹: Համանման միտք է արտահայտել նաև ակադեմիկոս ընտրված բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: «Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կուլտուր-պատմական կարևորագույն խնդիրներից մեկն է, — գրում է նա, — բարձրացնել հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, խորացնել հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա [ժողովրդի] մեջ ղեպի մայրենի լեզուն, գրականությունը և հավատ՝ իր լուսավոր ապագայի նկատմամբ»¹²:

Ազգային գիտությունների ակադեմիայի ստեղծումը հասարակական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր: Այդ գիտակցությամբ համակված, Ն. Ա. Օրբելին ամբողջությամբ նվիրվում է նրա կազմակերպմանը: Նորից գրսե-

⁹ Газ. «Коммунист», 12/ХІ—1943, № 231 (2800).

¹⁰ Հանգամանորեն տե՛ս Վ. Ն. Համբարձումյան, Գիտությունը Հայաստանում 40 տարում, Երևան, 1960:


¹¹ «Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության գիտությունների ակադեմիայի կանոնադրություն», Երևան, 1943, էջ 1—2:

¹² Газ. «Коммунист», 28/ХІ—1943, № 242 (2811).

վորվեց նրա հիանալի ունակութունը՝ մոբիլիզացնել զործուն ուժերը, ստեղծել լիարժեք գիտական կոլեկտիվ: Երևանում նա մնաց մինչև 1944 թ. ամառը, բայց և այդ կարճ ժամանակամիջոցում կարողացավ կյանքի կոչել մի ամբողջ շարք նոր կամ վերակառուցված ինստիտուտներ:

Հայկական գիտութունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնը Հ. Ա. Օրբելին զբաղեցրեց մինչև 1947 թ. և այն թողեց՝ որոշելով իր ջանքերը կենտրոնացնել էրմիտաժի աշխատանքներում: 1947 թ. հունվարի 16-ին Հայկական ՍՍՀ գիտութունների ակադեմիայի ընդհանուր ժողովը բավարարեց նրա խնդրանքը՝ իրեն պրեզիդենտի պարտականություններից ազատելու մասին, միաժամանակ նշելով նրա անձնական մեծ ավանդը հանրապետության առաջատար գիտական կենտրոնի ստեղծման գործում¹³:

1944 թ. Հ. Ա. Օրբելին վերադարձավ Լենինգրադ: Էրմիտաժը սարսափելի մի տեսարան էր ներկայացնում: Պատերազմի ժամանակ նրա շենքերի վրա ընկել էր երեսուն արկ և երկու ավիառումբ. տասնյակ արկեր և ավիառումբեր պայթել էին շատ մոտիկ: Ջարդվել էր 20 հազար քառակուսի մետր լուսամուտների և ցերեկային լույսի լապտերների ապակի, բոլորովին ավերվել էին ջեռուցման և ջրմուղի սիստեմները: Տուժել էին մանրահատակները, պատերը, պատերի որմնանկարներն ու նկարազարդ առաստաղները: Թանգարանին հսկայական վնաս էր հասցվել¹⁴: Առաջին հայացքից պարզ էր, որ էրմիտաժին իր երբեմնի տեսքը վերադարձնելու համար անհրաժեշտ էին մի քանի տարվա շատ բարդ աշխատանքներ: Թանգարանի գլխավոր ճարտարապետ Ա. Վ. Սիվկովի հետ միասին Հովսեփ Օրբելին մշակեց էրմիտաժի վերականգնման ընդհանուր նախագիծը և սկսեց միջոցներ հայթայթել այդ աշխատանքների համար, որոնցում պետք է ներգրավվեին լավագույն մասնագետներ: Առաջժմ իրենք՝ աշխատակիցները, կարգի էին բերում թանգարանը,



Էրմիտաժի ցուցանմուշներ վերանայելիս (1945 թ.):

¹³ Հայկական ՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1, 1947, գ. 8, թ. 33—39.

¹⁴ См. А. В. Сивков, Здания Эрмитажа в годы Великой Отечественной войны.— СГЭ, вып. V, 1948, стр. 23.

մաքրում ցուցահանդեսային սրահները, փայլեցնում հատակները, լվանում լուսամուտները, վերականգնում Տաղավարային դահլիճի ջահերը, ուր նոյեմբերի 8-ին բացվեց բլուկադայի տարիներին կենդանի պահպանված արվեստի առարկաների մի փոքր ցուցահանդես: Մի քանի օրում այդ ցուցահանդեսն այցելեց մինչև երեսուն հազար մարդ: Էրմիտաժում միաժամանակ սկսեցին պատրաստվել 1941 թ. էվակուացված հուշարձանների ընդունմանը: Դրանք կենդանադահասան 1945 թ. հոկտեմբերի 10-ին, իսկ արդեն նոյեմբերի 7-ին այցելուների առջև բացվեցին Պետական էրմիտաժի վաթսուներ սրահներ: Թանգարանը, առանց որի չի կարելի պատկերացնել կենդանադահ, ապրեց նախկին բուռն կյանքով:

Այդ տարիներին Հ. Ա. Օրբելու գիտական ծառայությունները նորից միջազգային ճանաչում ստացան. 1944 թ. նա ընտրվում է Լոնդոնի հնագիտական ընկերության պատվավոր անդամ, իսկ 1945 թ.՝ Իրանի գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ:

1944—1945 թթ. Հովսեփ Օրբելին ակտիվորեն մասնակցում է կենդանադահյան արվարձանային պալատների հետազոտման և դրանց հասցված վնասի չափը սահմանող պետական արտակարգ հանձնաժողովի աշխատանքներին, ուր նա ներգրավվել էր ակադ. Ե. Վ. Տարլեի առաջարկությամբ: Քաջածանոթ լինելով կենդանադահին և նրա ծայրամասերին, Հ. Ա. Օրբելին հանձնաժողովի մյուս անդամների հետ շրջեց կենդանադահի արվարձանները, որոնք, թվում էր, հավետ կորցրել էին իրենց շքեղությունը: Այն տեսարանը, որը բացվեց հանձնաժողովի աչքերի առջև, ցնցեց նրան: Դրա համար էլ նրա ճառն առավել մեծ ուժով ու համոզիչ հնչեց այն ժամանակ, երբ, որպես վկա, նա սկսեց ցուցմունքներ տալ նյութերները դատավարությունում¹⁵: Ցասումնալի ու կրքոտ կերպով նա մեղադրում էր վայրենացած ֆաշիստական զավթիչներին, որոնք սառնասրտորեն զնդակոծում էին էրմիտա-

ժը, պղինձ ձուլում Պետերգոֆի ամենաշքեղ, առյուծին պատանոտող Սամսոնի արձանը, Պուշկինոյում ավերում ու թալանում Ռաստրեյլու հույակապ գործը՝ Եկատերինյան մեծ պալատը...:

Հետպատերազմյան տարիներին Հ. Ա. Օրբելու գործունեությունը առաջին հերթին կապված է էրմիտաժի վերականգնման հետ: Նրա ղեկավարությունից մեկը մյուսի հետևելից վերականգնվում էին ցուցահանդեսային սրահները, պատրաստվում նոր ցուցադրումներ, ակադեմիկոս Ս. Ի. Վավիլովի մեծ օգնությամբ մի շարք սրահներում անցկացվում ցերեկային լույսի լապտերներ: Ինչպես և առաջ, Հ. Ա. Օրբելին հանդես էր գալիս գիտական զեկուցումներով, սակայն սեփական հետազոտական աշխատանքին ավելի քիչ ժամանակ էր մնում, քան երբեք՝ էրմիտաժի ընթացիկ գործերը ամբողջովին կլանում էին նրան: Դրա համար էլ ավելի սուր էր նրա զգացած ցավն ու միջտը, երբ 1951 թ. ամռանը, անհատի պաշտամունքի հետևանքով ստեղծված պայմաններում, նա անսպասելիորեն հեռացվեց Թանգարանում աշխատելուց, այն թանգարանից, որի պատերի ներսում նա անց էր կացրել երեսուներեկ տարի:

Վարչական ծանր պարտականություններից ազատվելը հնարավորություն տվեց Հ. Օրբելուն ավելի շատ զբաղվելու սեփական աշխատություններով: Նա վերսկսում է հայքաբանական ուսումնասիրությունները, ավարտում է Մոքսի քրդական բարբառի բառարանը, նորից է անդրադառնում Ախթամարի տաճարին և շատ ժամանակ նվիրում գրաբարից կատարվող թարգմանություններին: Ռուսական հալածակության մեծագույն ծառայություններից մեկը հին հայկական գրականության հուշարձանների գերազանց թարգմանություններն են, որոնց սկիզբը դրել է կադարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ էմինը: Այդ շարքում առաջին տեղերից մեկը անժխտելիորեն պատկանում է Օրբելու թարգմանություններին: Նրանք ճշգրիտ են և աչքի են ընկնում անպաճույճ գեղեցկությամբ: Հովսեփ Օրբելու արխիվում պահպանվել են հայկական միջնադարյան պատմիչների՝ Եղիշեի, Թովմա Արծրունու, Ղազար Փարպեցու, Հովհան Մամիկոնյանի, Շա-

¹⁵ «Нюрнбергский процесс. Сборник материалов», т. I. М., 1955, стр. 758—761.

պուճ Բագրատունու թարգմանությունները: Հիսնական թվականների սկզբին Հովսեփ Օրբելին ավարտեց հայկական առականների թարգմանությունը (կրճատ տարբերակով), որը լույս տեսավ 1956 թ.¹⁶:

Առականների քննադատական ուսումնասիրմանը սկիզբ է դնում Ն. Յա. Մառի «Վարդանի առականների ժողովածուները» մագիստրոսական դիսերտացիան: Այդ եռահատոր աշխատության մեջ, որն իրավամբ համարվում է նրա լավագույն աշխատություններից մեկը, Ն. Յա. Մառը հրապարակեց առականների բազմաթիվ ձեռագիր տեքստեր, որով և դրանք մտցրեց գիտական լայն շրջանառության մեջ:

Զբաղվելով 12—13-րդ դդ. Անդրկովկասի մշակույթով, Հ. Ա. Օրբելին, բնականաբար, չէր կարող անցնել հայկական գրականության այնպիսի տեսակների կողքով, ինչպիսիք առականներն են, որոնք առաջին հերթին արտահայտում էին ժողովրդի ստորին խավերի գաղափարախոսությունը: Արդեն «Ռուսթավելու դարաշրջանի հուշարձանները» ժողովածուի մեջ նա մտցրել էր «Ռուսթավելու հերոսները և նրանց հպատակները» հոդվածը, որի մեջ ցույց էր տվել, թե ինչպես է 12—13-րդ դդ. կովկասի աշխատավորական ստորին խավերի բարոյականությունը արտացոլվել ժողովրդական այդ յուրահատուկ ժանրի՝ առականների մեջ: Բավական է բերել մի քանի առականների եզրափակիչ տողերը, որպեսզի կասկած չմնա դրանց սոցիալական ուղղվածության մեջ:

«Այս առակը դատապարտում է բռնացող իշխաններին, քանի որ նրանք պատժում են զոդերին, իսկ իրենք նույնը կատարում բռնությամբ»¹⁷:

«Այս առակը ցույց է տալիս, որ աշխարհում կան մարդիկ, որոնք մեղոնների նման միշտ աշխատում են ու շարշարվում, իսկ թագավորներն ու իշխանները, և՛ քահանաները, և՛ ծխականները ուտում են նրանց աշխատանքը, ապա գնում կկեղեցի և փառաբանում ու մտաբերում աստծուն»¹⁸:

«Այս առակը ցույց է տալիս, որ աղքատները տանջվում են իրենց աղքատությունից և աստծուց զույր ու ունեցվածք են խնդրում, իսկ թագավորներն ու բռնակալները նրանցից խլում ու թալանում են այն, ինչ նրանք ունեն»¹⁹:

«Հայաստանի միջնադարյան առականներ»-ում Հ. Ա. Օրբելին ցույց տվեց, որ առականների բովանդակությունը միայն սոցիալական անհավասարության գաղափարով չի սպառվում. հարցերի այն շրջանը, որոնք իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել դրանց մեջ, ավելի լայն են: Առականներում եղած տարբեր մտախմբերի բնութագրմանն էլ նվիրված է ծավալուն ներածականը: Գրքի հիմնական բովանդակությունը կազմում են Մխիթար Գոշի, Վարդան Այգեկցու և Օլոմպիանի հարյուր քառասուներկու առականների թարգմանությունները. նախկինում հրապարակված թարգմանությունները մասամբ վերախմբագրված էին:

Այդ տարիների Հովսեփ Օրբելին մեծ ուշադրություն էր նվիրում ասպիրանտների հետ տարվող պարապմունքներին: Հիսունական թվականների սկզբներին նրա ղեկավարությամբ ասպիրանտական պատրաստություն անցան Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտներ Ռ. Մ. Բարթիկյանը, Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, Մ. Կ. Զուլայանը, Գ. Ա. Տիրացյանը: Հատկանշականն այն է, որ նրանք բոլորն էլ, լինելով հայագետներ, միաժամանակ մասնագիտանում էին մերձավոր բնագավառներից մեկում՝ բյուզանդագիտության, արաբագիտության, թուրքագիտության մեջ: Հ. Ա. Օրբելին իրավացիորեն գտնում էր, որ միայն հայկական աղբյուրների հիման վրա Հայաստանի պատմության ուսումնասիրությունը սպառել է իրեն:

1953 թ. Հ. Ա. Օրբելին աշխատանքի ներգրավվեց լեզվագիտության ինստիտուտում և հրատարակման պատրաստեց իր լավագույն աշխատանքներից մեկը՝ «Մոքսի հայկական տեքստերը» (աշխատանքը շարվեց, էջերը կապվեցին, բայց լույս չտեսավ):

Հիսունական թվականներին Հ. Ա. Օրբելին խմբագրում է

¹⁶ Иосиф Орбели, Басни средневековой Армении, М.—Л., 1956.

¹⁷ «Памятники эпохи Руставели», Л., 1938, стр. 152.

¹⁸ Նույն տեղը, էջ 155:

¹⁹ Նույն տեղը, էջ 156:

մի շարք խոշոր աշխատություններ, գրախոսում մենագրություններ, հոդվածներ գրում լայն շրջանակի հարցերի շուրջը, խորհուրդներ տալիս երիտասարդ գիտնականներին: Որպես գլխավոր կոնսուլտանտ, նա ուշադիր հետևում է Գառնիի ամրոցի (Երևանից 27 կիլոմետր հեռու) պեղումներին: Հովսեփ Օրբելին հաճախ հանդես է գալիս գիտական և գիտա-հանրամատչելի զեկուցումներով, ակտիվորեն մասնակցում կենինգրագի հասարակական և կուլտուրական կյանքին: Տարիներն ի վիճակի չէին խլացնելու նրա անսպառ էներգիան: 1953 թ. նա կատարում է ՍՍՀՄ ԳԱ նախագահության մի շարք պատասխանատու հանձնարարություններ, 1953 թ. վերջին, մասնավորապես, գլխավորում է ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գործունեությունն ստուգող հանձնաժողովը:

Քառասունական թվականների վերջերին և հիսունական թվականների սկզբներին սովետական արևելագիտությունը լուրջ զժվարություններ ապրեց: Արևելագիտության մի շարք բնագավառներում կրճատվեց հետազոտական գործունեությունը, նվազեց բանասիրական աշխատությունների թիվը: Կենինգրագի համալսարանի արևելյան ֆակուլտետը զրկվեց մի շարք խոշորագույն պրոֆեսորներից: Մահացան ակադեմիկոսներ Ի. Յու. Կրաչկովսկին և Ա. Պ. Բարաննիկովը: Ակադեմիկոս Վ. Մ. Ալեքսեևը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ա. Ֆրեյմանը ստիպված էին թողնել դասավանդումը: Համալսարանը դադարեցրեց ասորագետների, եգիպտագետների, եբրայագետների պատրաստումը²⁰:

1950 թ. հուլիսին ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտը տեղափոխվեց Մոսկվա, կենինգրագում մնաց արևելյան ձեռագրերի բաժինը՝ աշխատակիցների խիստ սահմանափակ հաստիքով:

Անհանգստացած ստեղծված վիճակով, Հ. Ա. Օրբելին



Հովսեփ Օրբելին կամփռ բլուտում:

1954 թ. հոկտեմբերին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիա ներկայացրեց իր «Արևելագիտության բնագավառում բանասիրական աշխատանքի վիճակի և խնդիրների վերաբերյալ նկատառումները»: Նրանցում ասված էր.

«Հարցը, որն իր վրա է հրավիրում և՛ պատմական գիտությունների բաժանմունքի, և՛ լեզվի ու գրականության բաժանմունքի (ՍՍՀՄ գիտությունների ասոցիմիայի.—Կ. Քու.) ուշադրությունը, այն է՝ սովետական արևելագիտությունը նորից անհրաժեշտ բարձրության վրա դնելու, արեւելագիտական հետազոտությունների ուժեղացման և խորացման ուղիների, սովետական արևելագիտությունը անհրաժեշտ, երիտասարդ, լավ պատրաստված կադրերով ապահովելու հարցը, մեր հասարակական գիտության սիստեմում և՛ արտակարգ հասունացել է, և՛ դարձել առավել անհետաձգելի:

Այժմ տեղին է վերհիշել հանրահայտ այն փաստը, որ 19-րդ դ. երրորդ քառորդի և 20-րդ դ. մոտավորապես շորս

²⁰ Հմմ. Ա. Ն. Կոնոնովի մոտ՝ 1944—1945 ուս. տարվա պայծառ պատկերի հետ (А. Н. Кононов, Восточный факультет Ленинградского университета.—ВЗ ЛГУ, серия востоковедческих наук, вып. 13, 1960, стр. 26).

տասնամյակների ընթացքում ուսական և սովետական արե-վելագիտությունը համաշխարհային գիտության մեջ իրավ-մամբ առաջատար դիրք էր գրավել, իր զարգացմանը զուգ-ընթաց ավելի էր ամրապնդում այդ տեղը և արժանի հարգանք ու հեղինակություն վայելում ամբողջ աշխարհում:

Այդ տեղը որոշվում և այդպիսի դիրքը ապահովվում էր ինչպես ուսական գիտության առաջավոր (բառիս բուն ի-մաստով) ու մարդասիրական ընդհանուր նպատակասլացու-թյամբ, այնպես էլ ուսական արևելագիտության լավագույն ներկայացուցիչների ունեցած սերտ կապով՝ ուսական լու-սավորության շատ գործիչների հետ, որոնց դադափարները իրենց հտեկից էին տանում 19-րդ դարի երկրորդ կեսի ու-սական մտավորականությանը: Բայց ուսական և սովե-տական արևելագիտության առաջատար դիրքը որոշվում էր նաև այն շափազանց ամուր կապերով, որոնք հաստատվել էին առավել աչքի ընկնող ուսական արևելագետների և Ռու-սաստանի կազմի մեջ մտնող Արևելքի ժողովուրդների առա-ջավոր ուժերի միջև, որոշվում էր ժողովուրդների հին մշա-կույթի, հատկապես միջնադարյան շրջանի, ուսումնասի-րության նկատմամբ ուսական արևելագետների ցուցաբերած բազմակողմանի մոտեցմամբ, որոշվում էր այդ մշակույթ-ների բոլոր կողմերի ու այդ մշակույթների կողմից ստեղծ-ված բոլոր տեսակի հուշարձանների նկատմամբ զրսևորված խոր ուսումնասիրությամբ՝ լինեն դրանք արվեստի ստեղծա-գործություններ, նյութական կուլտուրայի հուշարձաններ կամ դպրության հուշարձաններ, լինեն դրանք ժայռերի և պա-տերի վրա գրված արձանագրություններ, թե, հատկապես, զրական հուշարձաններ:

Աշխարհում ոչ մի այլ ակադեմիա այնքան ուշադրություն չի դարձրել և միջոցներ չի տրամադրել արևելագիտության գործի զարգացմանը, որքան Ս.-Պետերբուրգի գիտություն-ների ակադեմիան, իսկ հետո՝ ՍՍՀՄ գիտությունների ակա-դեմիան, իսկ 19-րդ դ. ընթացքում Հնդկաստանի, նրա լե-զուների ու մշակույթի, Չինաստանի, չինական մշակույթի ու լեզվի, թուրքագիտության և, հատկապես, իրանագիտական հետազոտությունների, մոնղոլագիտության ուսումնասիրման

բնագավառում մեր ակադեմիան լիիրավ ու հեղինակավոր կերպով փաստորեն իր վրա է վերցրել արևելյան լեզուների ամենալուրջ ու խոր ուսումնասիրության հովանավորողի ու կենտրոնի դերը և արևմտաեվրոպական գիտնականների (ամերիկական այն ժամանակ չկային) համար դարձել զխա-վոր հրատարակիչը այնպիսի մոնումենտալ աշխատություն-ների, ինչպես Պետերբուրգյան հանրահայտ սանսկրիտի բա-ռարանը:

...Աշխարհի ակադեմիաների, համալսարանների և գիտա-կան ընկերությունների շարքում մեր արևելագիտական կենտրոնների առաջատար դիրքը գրավելու ղլխավոր պատ-ճառներից մեկը Արևելքի լեզուների հիանալի իմացությունն է, և օտարերկրյա ոչ մի գիտական հիմնարկություն չկարո-ղացավ, ուսաների նման արևելյան երկրների գիտական գոր-ծիչների հետ ազատ, նրանց մայրենի լեզվով շփման մեջ մտնել, և միջազգային ո՛չ մի կոնգրեսում, ո՛չ մի երկիր, բացի Ռուսաստանից, ապա նաև Սովետական Միությունից, չկարողացավ այնպես ազատ ներկայացնել այնպիսի գիտնա-կանների զեկուցումներ, որոնց երակներում չկար արևելյան արյան ոչ մի կաթիլ և որ այդ զեկուցումները գրված լինեին այն ժողովրդի լեզվով, որի կյանքի ու մշակույթի ուսումնա-սիրությունն էր նվիրված զեկուցումը...

...Ռուսական արևելագիտության մյուս առանձնահատկու-թյունն էր ուսական և սովետական գիտնականների օր-ըստօրե ամող հետաքրքրությունը յուրաքանչյուր տվյալ ժա-մանակաշրջանի համար ժամանակակից Արևելքի նկատմամբ, դեպի արևելյան լեզուների կենդանի կրողները, դեպի արե-վելյան մշակույթների կենդանի ժառանգորդները, և ուսա-կան հնդկագիտության ուղին՝ սանսկրիտագետ Բետլինգից մինչև հնդկագետ Բարաննիկովը չի եղել պատահական թոխը...

...Հենց դեպի ժամանակակից Արևելքի, Արևելքի ժողո-վուրդների ժամանակակից լեզվի, ժամանակակից գրականու-թյան, ժամանակակից մշակույթի ուսումնասիրությունը եղած առողջ ձգտումների պատճառով... հարկ չկար չորս տա-րի առաջ իրականացնելու սովետական արևելագիտության

այնպիսի խոշորագույն կենտրոնի սրբնթաց վերակառուցումը, ինչպիսին ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտն էր, երբ, ըստ իս, ճիշտ չհասկանալով ու մեկնաբանելով նոր ու ժամանակակից Արևելքով զբաղվելու գործն ուժեղացնելու անհրաժեշտության մասին ղեկավար օրգանների ճիշտ և ժամանակին տված ցուցումները, պլաններից հանվեց Հին Արևելքով զբաղվելը, երբ այն գիտական ուժերը, որոնք արտակարգ օգտակար էին ու կարող էին օգտագործվել հետագա աշխատանքներում, հանկարծ զուրս մնացին դիտությունների ակադեմիայի ինստիտուտի պատերից:

...Անհրաժեշտ է նորից մեր երկրին արժանի բարձրության վրա դնել գիտական արևելագիտությունը, բայց այն արևելագիտությունը, որը պայքարի է դուրս գալիս հանուն Արևելքի ժողովուրդների իրական պատմության և հանուն նրանց երջանիկ ապագայի, կատարելապես գինված և՛ մեթոդոլոգիայով, և՛ այդ մեթոդոլոգիայի շնորհիվ կատարելապես զինված գիտելիքներով, և՛ նյութական հուշարձանների, և՛ հարուստ գրականության, և՛ լեզուների գիտելիքներով ոչ միայն որպես դպրություն հուշարձանները ճանաչելու միջոցներ, այլև որպես ուսումնասիրության առարկաներ, որպես մի հիանալի հայելի, որի մեջ արտացոլված են տվյալ ժողովրդի և՛ պատմությունը, և՛ մշակույթը...»²¹:

Այնուհետև Հովսեփ Օրբելին թվարկում է մի շարք կոնկրետ միջոցառումներ, որոնք արևելագիտությանը կվերագրվեն երբեմնի փառքը, պահանջում է արևելագիտության բնագավառում բանասիրական հետազոտությունների շուտափույթ աշխուժացում, որը «օգուտ է և՛ իրենց՝ բանասերներին, և՛ սովետական պատմաբաններին, և՛ սովետական տնտեսագետներին, և՛ ընդհանրապես սովետական հետազոտողներին, որոնք աշխատում են հասարակական գիտությունների ցանկացած դրնագավառում»²²:

Ակադեմիական շրջաններում այդ զեկույցը մեծ հավանություն արժանացավ: Նա, անկասկած, դրական դեր խաղաց գիտական արևելագիտության այն զարգացման մեջ, որը նկատվում է վերջին տարիներին:

Այդ զեկույցը հանձնելուց շատ շանցած ավարտվում է նաև Հ. Ա. Օրբելու կարճատև դադարը վարչական պարտականություններից՝ 1955—1956 թթ. նա զլխավորում է լենինգրադյան արևելագիտությունը: 1955 թ. գարնանը Հովսեփ Օրբելին մի քանի դասախոսություններ կարդաց Լենինգրադի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում: Ունկընդիրների վրա խոր տպավորություն թողեց Հովսեփ Օրբելու հուշերը ուսական հին արևելագետների՝ իր ուսուցիչների մասին (տե՛ս Հավելվածը):

1955 թ. նոյեմբերին Հ. Ա. Օրբելին նշանակվեց արևելյան ֆակուլտետի ղեկան և զլխավորեց Մերձավոր Արևելքի երկրների պատմության ամբիոնը:

Նախքան նորից Արևելյան դառնալը, ֆակուլտետը մի շարք վերակառուցումներ ապրեց: 1919 թ. աշնանը Առաջին Պետրոգրադյան համալսարանին կից ստեղծվեց հասարակական գիտությունների ֆակուլտետ (ՓՕՈ): Նրա մեջ մտան համալսարանի արևելյան, պատմության և իրավաբանական ֆակուլտետները, հնագիտության և պատմա-բանասիրական ինստիտուտները և Բեստուժևյան կանանց բարձրագույն դասընթացների համապատասխան ֆակուլտետները:

Այդ, ըստ Ա. Ն. Կոնոնովի արտահայտության, «վիթխարի հումանիտար կոմբինատը» շարդարացրեց իր վրա դրված հույսերը: Մասնավորապես, արևելագիտությունը ՓՕՈ-ում սկսում է մարել. արևելագետների պատրաստման կենտրոնը փոխադրվում է Պետրոգրադի արևելյան կենդանի լեզուների ինստիտուտ (հիմնադրված 1920 թ.): ՓՕՈ-ից դուրս եկան մի շարք բաժանմունքներ, իսկ մնացած մասը 1925 թ. վերակազմվեց լեզվագիտության և նյութական կուլտուրայի պատմության ֆակուլտետի՝ ԿՄՓԱԿ-ի: ԿՄՓԱԿ-ի բաժանմունքների թվում էր նաև արևելյանը: 1925 թ. ԿՄՓԱԿ-ը սկսեց կոչվել պատմա-լեզվաբանական ֆակուլտետ (ՓԻՄ), իսկ 1930 թ. դարձավ Լենինգրադի պատմա-լեզվաբանական

21 Н. А. Орбели, Соображения по вопросу о состоянии и задачах филологической работы в области востоковедения (Հ. Ա. Օրբելու արխիվ):

22 Նույն տեղը:

ինքնուրույն ինստիտուտ (ЛИЛИ), իսկ այնուհետև՝ Լենին-գրադի պատմա-փիլիսոփայա-լեզվաբանական ինստիտուտ (ЛИФЛИ). այդ ժամանակ Հ. Ա. Օրբելին արդեն զուրա էր եկել պրոֆեսորական կազմից: 1937 թ. ЛИФЛИ-ն, որտեղ մնացել էին միայն գրականության և լեզվաբանության ֆակուլտետները, բանասիրական ֆակուլտետի իրավունքով (արևելյան բաժանմունքով) մտավ Լենինգրադի համալսարանի կազմի մեջ: 1944/45 ուսումնական տարում Լենինգրադի համալսարանում (հավասարապես նաև Միջինասիական, Բաքվի և Քրիլիսիի համալսարաններում) նորից ստեղծվում է արևելյան ֆակուլտետ²³:

Հ. Ա. Օրբելին որպես արևելյան ֆակուլտետի ղեկան աշխատեց մինչև 1960 թ. մայիսը, երբ որոշեց իր բոլոր ուժերը կենտրոնացնել Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ղեկավարման գործում: Նրա այդ շրջանի գործունեության արդյունքները երևան եկան առաջին իսկ տարիներին: Ֆակուլտետում ընդլայնվեց ուսուցվող առարկաների շրջանակը, աճեց մասնագիտացումների թիվը, նրանց մեջ ի հայտ եկան նորերը՝ կապված Աֆրիկայի և Հարավ-Արևելյան Ասիայի լեզուների ու պատմության հետ: Պատմական և բանասիրական առարկաների դժով մշակվեցին ուսումնական նոր ծրագրեր, աշխուժացավ ուսումնամեթոդական աշխատանքը: Հ. Ա. Օրբելու ջանքերով ստեղծվեց արևելյան լեզուների հնչյունաբանության կաբինետ, որը մեծ դեր խաղաց ֆակուլտետի և ուսումնական, և գիտական աշխատանքում:

Այդ նույն ժամանակ զգալիորեն աճեց և ուժեղացավ ֆակուլտետի պրոֆեսորական կազմը, նրա մեջ մտան արևելյան լեզուների մի քանի կենդանի կրողներ: Դասախոսական աշխատանքում սկսեցին ներգրավվել արևելագետները՝ Լենինգրադի գիտահետազոտական հիմնարկների և թանգարանների աշխատակիցներ, սկսեց վերականգնվել ֆակուլտետի ստեղծագործական համագործակցությունը Արևելագիտու-

²³ А. Н. Кононов, Восточный факультет Ленинградского университета, стр. 24—26.

թյան ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի և էրմիտաժի հետ:

Աշխուժացավ նաև ամբիոնների գիտական աշխատանքը: Հ. Ա. Օրբելու ակտիվ մասնակցությամբ նախապատրաստվեց հատուկ որոշում՝ արևելյան լեզուների դասատուների մասնակավարժական ծանրաբեռնվածության կրճատման մասին, այն հաշվով, որպեսզի ուժեղացվի գիտահետազոտական աշխատանքը: Հովսեփ Օրբելին շատ աշխատակիցների օգնեց ընտրելու գիտական աշխատանքի թեմաներ և հետագայում քիչ շօժանդակեց նրանց աշխատությունների հրատարակմանը: Կարճ ժամանակում Լենինգրադի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետը վերադարձրեց իրեն երկրի արևելագիտության խոշորագույն կենտրոններից մեկի փառքը²⁴:

Իր գործունեությունը կենտրոնացնելով արևելյան ֆակուլտետում, Հ. Ա. Օրբելին միշտ հիշում էր, որ արևելագիտության հոգսերը պահանջում են Լենինգրադում վերականգնել բուն հետազոտական կենտրոնը: Հ. Ա. Օրբելին Վ. Վ. Բարթոլդի, Ի. Յա. Կրաչկովսկու, Ն. Յու. Մառի, Ս. Ֆ. Օլգենբուրգի, Վ. Վ. Ստրովիի հետ միասին հայրենական արևելագիտության առաջավոր տրագիցիաների հավատարիմ պահպանողն էր: Նա ձգտում էր հաջորդականություն պահանջել ռուսական դասական արևելագիտության և սովետական արևելագիտության միջև, ձգտում էր մեկ միացյալ հետազոտական կենտրոնում միավորել արևելագետների ավագ, միջին և կրտսեր սերունդների գործունեությունը: Այդպիսի կենտրոն պետք է դառնար Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքը, որի ստեղծման համար Հ. Ա. Օրբելին պայքարում էր 1953—54 թթ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության 1956 թ. հոկտեմբերի 26-ի

²⁴ Արևելյան ֆակուլտետում Հ. Ա. Օրբելու գործունեության մասին տեղեկությունների մի մասը ձեռք էր բերվել նրա մերձավոր աշխատակիցներ Ա. Պ. Վերիլովից և Ա. Դ. Ժելոյակովից:

որոշմամբ հիմնադրվեց բաժանմունքը, որի զլուխ կանգնեց
Հ. Ա. Օրբելին²⁵;

Բաժանմունքում Հովսեփ Օրբելին իր գործունեությունն
սկսեց կադրեր հավաքելով, զլխավորապես արևելյան ֆա-
կուլտետն ավարտած երիտասարդներին: Երիտասարդ ուժե-
րի հոսքը ապահովեց գիտություն ինտենսիվ զարգացման
կարևորագույն պայմաններից մեկը, այն, ինչին ձգտում էր
Հ. Ա. Օրբելին՝ հաջորդականությունը:

Բաժանմունքի գոյության հենց առաջին օրերից նրա հիմ-
նական գիտական բջիջները դարձան կաբինետները, որոնք
միավորում էին և՛ լեզվաբաններին, և՛ պատմաբաններին,
և՛ գրականագետներին. դրանով ապահովվում էր Արևելքի
այս կամ այն երկրի, այս կամ այն ժողովրդի բազմակող-
մանի ուսումնասիրությունը: Այս կառուցվածքը սկսել էր
ուրվագծվել դեռևս Ասիական թանգարանում և ժառանգվել
էր Արևելագիտության հին ինստիտուտից: Հ. Ա. Օրբելին շատ
մեծ ուշադրություն էր դարձնում կաբինետների ամրապնդո-
մանը: Լենինգրադի բաժանմունքի կազմում, բացի ձեռա-
գրային բաժնից, մտնում էին Հեռավորարևելյանը, Հնդկա-
կանը, Իրանականը, Թուրք-մոնղոլականը, Ի. Յա. Կրաչ-
կովսկու անվան Արաբական կաբինետը, Մերձավոր Արևելքի
կաբինետը, ասորագիտության և հարևան գիտությունների
խումբը (որը շատով վերակազմվեց Հին Արևելքի սեկտորի՝
հինարևելյան բանասիրության խմբով): Հ. Ա. Օրբելու ջան-
քերով ստեղծվեց նաև բրդական կաբինետը, իսկ հետագա-
յում, 1958 թ. վերջերին, վերականգնվեց Կովկասյանը, որը
Հայրենական պատերազմի սկզբից դադարեցրել էր իր գոր-
ծունեությունը²⁶: Երկու կաբինետներում աշխատանքները
զլխավորում էր ինքը՝ Հովսեփ Օրբելին:

Լենինգրադի բաժանմունքում կաբինետների հետ մեկտեղ

ստեղծվեցին պատմական, գրականագիտական ու լեզվաբա-
նական սեկցիաներ և ձեռագրերի նկարագրության մեթոդա-
կան բյուրո, գրականագիտական սեկցիան զլխավորում էր
Հ. Ա. Օրբելին:

Ղեկավարելով բաժանմունքի աշխատանքները, Հովսեփ
Օրբելին աշակցություն էր ստանում ավագ ու միջին սերնդի
մի շարք այնպիսի առաջատար գիտնականների կողմից, ինչ-
պիսիք էին՝ Վ. Վ. Ստրովեն, Ա. Ն. Կոնոնովը, Ն. Վ. Պիգու-
լևսկայան, Վ. Մ. Շտեյնը և ուրիշներ: Մշտապես բաժան-
մունքի հրատապ խնդիրների ըմբռնում էր ցուցաբերում ինս-
տիտուտի գիրեկտոր Բ. Ղ. Ղաֆուրովը, որը օգնում էր Հ. Ա.
Օրբելուն՝ նրա շատ մտահղացումների իրականացման գոր-
ծում:

Կարճ ժամանակամիջոցում Լենինգրադի բաժանմունքը
դարձավ երկրի արևելագիտության խոշորագույն կենտրոն-
ներից մեկը: Տարեցտարի ընդլայնվում էր այնտեղ մշակվող
պրոբլեմատիկան, աճում էր նաև գիտական արտադրանքը:
Բաժանմունքում պատրաստված ձեռագրացուցակները հա-
մաշխարհային ճանաչում ստացան: Զեռնարկվեց ձեռագիր
հուշարձանների ֆաբրիմիլային հրատարակությունների սե-
րիան, որի շնորհիվ գիտական շրջանառության մեջ մտան մի
շարք հազվագյուտ ձեռագրեր: Սկսեցին լույս ընծայվել նաև
մենագրական առանձին ուսումնասիրություններ:

Պետրոս Մեծի ժամանակներից սկսած արևելագիտության
զարգացումը Պետերբուրգում, հետագայում Լենինգրադում,
զգալի շափով որոշվում էր արևելյան ձեռագրերի մուտքով:
Արևելյան դպրության հուշարձանները մի կողմից կենտրո-
նացվում էին Հանրային գրադարանում, մյուս կողմից՝
կունստկամերայում ու նրա ժառանգորդ Արևելագիտության
ինստիտուտում²⁷: Երբ 1950 թ. ինստիտուտը փոխադրեցին

²⁵ 1960 թ. հունիսին ՍՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտը վե-
րանվանվեց ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտ, համապատաս-
խանաբար փոխվեց նաև Լենինգրադի բաժանմունքի անվանումը: Այժմ հին
անունը վերականգնված է:

²⁶ P. P. Орбели, Деятельность Кавказского кабинета Института
востоковедения после 1917 года, — «УЗ института востоковедения».

т. XXV, 1960. — 1959/60 ուսումնական տարում Հ. Ա. Օրբելին հաջողա-
րեց ԼՊՀ-ի արևելյան ֆակուլտետում վերականգնել կովկասագիտական
առարկաները:

²⁷ Խոսքը ձեռագիր հավաքածուների առավել նշանակալից պահեստա-
րանների մասին է:

Մոսկվա, նրա ձեռագրերի հավաքածուները մնացին Լենինգրադում: Գրանց պահպանումն իրականացնում էր արևելյան ձեռագրերի սեկտորը, որը և փաստորեն հանդիսացավ Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի ստեղծման հիմքը: Ձեռագրերի բաժինը արևելյան ձեռագրերի աշխարհահռչակ իր հավաքածուներով՝ քառասունհինգ լեզուներով և մինչև քառասուն հազար միավոր²⁸, մնաց որպես բաժանմունքի սիրտը: Ձեռագիր հուշարձանների գիտական նկարագրությունը, նրանց ուսումնասիրությունն ու հրատարակումը դարձան Լենինգրադի բաժանմունքի գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը: Միշտ էլ մեծ նշանակություն տալով պահպանության աշխատանքին, Հ. Ա. Օրբելին խորամուխ էր լինում ձեռագրական բաժնի կարիքների մեջ, մտահոգվում էր ձեռագրերի պահպանության մեթոդով ու նրանց խնամքով, նրանց նորոգմամբ և առավել արժեքավոր ձեռագրերի միկրոնկարահանմամբ:

Գրա հետ միասին Հ. Ա. Օրբելու գործուն աշակցությունը արդյունավետ աշխատանք ծավալվեց բաժանմունքում պահվող արևելագետների արխիվի մշակման ուղղությամբ²⁹: Արդեն մոտակա տարիներին լույս տեսան մի շարք գիտնականների երկար տարիներ ձեռագիր վիճակում մնացած աշխատությունները: Հատկապես պետք է նշել Ա. Ն. Նևսկու «Տանգուտյան բանասիրություն» աշխատությունը, որը 1962 թ. արժանացավ Լենինյան մրցանակի: Այդ հրատարակության իրականացմանը շատ օժանդակեց Հ. Ա. Օրբելին:

²⁸ Գրականություն բաժնի ձեռագրերի կոլեկցիաների մասին. «Азиатский музей Российской Академии наук 1818—1918. Краткая памятка», Пб., 1920: Д. И. Тихонов, Восточные рукописи Института востоковедения Академии наук СССР,—«УЗ Института востоковедения», т. VI, 1953.— Այս հատորը, ինչպես և IX հատորը (1954), նվիրված է բաժնում պահվող առանձին հավաքածուներին և առանձին հուշարձաններին:

²⁹ Արևելագետների արխիվի մասին տես. Н. П. Журавлев и А. М. Мугинов, Краткий обзор архивных материалов, хранящихся в Секторе восточных рукописей Института востоковедения Академии наук СССР,—«УЗ Института востоковедения», т. VI, 1953.

Մի շարք տարիների ընթացքում գլխավորելով և՛ Լենինգրադի համալսարանի արևելյան ֆակուլտետը, և՛ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը, Հ. Ա. Օրբելին երազում էր նրանց հետազոտական աշխատանքի միասնական ծրագրի մասին, որը, նրա կարծիքով, պետք է օգներ ուսումնական պրոցեսի խորացմանը, բարելավեր ապագա գիտական կադրերի պատրաստումը, այդ տարիներին ուսանող-արևելագետները իրենց պրակտիկան անց էին կացնում Ձեռագրային բաժնում: Հովսեփ Օրբելին, մյուս կողմից, մեծ նշանակություն էր տալիս բաժանմունքի աշխատակիցների մանկավարժական գործունեությանը, իրավացիորեն գտնելով, որ ուսանող երիտասարդության հետ անմիջական շփումը բարերար ազդեցություն կունենա հետազոտական աշխատանքի վրա:

Արևելյան ֆակուլտետի և Լենինգրադի բաժանմունքի կոլեկտիվների ղեկավարումը արտասովոր վարչական ունակություններ էր պահանջում: Կեսդարվա ընթացքում գլխավորելով մի շարք խոշոր գիտական հիմնարկների գործունեությունը, Հ. Ա. Օրբելին վարչական աշխատանքի հսկայական փորձ ուներ: Սակայն այն աչքի ընկնող դերը, որը նա խաղաց մեր երկրի շատ գիտական հիմնարկների ստեղծման ու դրանց կյանքի կոշիլու գործում, պայմանավորված է նրանով, որ նա առաջին հերթին հետազոտական աշխատանքի կազմակերպիչ էր, ունակ իր ավյունով վարակելու մարդկանց: Նրան հատուկ էր մեծագույն նվիրվածությունը գործին, որը Հովսեփ Օրբելուն հատուկ ստեղծագործական ոգու հետ միասին փոխանցվում էր աշխատակիցներին:

Ղեկավարելով ստեղծագործական բարդ կոլեկտիվները, Հ. Ա. Օրբելին երբեք անտարբեր չի եղել իր աշխատակիցների անձնական կյանքի, նրանց ուրախության ու տխրության, հաջողությունների ու անհաջողությունների նկատմամբ: Տարիները շարժվեցին այդ զգացմունքները, և Հովսեփ Օրբելու շատ աշխատակիցներ, որոնք նրա հետ աշխատել էին արևելյան ֆակուլտետում, Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում և հավասարապես նաև Պետական էրմիտաժում, ամբողջ կյանքում կհիշեն նրա նրբ-

բաղադրությունը, դժվար ընդունելի օգնություն հասնելու պատ-
րաստակամությունը: Նույնիսկ անհատի պաշտամունքի
տաղանթապալի տարիներին, երբ շատ ազնիվ գիտնականներ
դարձան կեղծ հերյուրանքների զոհեր, Հ. Ա. Օրբելին հան-
դես բերեց իսկական արիություն, կարողացավ էրմիտաժի
մի շարք աշխատակիցների պաշտպանել անհիմն մեղադր-
րանքներից: Սակայն գործնական միջոցառում Հովսեփ Օր-
բելին միշտ հանդես էր գալիս հաստատակամ, նույնիսկ տի-
րական ղեկավարի դերում, որը հանուն գործի շահերի չի
վախենում ընդհարումից: Օժտված լինելով կրքոտ խառնը-
վածքով, վառ ընդգծված համակրանքով ու հակակրանքով,
հնարավոր է, որ Հ. Ա. Օրբելին միշտ չէ, որ իր աշխատակից-
ների նկատմամբ ընդունում էր լավագույն որոշումը, բայց
իրավացի էր Հովսեփ Օրբելին թե ոչ, նա միշտ առաջին հեր-
թին ղեկավարվում էր գործի շահերով: Նրա մասին լավ է
ասել Ե. Վ. Տարլեն. «Պա մեծ սրտի տեր մարդ է, որն ընդու-
նակ է հասկանալու մարդկանց ու նրանց հոգսերը, կարողա-
նում է պաշտպանել իր աշխատակիցների ու ենթակաների
շահերը և, որ գլխավորն է, կարողանում է իր հետ աշխա-
տողներին հետաքրքրել գիտական այն թեմաներով, որոնք
նա համարում է հերթական և անհրաժեշտ: Նրա էմոցիոնալ
խառնվածքի առկայության պայմաններում նրան, հավանա-
բար, երբեմն պոռթկալու առիթ է եղել, բայց ես երբեք չեմ
լսել, որ նա որևէ մեկին վիրավորի»³⁰:

Նուազն ու աշխատունակությունը Հ. Ա. Օրբելուն չլքեցին
նաև նրա կյանքի վերջին տարիներին: Նրա աշխատանքա-
յին օրը շատ լարված էր: Նա մասնակցում էր տասնյակ
գիտական և գիտակազմակերպչական նիստերի, հոգ տանում
արևելյան ֆակուլտետի և Լենինգրադի բաժանմունքի համար
հաստիքային նոր միավորներ ձևաք բերելու մասին, զբաղ-
վում իր աշխատակիցների հրատարակչական գործերով, խոր-
հուրդներ տալիս բազմաթիվ և բազմազան գիտական հար-

ցերով իրեն դիմած անձանց, խմբագրում արևելագիտական
աշխատություններ, որպես ընդդիմախոս հանդես գալիս գի-
տերապիաների պաշտպանության ժամանակ, հանդես էր
գալիս գիտական ղեկուցումներով, ընդունում արտասահման-
յան գիտնականների և հասարակական գործիչների, մշակում
Լենինգրադում արևելյան դպրոցի թանգարանի կազմա-
կերպման պլաններ, զնում համապատասխան հիմնարկու-
թյուններ և միջնորդում այնպիսի մասնավոր հարցերի մա-
սին, ինչպես աշխատակիցների բնակարանային հարցը:
Միայն մահացու հիվանդությունը ընդհատեց նրա բուռն գոր-
ծունեությունը...

Կյանքի վերջին տարիներին Հ. Ա. Օրբելին հաճախ ելույթ
էր ունենում համագիտական հարցերի մասին, կիսում իր
մտքերը ժամանակակից գիտության մեջ ուսական արևելա-
գիտական ավանդությունների վերաբերյալ և հատկապես
չերմորեն էր խոսում գիտության այժմեականության
վերաբերյալ իր հասկացողության մասին: Հ. Ա. Օրբելու աշ-
խատությունների մեծ մասը բանավիճային են և հրատապ,
արձագանքում են իրենց ժամանակակից գիտության կենսա-
կան խնդիրներին: Իր մտքերը առավել հստակ Հովսեփ Օր-
բելին ձևակերպել է Հայկական ՍՍՀ գիտությունների ակա-
դեմիայի «Պատմա-փիլիսոփայական ամսագրին» ուղարկած
ողջույնում:

«... Երբեմն ինձ հարկ է լինում լսել, որ գեպի անցյալը
եղած խոր հետաքրքրությունը հեռացնում է այժմեականու-
թյունից, գիտությունը կորցնում է իր արդիականությունը:
Ինձ թվում է, որ նման հարցադրումը բոլորովին անհիմն է.
անցյալին կարելի է և պետք է մոտենալ ներկայի դիրքերից,
իսկ գիտնականը, որին խորթ են մեր ժամանակի պահանջ-
ները, պատրաստ է նաև այժմեականությունն ընկալել անց-
յալ դարերի լույսի տակ: Հատկանշական է, որ լարված հե-
տաքրքրությունը գեպի անցյալի ձևատագիրը հանդես է գա-
լիս ուժգին առաջընթացի ժամանակ: Ստեղծելով իր ապա-
դան և ներկան, ժողովուրդը ձգտում է գնահատել իր անցած
ուղին և բուռն կերպով զարգացող ինքնագիտակցությունը

³⁰ E. Тарле, Историк-патриот,—в кн. «Дружба», кн. 2, Ереван, 1960, стр. 269.

անխուսափելիորեն խթանում է աճող հետաքրքրությունը անցած դարաշրջանի հանդեպ:

Ես նման նկատառումներով էի ղեկավարվում նաև այն ժամանակ, երբ հրատարակության էի պատրաստում հայկական ժողովրդական դուցազներգության մասին գիրքը և միջնադարյան հայկական առակների ժողովածուի ուսական քարգմանությունը: Մի՞թե հնարավոր է ճիշտ հասկանալ հայերի տոկոնությունն ու համառությունը, որոնք ընդհուպ մինչև վերջին տասնամյակները համառորեն պայքարում էին բախտի հեղհեղուկության դեմ, հաստատակամորեն կռում իրենց երջանկությունը, որի նկատմամբ եղած հավատը հայ ժողովրդին ուղեկցում էր նրա կյանքի բոլոր հարյուրամյակներում, մի՞թե հնարավոր է ճիշտ իմաստավորել ժողովրդին հատուկ լավատեսությունը, դեպի ինքնահաստատումն ունեցած տառապալից ձգտումը, շիմանալով նման աշխարհաբնկալման վաղ աղբյուրը՝ հոյակապ դուցազներգությունը...»³¹:

Գիտական հասարակայնության երախտագիտությունը պատկառելի գիտնականի նկատմամբ իր վառ արտահայտությունը գտավ Հ. Ա. Օրբելու հանդիսավոր մեծարման ժամանակ՝ 1957 թ. մարտի 20-ին, նրա ծննդյան յոթանասունամյակի օրը³²:

Իր կյանքի մայրամուտին Հ. Ա. Օրբելին աշխատում էր նույն եռանդով, ինչպես երիտասարդ ժամանակ: Նա իր մեջ ուժ գտավ մասնակցելու արևելագետների 25-րդ միջազգային կոնգրեսի աշխատանքներին (Մոսկվա, 1960 թ. օգոստոսի 9—17): Հ. Ա. Օրբելին կոնգրեսի փոխնախագահն էր, ղեկավարում էր կովկասագիտության սեկցիան, մի քանի անգամ հանդես եկավ մտքերի փոխանակության ժամանակ:

³¹ Մեջ է բերված ըստ ուղղույնի մեքենագրական պատճենի, որն ուղարկված էր «Պատմա-փիլիսոփայական ամսագրին» 1960 թ. գարնանը (Հ. Ա. Օրբելու արխիվ):

³² Տե՛ս «Вестник Академии наук», 1957 թ., № 5, էջ 97—98:—Այդ օրը Հ. Ա. Օրբելին պարզապարզ կենինի երկրորդ շքանշանով:

Բայց դրանք նրա վերջին հրապարակային ելույթներն էին, թեև, նայելով նրա եռանդուն շարժումներին, լսելով նրա ուժեղ ձայնը, ոչ ոք չէր կարող ասել, որ այդ կոնգրեսում Հ. Ա. Օրբելին հրաժեշտ էր տալիս գիտական աշխարհին:

Հովսեփ Օրբելին վախճանվեց 1961 թ. փետրվարի 2-ին: Մինչև իր կյանքի վերջին րոպեները նա շրջապատված էր աշխատակիցներով և բարեկամներով:

անխուսափելիորեն խթանում է աճող հետաքրքրությունը անցած դարաշրջանի հանդեպ:

Ես նման նկատառումներով էի ղեկավարվում նաև այն ժամանակ, երբ հրատարակության էի պատրաստում հայկական ժողովրդական դյուցազներգության մասին գիրքը և միջնադարյան հայկական առակների ժողովածուի ռուսական թարգմանությունը: Մի՞թե հնարավոր է ճիշտ հասկանալ հայերի տոկունությունն ու համառությունը, որոնք ընդհուպ մինչև վերջին տասնամյակները համառորեն պայքարում էին բախտի հեղհեղուկության դեմ, հաստատակամորեն կռում իրենց երջանկությունը, որի նկատմամբ եղած հավատը հայ ժողովրդին ուղեկցում էր նրա կյանքի բոլոր հարյուրամյակներում, մի՞թե հնարավոր է ճիշտ իմաստավորել ժողովրդին հատուկ լավատեսությունը, գեպի ինքնահաստատման ունեցած տառապալից ձգտումը, շիմանալով նման աշխարհաընկալման վաղ աղբյուրը՝ հոյակապ դյուցազներգությունը...»³¹:

Գիտական հասարակայնության երախտագիտությունը պատկանելի գիտնականի նկատմամբ իր վառ արտահայտությունը գտավ Հ. Ա. Օրբելու հանդիսավոր մեծարման ժամանակ՝ 1957 թ. մարտի 20-ին, նրա ծննդյան յոթանասունամյակի օրը³²:

Իր կյանքի մայրամուտին Հ. Ա. Օրբելին աշխատում էր Եուլյն եռանդով, ինչպես երիտասարդ ժամանակ: Նա իր մեջ ուժ գտավ մասնակցելու արևելագետների 25-րդ միջազգային կոնգրեսի աշխատանքներին (Մոսկվա, 1960 թ. օգոստոսի 9—17): Հ. Ա. Օրբելին կոնգրեսի փոխնախագահն էր, ղեկավարում էր կովկասագիտության սեկցիան, մի քանի անգամ հանդես եկավ մտքերի փոխանակության ժամանակ:

Քայց դրանք նրա վերջին հրատարակային ելույթներն էին, թեև, նայելով նրա եռանդուն շարժումներին, լսելով նրա ուժեղ ձայնը, ոչ ոք չէր կարող ասել, որ այդ կոնգրեսում Հ. Ա. Օրբելին հրաժեշտ էր տալիս գիտական աշխարհին:

Հովսեփ Օրբելին վախճանվեց 1961 թ. փետրվարի 2-ին: Մինչև իր կյանքի վերջին րոպեները նա շրջապատված էր աշխատակիցներով և բարեկամներով:

³¹ Մեջ է բերված ըստ ողջույնի մեքենագրական պատճենի, որն ուղարկված էր «Պատմա-փիլիսոփայական ամսագրին» 1960 թ. գարնանը (Հ. Ա. Օրբելու արխիվ):

³² Տե՛ս «Вестник Академии наук», 1957 թ., № 5, էջ 97—98:—Այդ օրը Հ. Ա. Օրբելին պարգևատրվեց Լենինի երկրորդ շքանշանով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հ. Ա. Օրբելու գիտական և հասարակական հայացքների ձևավորման մեջ մեծ դեր խաղացին պատմա-բանասիրական ֆակուլտետում և հատկապես Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում անցկացրած տարիները և շփումը հայրենական գիտության աչքի ընկնող մի շարք ներկայացուցիչների հետ: Հովսեփ Օրբելին սիրում էր պատմել իր պրոֆեսորների մասին, որոնցից շատերը հետագայում դարձան նրա բարեկամները և աշխատանքի ընկերները, հաճույքով կիսում էր իր մտքերը համալսարանում դասավանդման սիստեմի վերաբերյալ:

Ստորև վերարտադրվում են հատվածներ 1955 թ. մարտի 3-ին Լենինգրադի պետական համալսարանի արևելյան ֆակուլտետում Հ. Ա. Օրբելու ունեցած զրույցներից՝ ֆակուլտետի հիմնադրման մոտեցող հարյուրամյակի կապակցությամբ: Հովսեփ Օրբելին մտադիր չէր գիտության պատմության վերաբերյալ զեկուցում կամ դասախոսություն կարդալու. «Ես պետք է խոսեմ այն մասին, թե անձամբ ինչպես էի նայում այն իրադրությանը, որի պայմաններում ինձ վիճակվել է սովորել այստեղ՝ համալսարանում, և ոչ այն մասին, թե ինչպիսի տեսք կունենար դա, եթե մեծ ընդհանրացումներ անենք», — նախազգուշացրեց նա ունկնդիրներին զրույցի հենց սկզբին: Այդ պատճառով էլ նա քիչ է կանգ առնում գիտական պրոբլեմների, հետազոտական աշխատանքի մեթոդիկայի և այլոց վրա, այլ պարզապես հաղորդում է 20-րդ դ. սկզբներին Պետերբուրգի համալսարանի լսարաններից ստացած իր տպավորությունները: Որոշ սուբյեկտիվության երանգը շխանգարեց Հովսեփ Օրբելուն տալու իր ուսուցիչներից մի քանիսի խոր բնութագրերը և նկարագրելու

համալսարանական առօրյայի վառ ու նշմարտացի պատկերը: Նրա պատմած առանձին միջադեպեր, որոնք երբեմն նույնիսկ անեկզոտային բնույթ ունեն, բացահայտում են նախահեղափոխական համալսարանի գիտական կյանքի բազմաթիվ կողմերը:

Տեքստը վերարտադրվում է Հ. Ա. Օրբելու արխիվում պահպանված սղագրության օրինակներից մեկի հիման վրա:

Հ. Ա. Օրբելի

ՌՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀՈՒՇԵՐ

Սղագրությունից

Թանգակին ընկերներ: Ես ցանկանում եմ հաղորդել ձեզ այն կցկտուր հուշերը, որոնք պահպանվել են ինձ մոտ հեռավոր ուսանողական տարիներից և իմ դասախոսական գործունեության առաջին տարիներից: Մի նեղացեք, եթե ընդամին խոսեմ այն մասին, թե անձամբ ինչպես էի նայում այն իրադրությունը, որի պայմաններում ինձ վիճակվել է սովորել այստեղ՝ համալսարանում, և ոչ այն մասին, թե ինչպիսի տեսք կունենար դա, եթե մեծ ընդհանրացումներ անենք:

Ես Պետերբուրգի համալսարան ընդունվեցի 1904 թ., և ընդունվեցի ոչ թե արևելյան լեզուների ֆակուլտետը, այլ պատմա-բանասիրականը, որը համապատասխանում էր իմ այն ձգտումներին, որոնք ինձ մոտ կային դեռևս վաղ պատանեկան հասակից, գիմնազիական տարիներից, ընդունվեցի հույս ունենալով, որ հետո արևելյան լեզուների ֆակուլտետում կընդլայնեմ հին և միջնադարյան պատմության վերաբերյալ իմ ուսումնառությունն ու իմացությունը: Ես ընդունվեցի պատմա-բանասիրական ֆակուլտետ և առաջին երկու տարին համարվում էի այդտեղի ուսանող, իսկ հետո արդեն համարվեցի նաև արևելյան ֆակուլտետի ուսանող: Դրա համար շատ ուրախ եմ, որովհետև ավարտելով և՛ բանասիրականը, և՛ արևելյանը, շատ շահեցի տիրապետելով համալսարանի տված գիտելիքներին այն սահմաններում, որոնցում շահագրգռված էի ես: Շահեցի այն աստիճան, որ հիմա, ծերացած հասակում, ես մտածում եմ, թե բոլոր արևելեագետներին որքան օգտակար կլինեն ինչ-որ շարքով անց-

նելու արևմտյան բանասիրության դպրոցը՝ անտիկ նյութի (հունական և լատինական) հիման վրա, որովհետև այնտեղ արդեն վաղ տարիներին, կես դար առաջ և առավել շարքով հիմա, այնքան լավ են մշակվել մի շարք առարկաներ, որ մեզ՝ արևելագետներս, միշտ սովորելու բան կան, և ոչ միայն լեզուների ու գրականությունների նյութական իմացության առումով, այլև նման նյութերի հետ վարվելու իմաստով, թեկուզ և զրանք զրված են հունարենի և լատինարենի հետ ընդհանուր ոչինչ շունեցող լեզուներով: Ահա թե ինչու ես, արևելագետս, հատկապես հիվանդագին եմ ընդունում հունական և լատինական բանասիրության սեղմմանը կամ վերացմանը, կամ շղիտեմ էլ ինչին (համենայն դեպս ոչ լավ քանի) վերաբերող տարբեր լուրերը:

Առաջին դասախոսությունը, որը ես լսեցի և որը իմ կյանքում շատ մեծ, բայց և ծանր դեր խաղաց, Ֆ. Ֆ. Զելինսկու դասախոսությունն էր¹: Դեռ աշակերտական նստարանից ես սովորել էի Զելինսկու անվանը վերաբերվել երկյուղածությամբ, որպես մի մարդու անվան, որը կարդացել է «Հին աշխարհը և մենք»² դասախոսությունների ցիկը, որոնք ուղղված էին այն բանին, որպեսզի ուժեղացնեն երիտասարդ ուսանողների հոսքը բանասիրական ֆակուլտետ և մասնավորապես ներգրավեն անտիկ հարցերի ուսումնասիրության ոլորտը: Ճիշտ է, Զելինսկին մի քիչ յուրովի էր հասկանում անտիկ աշխարհը, սակայն առաջին դասախոսության ժամանակ դժվար էր այդքանը հասկանալ: Առաջին դասախոսությունից հետո ես գուրս եկա Զելինսկուն ավելի սիրահարված, քան երբ գալիս էի Պետերբուրգ: Ես սիրահարվեցի այդ հիասքանչ հոնետորին, որը անտիկ աշխարհի մասին խոսում էր այնպես, կարծես թե շատ մոտ ծանոթ էր նրան, կարծես

1 Զելինսկի Ֆադդեյ Ֆրանցևիչ (1859—1946)—անտիկ մշակույթի հետազոտող ու ժողովրդականացնող, հին հունական և լատինական գրողների թարգմանիչ: Փառարանված էր որպես հիանալի հետաոր:

2 «Древний мир и мы. Лекции, читанные ученикам выпускных классов С.-Петербургских гимназий и реальных училищ весной 1903 г профессором С.-Петербургского университета Ф. Зелинским», СПб., 1903.

թե նա նոր էր վերադարձել Աթենքից կամ ուղևորություն կատարել Պելոպոնես: Այն ժամանակ ես դեռ չէի կարող կանխատեսել, որ հետագայում մենք Զեյինսկու հետ (չնայած նրան, որ նա կարկառուն դեմք էր, իսկ ես երիտասարդ ուսանող) մշակույթի պատմության հարցերի ուսումնասիրման խնդիրների ըմբռնման մեջ կգտնվենք տարբեր բեկեռներում: Զեյինսկին կլասիկ էր, անտիկ աշխարհի գիտակ, մի մարդ, որը բացառիկ լավ և խոր գիտեր հունարեն ու լատիներեն լեզուները, լրիվ տիրապետում էր բանասիրական վերլուծության բոլոր նորություններին, անտիկ գրականության բացառիկ գիտակ էր, Վագների մեծ երկրպագու, «Նիբելունգների օղակների» սիրահար, բայց մի մարդ, որն ամեն ինչին նայում էր նույնիսկ ոչ Օլիմպոսի, այլ ավելի բարձր լեռներից և որն առավել խստուկ չափեր իր համար բնակիչներ էր ընտրում միայն աստվածներից, միայն ընտրյալներից: Նման երևույթի հետ ես առիթ ունեցա բխավելու միայն երկու տարի հետո և այդ ժամանակից էլ իմ հարաբերությունները Զեյինսկու հետ վերջնականապես խզվեցին:

Որպեսզի հետո շանդրադառնամ դրան և ձեզ հետ հանելուկներով լիսոսեմ, ուղղակի կասեմ՝ նրա հետ ես գծավեցի հնդկական հորթերի պատճառով: Մենք կարդում էինք մի տեքստ, որտեղ հիշատակվում էր Միթրա աստվածը: Քանի որ այն ժամանակ ես բանասիրական ֆակուլտետի մեկ այլ դասախոսի ղեկավարությամբ աշխատում էի միթրաիզմի թեմայի վրա, ցանկացա, նկատի ունենալով տվյալ գեպըում Հորացիոսի ներբողների շատ մոտիկությունը հեռավոր Հրնդկաստանի հիմների հետ, վկայակոչել հիմներից մեկի հատվածը, որտեղ ասվում էր, որ Միթրայի շուրջը զգացվում էր այնպիսի անուշահոտություն, ինչպես մատղաշ հորթի շուրջը: Եվ այդտեղ ես լսեցի այն, ինչը ինձ մեկընդմիջում վանեց Զեյինսկուց: Նա ասաց, որ մարդիկ տարբեր են լինում. կան այնպիսիները, որոնց դուր է գալիս գոմաղբի հոտը, հատկապես, երբ այն թարմ է, իսկ ուրիշները երազում են հոտոտել վարդը: Դրան ես պատասխանեցի (կոպիտ պատասխանեցի) հիշեցնելով, թե ինչով էին զբաղվում աթենացի աղջիկները Պանաթենական տոնակատարությունների ժամանակ:

Պարզ է, որ այդքանից հետո լսարանում, իսկ առավել ևս Զեյինսկու տնային առանձնասենյակում, ինձ մնալ չէր կարելի: Դրանով էլ վերջացան իմ հարաբերությունները Զեյինսկու հետ:

Բարեբախտաբար, մեզ մոտ կային ուրիշ դասախոսներ, ոչ այնքան հոյակապ ու փայլուն, գուցե նաև ավելի վատատեղյակ անտիկ աշխարհի բանասիրությանը, բայց դրա փոխարեն մարդիկ, որոնք կարողացան մեզ սովորեցնել, որ մշակույթի պատմությանը մոտենալիս պետք է հաշվի առնել պատմական իրադրությունը, մեծ ձգտումով ըմբռնել ցանկացածը տեքստի, ցանկացածը հուշարձանի, որը մենք պետք է ուսումնասիրեինք, մտքի բոլոր երանգավորումները: Նրանց շարքում աչքի ընկնող տեղերից մեկը գրավում էր այն ժամանակ տակավին երիտասարդ պրոֆեսոր Ս. Ա. Ժեբելյովը³: Նրա անվան նկատմամբ ինձ մոտ ամբողջ կյանքում, մինչև այսօր և, հուսով եմ, մինչև կյանքիս վերջին ժամը կմնա ակնածալից վերաբերմունք: Դա հիասքանչ մարդ էր, արտասովոր համեստությամբ, շատ մեծ գիտելիքների տեր, իր դասախոսության մեջ մի քիչ ձանձրացնող, բայց և ակնթարթորեն աշխուժացող՝ հենց որ նրա ուսանողներից որևէ մեկի մոտ ինքնուրույն հետազոտական աշխատանքի ձգտում էր հանդես գալիս: Այդ ժամանակ Ժեբելյովը անմիջապես գաղարում էր «չոր» լինելուց, ինչպիսին մենք նրան ընկալում էինք սկզբնական շրջանում, և դառնում էր աշխույժ մարդ, պատրաստ ամեն կերպ ուղղություն տալ և հուշել: Ժեբելյովը արտասովոր համարձակությամբ, բարձր, ի լուր ամենքի արտասանում էր բառեր, որոնք ես երբևէ չէի լսել Զեյինսկուց: Դրանք՝ «չգիտեմ», «չեմ հասկանում», «հարկավոր է մտածել», «հարկավոր է նիկիտինի հետ խոսել» բառերն էին: Իր գիտելիքների ոչ անսահման լինելն ընդունելու նրա պատրաստակամությունը մեզ շատ ուժեղ ձգում էր դեպի Ժեբելյովը, կապում նրա հետ և ի լրումն դրանց, ակնածալից վերաբերմունք ներշնչում դեպի այն ծերուկը, որն արդեն մեզ

3. Ժեբելյով Սերգեյ Ալեքսանդրովիչ (1867—1942)—անտիկ աշխարհի խոշորագույն պատմաբան և հնագետ, ակադեմիկոս:

մոտ շէր դասախոսում, բայց որին ես, բարեբախտաբար, կարողացել էի լավ ճանաչել՝ դեպի խոշորագույն կլասիկ նիկիտինը⁴, նա վաթսուներե անց տարիքում կարողացել էր ինչ-որ ձևով իր գիտակցության մեջ պահպանել այն համոզմունքը, որ ինքը դեռևս ամեն ինչ չէ, որ գիտե (մի բան, որը Զելինսկու մոտ երբեք չկար):

Երբ ես ընկա բանասիրական ֆակուլտետի այլ լսարաններ, իմ առջև անցավ մարդկանց մի ամբողջ շարք, որոնցից յուրաքանչյուրը յուրովի զարգացնում էր դասական բանասիրությունը: Բայց պետք է ձեռք ասեմ, որ այն ժամանակներում Պետերբուրգի համալսարանում և ուրիշ համալսարաններում մի լավ սովորություն կար, որը հետո, դժբախտաբար, մեծ մասամբ մոռացության տրվեց. մենք չէինք պատկերացնում, որ հնարավոր է հունական գրականությունն ուսումնասիրել առանց հունական արվեստին ծանոթ լինելու, մենք չէինք պատկերացնում, որ հնարավոր է զբաղվել հոմերական գրականության որևէ հոյակապ հուշարձանով, առանց հիմնավորապես ծանոթ լինելու հոմերական հնություններին, հոմերական արվեստին՝ և՛ իր անաղարտ տեսքով, որը բարձրացել էր Իտալիայի հողի վրա, ներծծելով այն ամենը, ինչը տալիս էր իտալական հողը մինչև հոմերական պետության կազմավորումը, և՛ երբ հոմերական մշակույթը, հոմերական արվեստը զրսեւորվում էին հունական մշակույթի կրկնության մեջ: Այդ իմաստով բանասիրական ֆակուլտետի դասական բաժանմունքում դասավանդման դրվածքը այն ժամանակ իրոք գտնվում էր բարձր հիմքերի վրա:

Դասախոսների մեջ, որոնց մենք այն ժամանակ տեսանք բանասիրական ֆակուլտետում և որոնք հետո օգնեցին ինձ գիտակցելու արևելյան ֆակուլտետի և՛ արժանիքները և՛ պակասությունները, կար նաև տակավին երիտասարդ պրոֆեսոր Մ. Ի. Ռոստովցևը⁵, որը, հասկանալի է, այն ժամանակ՝

⁴ Նիկիտին Պյոտր Վասիլևիչ (1849—1916)—բանասեր-կլասիկ, հին հունական և բյուզանդական գրականության վերաբերյալ աշխատությունների հեղինակ, ակադեմիկոս:

⁵ Ռոստովցև Միխայիլ Իվանովիչ (1870—1952)—անտիկ աշխարհի խոշոր պատմաբան և հնագետ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո էմիգրացվեց:

1905—1906 թթ., ոչ մի չափով նսեմացված չէր այն սև բծով, որը նա իր վրա դրեց 1918 թ., մեկնելով մեր երկրից այն հաշվով, որպեսզի չվերադառնա: Այն ժամանակ նա փայլուն, տաղանդավոր երիտասարդ գիտնական էր՝ արտասովոր ձգտումներով դեպի հին աշխարհի պատմության այն կողմերի ուսումնասիրությունը, որոնք անբայրացակամորեն էին ընդունվում լուսավորության մինիստրությունում, բայց որոնք հիանալի հող կղաճային Ռոստովցևի գործունեության համար, եթե նա գլխի ընկներ մնալու իր հայրենիքում և սովետական կյանքի իրագրության պայմաններում զարգացնել իր բացառիկ օժտվածությունն ու հիանալի էրուդիցիան: Մեզ Ռոստովցևը զրավում էր նրանով, որ շատ մեծ հետաքրքրություն ուներ դեպի Արևելքը: Այդ բանը սկսվեց այն սեմինարներից, որոնք նվիրված էին Եգիպտոսում գտնված հունական պապիրուսներին և Իրանի հին մշակույթն ուսումնասիրելու մի ամբողջ շարք փորձերին: Այդ պատճառով ոչ միայն իմ, այլև իմ ընկերների համար (բացառությամբ ներանց, որոնց հետաքրքրությունները շատ նեղ էին և սահմանափակվում էին միայն անտիկ աշխարհով) Ռոստովցևը թվում էր շատ զրավիչ և շատ լավ, հիմնավոր դասախոս: Նույն բանասիրական ֆակուլտետում ես հանդիպեցի գործի մեկ այլ, շատ զվարճալի կողմի հետ: Դա գլխավորապես լատինական ոճաբանության (մեզ մոտ հունական ոճաբանության հատուկ դասընթաց չկար) գծով տարվող աշխատանքն էր: Մեզ մոտ երկու դասախոս կար. մեկը միշտ այստեղ, այս շենքում բույն դրած՝ Ի. Ի. Խոլոդնյակին⁶ էր, մյուսը՝ Ա. Ի. Մալեինը⁷:

Դա երկու ուժերի հիանալի զուգակցում էր՝ ուղղված այն բանին, որպեսզի մեզ, ուսանող-բանասերներին մոտ արմատավորվի ո՛չ միայն լատինների իմացությունը, այլև լատիններեն լեզվով մտքերը շարադրելու ունակությունը: Այն

⁶ Խոլոդնյակ Իվան Իլիչ (1857—1913)—լատինական բանահյուսության և լեզվի հետազոտող:

⁷ Մալեին Ալեքսանդր Իոսափնովիչ (1869—1938)—բանասեր-կլասիկ:

ժամանակ դա դատարկ քմահաճույք, լեզվի իմացութեան դատարկ պճնամոլութիւնն էր համարվում, այլ հսկայական հնարավորութիւններ էր ընձեռում տվյալ լեզվի խոսքի բոլոր նրբերանգներին հասնելու համար: Ես հիշում եմ, թե մեզ որքան հեշտ էր աշխատել Ի. Ի. Խոլոդնյակի հետ: Մենք իրոք հասանք Յիցերոնի ոճի բոլոր նրբերանգներին (այլ առումով, քան մեզ տալիս էր Զելինսկին), և շնայած Խոլոդնյակին նույնպես խորթ չէր որոշ տարօրինակութիւն, բայց զրանում ոչինչ չկար, որ ծիծաղ շարժեր և ստիպեր հետագայում բոլորովին չզնալ դասախոսութեան: Տարօրինակութիւնը, սակայն, չէր խանգարում Խոլոդնյակին լինել հիանալի դասախոս և հիասքանչ մեկնաբանութիւններ տալ Վիրգիլիոսին...

Ոճաբանութեան մյուս դասախոսի անունը Ա. Ի. Մալեին էր: Այդ անունը դուք պարտավոր եք իմանալ, որովհետև նա մի ամբողջ շարք միջնադարյան հեղինակների՝ Արևելք գնացած ճանապարհորդների բացառիկ ճշգրիտ թարգմանիչ էր, մեծ ծառայութիւններ ունեցող մարդ, բայց անասելի ձանձրալի, ձանձրալի էր ամեն մի բառով և, գլխավորը, անհանդուրժելի ձանձրալի՝ աշխատանքի համար այն նյութի ընտրութեան մեջ, որն ինքն էր կատարում: Մի խոսքով, իմ գտնվելը նրա լսարանում սպառվեց երկու այցելութեամբ:

Այսպիսին էր Մալեինը, որի հետ հետագայում ինձ վիճակվեց աշխատել և մեծ օգուտ քաղել, բայց ոչ հոռմեական ոճաբանութեան և ոչ էլ ուսական գրականութեան կլասիկներին լատիներեն թարգմանելու գծով:

Բանասիրական ֆակուլտետում, անտիկ աշխարհի բաժանմունքում մենք ունեինք պատմութեան դասընթաց: Ես միշտ մեծ քնքշութեամբ եմ հիշում (շնայած նա ինձ շատ օգուտ չի տվել) Ֆ. Ֆ. Սոկոլովին⁸: Դա մի դեմք էր, որին, եթե դուք երբևիցէ տեսել եք, անհնար էր մոռանալ: Նա արտակարգ գիտելիքների տեր մարդ էր, ուներ խիստ բացառիկ

հիշողութիւն: Թավական է ասել, որ երբ նա մեզ կարդում էր Հոմերոսին նվիրված զննումները (դա մեկ տարվա մեծ դասընթաց էր), ապա նավերի ցուցակը (ով կարդացել է «Իլիականը», կհիշի այն) անզիր ասում էր հունարեն, իսկ հետո հանգիստ, դանդաղ, բառ առ բառ թարգմանում: Մենք բոլորս համոզված էինք, որ եթե գիշերը արթնացնենք նրան ու հարցնենք, թե Տրոյա եկած հունական այսինչ զավթիչի այսինչ նավում քանի մեխ կար, նա, առանց մտածելու, կպատասխաներ և կասեր, թե որ տեղում է ցույց տրված մեխերի այդ քանակը:

Ֆ. Ֆ. Սոկոլովը հիասքանչ մարդ էր: Նա այն գիտնականներից մեկն էր, որոնք այն ժամանակաշրջանում, երբ բանավեճերի և մանավանդ դիսերտացիաների պաշտպանութեան ժամանակ պետք էր լինում պահպանել շատ մեծ քաղաքավարութիւն, կարողանում էր գտնել այն ձևը, որն իսկույն պարզաբանում էր դիսերտացիայի ամենամթույլ տեղը, այնպես որ դրանից հետո ասելու ոչինչ չէր մնում: Ես հիշում եմ դոկտորական պաշտպանութիւններից մեկը: Դա մի խոշոր գիտնական էր, միջնադարի պատմաբան, որն իր ներածական խոսքում բնութագրեց բոլոր այն մեթոդները, որոնցից կարելի է օգտվել զբաղվելով պատմութեամբ, ուսումնասիրելով պատմական փաստաթղթերն ու փաստերը: Նա շատ բարեխղճորեն թվարկեց բոլոր մեթոդները: (Ավելի ուշ Մառից ես լսեցի, որ երբ երիտասարդ դասախոսը իր առաջին դասընթացն սկսում է աշխատանքի մեթոդիկայի և մեթոդոլոգիայի մասին խոսակցութեամբ, դա նշան է այն բանի, որ նա դասախոսութեանը չի պատրաստվել, որովհետև դա սովորաբար ամենահարմար միջոցն է խուսափելու այն կոնկրետ փաստերից, որոնք պետք էր թվարկել տվյալ թեմայում և այդ փաստերի վերաբերյալ տար իր գնահատականը): Եվ երբ դիսերտանտի ներածական խոսքից հետո հանդես եկավ պաշտոնական ընդդիմախոս Ֆ. Ֆ. Սոկոլովը, նա միայն մի բան ասաց. «Ափսոս, որ բոլոր հնարավոր մեթոդների այդ թվարկման մեջ, որոնք այդքան լավ օգնել են դիսերտանտին, նա մոռացավ հիշատակել ևս մեկ մեթոդի մասին՝ փաստերի իմացութեան լավ և փորձված մեթոդի մասին»: Դուք հաս-

⁸ Սոկոլով Ֆյոդր Ֆյոդրովիչ (1841—1909)—հին պատմութեան պրոֆեսոր, հելլենիստական հասարակութեան ուսումնասիրող, հունական էպիգրաֆիկայի ուսական դպրոցի հիմնադիր:

կանում եք, որ երբ դա դոկտորական դիսերտացիայի պաշտպանութիւն ժամանակ պաշտոնական ընդդիմախոսի առաջին ռեպլիկան է, ապա պարզ է, թե դա ինչ ծանր վիճակ է ստեղծում... Սակայն այդպիսին էր այդ ծերուկը, տկարատես, միշտ կիսափակ կոպերով, բացառիկ գիտելիքների տեր մարդ, բայց իր գիտելիքները լսարանին հաղորդելու բոլորովին անկարող: Նրան բոլորն էլ շատ էին սիրում: Բայց սովորել հարկավոր էր այնպես, որ հենց նրան էլ քննութիւն հանձնել: Եվ այդտեղ կարող եք վստահ լինել, որ առարկան շիմանալով, դուք դուրս չեք պրծնի: Իսկ նրանից սովորելը շատ դժվար էր: Գուցե այն պատճառով, որ շափազանց շատ էին նրա գիտելիքները:

Բանասիրական ֆակուլտետում դասավանդման ուշագրավ պարագան, առանց որի մենք բոլորս՝ Մատի աշակերտներս, ձանձրանում էինք արևելյան լեզուների ֆակուլտետում, անտիկ աշխարհի մշակույթի պատմութանը նվիրված դասընթացն էր: Պաշտոնական ծրագրում մտնում էր ժանոթութիւնը առարկաների հետ: Բայց կարեորդ դա չէր, այլ այն, որ առարկաները հասկացվում էին տեքստերի ընթերցման, արձանագրութիւնների ուսումնասիրութիւնն պրոցեսում: Իսկ այստեղ ուսումնասիրում էին անտիկ աշխարհի ճարտարապետութիւն հարցերը, անտիկ աշխարհի արվեստի պատմութիւնը: Այդ ասպարեզում բանասիրական ֆակուլտետը, նրա դասական բաժանմունքը արտակարգ շատ բան էին տալիս: Այն ժամանակ մեզ մոտ ընդունված էր մի քիչ վերևից նայել նրանց, ով ներկայանում էր համալսարան, որպեսզի արվեստի պատմաբան դառնա, դա ինչ-որ լուրջ բան չէր համարվում: Մենք, ուսանող-կլասիկներս, այն կարծիքին էինք, որ արվեստի պատմութիւնն զժով պարապմունքները պետք է զուգակցվեն այն ժողովրդի պատմութիւնն հետ, որն ստեղծել է այդ արվեստը: Այդ պատճառով էլ արվեստի պատմութիւնն դասընթացները, որոնք կտրված էին այդ հուշարձաններն ստեղծող ժողովուրդների կոնկրետ սոցիալական կյանքից, մենք չէինք ընդունում և դրա համար էլ մեզ առանձնապես ձանձրալի էր, երբ այդ չէինք գտնում արևելյան լեզուների ֆակուլտետում:

Արևելյան լեզուների ֆակուլտետում վերաբերմունքն այդ քանի նկատմամբ շատ բացասական էր: Երբ ձեզ առիթ կլինի հիշելու կամ լսելու հիշատակումներ Յա. Ի. Սմիռնովի⁹ կամ Ի. Ա. Զավախովի¹⁰ անունների մասին, այդ անուններին վերաբերվեք շնորհակալութիւնով, որովհետև դրանք այնպիսի մարդիկ էին, որոնք շատ մեծ ճնշում գործադրելու գնով հասնում էին նրան, որ արևելյան լեզուների ֆակուլտետն ավարտողը գիտենա ոչ միայն տվյալ լեզուն, այլ որքան հնարավոր է շատ իմանա իրականը, կոնկրետը տվյալ ժողովրդի մասին, նրա կուլտուրայի մասին, նրա աշխարհայացքի մասին, նրա աշխարհըմբռնման մասին, արտահայտված ոչ միայն նրանում, ինչը որ ձեռքով գծված է մի թղթի կտորի վրա: Դա հսկայական նշանակութիւն ունեցավ արևելյան լեզուների ֆակուլտետի այն թարմացման համար, որը սկսվեց մոտավորապես 1915 թվականից:

Ես չեմ թվի բանասիրական ֆակուլտետի բոլոր դասախոսներին, որոնց շատ բանով եմ պարտական, բայց կպատմեմ, թե ինչու անմիջապես շքեղ արևելյան լեզուների ֆակուլտետ:

Երիտասարդ հասակում ես շատ անձնապաստան էի և վստահ իմ ուժերի անսահմանութիւնն մեջ: Այդ պատճառով էլ ցանկանում էի անպայման միաժամանակ լինել և՛ բանասիրական ֆակուլտետում, և՛ արևելյան: Ն. Յա. Մառը դրան վերաբերում էր հանդուրժողականութիւնով, բայց հարց էր տալիս, թե արդյոք ես կհաղթահարե՞մ: Նա այդպիսի հարց տալու հիմք ուներ, որովհետև հետո ես հասկացա, թե ինչպես կարելի է ուսանողին այնպես ծանրաբեռնել, որ նա շքեղ չի շկարողանա: Իսկ այն ժամանակ դա հրապուրիչ նպատակ էր: Ֆակուլտետի ղեկան Վ. Ա. Ժուկովսկին¹¹ ինձ բոլորովին

⁹ Սմիռնով Յակով Իվանովիչ (1869—1918)—անտիկ աշխարհի և միջնադարյան մշակույթի ու արվեստի հետազոտող, ակադեմիկոս:

¹⁰ Զավախով (Զավախիշվիլի) Իվան Ալեքսանդրովիչ (1876—1940)—պատմաբան և բանասեր-վրացագետ, ակադեմիկոս, 1902 թվականից հայ-վրացական բանասիրութիւնն ամբիոնի պրիվատ-դոցենտ:

¹¹ Ժուկովսկի Վալենտին Ալեքսեևիչ (1858—1918)—բանասեր-իրանագետ: Նրա մասին տես ստորև էջ 169 և 186:

սառնցրեց: Նա սկսեց նրանից, որ ինձ մերժեց հաճախել արևելյան ֆակուլտետ մինչև այն ժամանակ, քանի դեռ չեմ հեռացել բանասիրական ֆակուլտետից: Երբ ես նրան բացատրեցի, որ չէի ցանկանա հեռանալ բանասիրական ֆակուլտետից, բայց ուզում եմ լինել նաև արևելյան ֆակուլտետում, նա ասաց. «Ընտրեք որևէ մեկը, իսկ սողանցք փնտրել չարժեք»: Միայն երկու տարի հետո հաջողվեց համոզել նրան, որ ինձ կարելի է ընդունել արևելյան ֆակուլտետը:

Այդ ժամանակից էլ ես դարձա արևելյան ֆակուլտետի պաշտոնական ունկնդիր և հնարավորություն ստացա խորացնել իմ աշխատանքը Ն. Յա. Մառի մոտ ու հաճախել մյուս պրոֆեսորների դասախոսություններին:

1906 թ. սեպտեմբերին արևելյան ֆակուլտետում ես համարձակորեն սուզվեցի պարապմունքների մեջ: Այստեղ իսկույն աչքի դարձեց Ն. Յա. Մառի և Ի. Ա. Զավախովի դասավանդման մեջ եղած մեծ տարբերությունը: Վերջինս այն ժամանակ նոր էր սկսել դասավանդել: Նա շատ լավ դասախոս էր, չխոսելով արդեն այն մասին, որ նա Անդրկովկասի պատմության հիանալի հետազոտող էր: Ի դեպ, պետք է ասեմ, որ Ի. Ա. Զավախովը մի այնպիսի հիասքանչ հատկություն ուներ, որը հիմա, 1955 թ., մեզ համար հատկապես արժեքավոր ու պետքական կլիներ, և զլխավորապես այն ժամանակ, երբ խոսքը վերաբերում է Կովկասի պատմության ուսումնասիրության համար մասնագետների պատրաստմանը: Նա իր եզրակացություններում չափազանց զգույշ ու նրբանկատ, մեծ գիտողականությամբ օժտված գիտնական էր, փայլուն տիրապետում էր հին վրացերենին ու զրաբարին (ասորերենի ասպարեզում պատրաստվածություն ու լավ գիտելիքներ ունենալու և հունարենի գերազանց իմացության հետ միասին):

Ի. Ա. Զավախովի դասախոսությունները միշտ լի էին մշակույթի պատմության բոլոր հարցերի վերաբերյալ խորա-

գույն հետաքրքրությամբ: Եվ այդ իմաստով Ի. Ա. Զավախովը, ինչպես Մառը, մեզ՝ կովկասագետներին համար բացառիկ արժեքավոր էր ոչ միայն նրանով, որ լրացնում էր, այլև մեզ համար մի աղբյուր էր, որից մենք քաղում էինք եթե ոչ հարցի լուծումը (շատ դեպքերում դեռևս խոսք չէր կարող լինել լուծման մասին), ապա խոր հետաքրքրություն դեպի տարբեր հարցերը, մասնավորապես մշակույթի պատմության հարցերը: Եվ այն ժամանակ, 1907—1908 թթ. (ցարական կարգի պայմաններում), Զավախովը կարողանում էր ավելի օբյեկտիվ, ավելի ուղիղ ու ավելի ազնիվ վերաբերվել կովկասյան մշակույթի պատմության առավել բարդ ու խճճված էջերին: Ահա թե ինչու ոչ միայն ես, այլև, հավանաբար, բոլոր նրանք, ովքեր գեթ մեկ անգամ բախա են ունեցել լսելու Զավախովի դասախոսությունները, չեն կարող ամենախոր ակնածանքով չհիշել նրա անունը:

Արևելյան լեզուների ֆակուլտետում գոյություն ունեցող իրադրությունը ինձ անսովոր էր թվում: Բանասիրական ֆակուլտետում մենք վարժվել էինք պրոֆեսորների հետաքրքրությանը ուսանողների գիտական աշխատանքի նկատմամբ, գիտական վերջին նվաճումները ուսանողների հետ կիսելու պրոֆեսորի ցանկությանը: Ծիշտ այդպես էլ, երբ ես զնում էի Ն. Յա. Մառի դասախոսություններին, գիտեի, որ ոչ միայն լեզվի, այլև հայկական ու վրացական ժողովուրդների կուլտուրայի պատմության և տեքստերի մեկնաբանման վերաբերյալ նախօրյակին Մառի մոտ հղացել է գիտական մի նոր միտք, նոր բազդատում, նոր եզրակացություն, ապա այդ նոր միտքը նա կշարադրի մեզ, ըստ որում այնպես, ինչ ձեռով որ նա մտածել էր առավտության ժամը իննից երկու րոպե պակաս, երբ մտնում էր լսարան, շարադրում էր այն հաշվով, որպեսզի երբ հաջորդ դասախոսությանը առաջանա նոր նկատառում, մեզ շարադրի նաև այդ նկատառումը: Եվ մենք, նրա ամբողջ լսարանը, յոթ-ութ մարդ (երբեմն լինում էին «փղեր», որոնք գալիս էին մյուս լսարաններից, նստում կես ժամ ու զնում, բայց մշտականները յոթ-ութ մարդ էին) գիտեինք, որ մենք միշտ ապրում ենք մեծ գիտնականի ուղեղի լաբորատորիայում: Զավա-

խովը ձգտում էր անել նույնը, բայց պակաս կրքոտությամբ ու ջերմությամբ, առանց ինքն իր վրա բարկանալու, եթե նա հասել էր այնտեղ, որ հաջորդ դասախոսություն ժամանակ պետք է ուղղեր անցյալ անգամ թույլ տված սխալը, ավելի հանգիստ, սակայն այդ բոլորը ծավալվում էր մեր առջև, մենք այդ բոլորն ընկալում էինք մեր ուժերի ներածին շափ, կարող էինք հարցեր տալ և, որ գլխավորն է, կարող էինք կասկածել: Ահա թե այն ժամանակ ինչն էր լավը ն. Յա. Մառի մոտ, այն Մառի մոտ, որին մենք այն ժամանակ գիտեինք, այլ ոչ այն Մառի մոտ, որի շուրջը խունկ ծխելով հասցրին մինչև ծանր հիվանդություն և հրեցին դեպի սխալ հորինվածքները: Ես խոսում եմ այն Մառի մասին, որին ես գիտեի 1904 թ. մինչև 1921 թ., այն Մառի մասին, որն ուրախացնում էր յուրաքանչյուր խոսքի, յուրաքանչյուր կարծիքի համար, թեկուզ ասված լիներ երրորդ կուրսի ուսանողի կողմից: Ծիշտ է, նա ուսանողին «ճիպտահարում էր», եթե դատողությունը արժեքավոր չէր, բայց եթե առողջ մտքի գեթ մի հատիկ լիներ, եթե երիտասարդ ուսանողների դատողությունների մեջ նկատվում էր մտքի ինքնուրույնություն, ապա Մառը գիտեր դրա համար այնպես փայփայել, որ հաջորդ անգամ մենք ավելի վստահ հանգես էինք գալիս այն դեպքերում, երբ կասկածներ էին առաջանում: Տարբերությունն այն բանի միջև, ինչ մենք ստանում էինք ն. Յա. Մառի մոտ, և այն բանի, ինչ մեզ՝ որպես «ապրուստի միջոց» տրվում էր մյուս դասախոսություններին, առավել շեշտակի էր աչքի դարնում: Ահա թե ինչու մեզ բոլորիս, ոչ միայն ինձ, այլ բոլորին, ով Կովկասի կամ այսպես կոչված հայ-վրացա-պարսկական տարակարգի բաժանմունքում էր, — դժվար էր սրող պրոֆեսորներին լսել:

Պրոֆեսորներից մեկը¹², որին մենք սկզբնական շրջանում չէինք սիրում այն բանի համար, որ նա շատ շոր էր թվում, ինձ հիշեցնում էր գիմնազիայի նախապատրաստական դասարանի դասատուին. նա տղայի ամեն մի ժեստ, ամեն մի շարժում գիտում էր որպես բակ փախչելու ձգտում: Այդպես էլ այստեղ, համալսարանի լսարանում, պրոֆեսորը

պարսկական լեզվի հետ կապված ուսանողի մոտ ծագած յուրաքանչյուր հարց գիտում էր որպես ուղղակի և ճիշտ թարգմանությունից խուսափելու ցանկություն, ասենք, Ֆիրդուսուց, որը բաժին էր ընկել ավյալ ուսանողին կամ որպես հարևանի խնդրանքի կատարում, որպես դուք ինչ-որ հարցով զբաղեցնեք դասախոսին, դրա վրա ծախսեք 45 րոպեի ինչ-որ մասը և որպեսզի նա (ձեր աչ հարևանը) կարողանա հանգրստանալ, գիտենալով, որ այսօր թարգմանության հերթը իրեն չի հասնի: Պրոֆեսորի այդպիսի կասկածամիտ վերաբերմունքը մեզ համար շատ ծանր էր... Եվ ես անսահման շնորհակալ եմ իմ բախտից այն բանի համար, որ արդեն համալսարանն ավարտելուց հետո հնարավորություն ունեցաւ. Ա. Ժուկովսկու հետ հանդիպել այլ պայմաններում (հնագիտական ընկերությունում) և հասկանալ, թե այդ մարդը ինչ աստիճանի է տառապում գիտական աշխատանքներից հարկադրյալ կտրվածությունից: Նա մեծ ողբերգություն էր ապրել... Գուցե այն պատճառով, որ նա իր ժամանակին տարվեց հրապուրիչ առաջարկությամբ, գուցե այն պատճառով, որ այդ բանին նրան հարկադրել էր ընտանիքը, — բայց նա իր ժամանակը կիսում էր համալսարանի և Մորսկայա փողոցի վրա գտնվող գիվանագիտական դպրոցի միջև, ուր վարչական և ուրիշ այլ պարտականություններ նրան կտրել էին գիտական աշխատանքից: Ինչպես էր տանջվում այդ մարդը, որ այլևս չի կարող ո՛չ Մերվի հնություններով զբաղվել, ո՛չ խոր կերպով ուսումնասիրել պարսկական բարբառները, ո՛չ զբաղվել գիտական այն աշխատանքով, որի համար մենք բոլորս՝ և ավելի երիտասարդները, և ծերերը, լրիվ հնարավորություն ունեինք:

Մենք ունեինք արաբական լեզվի երիտասարդ դասախոս: Միջին սերնդի ընկերներից շատերը նրան լավ են հիշում: Հմայիչ մարդ էր նա՝ Ա. է. Շմիդտը¹³, որն այնպիսի հրապուրվածությամբ էր մոտենում արաբերենի դասավանդմանը, որ ոգևորում էր նաև մեզ. ցանկություն էր առաջանում

¹³ Շմիդտ Ալեքսանդր Էդուարդովիչ (1871—1939)—արաբական բանահյուսության պրիվատ-դոցենտ:

¹² Խոսքը Վ. Ա. Ժուկովսկու մասին է:

առաջ գնալ այդ ուղղութիւնը, չնայած, որ դու աշխատում ես բոլորովին այլ ասպարեզում, այդ լեզվով ուսումնասիրել և՛ լեզուն, և՛ գրականութիւնը, և՛ այն ամենը, ինչ կարող էր տալ համալսարանը: Շմիդտը շատ լավ մարդ էր: Ես ինձ վրա համարձակութիւն չեմ վերցնի դատելու, թե ինչպիսի արարագետ էր նա, բայց գիտեմ, որ նա հիանալի դասախոս էր, շատ զգայուն ավագ ընկեր: Եվ այդ պատճառով էլ, երբ հաջորդ տարի ես, ինչպես միշտ, մի քանի օր ուշացումով եկա Պետերբուրգ և ընկա Ն. Ա. Մեդնիկովի¹⁴ լսարանը, դա ինձ համար (թող ներեն ինձ Մեդնիկովի աշակերտները՝ և՛ ուղղակի ու անուղղակի, և՛ ժառանգական ու ոչ ժառանգական) մահակի ծանր հարված էր զլխիս: Ես լսարան մտա դասախոսութիւնը սկսելուց երկու րոպե հետո և ահա՛վոր իրադրութեան հանգիստեցի: Դուք մի նեղացեք ինձ վրա, որովհետեւ ես խոր ակնածանքով եմ վերաբերվում Մեդնիկովի ծառայութիւններին, բայց իբրև դասախոս... հավատացնում եմ ձեզ, որ եթե դուք նրան լսեիք, դուք իսկույն կդառնայիք չինագետ, մոնղոլագետ, ինչ ուզում եք, բայց միայն ոչ արաբագետ: Ես լսարան մտա հենց այն րոպեին, երբ Մեդնիկովը, համառորեն թխթխկացնելով ցուցափայտով, ինչ-որ ահա՛վոր խոսքեր էր արտասանում... Հետո նա նույն բանը սկսեց թխթխկացնել կրունկով: Եվ արդեն հետո, երբ մենք անցանք տեքստի ընթերցմանը, այդ արարական բանաստեղծութիւնների ամբողջ զեղեցկութիւնը՝ և՛ դրանց բովանդակութիւնը, և՛ ձևը, բոլորն ինչ-որ տեղ գնաց, կրունկի և ցուցափայտի այն կողմը: Սակայն բոլորը գիտեն, որ Մեդնիկովը բացառիկ մեծ ծառայութիւններ ունեցող մարդ է, այդ բանը հատկապես արտահայտվել է այն ապշեցուցիչ աշխատասիրութեան և խորաթափանցութեան մեջ, որոնցով նա զբաղվում էր Արևելքի պատմութեանը վերաբերող մի ամբողջ շարք արժեքավոր աղբյուրների հավաքմամբ, թարգմանութեամբ և մեկնաբանութիւններով:

Եվ այսպես, Մեդնիկովն ինձ դուր չեկավ: Ես տեղեկացա

14. Մեդնիկով Նիկոլայ Ալեքսանդրովիչ (1855—1918)—արաբական լեզվի պրոֆեսոր:

և իմացա, որ համալսարանը կարող եմ ավարտել՝ չշարունակելով պարապմունքները արաբերենի գծով: Բայց դրա փոխարեն ես զբաղվեցի մի մեծ երջանկութիւնից, որը կարող էր ինձ վիճակվել. ես այդպես էլ չընկա բարոն Ռոզենի¹⁵ լսարանը: «Բարոնի» լսարան տանող ուղին անպայման անցնում էր Մեդնիկովի լսարանի միջով: Իսկ դա իմ ուժից վեր էր: Այն ժամանակ ես արաբերենից վախեցա, իսկ հիմա շատ հաճախ եմ ափսոսում այդ մասին: Դրա համար Մեդնիկովին չեմ նզովում, բայց գիտակցում եմ, որ այդ բանում ինչ-որ շարժում, մոտ քառասուն տոկոսով, մեղավոր է նա, իսկ վաթսուն տոկոսով՝ ես ինքս: Մեդնիկովի հետ դժվար էր նաև այն պատճառով, որ նա մեղանից շատ հեռու էր: Նա, թերևս, միակ դասախոսն էր, որի մոտ սկզբունքային օտարացում էր զգացվում ուսանողական լսարանի նկատմամբ:

Բոլորովին այլ ձևով ես ընկալեցի բնավորութեամբ բովանդակի ծանր մի մարդու, բայց մարդու, որն ինձ տվեց բոլորը, ինչ կարող էր տալ, ավելի ճիշտ, բոլորը, ինչ ես կարող էի յուրացնել և որը իմ հիշողութեան մեջ թողել է ամենաակնածալից զգացմունքը: Դա Պավել Կոնստանտինովիչ Կոկովցովն էր¹⁶: Ինձ համար նա ասորերենի և մի քանի արամեական բարբառների դասախոս էր: Նրա մեջ զուգակցվում էր անսովոր քնքշութիւնը, ֆիզիկական փխրունութիւնը, հիվանդութիւնը, որն արտահայտված էր նրա տառապալու ու տանջված դեմքին, և ոգեշնչման հսկայական ուժը պարապմունքների ժամանակ, երբ մենք նստում էինք երկուսով (եւ նրա մոտ պարապում էի և՛ համալսարանում, և՛ տանը, երբ համալսարանը փակ էր): Այդ պարապմունքների ժամանակ Պավել Կոնստանտինովիչը ինչ-որ անսովոր կերպարանափոխվում էր: Նա մի քիչ տարօրինակ էր, չգիտեմ, զուցե, այդ տարօրինակութեան մեջ որոշ խաղ կար: Օրինակ,

15 Ռոզեն Վիկտոր Ռոմանովիչ (1849—1908)—խոշորագույն արաբագետ և բյուզանդագետ, ակադեմիկոս, Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի նախագահ, արևելյան լեզուների ֆակուլտետի ղեկավար:

16 Կոկովցով Պավել Կոնստանտինովիչ (1861—1942)—խոշորագույն ռուս սեմիտաբան, ակադեմիկոս:

նա այսպիսի առանձնահատկություն ուներ: Համարյա ամեն անգամ դասախոսության ժամանակ համալսարանում թե տանը տեքստի այս կամ այն տեղի կապակցությունը նա հիշում էր իր ուսուցիչ Գ. Ա. Խվոլսոնին¹⁷, ընդ որում միշտ նույն ձևով՝ «Իմ հանգուցյալ ուսուցիչը (այսինքն՝ նա դեռ կենդանի է, բայց նա շատ ծեղ է) Գանիլ Աբրամովիչ Խվոլսոնը... և այլն»: Ընդամենի Խվոլսոնի մասին երբեք վատ բան չէր ասում, դա ուսուցիչ, որն այն ժամանակ իր ութսունվեցերորդ տարին էր ապրում, նկատմամբ մինչ-որ անարժան արարմունքի նախաբան չէր, այլ պարտադիր ֆորմուլա: Ճիշտ այդպես էլ ամեն անգամ նա պետք է շոշափեր այն հարցը, թե ինչու նա հատկապես այդ մուշտակն է հագնում, այլ ոչ ուրիշը, չնայած այդ մուշտակը բոլորովին հարմար չէ, բուրդը թափվում է և այլն: Այդպես էլ էր, այդ խոսքերն ունեին իրենց հիմքը: Սակայն քանի որ նա այդ ասում էր ամեն անգամ, դա տհաճություն էր առաջացնում: Բայց, երբ նա ասորական տեքստերի թարգմանությունից անցնում էր մի ամբողջ շարք տերմինների մեկնաբանմանը, ելնելով ոչ միայն սեմական լեզուներից, երբ նա հայկական ձևերի ու ասույթների իր իմացությամբ փակուղու մեջ էր դնում չորս տարի հայկական քերականության դժվարություններն հաղթահարած հայագետներին, դա խոր հարգանք էր ներշնչում: Իսկ որքան անսահման բարի էր նա, չնայած բոլոր իր արտաքին «չորությունը», որքան ուշադիր էր թույլերի, նեղացածների նկատմամբ: Ես նրան տեսա այն տարիներին, երբ հատկապես հեշտ էր ձանաչել մարդկանց, այն տարիներին, երբ մեզնից շատերից—և՛ երիտասարդներից, և՛ ծերերից—կախված էր՝ ուղղում ես դու արդյոք օգնել մարդուն, որը ուտելիքով և այլ բաներով ապահովված չէ այն շափով, որչափով ապահովված ես դու: Եվ ես շատ լավ եմ հիշում (ևս անձամբ առիթ չունեցա դրանից օգտվելու, որովհետև լրիվ չափով ապահովված էի), թե Պավել Կոնստանտինովիչ Կոկովցովը որքան էր մտահոգված այլ մարդկանց վիճակով,

¹⁷ Խվոլսոն Գանիլ Աբրամովիչ (1819—1911)—երբայակօ՛ն և ասորական գաղության պրոֆեսոր:

որոնց կարող էր օգնել և օգնում էր: Իսկ այնպես, հատկապես մինչև հեղափոխությունը, երբ նայում ես Կոկովցովին, տեսնում ես մի տարօրինակ ծերուկ, չոր մարդու, որն ամեն անգամ և միշտ նույն ձևով խոսում է իր ուսուցիչ Խվոլսոնի մասին, իր մուշտակի մասին և այլն: Հենց այստեղ էլ կավելացնեմ, որ նա շատ հաճախ էր խոսում Վ. Ն. Կոկովցովի՝ ֆինանսների մինիստրի, իսկ այնուհետև մինիստրների խորհրդի նախագահի մասին, որը Պավել Կոնստանտինովիչի հորեղբոր տղան էր: Դա նրա համար մշտական անհանգրստությունների և տառապանքների աղբյուր էր: Շատ անգամ պարապմունքներին նա հիշեցնում էր, որ խնդրում է իր ազգանունը արտասանել «Կոկովցով», այլ ոչ «Կոկովցով», որպեսզի դա չհնչի մինիստրի ազգանվան նման: Նա հաճախ էր մեզ ասում, որ այն փողոցով, ուր ապրում է «այն Կոկովցովը», ինքը չի անցնի, որովհետև, եթե ինքը անցնի, ապա որևէ մեկը, պատահաբար հանդիպելով նրան, կարող է մտածել, որ գնում է «այն մինիստրի» մոտ, իսկ ինքը երբեք նրա մոտ չի գնա և ոչինչ չի խնդրի: Ըստ երևույթին, Պավել Կոնստանտինովիչը շատ ցավում էր, որ մինիստր Կոկովցովը իր հարազատն է, և մշտապես անդրադառնում էր դրան:

Պավել Կոնստանտինովիչը պատմում էր նաև այն մասին, թե ինչպես մի անգամ իր տարօրինակության պատճառով ընկել է հիմար վիճակի մեջ: Նա Ֆինլանդիա գնաց, իսկ վերադարձին, անձնադրերի ստուգման ժամանակ, ոստիկանը զարմանքով հարցրեց նրան, ինչու նա չի փոխում իր անձնագիրը: Պարզվում է, որ Պավել Կոնստանտինովիչի անձնագիրը շատ հին է, նրա մեջ գրված է, որ նա ավարտելուց հետո մնացել է համալսարանում (այսինքն՝ ասպիրանտ): Պավել Կոնստանտինովիչը, արդեն ակադեմիկոս լինելով, շրջում էր այդ անձնագրով: Նա սկսում է ոստիկանին մանրամասն բացատրել, որ այդ անձնագրից նա բաժանվել չի կարող, որովհետև նրան թանկ է հատկապես այն, որ այնտեղ գրված է Պետերբուրգի համալսարանի ասպիրանտի նրա կոչումը: Ոստիկանը, ըստ երևույթին, այն ժամանակ շատ ուշացավ, լսելով Պավել Կոնստանտինովիչի մանրամասն բացատրությունը:

Մի անգամ, երբ տանը ես պարապում էի նրա հետ, նա ինձ զարմացրեց իր հոգնած տեսքով: «Գուցե դուք առողջ չե՞ք, Պավել Կոնստանտինովիչ»,— հարցրեցի նրան:— «Ես իրոք հոգնել եմ,— պատասխանեց նա,— որովհետև վերջին շաբաթը ամեն օր վեր եմ կենում ժամը 2-ին և մինչև 4-ը չեմ քնում: Իսկ դա հոգնեցուցիչ է, որովհետև առավոտները հարկ է լինում վաղ վեր կենալ»:

Ես որոշեցի, որ նա ինչ-որ բանով հիվանդ է: Պարզվեց, որ ոչ: Ամեն օր նա զարթուցիչ ժամացույցը դնում էր ժամը 2-ի վրա: Ժամը 2-ին զարթուցիչը նրան արթնացնում էր, և նա նստում էր դաշնամուրի մոտ (նա ուներ մի սքանչելի հին դաշնամուր) ու նվագում երկու ժամ, և այն էլ միայն աղմկային բաներ:

Ես հարցրեցի, թե ինչու է նա այդ անում, և պարզվեց հետևյալը: Ինչ-որ մի անգամ, այն է Նիկոլայ Հրաշագործի, այն է Գեորգ Հաղթաբերի օրը Պավել Կոնստանտինովիչի հարևանները անվանակոչության տոնախմբություն էին կատարում և մինչև ուշ գիշեր նրանց մոտ սարսափելի աղմուկ էր: Երբ Պավել Կոնստանտինովիչը նրանց խնդրել էր ավելի քիչ աղմկել, նրանք պատասխանել էին. «Մենք մեր բնակարանի տերն ենք, ինչ ուզում ենք, այն էլ անում»: Եվ ահա Պավել Կոնստանտինովիչը, վերընթերցելով Մովսեսի օրենքի համապատասխան գլուխը, որոշեց վրեժխնդիր լինել հարևաններից— «ակն ընդ ակա՛ն»... Այդ ժամանակից սկսած նա կանոնավորապես ժամը 2-ին վեր էր կենում, մինչև ժամը 4-ը նվագում ամբողջ թափով, և հետո ամբողջ օրը ման էր դալիս շարված: «Դադարեցրեք, Պավել Կոնստանտինովիչ»,— խնդրեցի նրան,— «Ոչ, ես որոշել եմ դա անել երկու շաբաթ»:

Ես, դուցե, տարվեցի և շափաղանց շատ զվարճալի բաներ նշեցի Պավել Կոնստանտինովիչի բնավորությունից: Սակայն, նկատի ունեցեք, որ Պավել Կոնստանտինովիչի հիշատակը ես խորապես հարգում եմ, հատկապես նրա կյանքի վերջին տարիներին նրա հետ ունեցած հանդիպումների հիման վրա: Բայց ես դեռ ձեզ շասացի երկու մանրուքի մասին, որոնցից, սակայն, երկրորդը, նույնիսկ առաջինն էլ մանրուք չէ, և դրանք միատեղ ի վիճակի են իսկական պատ-

կերացում տալ այն մասին, թե իր բոլոր տարօրինակություններով հանդերձ ինչպիսին էր Պ. Կ. Կոկովցովը:

Արևելյան լեզուների ֆակուլտետը նիստ էր անում: Պետք է ասել, որ, ի տարբերություն մեր համալսարանի մյուս ֆակուլտետների, այս ֆակուլտետը իր կազմի մեջ մտցրել էր, ճիշտ է խորհրդակցական ձայնի իրավունքով, և՛ պրիվատ-դոցենտներին, և՛ դոցենտներին (երբ այդ կոչումը վերականգնվեց 1917 թ. սեպտեմբերին): Այդ պատճառով էլ մենք միշտ լինում էինք ֆակուլտետի նիստերին: Չլինել մենք չէինք կարող, քանի որ կարգապահությունը շատ խիստ էր: Եվ ահա նիստերից մեկի ժամանակ մի հիանալի միջադեպ տեղի ունեցավ, որը սպառնում էր վերջանալ խայտառակությամբ, եթե չլուծվեր այնպես, ինչպես լուծվեց: Քննարկվում էր Օ. Օ. Ռոզենբերգին¹⁸ մեր համալսարանի դոցենտների թվում ընտրելու հարցը (չեմ հիշում թե ինչու, բայց թեկնածուների քննարկումը երկու նվազով էր անցկացվում, այնպես որ երեք-չորս մարդ անցել էին): Արևելյան ֆակուլտետում Օ. Օ. Ռոզենբերգին շատ բարձր էին գնահատում, նրան վերաբերվում էին շատ ջերմ և լավ: (Դժբախտաբար, Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ չանցած նա հիմարաբար զոհվեց այն ժամանակ, երբ փորձում էր թողնել մեր հայրենիքի սահմանները. նա տուժեց Ֆիննական ծոցում, այն է՝ նավակից ընկավ, որից հետո հիվանդացավ և մեռավ):

Ռոզենբերգի թեկնածության քննարկման ժամանակ բոլոր ելույթ ունեցողները նրա մասին բացառապես լավ խոսեցին, հատկապես Ֆ. Ի. Շչերբատսկոյը¹⁹: Հետո տեղի ունեցավ քվեարկությունը: Եվ հանկարծ պարզվեց, որ մեկ ձայն դեմ է: Շչերբատսկոյը զայրացած էր, որովհետև դրանից ոչ շատ առաջ Ռոզենբերգը ավարտել էր մի մեծ աշխատանք և նրա թեկնածությունն անվիճելի էր: Երբ Շչերբատսկոյը, չհամ-

¹⁸ Ռոզենբերգ Օտտո Օտտոնովիչ (1888—1919)—ճապոնագետ-բուդդայազետ:

¹⁹ Շչերբատսկոյ Ֆյոդր Իպպոլիտովիչ (1866—1942)—սանսկրիտ բանահյուսության պրոֆեսոր, խոշորագույն ուսուցիչ-բանասեր, ակադեմիկոս:

բերելով, ասաց. «Կուզենայի իմանալ, ով է «սև քվե» տը-վել»,— Պավել Կոնստանտինովիչը իսկույն պատասխանեց. «Ես կարող եմ Ձեզ ասել՝ այդ ես եմ դրել»։— «Ինչու՞ Դուք ի՞նչ գիտեք նրա մասին: Ձե՞ որ դուք սեմագետ եք, երբեք չեք զբաղվել բուզդիզմով»: Այդ պատճառով էլ ես «սև քվե» դրեցի,— պատասխանեց Պավել Կոնստանտինովիչը:— Հի-շեցե՛ք, երբ երկու տարի սրանից առաջ ֆակուլտետում վը-ճըովում էր հայ-վրացական տարակարգի ծրագրի հարցը և ես պնդում էի, որ ասորերենը լինի պարտադիր, Դուք այն ժամանակ դեմ քվեարկեցիք: Իսկ ի՞նչ եք Դուք հասկանում ասորերենից և հայ-վրացական տարակարգից»: Ձեզանից ով ճանաչում է Ֆյոդր Իպպոլիտովիչին, հավանաբար, պատ-կերացնում է, թե որքան սարսափելի էր նա ցասման պահին:

Բայց, դնից դուրս գալիս, Պավել Կոնստանտինովիչը միջանցքում հանդիպեց Օ. Օ. Ռոզենբերգին, կանգնեցրեց նրան և ասաց (ես կանգնած էի կողքին). «Նկատի ունեցեք, որ ես Ձեզ շատ եմ հարգում, բայց ես Ձեզ դեմ քվեարկեցի, որպեսզի Ձեր ուսուցիչը հասկանա, թե նա որքան հիմար վարվեց երկու տարի առաջ»:

Վերջապես, որպեսզի դուք լավ պատկերացնեք, թե ինչ-պիսին էր Պավել Կոնստանտինովիչը, ես երկու խոսք կասեմ նրա կյանքի ամենավերջին ամիսների մասին: 1941 թվա-կանի սեպտեմբերին կառավարությունը մի շարք գիտնական-ների և արվեստի գործիչների առանց որևէ գլխացավանքի մեր քաղաքի սահմաններից ինքնաթիռով դուրս թռչելու լրիվ հնարավորություն ընձեռեց: Թյուրիմացաբար այդ ցուցա-կի մեջ չէր ընկել Պ. Կ. Կոկովցովը: Սակայն նա այդ մասին շգիտեր, որովհետև հենց որ այդ բանը պարզվեց, ուղիղ գծով կապվեցին Մոսկվայի հետ և Կոկովցովի ազգանունը մտցվեց ցուցակի մեջ (իսկ նա ցուցակի մեջ չէր ընկել այն պատճառով, որ մտածել էին, թե արդեն մեկնել է): Եվ ահա Պավել Կոնստանտինովիչին առաջարկեցին մեկնել: Նա հրա-ժարվեց: Այնժամ ինձ հանձնարարվեց ձեռք բերել նրա հա-մաձայնությունը: Ես վերջինիս մոտ ուղարկեցի նրա սիրելի աշակերտ և իմ կողմից շատ սիրված ու հարգված, այժմ

հանգուցյալ Ա. Յա. Բորիսովիչն²⁰: Պավել Կոնստանտինովի-չին նա երկար համոզում էր մեկնել, բայց վերջինս ասաց, որ իր կյանքի մեծ մասը ապրել է այս քաղաքում և մտադիր չէ այսուհետև նրանից դուրս ապրել: Եվ նա շեղեց, այն-պես ինչպես շեղեց նաև Սերգեյ Ալեքսանդրովիչ Ժերել-յովը, որի մահը այնպիսին էր, որը մենք սովորաբար վերամբարձ հառերում և առօրյա խոսակցություններում անվանում ենք մահ «պոստում»:

Ս. Ա. Ժերելյովը, եթե չեմ սխալվում, այն ժամանակ ղեկավարում էր գիտությունների ակադեմիայի ինստիտուտ-ներից մեկը, բայց նրա վրա լրացուցիչ դրվել էր նաև՝ շտապ, առանց նախազգուշացնելու կենինգրագից մեկնած գիտու-թյունների ակադեմիայի նախագահության լիազոր անձի պարտականությունները: Հետո սկսվեց մի շարք դիրեկ-տորների մասսայական մեկնումը ինքնաթիռով. այդ մեկ-նումները, որ կատարվում էին առանց իրենց հիմնարկներին զգուշացնելու ես, զույգ, որովհետև հիշաշար եմ, մոռանալ չեմ կարող, քանի որ շատ դեպքերում, որպես կանոն, այդ մեկնումներին նախորդում էր դիրեկտորի խիստ առաջա-գրանքը՝ հաջորդ օրը երեկոյան տվյալ ինստիտուտի աշխա-տողների խորհրդակցություն հրավիրելու մասին: Իսկ երբ գալիս էր խորհրդակցության ժամը, պարզվում էր, որ դի-րեկտորը արդեն ռազմաճակատից այն կողմ ինչ-որ տեղ է: Այդպես, Ս. Ա. Ժերելյովը դարձավ գիտությունների ակա-դեմիայի շորս կամ հինգ հիմնարկների ղեկավար և գիտու-թյունների ակադեմիայի նախագահության լիազոր անձը: Նա ամեն օր այցելում էր բոլոր այն հիմնարկները, որոնք ղեկավարում էր: Իսկ դա 1941 թվականի դեկտեմբերն էր: Ձեզանից նրանք, ովքեր այդ ժամանակ եղել են կենինգրա-դում կամ ովքեր գիտեն կենինգրագի այդ ժամանակի պատ-մությունը, պատկերացնում են, թե դա որքան ծանր էր: Ժերելյովին առաջարկում էին, նրան խնդրում էին, պնդում, հրամայում, որպեսզի ինքնաթիռով մեկնի: Վերջապես նա

²⁰ Բորիսով Անդրեյ Յակովլևիչ (1903—1942)—մշակույթի աշխի ընկ-նող պատմաբան, սեմագետ և իրանագետ:

դնաց օգանավակայան, նախապես հայտարարելով. «Ենթարկվում եմ բռնություն»։ Իսկ հենց որ օգանավակայանում մի փոքր խոչընդոտ առաջացավ, նա պահանջեց, որպեսզի իրեն ետ տանեն տուն։

Իր կյանքի վերջին ամսին Ժեբելյովը փաստորեն ոչնչով չէր սնվում։ Այդ նրան շխանդարեց դեկտեմբերի 10-ին, սաստիկ սառնամանիքին (Ալեքսանդր Նիկոլաևիչը²¹, հավանաբար, հիշում է այդ օրը), երբ սկսվել էր այդ շրջանի հրետանային գնդակոծությունը և նեալի վրա արկեր էին ընկնում, գալ նավոթի հիշատակին նվիրված նիստին։ Այնտեղ դեկուցում կարդացին և՛ Ալեքսանդր Նիկոլաևիչը, և՛ ուրիշ ընկերներ։ Դրանից հետո Ս. Ա. Ժեբելյովին ես միայն մեկ անգամ տեսա։ Նա, հավաքելով վերջին ուժերը, հազիվ հասավ էր միտած նրա համար, որպեսզի ասի, թե ինչպիսի բավականություն է ստացել այն բանից, որ բոլորային ենթարկված Լենինգրադում սկզբում նշել են Նիզամու, իսկ հետո նավոթի հիշատակը, և որ այդ բանում նա տեսնում է գիտության հաղթանակը ու այն կուլտուրայի հաղթանակը, որի համար մարտնչում են միլիոնավոր սովետական զինվորներ։

Դա մեր վերջին հանդիպումն էր։ Սերգեյ Ալեքսանդրովիչը լեցուն էր ոչ այն է թաքնված արցունքներով, ոչ այն է՝ ավելի վեհ բանով... Իսկ երեք օր հետո նա այստեղ, մեր համալսարանի մոտ ընկավ, փոխադրվեց հիվանդանոց և այլևս երբեք վեր չկացավ...

Ահա թե ինչու, երբ հիշում եմ Պ. Կ. Կոկովցովին և Ս. Ա. Ժեբելյովին... ծխելու խիստ պահանջ է առաջանում։

Ֆակուլտետում կային նաև ուրիշ հիանալի պրոֆեսորներ։ Կար Ֆ. Ի. Շչերբատսկոյը, մի քիչ ճովսակյաց էր, բայց դրանով հանդերձ Լնդկաստանի, հնդկական մշակույթի գծով մեր ժամանակի խոշորագույն գիտակն էր, խոշորագույն սանսկրիտագետ և հնդկական փիլիսոփայության հիանալի մաս-

²¹ Բուլգիր Ալեքսանդր Նիկոլաևիչ—բանասեր-իրանագետ, Լենինգրադի պետական համալսարանի պրոֆեսոր։

նագետ։ Իր այդ աշխատությունների կողքին ինչ-որ ձևով նա միշտ կարողանում էր բարձրաշխարհիկ մարդու և փարթամ ազալի տեսք ունենալ։ Եվ ահա այդպիսի փարթամ ազալի դիրքերից էլ նա սիրում էր ձեռ առնել մերթ՝ վ. Գ. Սմիռնովին²², մերթ՝ Պ. Կ. Կոկովցովին։

Պավել Կոնստանտինովիչը ոչ մի անվայել խոսք տանել չէր կարող, իսկ Ֆյոդոր Իպպոլիտովիչը զվարճանում էր նրանով, որ սկսում էր մի բան պատմել, իսկույն հասկացնել տալով, որ վերջը անվայելուչ է լինելու։ Նրան հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես, մինչև վերջ չլսելով, Պավել Կոնստանտինովիչը դուրս էր թռչում սենյակից։

Որպես դասախոս Ֆյոդոր Իպպոլիտովիչը հիանալի էր։ Նա միայն մեկ թերություն ուներ (այդ թերությունը շատ դասախոսների մոտ է լինում, հատկապես բարձրագույն ուսումնական հաստատություններում)։ Նա կողմնորոշվում էր ոչ թե թույլերի, այլ ուժեղների վրա։ Դա սխալ էր։ Զգիտեմ, ինչպես է այժմ, գուցե այդպես էլ պետք է (ես վաղուց չեմ դասավանդում), բայց այն ժամանակ մենք կգերադասեինք, եթե նա կողմնորոշվեր թույլերի կողմը, եթե ոչ ըստ թույլերի ընդունակությունների, ապա ըստ ետ մնացողների ծանրաբեռնվածության։ Իսկ նա առաջ էր սլանում, թողնելով, որ հասնեն իրեն։ Սակայն, նա դասավանդում էր հիանալի ձևով։ Զեզանից նրանք, ովքեր գուցե լսել են հայկական լեզվի ուսումնասիրության հողի վրա Մառի հետ տեղի ունեցած նրա խոշոր ընդհարման մասին, հավանաբար, սխալ են պատկերացնում իրադրությունը։ Նա արտակարգ բարձր էր գնահատում Մառի՝ հայոց լեզվին նվիրված աշխատանքները։ Այստեղ բախվել էին երկու ուղղություն՝ մեկը մաքուր հնդեվրոպականն էր, մյուսը այն, որի հոյակապ հիմքը դրել էր Մառը։ Ֆյոդոր Իպպոլիտովիչը շատ էր խանդում հնդեվրոպական լեզուներին, այդ թվում հայերենին, և ես ապշում էի, թե ինչպես էր նա կարողանում այդ աստիճանի տեղակույություն գրաևորել հայոց լեզվի արտակարգ բարդ երևույթների

²² Սմիռնով Վասիլի Գմիտրիևիչ (1846—1922)—թուրք-թաթարական բանասիրության պրոֆեսոր։

և սանսկրիտ տեքստերի հետ դրանց ունեցած կապի հարցում, այն տեքստերի, որոնք մենք կարգում էինք:

Նրա ուժի մեծությունը նաև այն էր, որ, երբ դիմում էին իրեն, նա սիրով խորհուրդներ և ցուցմունքներ էր տալիս, եթե նույնիսկ դա լիներ ամենահամեստ, փոքր, սկսնակ հետազոտող: Այդ ժամանակ նրանից անմիջապես հեռանում էր ալարկոտ տոնը (ճիշտ է, այդ տոնը նրա մոտ զարգացավ ծերունական հասակում, երիտասարդ ժամանակ այն քիչ էր դրսևորվում): Գա իսկական, լավ դասախոս էր, և մենք բուլտրս (նույնիսկ նրանք, ովքեր չէին լսում նրա դասախոսությունը) նրան շափազանց հարգում էին:

Վ. Գ. Սմիռնովը տարօրինակ մարդ էր: Ձեզանից նրանք, ովքեր մոտիկ են կանգնած թուրքագիտության հարցերին, նրան գիտեն որպես խոշոր մասնագետ-թուրքագետի: Մենք նրան նաև այլ կողմից գիտեինք՝ որպես արտակարգ խաչվող և փնթփնթացող մարդ: Նա լեզու չէր գտնում Վ. Վ. Ռադլովի²³ հետ, չէր սիրում այն աշակերտներին, որոնք զբաղվում էին Միջին Ասիայի թուրքական լեզուներով: Այդ հողի վրա նրա և աշակերտներից մեկի՝ Ա. Ն. Սամոյլովիչի²⁴ միջև (որի նկատմամբ նա արդարացի չէր) շատ ընդհարումներ եղան:

Որոշ ժամանակ Վ. Գ. Սմիռնովը մեզ համար «հերոս էր»: Դրան նախորդել էր հետևյալ պատմությունը: Հանգուցյալ Բրաունը, գերմանագետ, գործուղման կամ ամառ ժամանակ աշխատելով Ղրիմում, հանգիպել էր Ղրիմի թաթարների լեզվի որոշ երևույթների, որոնք, նրա կարծիքով, կապված են գոթական լեզվի հետ: Այդ առթիվ նա ղեկուցում կարդաց: Բայց շփոթությունը կատարյալ էր, որովհետև պարզվեց, որ դրանք Ղրիմի թաթարական բարբառներին հատուկ սովորական խոսակցական արտահայտություններ են: Գուր պատ-

կերացնում էք, թե մենք՝ արևելագետներս, ինչպես ուրախացանք: Ոչ նրա համար, որ մենք գոթական լեզվի հակառակորդներ էինք կամ այն ժամանակ կարող էինք կանխատեսել թե Ղրիմի նկատմամբ գոթական թեորիայից հետագայում ինչ կսարքեն հիտլերյան ֆաշիստները, մեզ պարզապես հաճելի էր, որ մեր ֆակուլտետի թուրքագետը շշմեցրեց գոթական լեզվի ուսումնասիրողին:

Ես Սմիռնովի հետ հանդիպում էի հնագիտության հողի վրա, հատկապես Թուրքիայում լինելուց հետո, և նա մասնաճամասն հարցնում էր անում շատ բաների մասին, որոնք իմ աշխատանքի ծրագրի մեջ չէին մտնում:

Ես արդեն հիշատակեցի, թե ինչու ինձ չհաջողվեց ընկնել Ռոզենի լսարանը: Այստեղ, իհարկե, ամենից առաջ մեղավոր էի ես, մասամբ մեղավոր էր Մեդնիկովը, բայց բանը դրանում չէր: Բանը նրանումն էր, որ ես կորցրեցի այդ հիանալի գիտնականին գիտելու հնարավորությունը, որը, եթե չեմ սխալվում, արաբական ցեղերի բնակավայրերում երբեք չլինելով հանդերձ խոշորագույն արաբագետ էր: Կարծում եմ, որ ես չեմ շափազանցում, համենայն դեպս, նման կարծիքը ես չուրացրել եմ Վ. Ռ. Ռոզենի, կամ «բարոնի», ինչպես կոչում էին նրան, բոլոր աշակերտներից: Նրան այդպես կոչելը կարծես ընդունված էր (մինչդեռ ոչ ոք չէր մտածում բարոնի տիտղոսով կոչել Տիզենհաուզենին)²⁵ և այդ կարճ «բարոն» բառում հնչում էր ամեն ինչ՝ և՛ անսահման հարգանք նրա նկատմամբ, և՛ անսահման սեր բոլորի կողմից, ինչպես աշակերտների, այնպես էլ նրանց, ովքեր չլինելով նրա աշակերտը, սովորել էին նրան հարգել (օրինակ, Ս. Ֆ. Օլզենբուրգը²⁶ և մի շարք այլ անձինք, որոնք երբեք նրան չէին լսել):

Ռոզենին ես գիտեի անթիվ կարծիքներից և, գլխավորը, այն հատուկ ձևով, որով արտասանվում էր նրա անունը կամ

²³ Ռադլով Վասիլի Վասիլևիչ (1837—1918)—խոշորագույն ռուս թուրքագետ, ակադեմիկոս:

²⁴ Սամոյլովիչ Ալեքսանդր Նիկոլևիչ (1880—1937)—թուրքա-թաթարական բանահյուսության պրիվատ-դոցենտ և կրտսեր ասիստենտ, ակադեմիկոս:

²⁵ Տիզենհաուզեն Վլադիմիր Գուստավովիչ (1825—1902)—ռուսական արևելագետ, հնագետ և դրամագետ:

²⁶ Օլզենբուրգ Սերգեյ Ֆյոդորովիչ (1863—1934)—սանսկրիտ դպրության պրոֆեսոր, ակադեմիկոս:

«բարոն» կարճ բառը, որն այն ժամանակ (1905 թվականից հետո) ընդհանրապես աններդաշնակ էր հնչում: Ես Ռոզենին հնազիտական ընկերությունում հաճախ էի տեսնում և կարող էի դիտել այդ՝ իսկապես խիստ ապշեցուցիչ երևույթը: Ես առիթ էմ ունեցել ծանոթանալ Ռոզենի մի շարք դատողությունների հետ, և ես նոր ուժով էի զգում, թե դա ինչ արտակարգ անձնավորություն է, հասկացա, թե ինչու, հատկապես այդպիսի մարդը կարող էր իսկապես ստեղծել արեւելյան ֆակուլտետը: Լրանում է արեւելյան ֆակուլտետի հարյուրամյակը, սակայն այն կարևոր փոփոխություններով, որոնք տեղի ունեցան այն ժամանակ, երբ արեւելյան լեզուների ֆակուլտետը դադարեց Պետերբուրգի համալսարանի ֆակուլտետը լինելուց և դարձավ Լենինգրադի համալսարանի ֆակուլտետ՝ դրանով մենք պարտական ենք Ռոզենին: Դրա հետ միասին պետք է նշել ուսական հնազիտական ընկերության արեւելյան բաժանմունքի հիանալի կազմակերպումը:

Ռուսական հնազիտական ընկերությունում իմ խոսակցությունը անմիջապես Ռոզենի հետ շատ կարճ էր և քիչ հուսադրող: Ն. Յա. Մառը նրանից թույլտվություն խնդրեց, որպեսզի ուսանող Օրբելին մասնակցի ընկերության նիստին: Իսկ Վ. Ռ. Ռոզենը ո՛չ ուսանողներին, ո՛չ կանանց չէր թողնում նիստերին: (Կանանց առիթով մի անգամ նրան ասացին, որ նա սկզբունքային չէ, քանի որ Մոսկվայից եկել է Պ. Ս. Ուլարովան և մասնակցել նիստին: Դրան Վիկտոր Ռոմանովիչը պատասխանեց, որ Պրասկովյա Սերգենևան կին չէ, այլ Մոսկվայի հնազիտական ընկերության նախագահը): Բայց այդ օրը նա ինձ թույլատրեց մասնակցել: Երբ Ն. Յա. Մառը ինձ տարավ Ռոզենի մոտ, որպեսզի ներկայացնի, որ սա հենց այն ուսանողն է, որը նիստին մասնակցելու թույլտվություն է ստացել, Ռոզենը ինձ նայեց ներքևից (որովհետև հասակով նա ինձնից ցածր էր), բայց ինձ թվաց, որ նա վերևից ներքև նայեց և ասաց. «Միայն, խնդրում եմ, երիտասարդ, չ՛պարտանաք, որ ես Ձեզ այստեղ թողեցի, ես թողեցի Ն. Յա. Մառի աշակերտին»: Եվ ես այդ շնորհագր: Դա դիտության մեջ բարի երթ մաղթել էր, մի տղա ուսա-

նողի համար շատ օգտակար (ես ինձ էմ տղա անվանում, այնպես որ թող ուսանողները չվիրավորվեն):

Ահա հնազիտական ընկերության Արևելյան բաժանմունքի մասին է, որ ես ցանկանում եմ ձեզ հետ խոսել: Բայց դրա համար հարկավոր է պարզաբանել, թե ինչ հող ստեղծվեց արևելյան ֆակուլտետում, որպեսզի այդպիսի բացառիկ պետքական, կարևոր և արժանի դառնա հնազիտական ընկերության Արևելյան բաժանմունքը:

Պետք է ասել, որ ինձ առիթ է եղել լինելու տարբեր գիտական ընկերությունների անդամ, բայց ոչ մի տեղ, բացի Ռուսական հնազիտական ընկերության Արևելյան բաժանմունքից, այդքան չեմ զգացել գիտական համերաշխություն, ընկերության անդամների համախմբվածություն արևելագիտության հարցերի ինչ-որ ընդհանուր խնդիրների շուրջը: Հիշում եմ, ինչպես մի անգամ, երբ ես արդեն հնազիտական ընկերության անդամ էի, միտք չունեի գնալ չինագետի զեկուցմանը: Ինձ թվում էր, թե զեկուցման թեման ինձնից շատ հեռու է, ես այդ երեկոյի համար ինչ-որ ավելի լավ բան էի նախատեսել, և որոշեցի զեկուցմանը չգնալ: Հենց այդ ժամանակ էլ Մառը հարցրեց ինձ. «Դուք կլինե՞ք զեկուցմանը»:— «Ոչ»:— «Ինչո՞ւ»:— «Զեկուցումը հետաքրքիր չէ»: «Իսկ դուք համոզվա՞ծ եք, որ Ձեր բոլոր զեկուցումները բոլորի համար հետաքրքիր են եղել»: Եվ այնուհետև թվարկեց. «Իմանովը չինագետ է, այսինչը չինագետ է և այլն: Սակայն նրանք եկել և լսել են Ձեր զեկուցումները: Դուք հասկացե՞ք,— ասաց Նիկոլայ Յակովևիչը,— որ հնազիտական ընկերության Արևելյան բաժանմունքը ուժեղ է նրանով, որ նա անհետաքրքիր զեկուցումները հետաքրքիր է դարձնում ներանց համար, ովքեր լսում են այդ զեկուցումները»:

Եվ, իսկապես, Արևելյան բաժանմունքի նիստերում տեղի էր ունենում յուրաքանչյուր առանձին մասնագետի այն վերամշակումը, որը նրան, կախված նրա ընդունակություններից և բարի կամքից, դարձնում էր իսկական արևելագետ, աշխարհի բոլոր արևելագիտական ջոկատներից ամենալայնի՛ ուսական արևելագիտության իսկական ներկայացուցիչ:

Դա մի կողմից էր, ուր ոչ մեկը ոչ ոքի պարտական չէր,

և այդ պատճառով էլ բոլորը անառարկելիորեն կատարում էին իրենց պարտականությունները: Մի անգամ հարց բարձրացավ, թե ում գործուղել կովկաս՝ Գառնիի պեղումներին մասնակցելու համար: Գառնին Երևանի մոտ գտնվող վայր է: Այնտեղ կա մի հիանալի անտիկ տաճար, որը հարկավոր էր պեղել: Բնական է, որ արշավախումբը ղեկավարում էր Ն. Յա. Մառը, բայց հարկավոր էր նրան որպես օգնություն տալ ճարտարապետներ, անտիկ աշխարհի մասնագետներ և այլն: Ես ներկա էի այդ նիստին, որը տեղի ունեցավ 1908 թ. աշնանը կամ 1909 թ. գարնանը, որովհետև 1909 թ. աշնանը պեղումներն արդեն սկսվել էին: Եվ գիտեք, ես երբեք չեմ մոռանա, թե ինչպես մեկը մյուսի հետևից վեր էին կենում գիտության լավագույն ներկայացուցիչները (միայն Մ. Ի. Ռոստոմյանը հրաժարվեց և դա իր համար չընդունեց որպես պարտագիր) և հայտարարում, որ եթե ընկերությունը հանձնարարի իրենց, ապա նրանք կհրաժարվեն այս կամ այն աշխատանքից և կմեկնեն Գառնիի պեղումներին: Այսպես բարձր էին գնահատվում Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի կարծիքն ու տեսակետները:

Նկատի ունեցեք, որ ընկերության անդամները այնպիսի մարդիկ էին, որոնք դրա համար ոչ մի աշխատավարձ չէին ստանում: Ընկերության հետ կապված միակ դրամական հարաբերությունն այն էր, որ մենք բոլորս պետք է անդամավճար մուծեինք: Սակայն դրա փոխարեն, եթե այսինչ նիստին նախատեսված էր ձեր ղեկուցումը, ապա չկատարել պարտականությունը, շնորհակալ և չկարող ղեկուցումը բացարձակապես անհնար էր ինչպես երիտասարդների, այնպես էլ ծերերի համար: Ես հիշում եմ, թե ինչպես էր հուզվում Վ. Վ. Բարթոլդը²⁷, երբ պետք է Հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի նիստում ղեկուցում կարդար:

Այստեղ շատ զավեշտական դիպվածներ էին լինում: Չեմ կարող մոռանալ մի այսպիսի դեպք: Ն. Յա. Մառը այն ժա-

մանակ Արևելյան ֆակուլտետի ղեկան էր: Մենք պետք է ղեկուցման գնալինք Հնագիտական ընկերություն, բայց արեւելյան ֆակուլտետի նիստը ձգձգվեց: Այն վերջացավ միայն ժամը 7-ին և մենք խմբով ուղևորվեցինք ղեպի Լիտվյնի, որտեղ տեղավորված էր Հնագիտական ընկերությունը: Այն ժամանակ Արևելյան բաժանմունքի նախագահը Վ. Վ. Բարթոլդն էր: Կամաց, անլսելի (նա միշտ, բացի առանձին պահերից, խոսում էր ցածր) նա բացեց նիստը և ղեկուցում կարդաց: Ն. Յա. Մառը ուղեց ինչ-որ բան ասել, բայց Բարթոլդը նրան ընդհատեց և ինչ-որ գիտողություն արեց: Մառը զայրացավ և ասաց. «Ես Ձեզ ձայն չեմ տվել»:— «Ինչպե՞ս թե ինձ ձայն չեք տվել»: «Ձե՞ որ ես եմ նախագահը»:— «Իսկ ես մոռացա,— ասում է Մառը,— ես կարծեցի, թե դա Արևելյան ֆակուլտետն է»: Այդ բոլորը միախառնվել էր մեր գիտակցության մեջ:

Ֆակուլտետի և Արևելյան բաժանմունքի միջև եղած տարբերությունը կայանում էր նրանում, որ ֆակուլտետ կարելի էր չգնալ, իսկ Արևելյան բաժանմունքի նիստերը բաց թողնել հնարավոր չէր: Այսպիսին էր այն հիմնական դիրքավորումը, որը տվել էր Վ. Ի. Ռոզենը: Գա թելադրվում էր ոչ միայն կարգապահությունը, այլև նրանով, որ Արևելյան բաժանմունքի նիստերում երբեմն տասն անգամ անդրադառնում էին միևնույն թեմային: Հիշում եմ, թե ինչպես իմ ծանոթներից մեկին, որը սեղանիս վրա տեսավ Արևելյան բաժանմունքի «Ձեկույցները», զարմացրեց այն, որ մի ամբողջ շարք ղեկուցումներ կոչվում էին. «Նորից «չելեբի» բառի մասին»: Իսկապես «չելեբի» բառին նվիրված էր հինգ թեմ վեց ղեկուցում, այդ թվում և այնպիսիք, ինչպես Ն. Յա. Մառի ղեկուցումն էր՝ ավելի քան վեց տպագրական մամուլ ծավալով: Հաճախ ենք այդ բառին անդրադարձել, որովհետև Վ. Գ. Սմիռնովը հետաքրքիր համեմատություն էր արել հունարեն Χαλιεπις (պերճախոս) բառի հետ. այդ բառի մասին խոսեցին և՛ Ռոզենը, և՛ Մառը, որն առաջին անգամ բարձրացրեց բրդերի մշակույթի ուսումնասիրության հարցը: Թեմաները հասունացվում էին տարիներով, և երբ որևէ մեկի մտքով անցներ, որ այդ առիթով կարելի է էլի ինչ-որ

²⁷ Բարթոլդ Վասիլի Վլադիմիրովիչ (1869—1930)—Արևելքի խոշորագույն պատմաբան, ակադեմիկոս:

քան ասել, նոր հետաքրքիր նյութ ներքաշել, նոր մտքերի փոխանակություն առաջացնել, ապա դա նորից քննարկվում էր: Դրանում էր արտահայտվում այն հիանալի ընկերության ուժը, որի մեջ մենք տեսնում էինք բոլոր արևելագետներին, որոնք այն ժամանակ ապրում էին Պետերբուրգում, իսկ սովետական իշխանության առաջին տարիներին՝ Լենինգրադում:

Արևելյան բաժանմունք էին հավաքվում բոլոր արևելագետները, ի դեպ հավաքվում էին ոչ թե ի պաշտոնե, այլ իրենց ցանկությունքով և հետաքրքրություն համար: Այստեղ այն փոքրաթիվ զեկուցումներին, որոնք կարգում էր Վ. Ա. Ժուկովսկին, ես կարող էի տեսնել նրա թախժոտ հայացքը, երբ նա ավարտում էր իր հաղորդումը և գիտակցում, որ այժմ որոշ ժամանակ նա հնարավորություն չի ունենա իր մտքերը կիսելու իրեն քիչ հետաքրքրող այն բաների շուրջը, ինչ նա կուտակում էր պարապմունքների ժամանակ²⁸:

Արևելյան բաժանմունքի նիստերում այս կամ այն հարցի քննարկման ժամանակ կարելի էր դիտել հետաքրքիր բաներ: Չեմ մոռանա, թե ինչպես ի պատասխան Յա. Ի. Սմիռնովի զեկուցման, ելույթ ունեցավ Հնագիտական ընկերության անդամներից մեկը և ասաց. «Յակով Իվանովիչ, ես Ձեզ լսեցի երկու ժամ և որքան էլ ջանացի, ոչինչ հասկանալ չկարողացա»: Եվ հանկարծ Յակով Իվանովիչը հանգիստ տոնով հայտարարեց. «Իսկ դուք իզուր էիք ջանում, միևնույն է, ոչինչ չէիք հասկանա, թեկուզ լսեիք շորս ժամ»: Թվում էր, թե դա հանդգնություն է, բայց այնտեղ՝ Հնագիտական ընկերության պատերի ներսում, այդ բառերը բոլորովին բնական էին հընչում: Այնտեղ ընդունված չէր քաշվել և ակնարկներով խոսել այս կամ այն հետազոտողի թույլ տված սխալների մասին: Բայց դրա փոխարեն այնտեղ ընդունված էր խոսել սե-

փական սխալների մասին, թեև այդ ժամանակ մեր առօրյակենցաղում չկար «ինքնաքննադատություն» բառը, որին մենք չէինք հանդիպում ո՛չ թերթերի էջերում և ո՛չ էլ գիտական աշխատություններում: Գուցե այն պատճառով, որ այդ երեվույթի համար տակավին համապատասխան անուն չէինք գտել, այն հատկապես շուրջ էր զարգանում:

Գիտական ինքնաքննադատությունը Արևելյան բաժանմունքում լավ էր ծավալվում: Ես դա ապում եմ համարձակորեն, որովհետև ինձ այստեղ և՛ անդամ, և՛ քարտուղար, և՛ այդ բաժանմունքի հրատարակության վարողը լինելու մեծ պատիվն էր վիճակվել: Մի՞թե ձեզնից նրանց, ովքեր ծանոթ են Արևելյան բաժանմունքի «Տեղեկագրերի» այդ պատկառելի քսանհինգ հատորներին և տեխնիկապես նրանցից անշատված արևելագետների կոլեգիայի «Տեղեկագրերի» հինգ հատորին, նրանք չեն ասում այն մասին, թե ինչպիսի հսկայական բարձրության վրա էր կանգնած մեր արևելագիտությունը: Իսկ Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքը համախմբում էր ոչ միայն նրանց, ովքեր ապրում էին Պետերբուրգում, այլև նրա սահմաններից շատ հեռու գտնվողներին: Արևելյան կամ դասական բաժանմունքում զեկուցումով հանդես գալը մեծ պատիվ էր համարվում, և այդպիսի զեկուցում կարգալու հնարավորության ընձեռումը դիտվում էր որպես հատուկ հարգանքի արտահայտություն դեպի ձեր գիտական աշխատանքը: Եղավ դեպք, երբ Ս. Ֆ. Օլդենբուրգի կողմից կարգացված շորս էջի վրա գրված փոքրիկ զեկուցումը առաջացրեց այնպիսի բըննարկում, որը դուրս էր գալիս տվյալ հարցի շրջանակներից:

Արևելյան բաժանմունքի աշխատանքի արդյունքները հրատարակվում էին ոչ միայն «Տեղեկագրերում»: Միայն կլինեի կարծել, թե այդ երեսուն հատորները սպառել են այն ամենը, ինչ կատարվում էր այնտեղ: Բաժանմունքի աշխատությունները տպագրվում էին նաև ուրիշ տեղերում, և՛ «Գիտությունների ակադեմիայի տեղեկագրում», և՛ ուրիշ հրատարակություններում, բայց հազվադեպ էր լինում այնպես, որ գիտնականը, որը զեկուցումը կարդացել էր Հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքում, նյութի հրատարակ-

²⁸ Կյանքի վերջին տարիներին բազմաթիվ վարչական պարտականությունները Վ. Ա. Ժուկովսկուն հեռացրել էին հետազոտական աշխատանքից: *Տե՛ս Ս. Ս. Бушев, Жизнь и деятельность В. А. Жуковского.*—«Очерки по истории русского востоковедения», сб. IV, М., 1959, стр. 134—135.

ժան ժամանակ բաց թողնել արդ հանգամանքը հիշատակելու հնարավորությունը:

Ռուսական հնագիտական ընկերության Արևելյան բաժանմունքի մասին ես այդքան շատ եմ խոսում նրա համար, որ շուտով կտոնվի ձեր ֆակուլտետի հարյուրամյակը, և ես ուզում եմ, որ այդ օրը, երբ տեղի կունենա հանդիսավոր նիստը (այս շնորհով կամ մեկ ուրիշում, միևնույն է), որ այդ օրը խոսք հնչի այն մասին, որ սովետական արևելագետներին հարկավոր է սկսել նորից հավաքվել մեր քաղաքում՝ ձեր ֆակուլտետի կամ մեկ ուրիշ հիմնարկի շուրջը, որպեսզի այնտեղ բոլորն այնպես գան, ինչպես 1941 թվականի դեկտեմբերի 10-ի այն հիշարժան օրը²⁹:

Հնագիտական ընկերության արևելյան բաժանմունքը զբաղվում էր ոչ միայն հնագիտությամբ, այնտեղ ամեն ինչ կար, այնտեղ ողջ մարդկության մշակույթն էր կենտրոնացված, այնտեղ լսվում էին հաշվետվություններ արտասահմանում և մեզ մոտ լույս ընծայվող ամբողջ նոր գրականության մասին: Դատավորներն այնտեղ շատ խիստ էին: Ձեզանից նրանք, ովքեր չեն հանդիպել Վ. Վ. Բարթոլդին, չեն պատկերացնի, թե ինչ է նշանակում իսկական անվախ ինքնաքննադատությունը, երբ դրանով զբաղվում են այդպիսի ողջամիտ մարդիկ: Վ. Վ. Բարթոլդի քննադատության տակ ընկնելը շատ հաճելի էր, բայց արտասովոր սարսափելի, որովհետև այդ մարդը կարողանում էր ուրիշներին մոտենալ նույն խստությամբ, ինչպես և իրեն: Ես հիշում եմ, ինչպես Վ. Վ. Բարթոլդը կարգաց դամբանական՝ նվիրված մի անձի, որին նա քննադատում էր կենդանի ժամանակ: Եվ զիտնականի մահից հետո անգամ նա չդիմացավ և մինչև ոսկորները մասնատեց հանգուցյալին, ընդ որում դա արեց մեծ հարգանքով: Այն ժամանակ ինձ մոտ միտք ծագեց, որ Վ. Վ. Բարթոլդի կյանքում ամենամեծ վշտերից մեկը պետք է լինի այն, որ նա զիտակցում է իր սեփական դամ-

բանականը կարգալու անհնարինությունը. այնտեղ նա իրեն այնպես կմասնատեր, որ բաժանելու այլևս բան չէր մնա:

Նա մի մարդ էր, որն օժտված էր բոլոր աղբյուրները, բացի մեկից (նյութական աղբյուրները նա չէր տանում) ներգրավելու և օգտագործելու հիասքանչ ընդունակությամբ (ծիծաղելի է այս պատերի ներսում խոսել նրա էրուդիցիայի մասին): Ն. Յա. Մառը Վ. Վ. Բարթոլդի վրա դայրանում էր նրա համար, որ վերջինս զալով Գառնի (դա հիվանդ մարդու համար շատ դժվար ուղևորություն էր), շքանկացավ լսել նիկոլայ Յակովլևիչի բացատրությունները պեղումների արդյունքների մասին, այլ իսկույն հարցրեց. «Որտե՞ղ է ձեր գրադարանը»: Ինձ նրա հետ ուղարկեցին գրադարան, և նա այնտեղից արդեն դուրս չեկավ: Բարթոլդը հարգանքով էր վերաբերվում այն բանին, ինչը ուրիշները քաղում էին իրերից, բայց ինքը նյութական հուշարձաններ չէր ընդունում: Դա մեղ շատ էր վշտացնում:

Արևելյան բաժանմունքում մենք տեսանք նաև այնպիսի զիտնականի, որը երբեք, ոչ մի տեղ ինքն իրեն արևելագետ չէր անվանում, չնայած նա խոշոր մասնագետ էր: Դա Յա. Ի. Սմիռնովն էր: Նա ինքն իր մասին միշտ խոսում էր վերին աստիճանի ոչ հարգալից տոնով: Սակայն նա հիասքանչ արևելագետ էր: Դա մի մարդ էր, որը հայագետներին ցույց էր տալիս, թե նրանք որտեղից վերցնեն իրենց հետաքրքրող հարցի վերաբերյալ տեղեկությունները. դա մի մարդ էր, որը չինագետներին էր տալիս Պեկինում քրիստոնյա վաճառականի այրու կողմից 12-րդ դ. կառուցված քրիստոնեական եկեղեցու վերաբերյալ տեղեկությունները. թուրքագետներին նա բացատրում էր, թե ինչ կարելի է գտնել թուրքական աղբյուրներում, — բացատրում էր ոչ թե նրա համար, որ սլատահաբար էր հիշում այդ բաները, այլ որովհետև դա մի մարդ էր, որն իր ամբողջ ոչ երկար կյանքում (նա հիսուն տարեկան էր, բայց ուներ դառամյալ ծեղրունու արտաքին) ամենից քիչ էր հոգ տանում այն մասին, որպեսզի ինքը որևէ բան անի, այլ սիրում էր ամեն բանում օգնել բոլորին: Դա մի մարդ էր, որը ունակ էր շաբաթներով, ամիսներով փրճաբեղ ամեն տեղ, ուր միայն հնարավոր էր՝ բոլոր գրական

²⁹ Խոսքը բրտկադայի ենթարկված լեհինգրադի պայմաններում նախորդի հորելյանի տոնակատարման մասին է (տես վերևում, էջ 126—127):

վկայութիւններում, հուշարձանների բոլոր նկարագրութիւններում, տեղեկութիւններ, որոնք պետք էին երկրորդ կուրսի ինչ-որ ուսանողի՝ կովկասի հնագիտութեան վերաբերյալ տակաւին չձեւավորված հողվածի համար: Եվ այդ բոլորը նա կարողանում էր այնպես անել, որ դուք համարում էիք, որ դուք եք նրա բարերարը, այլ ոչ թե նա՝ ձերը: Նա ձեզ տեղեկանք տալու համար թուլտուլութիւն էր խնդրում, ընդ որում, երբեք ոչ մեկից փոխհատուցում չէր սպասում:

Վերջերս ես այստեղ ներկա գտնվող երկու ընկերների հետ խոսում էի այն մասին, թե ինչպես Յա. Ի. Սմիռնովը շափազանց դժվարին պայմաններում ճանապարհորդեց Փոքր Ասիայում, եղավ Փոքր Ասիայի արևմտյան մասի տարբեր մշակութային կենտրոններում, հետո իջավ ներքև՝ դեպի Սիրիա, և շատ հարուստ նյութ հավաքեց: Իսկ հետո նա իմացավ, որ հինգ տարի անց ավտորիացի երիտասարդ գիտնական Ի. Ստրժիգովսկին նույնպես եղել է այնտեղ: Յա. Ի. Սմիռնովը նամակազրական կապ հաստատեց նրա հետ, հրավիրեց նրան այստեղ, ծանոթացրեց բոլոր նյութերին և այդ հոյակապ տվյալների կույտը, ոչ միայն ճանապարհորդական նոթերը, այլ այն ամենը, ինչ նա հավաքել էր այդ տարիներին՝ հանձնեց Ստրժիգովսկուն, և վերջինս այդ նյութերը հրատարակեց: Նրա աշխատութեան տիտղոսաթերթի վրա իր ազգանվան կողքին դուք կտեսնեք Յա. Ի. Սմիռնովի ազգանունը: Յա. Ի. Սմիռնովը, ինչպես նա բացատրեց, գիտակցում էր, որ երկրորդ անգամ ինքը այնտեղ չի ընկնի (էրմիտաժից դուրս չես պրծնի), իսկ այդ գերմանացին դեռևս կգնա, նորից կպեղի այն, ինչ չի պեղվել: Նրա համար կարևորն այն էր, որպեսզի այդ նյութերը հրատարակվեն, որպեսզի գիտական այդ հարցը լուսաբանվեր: Եվ, գուցե, սելջուկյան կուլտուրական աշխարհի ուսումնասիրութեան համար նյութերի հավաքման ուղղութեամբ փաստորեն ոչ ոք այդքան բան չի արել, որքան Յա. Ի. Սմիռնովը: Նա ոգին էր բոլոր այն գիտական պրոբլեմների, որոնք երբևիցէ և որևէ մեկի կողմից ուսումնասիրվում էին: Այդ մարդը ընդունակ էր տասնչորս կիլոմետր գնալ, որպեսզի տեսներ պայտի հետքը, այսինքն՝ տեսներ քարի վրա պայտի հետքի տեսա-

նելիութիւնը: Իսկ հետո նա երկրորդ անգամ էր անցնում այդ ճանապարհը, որպեսզի նկարեր այդ հետքը: Սմիռնովի ծառայութիւններից մեկը համարվում է մի քանի տասնյակ վիշապների հավաքումը և համադրումը³⁰:

Ձեզնից նրանք, ում բախտ կվիճակվի լինել Հայաստանում, խնդրեք, որպեսզի ձեզ տանեն այնտեղ, ուր ընկած են այդ քարերը: Երբ դուք կկատարեք այդ զբոսանքը, կգնահատեք, թե ինչ է նշանակում հավաքել դրանցից մոտ երեք տասնյակ, իսկ հետո բոլոր լեզուներով ամբողջ գրականութիւնից տվյալներ հավաքել դրանց վերաբերյալ:

Յա. Ի. Սմիռնովը երբեմն դառնում էր անհաճո, երբեմն ուրիշներին դնում փակուղու մեջ: Երբ ես մագիստրական քննութիւն էի հանձնում, թարգմանութեան համար ինձ հանձնարարվեցին համեմատաբար դժվար տեղերը (միայն հայերեն լեզվի քննութիւնը տեևց չորս ու կես ժամ): Քննութեան վերջում, ի դժբախտութիւն ինձ, ցանկացողներին առաջարկվեց հարցեր տալ, և այդտեղ Յա. Ի. Սմիռնովին կարծես պետք էր հիշել, որ Փավստոսի³¹ գլուխներից մեկում հիշատակվում է ինչ-որ առարկայի մասին, և ահա նա խնդրեց այդ կտորը թարգմանել: Այնպես որ Յա. Ի. Սմիռնովը երբեմն անհաճո էր լինում: Նա սիրում էր օգտվել այն իրավունքից, որից այն ժամանակ քերն էին օգտվում, այն է՝ երիտասարդ դասախոսների դասախոսութիւններին հաճախելու իրավունքից: Եվ ահա նա սովորութիւն դարձրեց իմ դասախոսութիւններին գալը: Այն ժամանակ ես միայն երկրորդ տարին էի դասընթաց կարդում՝ կապված հայկական և վրացական ճարտարապետութեան հետ: Դասախոսութիւնից առաջ Սմիռնովին տեսնելը շատ հաճելի էր. դասախոսութիւնից հետո համալսարանից նրա հետ գնալը ավելի հաճելի էր, բայց դասախոսութեան ժամանակ տեսնել նրան նստարանին բազմած՝ շատ անհարմար էր, որովհետև նա մի զզվելի սովորութիւն ուներ. այն պահին, երբ դուք նոր եք հունի մեջ ընկել և հանգամանորեն, ինչպես ձեզ թվում է,

30 Տե՛ս Կ. Մ. Մարր և Կ. Ի. Սմիրնով, Вишаны, Л., 1931.

31 Խոսքը 5-րդ դարի հայ պատմիչ Փավստոս Բուզանդի մասին է:

լուսաբանում եք հարցը, նա հանկարծ կասեր. «Իսկ ինչո՞ւ դուք չհիշատակեցիք այս մասին, այն մասին»: Հարկ էր լինում լրացնել: Իսկ եթե դուք ճիշտ չասեիք, ապա նա կհիշեցներ, որ այնտեղ դեռ էլի ինչ-որ նշան կա: Վերջացավ նրանով, որ ես խնդրեցի Յա. Ի. Սմիռնովին իր վրա վերցնել դասախոսություն կարդալը, իսկ ինձ թույլատրել նստել լուսաբանում, ընդամին ես նրան հավաստիացրի, որ ես չեմ ընդհատի, հարցեր նույնպես չեմ տա, բայց շատ բան կսովորեմ:

Յա. Ի. Սմիռնովը, ինչպես Արևելյան, այնպես էլ դասական բաժանմունքում համընդհանուր ճանաչում գտած և ամենաահավոր դատավորն էր:

Ես արդեն ասացի, որ Վ. Վ. Բարթոլդից վախենում էին և՛ որպես դատավորի, և՛ որպես քննադատի: Յա. Ի. Սմիռնովին և՛ հարգում էին, և՛ վախենում, և գլխավորը՝ երբեք չգիտեին, թե որ կողմից նա կկժի, որովհետև նա գիտեր ամեն ինչ:

Նա մեռավ 1918 թվականի դեկտեմբերի 23-ին: Վախճանվելուց մի քանի օր առաջ, բոլորովին հիվանդ վիճակում (նրա ոտքի վրա մի սարսափելի ուռուցք կար, որը հետո վերածվեց ավշային սիստեմի ընդհանուր բորբոքման) Պետրոգրադսկայա Ստորոնա թաղամասի կողմից, ուր նա ապրում էր, եկավ Սրեզնի պողոտայի մոտի 11-րդ գիծը, որպեսզի տեղեկանք բերի ինձ. «Ահա նոր հողված, որ լույս է տեսել, այն Ձեզ, Իոսիֆ Աբգարովիչ, կարող է պիտանի լինել»:

Երբ Յա. Ի. Սմիռնովը մեռավ, նրա ընտանիքի անդամները, դժբախտաբար, չհասկանալով Յա. Ի. Սմիռնովի արժեքը որպես գիտնականի, սկսեցին նրա ձեռագիր ժառանգության ոչնչացումը: Երբ ես ընկա նրա բնակարանը, ահանատես եղա մի ահավոր տեսարանի՝ անհամար քանակությամբ թերթիկներ, որոնք դեռևս վառարան չէին նետվել: Եթե երբեք է որևէ մեկին հաջողվի մինչև վերջ մշակելու այդ նյութը, ապա պատահական այն տարեթվերով, որոնք գուցե դրված են, կարող է իմանալ, թե ում համար է Յա. Ի. Սմիռնովը հավաքել այդ տեղեկությունները: Ամբողջ կյանքում նա ջանացել է ինչով որ կարողացել է օգնել բոլորին, ում տեսել է: Դա շատ հիասքանչ մարդ էր: Երբ Արևելյան բա-

ժանմունքում քննարկվում էին հարցեր, որոնք առնչվում էին դասական բաժանմունքին, մեզ մոտ համատեղ նիստեր էին գումարվում, և այդտեղ հատկապես հաճելի էր տեսնել մեր մի ամբողջ շարք գործիչների, որոնք իրենց հավասարապես լավ էին զգում և՛ դասական (բյուզանդական) բաժանմունքի նիստերում, և՛ Արևելյան բաժանմունքի նիստերում: Այն ժամանակ բյուզանդագիտությունը այդպիսի «լուսկյաց» վիճակում չէր, ինչպես հիմա: Այն ժամանակ ռուսական բյուզանդագիտությունը բավական հարձակողական գիծ էր անցկացնում, հարձակողական՝ ոչ թե օտար տարածություններ զավթելու իմաստով, այլ բյուզանդական մշակույթի հարըստության մի մասի վրա հենց ռուսական մշակույթի իրավունքի հաստատման իմաստով: Երբ ես հաղորդակից եղա Ռուսական հնագիտական ընկերության առօրյա կյանքին կամ երբ այն մուտք գործեց իմ առօրյա կենցաղի մեջ, արդեն անցել էին այն ժամանակները, երբ լավագույն իրերը, նույնիսկ եթե նրանք պատրաստվել էին Վրաստանում, համարվում էին բյուզանդական: Այդ ժամանակ արդեն սկսել էին հասկանալ, որ ոչ թե առարկաների որակով է որոշվում նրանց պատկանելիությունը բյուզանդականին, այլ այն բանով, թե իրականում ով է պատրաստել այդ իրը:

Բյուզանդագիտությունը մեծ արժեք էր ձեռք բերել, և դա զգացվում էր այն համատեղ նիստերում, որտեղ մտքերի փոխանակություն էր կատարվում մեր խոշորագույն գիտնականների միջև:

Ես ձեզ շատ ուշացրի, բայց վերջում պետք է ասեմ դեռ այն մասին, ինչի մասին ուզում էի սկզբում ասել, այն մասին, թե Ռուսական հնագիտական ընկերությունում Ռեդենի մահից հետո ինչ դարձան նրա աշակերտները՝ Վ. Վ. Բարթոլդը, Ն. Յա. Մառը և այն ժամանակ տակավին երիտասարդ՝ Ի. Յու. Կրաչկովսկին³² (Իգնատի Յուլիանովիչի դասախոսությունները ես, դժբախտաբար, չկարողացա լսել. նա համալ-

³² Կրաչկովսկի Իգնատի Յուլիանովիչ (1883—1951) — խոշորագույն արարագետ, ահադեմիկոս:

սարանը ավարտեց այն նույն տարին, երբ ես փոխադրվեցի Երկրորդ կամ երրորդ կուրս, իսկ հետո մեկնեց արտասահման: Ես նրան լեեցի միայն Հնագիտական ընկերությունում): Ռոզենը շատ աշակերտներ ուներ, սակայն այդ երեքի՝ Բարթոլդի, Մառի և Կրաչկովսկու մեջ, հատկապես ուժեղ էր զգացվում այն վեհ ավանդությունը, որը գալիս էր նրանից, զգացվում էր աշակերտի համար ուսուցչից առաջ անցնելու խոր գիտակցություն անհրաժեշտությունը: Գիտության այն բոլոր բնագավառներում, ուր աշխատում էին այդ աշակերտները, Ֆրանք իրոք առաջ անցան:

Սակայն նրանցից մեկը միայն հենց սկզբնական շրջանից, հատկապես Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո, իր վրա վերցրեց կազմակերպչական մեծ աշխատանքի այն ծանրությունը, որը կարելի էր կատարել թե՛ այն պատճառով, որ դրա համար հնարավորություն էր բացվել, թե՛ այն պատճառով, որ դրան էր սպասում մեր երկիրը: Այն ժամանակ էլ սկսվեցին տանջալից օրերը, շաբաթները, ամիսները, երբ, հաղթահարելով նույնիսկ ֆակուլտետի անդամների դիմադրությունը, Ն. Յա. Մառը, հենվելով նույն Վ. Վ. Քարթոլդի, երբեմն Բ. Յու. Կրաչկովսկու, երբեմն նիստերին ներգրավված Ս. Յ. Օլդենբուրգի և Ս. Ա. Ժեբելյովի վրա, ձգտում էր անցկացնել այն հսկայական աշխատանքը, որն ինքն էր ավելորդ բարդացրել: Դա արևելյան լեզուների ֆակուլտետը Արևելյան պատմա-բանասիրական ֆակուլտետի վերակառուցելու աշխատանքն էր:

Ն. Յա. Մառին տանջում էր այն, որ, տեսնելով պատմա-բանասիրական ֆակուլտետը, որը փայլում էր իր հարցադրմամբ, նա արևելյան ֆակուլտետի իր ամբիոնից և այն կիսաամբիոնից բացի, որին ղեկավարում էր Յա. Բ. Սմիռնովը, ոչ մի նման բան չէր գտնում. նա ձգտում էր ջարդել առանձին մասնագիտությունների միջև եղած միջնորմները: Տհաճ, բացասական երևույթը այն «խանութն» էր, որը արևելյան լեզուների ֆակուլտետում ստեղծվել էր դեսպաններ, դեսպանության կցորդներ և ցարական արտաքին գործերի մինիստրությանը այլ պաշտոնյաներ պատրաստելու համար: Դրանք մարդիկ էին, որոնք գիտության ուղիով ընթանալ չէին

կարող: Նրանք արևելյան, իրավաբանական ֆակուլտետներում դասախոսություններ էին լսում միայն նրա համար, որ դա կարող էր իր դերը խաղալ համապատասխան պաշտոնում նրանց նշանակման ժամանակ: Այդ բոլորը պետք էր ուղնչացնել: Եվ Մառը դա արեց: Նա ուզում էր ստեղծել երկու բանասիրական ֆակուլտետ, բայց դա անհնար էր: Այն ժամանակ նա սկսեց պայքարել Արևելք և Արևմուտք ենթաբաժիններով մեկ պատմա-բանասիրական ֆակուլտետ ստեղծելու համար, այն հաջվով, որպեսզի անտիկ աշխարհի մասնագետներին ստիպեր զբաղվելու արևելագիտությամբ և բոլոր արևելագետներին՝ զբաղվել անտիկ աշխարհի հարցերով: Բայց դա, դժբախտաբար, որևէ դրական բանի չհանդեպեց: Շուտով եկավ այն ճակատագրական տարին, որը՝ ինձ անհայտ պատճառներով առաջացած հետևանքների շնորհիվ, որպես ծանր բիծ ընկավ Ն. Յա. Մառի պայծառ հիշատակի վրա: Եկավ այն 1921—22 թվականը, երբ Մառի, որպես դրույթ արտահայտած միտքը անմիջապես բարձրացվեց անսովոր բարձրության վրա: Գիտե՞ք դուք արդյոք, որ երբ առաջացան հանրահայտ «էլեմենտները» (սկզբում դրանք տասներկուսն էին, հետո դարձան չորսը), ապա Մառը այդ դիտեց որպես անհրաժեշտ ենթադրություն: Ես այն ժամանակ նրան հարցրեցի. «Ի՞նչ է դա՝ աշխատանքային վարկած»: «Դեհ, եթե ուզում եք խոսել գիտական լեզվով, թող լինի աշխատանքային վարկած»: Իսկ դրանից կես ժամ հետո հաճոյակատարները, ո՛չ, ոչ թե հաճոյակատարները (հաճոյակատարը լավ բառ է), այլ սիրաշահողները այն հռչակեցին որպես դրույթ: Եվ Մառը այլևս չէր կարող դա անվանել աշխատանքային հիպոթեզ:

Դուք գիտե՞ք արդյոք, որ այդ բոլոր անհեթեթ հորինվածքները, որոնք հետո բարձրացվեցին պաշտամունքի առարկայի աստիճանի, գալիս էին ոչ թե Մառից, այլ այն պայմաններից, որոնք նրա շուրջը ստեղծել էին այդ սիրաշահողները:

Մառի հետ հրաշք կատարվեց. այդ ես ասել եմ նրան, դրա համար կարող եմ ասել նաև ձեզ: Այնպես, ինչպես տասներկու առաքյալները պառկեցին քնելու՝ չիմանալով ոչ

մի լեզու, բացի արամեականից, և առավտը արթնացան արդեն խոսելով բոլոր լեզուներով ու դարձան աստծո խոսքի քարոզներ, այգպես էլ այդ մարդիկ կառչեցին այն մտքից, թե լեզուներ գիտենալը խանգարում է, և այն ժամանակ ըսկրսվեց աղետը, որը մենք գիտենք 1950 թվականի կապակցությամբ: Մի՞թե դա Մառն էր: Եթե մարդը ստեղծեց, հնարեց աշխատանքային վարկած, կարելի՞ էր արդյոք խմբովին, մամուլի էջերում մտախոհերով, վկայակոչելով որպես զուտ մարքսիստական դատողություններ, այն բացատրել որպես մեծագույն ճշմարտություն, որպես թեզեր, որոնց հիման վրա պետք է կառուցվեր իսկական լեզվաբանությունը:

Ես չեմ մոռանա, թե ինչպես Մառը, երբ ես նրան ասացի տասներկու առաքյալների մասին, պատասխանեց, որ լեզուներ գիտենալը երբեմն խանգարում է, որ ինքը երբեմն զգում է, որ առանց լեզուներ գիտենալու ավելի լավ կլիներ: Նա այդպես ասաց, որովհետև արդեն լեզուներ գիտեր:

Ես ուզում եմ ասել, որ հեշտ է ճանաչել այդ «լեզվաբաններին», որոնք այն ժամանակ մեծ քանակությամբ բազմացան: Եթե որևէ մեկը շատ ուժեղ էր հայհոյում Մառին, դա նշանակում է, որ նա շատ է խնկարկել Մառին: Եթե դուք կտեսնեք, որ մարդը հայհոյում է Մառի էլեմենտները, բայց լեզվի հարցերում մինչև 1922 թվականի Մառին չի տարբերում 1922 թվականից հետո եղած Մառից, դա նշանակում է, որ նա այն մարդկանցից մեկն է, որոնք խոսում էին, որ «էլեմենտները» իդեալական են, իսկ բոլոր մնացած լեզվաբանությունը պետք է վառարանը նետել: Այդ եզրակացությունը ես հանդեցի այն պատճառով, որ կովկասի և՛ լեզվաբանության, և՛ բանասիրության, և՛ հնագիտության վերաբերյալ Մառի մինչև 1922 թվականն ընկած ժամանակաշրջանի աշխատությունները, այն Մառի, որը տակավին «լեզվի նոր ուսմունքով» մթազնված չէր, ինձ ծանոթ են և ես դրանք բարձր եմ գնահատում: Ինձ հայտնի է (ես իրավունք ունեմ այդպես ասելու), որ 1934 թվականի գարնանը, երբ Մառը հիվանդանոցից ուղարկվեց Ղրիմ և այնտեղից վերագարձավ այստեղ, նա ուրիշ ոչնչի մասին չէր խոսում, բացի լեզուների հարեթական ընտանիքի և հնդեվրոպական ընտա-

նիքի հետ ունեցած նրա փոխհարաբերությունների վերաբերյալ իր հին տեսակետների մասին:

Ղրիմից Ն. Յա. Մառի վերագառնալուց հետո մեր բազմաթիվ հանդիպումների ժամանակ և մինչև այն օրը, երբ նրան տարան հիվանդանոց, որտեղից նա այլևս չվերագարձավ, այդ ամբողջ ժամանակ նա ոչ մի անգամ չընշափեց «նոր ուսմունքի» հարցը: Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ նա ինձ առաջադրանք էր տալիս տեղեկանալու, թե այսինչ բարբառում չի՞ հանդիպել այսինչ ձևը: Մի անգամ նա ինձ ասաց. «Ինչքան լավ էր առաջ հարեթական ընտանիքի հետ»: Դա 1934 թվականի ամռանն էր:

Ահա թե ինչու ես հանգիստ սրտով կարող եմ ասել,— ոչ միայն նրա համար, որ ես այն ժամանակ համաձայն չէի այդ շորս էլեմենտների հետ, այլ նրա համար, որ Մառը ինքը սկսեց համաձայն չլինել դրանց հետ,— որ մեր արևելագետների, բանասերների, լեզվաբանների սրբազան պարտականություններից մեկն է՝ սահմանազատում անցկացնել այն Մառի, որը լեզվաբանության հարցերում և մշակույթի հարցերում կանգնած էր խորը, ամենախոր ուսումնասիրության հողի վրա, և այն Մառի միջև, որին մարդիկ, որոնց համար ավելի հեշտ էր դա ասել, քան լեզուներ սովորելը, դարձրին իրենց դրոշը: Իրենց դրոշը դարձրին նրա համար, որպեսզի հետո կոխտեսն այդ դրոշը և նետեն ցեխի մեջ:



СПИСОК СОКРАЩЕНИЙ

- ААН— Архив Академии наук СССР.
 ВДИ— «Вестник древней истории».
 ГАИМК— Государственная Академия истории материальной культуры.
 ГИАЛО— Государственный Исторический архив Ленинградской области.
 ЖМНП— «Журнал Министерства народного просвещения».
 ЗВО— «Записки Восточного отделения Императорского Русского археологического общества».
 ИАН— «Известия Академии наук».
 ИРАН— «Известия Российской Академии наук».
 ПИДО— «Проблемы истории докапиталистических обществ».
 РАИМК— «Российская Академия истории материальной культуры».
 СГЭ— «Сообщения Государственного Эрмитажа».
 УЗ— «Ученые записки».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին	3
Գլուխ երկրորդ	57
Գլուխ երրորդ	123
Հավելված	154
Հ. Ա. Յրբիլի—Ուսանողական տարիների հուշեր	156
Հաղավումներ	198

Յուզբաշյան Կարեն Նիկիտի

Ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելի

Քարգամանիչ՝ Ի. Ն. Կուրապետյան
Խմբագիր՝ Հ. Ա. Կնյազյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Քեղ. խմբագիր՝ Գ. Գ. Սարգսյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան
Վերատպող սրբագրիչ՝ Ա. Ս. Աբրահամյան

ԱՐՁԱՆԳ 1971 թ.

Հանձնված է արտադրության 2/II 1971 թ.:

Ստորագրված է տպագրության 5/IV 1971 թ.:

Քուղթ՝ տպագր. № 1, 84×108¹/₃₂, տպագր. 12,5 մամուլ = 10,5 պայմ.
մամ., հրատ. 9,0 մամ. + 1 ներդիր: Գինը՝ 42 կոպ.:

Պատվեր 402: Տիրած 5000:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի
պոլիգրաֆարդյունաբերության վարչության № 6 տպարան,
Երևան, Քումանյան փ. № 23/1: